Ամերիկյան գրականություն, Վիպակ, Արձակ

13+

Ջեկ Լոնդոն

Գարեհատիկ Ջոնը

JOHN BARLEYCORN

Էդուարդ Ավագյանի թարգմանությամբ

«Գարեհատիկ Ջոնը» վիպակը առաջին անգամ տպագրվել է «Սաթերդեյ իվնինգ պոստ» ամսագրում 1913 թվականի մարտ-մայիս ամիսներին և նույն տարին էլ լույս է տեսել առանձին գրքով (Սենչըրի քամփընի հրատ., Նյու Յորք):

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Այդ միտքը իմ գլխում հասունացավ մի օր, ընտրությունների ժամանակ: Կեսօրից հետո ես ֆերմայից Լուսնի Հովտով գնացի մի փոքրիկ գյուղակ, որպեսզի իմ «այո»-ն կամ «ոչ»-ը ասեմ Կալիֆորնիա նահանգի սահմանադրության մի քանի փոփոխությունների կապակցությամբ: Շոգ էր և բյուլետենս գցելուց առաջ մի քանի բաժակ խմեցի: Մի երկու բաժակ էլ խմեցի գցելուց հետո: Գործերս վերջացնելով, նստեցի ձին և լեռնային արահետով, մեր խաղողի այգիների ու արոտավայրերի մոտով, տուն վերադարձա: Ֆերմա հասա երեկոյան և հասցրեցի ընթրիքից առաջ մի անգամ էլ խմել:

— Կանանց հավասարության օգտի՞ն քվեարկեցիր, թե՞ դեմ,— հետաքրքրվեց Չարմիանը:

— Կանա՜նց օգտին:

Նա զարմացավ, քանի որ, պետք է խոստովանեմ, ջահել ժամանակ, չնայած իմ կրքոտ դեմոկրատիզմին, կանանց հավասարության թշնամին էի: Տարիների ընթացքում իմ մեջ որոշ հանդուրժող վերաբերմունք պատվաստեցի, հասկանալով, իհարկե առանց որևէ հրճվանք զգալու, այդ բարեփոխության հասարակական անխուսափելիությունը:

— Բայց և այնպես, բացատրիր, թե ինչո՞ւ նրանց օգտին քվեարկեցիր,— հարցուփորձը շարունակեց Չարմիանը:

Ես զայրացա և սկսեցի մանրամասն պատմել: Եվ որքան շատ էի խոսում, այնքան ավելի էի զայրանում: (Ո՛չ, ես հարբած չէի: Չէ՞ որ տուն եկա «Ավազակին» հեծած: Հետաքրքիր

է իմանալ, թե ո՞ր հարբածը կարող է այդ ձիու վրա նստած մնալ):

Հարբածը՝ հարբած չէի, բայց կատարս տաքացած էր: Գլուխս շատ դուրեկան դժժում էր և, ընդհանրապես, քեֆս լավ էր:

— Հենց որ կանայք ընտրական իրավունք ձեռք բերեն, նրանք չոր օրենք /Չոր օրենք— օրենք, որն արգելում է ոգելից խմիչքների առևտուրը/ կպահանջեն,— ասացի ես:— Ուրեմն, քո վերջը եկավ, Գարեհատիկ Ջոն: Այն ժամանակ արդեն կանայք, քույրերը, մայրերը քեզ անպայման կթաղեն:

— Իսկ ինձ թվում էր, թե Գարեհատիկ Ձոնը քո ընկերն է,— նկատեց Չարմիանը:

— Չէ մի՛, ընկերս է: Ի՞նչ ընկեր: Նա երբեք էլ իմ ընկերը չի եղել: Երբ նրա հետ եմ, թվում է, թե մենք ընկերներ ենք, բայց բանն այն է, որ ամենից քիչ նրան եմ նվիրված: Նա խաբեբաների թագավորն է: Նա ճշմարտագույնն է ճշմարտության մեջ: Նա մարդուն թևեր է տալիս: Բայց դաշինքի մեջ է Կճատի հետ: Այն ճանապարհը, որը նա է ցույց տալիս, տանում է դեպի մերկ ճշմարտությունը և կործանումը: Մտքի պայծառությունն ու խելապակասությունը նրա պատճառով է: Կյանքի թշնամին է, և իմաստություն է սովորեցնում, բայց հանդերձյալ աշխարհի իմաստությունը: Նա արյունարբու մարդասպան է, երիտասարդ կյանքեր կործանող:

Չարմիանը տարակուսած ինձ էր նայում:

Իսկ ես այլևս չէի կարողանում կանգ առնել: Այո՛, իհարկե, իմ քեֆը լավ էր: Ուղեղս աշխատում էր հստակ: Յուրաքանչյուր միտք նստած էր իր բջիջում, պատրաստ դուրս թռչելու այն բանտարկյալի նման, որը խաղաղ կեսգիշերին սպասում է փախչելու ազդանշանին: Եվ յուրաքանչյուր միտք անկեղծ էր, ճիշտ, հստակ, պատկերավոր: Ալկոհոլը պայծառ լույսով լուսավորել էր իմ ուղեղը: Գարեհատիկ Ձոնը ցանկացել էր բացել իր հոգին և խորհրդավոր գաղտնիքները դուրս էր տալիս իմ շուրթերով: Անցյալի պատկերները վերակենդանացան իմ գլխում, փոխարինեցին մեկը մյուսին, ինչպես զորքերը շքերթի ժամանակ: Ես իրավունք ունեի ընտրել դրանք՝ ցանկացած կարգով: Ես լրիվ տիրապետում էի իմ մտքերին, տնօրինում իմ բառերը, հաստատում իմ հարուստ կենսափորձի օրինակներով: Հենց դրա մեջ է Գարեհատիկ Ձոնի կախարդական ուժը. նա սրում է միտքը, շշնջում ճակատագրական ճշմարտություններ, կյանքի գորշությունը լուսավորում է հասունացման բոսոր ճառագայթներով:

Ես Չարմիանին թռուցիկ կերպով նկարագրեցի իմ անցյալը, շոշափեցի իմ բնավորության հիմնական գծերը: Ես ժառանգական ալկոհոլիկ չեմ: Օրգանապես ոչ մի ձգտում չունեմ դեպի ալկոհոլը: Այս տեսակետից. ես մեծացել էի որ պես բնականոն մարդ: Ալկոհոլի սովորությունը ինձ մոտ ձեռք բերովի է, և ես քիչ չեմ տանջվել, մինչև որ խմել եմ սովորել: Սկզբում սպիրտային խմիչքներից սիրտս ավելի էր խառնում, քան դեղերից: Մինչև հիմա էլ ատում եմ դրա համը: Ես խմում եմ միայն նրա համար, որ «գինով» լինեմ, իսկ հինգից մինչև քսանհինգ տարեկան հասակս դա էլ չէր գրավում: Օրգանիզմի դեմ քսան տարվա բռնություն պահանջվեց, որպեսզի հաղթահարեմ ալկոհոլի նկատմամբ եղած իմ զզվանքը և խմել սովորեմ:

Ես Չարմիանին պատմեցի, թե ինչպես ծանոթացա ալկոհոլի հետ, թե ինչպես էի խմելուց հետո ամեն անգամ հիվանդանում և սովորեցի միայն այն պատճառով, որ ամեն օր ձեռքիս տակ խմիչք ունեի: Ձեռքի՞ս տակ. գուցե ճիշտ չեմ արտահայտվում: Իմ անձի կազմավորման ժամանակ բոլոր հրապույրները դեպի ալկոհոլն էին տանում: Երբ փոքր տղա էի, թերթեր վաճառելիս, պատանեկության տարիներին նավաստի կամ հանքափոր աշխատելիս, կամ պարզապես օտար ափերում թափառելիս ես միշտ նկատում էի, ուր էլ որ հավաքվում էին տղամարդիկ՝ մտքեր փոխանակելու, կատակելու, գլուխ գովելու, մշտական բթացնող աշխատանքից հանգստանալու և մոռանալու ամեն ինչ, սեղանին անպայման հայտնվում էր շիշը: Նրանց հավաքատեղին գինետունն էր: Մարդիկ այստեղ շշի շուրջն էին հավաքվում այնպես, ինչպես շատ հին ժամանակներում նրանց վայրենի նախահայրերն էին հավաքվում քոչվորական խարույկի շուրջը:

Ես Չարմիանին հիշեցրի Խաղաղ օվկիանոսի հարավային կղզիների այն լողացող տնակների մասին, ուր նրան չէին թողնում: Գանգրահեր բնիկները այնտեղ քեֆ էին անում և ուրախանում կանանց բացակայությամբ. նրանց համար այդ վայրը սրբություն սրբոց էր, կանանց համար՝ տաբու, և խախտողը մահապատժի էր ենթարկվում:

Պատանեկության տարիներին գինետունն ինձ օգնեց ազատվելու կանացի մանրախնդիր հովանավորությունից՝ իմ առջև բացելով ընդարձակ ու ազատ տղամարդկային աշխարհը: Բոլոր ճանապարհները գինետուն էին տանում: Հազարավոր անտեսանելի ուղիներ վերջանում էին այդտեղ և հենց այդտեղից էլ ցրվում աշխարհով մեկ:

Ալկոհոլը ինձ համար սովորական դարձավ այն պատճառով, որ մատչելի էր. ահա թե որտեղ է չարյաց արմատը,— վերջացրի իմ պատմությունը։— Խմելն ինձ բոլորովին դուր չէր գալիս։ Ես ծիծաղում էի հարբեցողների վրա։ Բայց վերջ ի վերջո ես էլ հարբեցող դարձա։ Քսան տարի թունդ խմիչքների նկատմամբ իմ մեջ ճաշակ էի պատվաստում, հետո ևս մի տասը տարի ինձ ստիպում էի սիրել դրանք։ Եվ երբեք այդ բանը ինձ ուրախություն չէր պատճառում։ Բնավորությամբ բարեհոգի, կենսուրախ մարդ եմ։ Բայց հենց որ ինձ հետ է լինում Գարեհատիկ Ձոնը, ես մռայլ հոռետես եմ դառնում և կրում եմ դժոխքի բոլոր տանջանքները։

Ասենք, պետք է պատշաճը հատուցել,— շտապեցի ավելացնել սովորականի նման։— Գարեհատիկ Ձոնը ճշմարտությունն ուղղակի մարդու աչքն է խոթում։ Ահա թե ինչումն է նրա ուժը։ Այսպես կոչված առօրյա ճշմարտությունը բոլորովին էլ ճշմարտություն չէ։ Դա այն անհրաժեշտ սուտն է, որը պահպանում է կյանքի հաստատված կարգը, իսկ Գարեհատիկ Ձոնը նրա քարը քարի վրա չի թողնում։

— Եվ հազիվ թե դրանով մեծ ծառայություն է մատուցում կյանքին,— ընդհատեց Չարմիանը։

— Դու ճիշտ ես,— համաձայնեցի ես։— Հենց դրա մեջ է ամբողջ ողբերգությունը։ Թե որ կուզես իմանալ, նա ավելի շուտ մահվան օգտին է աշխատում։ Ահա թե ինչո՞ւ այսօր ձայն տվեցի կանանց հավասարության օգտին։ Ես հիշեցի իմ ամբողջ կյանքը և հասկացա, որ հարբեցող դարձա, որովհետև ոգելից խմիչքը միշտ էլ շատ մատչելի էր։ Հավատա ինձ, մարդիկ գինեմոլ չեն ծնվում։ Պետք է ասել, որ հենց այդ բառն էլ բացատրության կարիք է զգում։ Գինեմոլը այն մարդն է, որն օրգանապես չի կարող գոյություն ունենալ առանց գինու և անզոր է իր այդ կրքի դեմ պայքարելու գործում։ Իսկ խմողների մեծ մասը բնածին գինեմոլներ չեն։ Ո՛չ առաջին, ո՛չ քսաներորդ, ո՛չ էլ անգամ հարյուրերորդ ըմպանակը նրանց հաճույք չի պատճառում։ Խմել նրանք այնպես են սովորել, ինչպես սովորել են ծխել, չնայած, ի միջի այլոց, երկրորդն ավելի հեշտ է։ Պատճառը մեկն է՝ ոգելից խմիչքի մատչելիությունը։ Կանայք գիտեն այդ բանը։ Բոլորի փոխարեն հատուցում են այդ խեղճերը՝ կանայք, մայրերը, քույրերը։ Բայց նրանք, հենց որ ընտրելու իրավունք ստանան, անմիջապես կպահանջեն, որ սպիրտային խմիչքները արգելվեն։ Եվ դա շատ օգտակար կլինի. մատաղ սերնդին շատ դժբախտություններից կփրկի։ Գինի չտեսնելով, դրա նկատմամբ որևէ թուլություն չունենալով, մարդիկ մինչև անգամ չեն էլ հիշի։ Արդյունքն այն կլինի, որ անչափահասների ու պատանիների կյանքը ավելի բովանդակալից կդառնա։ Եվ աղջիկների, նրանց ապագա ընկերուհիների կյանքը՝ նույնպես։

— Ինչո՞ւ այդ մասին չես գրում հանուն գալիք սերունդների,— ասաց Չարմիանը։— Որպեսզի կանայք, քույրերն ու մայրերը հասկանան, թե նրանք ինչի համար ձայն պիտի տան։

— Գինեմոլի հիշողությունն՞ե՞ր,— կնճռոտվեցի ես. ավելի ճիշտ ոչ թե ես, այլ Գարեհատիկ Ձոնը։ Չէ՞ որ նա արդեն նստած էր իմ մեջ և լսում էր իմ հովանավորող-բարեհոգի ճամարտակությունը։ Միայն նա՝ Գարեհատիկը, կարող է ժպիտը հանկարծ արհամարհական ծամածռության փոխել։

— Ո՛չ,— ասաց Չարմիանը, որը կանացի սովորությամբ ուշադրություն չէր դարձնում Գարեհատիկի կոպիտ հարձակումների վրա։— Դու չէ՞ որ ապացուցում ես, թե ոչ գինեմոլ ես, ոչ էլ թունդ հարբեցող և բարեկամություն ես հաստատել 22ի հետ այն պատճառով միայն, որ նա միշտ էլ չափից դուրս մատչելի է եղել։ Ահա հենց դրա մասին էլ գրիր և քո գիրքը անվանիր «Հիշողություններ ոգելից խմիչքի մասին»։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Այսպես, ուրեմն, սկսում եմ։ Ընթերցողներից խնդրում եմ լսել կարեկցաբար, աշխատելով հասկանալ ինձ և մյուսներին, որոնց մասին գրում եմ, պատկերացնեն այն միջավայրը, որը շրջապատում էր մեզ։ Ամենից առաջ պետք է ասել, որ ես երկարամյա հարբեցող եմ, չնայած սպիրտային խմիչքների բնածին հակում երբեք չեմ ունեցել։ Ես հիմար մարդ չեմ։ Անասուն չեմ։

Խմելու գիտությունը վաղուց եմ սերտել և միշտ գիտեմ դրա չափը: Ինձ երբեք էլ ստիպված չեն լինում պառկեցնել, որ քնեմ: Եվ ինձ բռնելու կարիք էլ չի զգացվում, որ չընկնեմ: Կարճ ասած, ես բնականոն, սովորական մարդ եմ, և խմում եմ այնպես, ինչպես մյուսները: Հենց դրա մասին էլ մտադիր եմ գրել՝ բնականոն, սովորական մարդու վրա ոգելից խմիչքի ազդեցության մասին: Ես չեմ անդրադառնա թունդ հարբեցողներին և մտադիր էլ չեմ նրանց պաշտպանել: Այդպիսի մարդիկ չնչին փոքրամասնություն են կազմում:

Բոլոր հարբեցողները, ընդհանրապես, բաժանվում են երկու տեսակի: Առաջինը քաջ հայտնի է բոլորին. դա հիմար, բթամիտ, միշտ թմրած մի արարած է, քայլում է ոտքերը լայն չռած, ինչպես նավաստին օրորքի ժամանակ, հաճախ է ընկնում առվակների մեջ, իսկ երբ կոնծում է, ապա միայն կապույտ մկներ է տեսնում և վարդագույն փղեր: Դա հենց այն հարբեցողն է, որը հումորիստներին ծաղրանկարների համար անհատնում նյութ է տալիս:

Երկրորդ տիպի հարբեցողը երևակայությամբ ու խորաթափանցությամբ է օժտված: Մինչև անգամ երբ գլուխը դժժում է, նա պահպանում է սովորական կայունությունը, փողոցում ութ չի գծում, չի փռվում գետնին, լավ գիտե, թե ինքը որտեղ է և իր հետ ինչ է կատարվում: Ոգելից խմիչքի զորությունը տարածվում է միայն նրա ուղեղի, բայց ոչ մարմնի վրա: Այդպիսի մարդը լինում է հիանալի, սրամիտ, հասարակության հոգին է դառնում: Դառնում է տիեզերական մասշտաբների կանխատեսող, երկաթե տրամաբանությամբ, որը հաճախ պարուրված է լինում սիլլոգիզմների պաճուճանքով: Ոգելից խմիչքը ցրում է նրա բոլոր պատրանքները, բացում դառը ճշմարտությունն այն մասին, որ նրա հոգին շղթայված է պարտքի երկաթյա օղակով: Այդպիսի պահերին Գարեհատիկ Ձոնը խարդավանքով ցույց է տալիս իր հզորությունը: Առվակի մեջ ընկնելը մի դժվար բան չէ: Բայց պահել իրեն և չընկնել՝ տանջալից փորձություն է, եթե դու արդեն հասունացած մարդ ես և հասկանում ես, որ քեզ միայն մեկ իրավունք է տրված՝ ինքնասպանություն գործել: Եվ հասունացման այդ պահին ակնհայտ է դառնում այն ճշմարտությունը, որ ճանաչելի են միայն կյանքի օրենքները, բայց դրանց իմաստը՝ երբեք: Եվ դա սարսափելի պահ է: Ինքդ էլ չգիտակցելով՝ մահվան արահետին ես ոտք դնում:

Կուրացուցիչ լույսը հանկարծ թափանցում է ամեն ինչի մեջ: Անմահություն գոյություն չունի, դա հեքիաթ է, հոգեկան խռովքի արդյունք, որը սերմանված է մահվան վախից և խորաթափանց երևակայությունից. թող երիցս անիծյալ լինի: Մարդը զրկված է մահվան բնազդից. երբ վերջին ժամը հնչում է, նրա մոտ նվազում է մեռնելու կամքը: Հենց այդ պատճառով էլ իրեն մխիթարում է ստով, որ իբր թե կհաջողվի խաբել ճակատագրին և նրանից պոկել երկրորդ կյանքը՝ հանդերձյալ աշխարհում: Փտել գերեզմանի խավարում, մոխրանալ դիակիզման վառարաններում, դա ուրիշների բաժինն է: Սակայն նա, ում աչքերը բաց է արել Գարեհատիկ Ձոնը, վերահասու է եղել ամբողջ ճշմարտությանը: Բոլորի վերջն էլ մեկ է: Լուսնի տակ ոչինչ նոր չկա, այդ թվում նաև անմահության առասպելը. դա փոքրոգիների մխիթարությունն է: Իսկ դո՛ւ, դու, որ ամուր ես կանգնած հողին, դո՛ւ լավ գիտես, թե ինչն ինչոց է: Մարմին, գինի, մտքի փայլատակում, արևի ճառագայթներ, աստղային փոշի՝ ահա թե ինչից է պատրաստված կարճ ժամանակի համար ոչ ամուր այդ մեխանիզմը, և ինչքա՞ն էլ որ ջանք թափեն գիտնական աստվածաբաններն ու բժիշկները, բայց էլի, վերջը մեկ է՝ աղբանոցը:

Հասկանալի է, որ մելամաղձության այդպիսի նոպան ոչ այլ ինչ է, եթե ոչ հոգեկան հիվանդություն, որը երևակայություն ունեցող մարդը հատուցում է Գարեհատիկի հետ բարեկամություն անելու պատճառով: Հիմարի գործն ավելի հեշտ է: Նա գիտակցությունը կորցնելու աստիճան հարբում է, թմրած քնում է և եթե երազներ է տեսնում, ապա դրանք խառնաշփոթ են: Իսկ գլուխ ունեցող մարդու համար Գարեհատիկ Ձոնը ուղարկում է Ճերմակ Տրամաբանության անողոք ու տեսլային սիլլոգիզմները: Եվ այդ մարդը սկսում է կյանքի ունայնությանը նայել գերմանացի հոռետես-փիլիսոփայի մաղձոտ հայացքով: Պսակազերծ է անում բոլոր պատրանքները: Վերագնահատում է բոլոր արժեքները: Բարին չար է, ճիշտը՝ խաբեություն, կյանքը ոչ այլ ինչ է, եթե ոչ մի կատակ: Եվ իր մոլագար զառանցանքի մեջ, աստծու պես հավատացած իր իսկ սեփական ճշմարտությանը, նա միայն վատն է տեսնում: Ճերմակ Տրամաբանության լույսի տակ կինը, երեխաները,

բարեկամները երկերեսանիներ են ու խաբեբաներ: Հավատացած լինելով, որ թափանցում է մինչև նրանց հոգու խորքը, տեսնում է այնտեղ միայն մանրուքներ, ոչնչություններ, մտքի աղքատություն և բարոյական անմաքրություն: Փորձում է նրանց և հասկանում, որ դրանք թշվառ ու չնչին եսասերներ են, խղճուկ մահկանացուներ, որոնց կյանքը ավելի կարճատև է, քան թիթեռնիկի օրը: Նրանք չեն տնօրինում իրենց ճակատագիրը: Նրանք պատահականության ստրուկներն են: Ինքը նույնպես: Նա այդ բանը հասկացել է: Հասկացել է նաև, որ ինքը ուրիշ է, ինքը ամեն ինչ տեսնում է և ամեն ինչ գիտե: Միակ իրավունքը, որ ինքը ունի, դա ինքնասպանության իրավունքն է: Եվ դա շատ վատ է: Չէ՞ որ մարդը ծնվում է, որ ապրի, սիրի ու սիրվի: Իսկ Գարեհատիկ Ձոնը նրան մղում է դեպի ինքնասպանություն՝ արագ կամ դանդաղ. ճակատին գնդակ արձակել կամ էլ քայլ առ քայլ հեռանալ կյանքից՝ երկար տարիների ընթացքում: Ով նրա հետ բարեկամություն է հաստատել, չի կարող խուսափել այդ ճակատագրական, արդար հատուցումից:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Ես առաջին անգամ խմեցի, երբ հինգ տարեկան էի: Շոգ օր էր, հայրս տնից մոտ կես մղոն հեռու, դաշտում վար էր անում: Ինձ ուղարկեցին, որ նրան գարեջուր տանեմ: «Տես հա՛, ճանապարհին չթափես» — ասացին ինձ տնից դուրս գալիս:

Գարեջուրը, հիշում եմ, փայտե դույլի մեջ էր, որի վերևի մասը լայն էր և կափարիչ չուներ: Ես քարշ էի տալիս դույլը, և գարեջուրը թափվում էր ոտքերիս: Գնում էի ու մտածում. ինչո՞ւ է այս գարեջուրը թանկագին բան համարվում: Երևի շատ համեղ է: Այլապես ինչո՞ւ են ինձ արգելում խմել: Չէ՞ որ ինչ ծնողներս արգելում են, միշտ էլ շատ համեղ բան է լինում: Ուրեմն, գարեջուրը նույնպես: Այդ մեծահասակները շատ լավ գիտեն, թե ինչն ինչոց է: Եվ ահա, հակառակի նման, դույլը լիքն է: Գարեջուրը թափվում է ոտքերիս ու գետնին: Ինչո՞ւ իզուր այդ բարիքը կորչի: Ոչ ոք չի իմանա թափե՞լ եմ, թե՞ խմել:

Ես այնքան փոքր էի, որ ստիպված պպզեցի, դույլը դրեցի ծնկներիս, որ կարողանամ խմել: Սկզբում լիզեցի փրփուրը: Աստվա՛ծ իմ: Ո՞վ է ասում, թե հիանալի համ ունի: Երևի փրփուրն է անհամ, քանի որ շատ զզվելի էր: Ես անմիջապես հիշեցի, որ մեծերը փրփուրը փչում են և հետո խմում: Քիթս խոթեցի դույլի մեջ և սկսեցի ծծել այդ թանձր հեղուկը: Այ թե զզվելի բան էր հա՛: Բայց և այնպես խմեցի: Չի կարող պատահել, որ մեծերը սխալվեն: Դժվար է ասել, թե այն ժամանակ ես ինչքան խմեցի. ճստիկ էի, իսկ դույլը հսկայական էր թվում, և ես առանց շունչ առնելու հա՛ խմում էի, դեմքս մինչև ականջներս թաղած փրփուրի մեջ: Բայց, ճիշտն ասած, կուլ էի տալիս դեղի նման. սիրտս խառնում էր և ուզում էի այդ տառապանքին շուտ վերջ տալ:

Վերջապես վեր կացա և զզվանքից ջղաձգվելով, շարունակեցի ճանապարհս: Երևի հետո դուր կգա, մտածում էի ես: Ճանապարհին մի քանի անգամ էլ խմեցի և հանկարծ նկատեցի, որ գարեջուրը բավականին պակասել է: Բայց մեկ էլ հիշեցի, որ գարեջուրը խառնում են, և մի փայտի կտոր գտնելով, սկսեցի խառնել այնքան, որ փրփուրը մինչև դույլի բերանը հասավ:

Հայրս ոչինչ չնկատեց: Նա շատ ծարավ էր և արագ դատարկելով դույլը, նորից գութանին կպավ: Ես փորձեցի քայլել նրա կողքից, բայց մի քանի քայլ անելով, ընկա ձիու տակ և քիչ մնաց պողպատե խոփը հարվածեր ինձ: Հայրս սանձերը այնպես կտրուկ ետ քաշեց, որ քիչ մնաց ձիերն ինձ տրորեն: Հետո հայրս ասաց, թե մազ էր մնացել, որ ես կործանվեի: Աղոտ հիշում եմ, թե նա ինչպես ինձ տարավ դաշտի եզրը, ուր ծառեր էին աճում. ամեն ինչ աչքերիս առաջ օրորվում էր, գնում-գալիս: Սիրտս սարսափելի խառնում էր, և տանջում էր վախը, որ ես վատ արարք եմ կատարել:

Ես մինչև երեկո քնեցի ծառերի տակ: Երբ արևը մայր էր մտնում, հայրս արթնացրեց ինձ, և, դժվարությամբ ոտքի կանգնելով, գնացի նրա հետևից: Ես ոչ ողջ էի, ոչ մեռած. ոտքերս կարծես

կապարից լինեին, ուղղակի խրվում էին փորիս մեջ, սրտախառնուքը դեմ էր առել կոկորդիս: Ես կարծես թունավորված լինեի: Ճիշտն ասած, դա հենց իսկական թունավորում էր:

Այդ դեպքից հետո երկար ժամանակ կորցրեցի հետաքրքրությունը գարեջրի նկատմամբ, ինչպես կորցրել էի խոհանոցային օջախի նկատմամբ, երբ մի անգամ ձեռքս այրեցի: Այո՛, մեծերը ճիշտ են: Գարեջուրը փոքրերի համար չէ: Մեծերին ի՞նչ կա որ, խմում են ու աչքն էլ չեն թարթում: Նրանց համար լուծողականն էլ, ուզածդ հաբերն էլ ոչինչ բան են: Դե՛, ես կարող եմ առանց գարեջրի էլ ապրել: Եվ ամբողջ կյանքումս հանգիստ կապրեի, եթե որոշ հանգամանքներ չլինեին: Այն միջավայրը, որտեղ մեծացա, Գարեհատիկ Ջոնը հրապուրում էր ամեն քայլափոխին: Նրանից թաքնվել հնարավոր չէր: Բոլոր ճանապարհները դեպի նրան էին տանում: Եվ քսան տարի շփվելով նրա հետ, ողջունելով նրան՝ հանդիպելիս, և գովելով առանց որևէ անկեղծության, վերջ ի վերջո ստիպեցին կապվել այդ սրիկայի հետ:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Իմ երկրորդ մենամարտը Գարեհատիկ Ջոնի հետ տեղի ունեցավ այն ժամանակ, երբ յոթ տարիս լրացավ: Այս անգամ ինձ խաբեց երևակայությունս. վախը ինձ մղեց դեպի ոգելից խմիչքը: Մեր ընտանիքը, որ գյուղատնտեսությամբ էր զբաղվում, տեղափոխվեց նոր ֆերմաներից մեկը, Սան Մաթեոյի շրջանում, Սան Ֆրանցիսկոյից հարավ՝ մի ամայի, մերկ ծովափ: Այն օրերին դա շատ խուլ տեղ էր և մայրս հաճախ հպարտությամբ մեզ հիշեցնում էր, որ մենք բնիկ ամերիկացիներ ենք, նման չենք մյուս ֆերմերներին, այդ իռլանդացիներին կամ իտալացիներին:

Մի կիրակի օր, առավոտյան, հիմա չեմ հիշում, թե ինչ առիթով, ես հայտնվեցի Մորրիսիի ֆերմայում: Այնտեղ էր հավաքվել շրջակա ֆերմաների երիտասարդությունը: Կային մարդիկ, որոնք ավելի հասակով էին և սկսել էին խմել դեռ մութուլուսը չբացված, անգամ անցած երեկոյից: Մորրիսիի բազմանդամ ընտանիքի բոլոր անդամները, նրա անհամար որդիներն ու ազգականները կարծես թե ջոկված լինեին. խոշոր էին, առողջ, ծանր երկարաճիտ կոշիկներ ունեին, հնչեղ ձայն ու ազդեցիկ բռունցքներ:

Հանկարծ բակից լսվեցին աղջիկների ճիչերը. «Օգնեցե՛ք, կռվում են»: Տղամարդիկ խոհանոցից դուրս թափվեցին ու նետվեցին այնտեղ: Բակում իրար էին կպել երկու ալեխառն, կարմրադեմ հսկաներ: Նրանցից մեկի մականունը Սև Մեթ էր. պատմում էին, որ նա երկու մարդ է սպանել: Կանայք ճչում էին, խաչակնքում, ինչ-որ աղոթքներ էին քրթմնջում, շատերը դեմքները ծածկել էին ձեռքերով, չնայած որ նայում էին մատների արանքից: Իսկ ես նայում էի աչքերս չորս արած: Կարելի է առանց չափազանցության ասել, որ ամենաշատ հետաքրքրվող հանդիսատեսը ես էի: Մեկ էլ տեսար բախտս բանեց և սպանություն տեսա: Կամ էլ, ծայրահեղ դեպքում, գոնե տղամարդկանց իսկական տուրուդմփոց: Չեք պատկերացնի, թե ինչքա՜ն մեծ էր իմ հիասթափությունը, երբ պարզվեց, որ Սև Մեթը և Թոմ Մորրիսին, բռնելով մեկմեկու գոտուց և բարձրացնելով հսկայական կոշիկներ հագած ոտքերը, դոփդոփում են տեղում մի զույգ վարժեցրած փղերի նման: Լավ տուրուդմփոցի համար երկուսն էլ շատ էին հարբած: Հենց այդտեղ էլ վրա հասան հաշտարարները և նրանց նորից խոհանոց քարշ տվին, որպեսզի վերականգնված նախկին բարեկամության առթիվ կոնծեին: Շուտով բոլորը միասին սկսեցին խոսել, և տղամարդկանց դյուցազնական կոկորդներից, որոնք սովոր էին բաց օդում աշխատելուն, հորդեցին ուրախ աղաղակներն ու ծիծաղը: Վիսկին բաց արեց սովորաբար լռակյաց այդ ֆերմերների լեզուները: Իսկ ես, որ պատրաստ էի ամեն րոպե ծլկել, վախից շունչս պահած, նայում էի բաց դռնից ու զարմանում, թե այս մեծերը ի՜նչ անհասկանալի մարդիկ են: Ինչո՞ւ հանկարծ այդ Սև Մեթը և Թոմ Մորրիսին կուրծքները դեմ արած սեղանին, իրար գրկած նստեցին և բարձրաձայն հեկեկում են:

Խոհանոցում կերուխումը շարունակվեց, և աղջիկները բակում անհանգստացան: Նրանք գիտեին, թե սովորաբար ինչպես են վերջանում այդպիսի քեֆերը և ամեն րոպե սպասում էին

դժբախտության: Ոչ ոք չէր ուզում այդ բանին վկա լինել: Եվ ահա մեկն առաջարկեց ամբողջ խմբով գնալ իտալացիների մեծ ֆերման, որը չորս մղոն հեռու էր Մորրիսիների ֆերմայից. այնտեղ կարելի էր պարել: Երկար ծանրութեթև չանելով, տղաներն ու աղջիկները բաժանվեցին զույգերի և գնացին ավազոտ ճանապարհով: Նկատեցի, որ ամեն մի տղա աշխատեց լինել իր սիրեցյալի կողքին. և ես՝ յոթնամյա ամենագետս աշխատեցի մտնել իմ հարևանների սիրային գործերի ընթացքի մեջ: Ինձ էլ մինչև անգամ ընկերուհի տվեցին՝ իմ տարիքի մի փոքրիկ իռլանդուհու: Այս ազատ և ուրախ խմբում, մեզնից բացի, ուրիշ երեխաներ չկային: Ամենահասակավոր զույգը հազիվհազ քսան տարեկան լիներ, իսկ տղաներից ու աղջիկներից շատերը՝ մոտ տասնչորս-տասնվեց տարեկան: Ես ու իռլանդուհին ամենաջահել հասակի ներկայացուցիչներն էինք և գնում էինք ձեռք ձեռքի տված, չնայած երբեմն, աշխատելով նմանվել մեծերին, գրկում էի նրա մեջքը: Բայց այդպես քայլելը հարմար չէր: Սակայն քայլում էի շատ հպարտ և կիրակի օրվա այդ արևոտ առավոտյան ճանապարհը, որ ձգվում էր ավազոտ բլրակների միջև, ինձ երկար ու մռայլ չէր թվում: Նայե՛ք, ես էլ ընկերուհի ունեմ, ես էլ արդեն մեծ եմ:

Իտալական ֆերման պատկանում էր ամուրի մարդկանց: Մեզ շատ սիրալիր ընդունեցին: Բոլորին հյուրասիրեցին կարմիր գինով և ընդարձակ սեղանատանը սկսեցին մի կողմ քաշել կահկարասին, պարերի տեղ բացելու համար: Տղաները ակորդեոնի նվագի տակ պարում էին իրենց ընկերուհիների հետ: Ինձ այդ երաժշտությունը հիասքանչ թվաց, դրանից լավը ես երբեք չէի լսել: Մինչև անգամ ջահել իտալացին, ակորդեոնը ձեռքին, մի քանի անգամ պարեց, գրկելով իր աղջկան և շարունակելով նվագել: Ես չէի մասնակցում պարերին: Նստած սեղանի մոտ, հիացմունքից աչքերս չորս էի արել: Չէ՞ որ դեռ փոքր էի և նոր տպավորությունները ներծծում էի մեծ ագահությամբ: Ժամանակ առ ժամանակ մեր իռլանդացի տղաները մոտենում էին սեղանին և գինի խմում. բոլորն ուրախ և լավ տրամադրության մեջ էին: Բայց ահա մի քանիսը սկսեցին պարելու ժամանակ սայթաքել, մինչև անգամ ընկան, մի տղա էլ գլորվեց անկյունը և այնտեղ էլ քնեց: Նրանց ընկերուհիները նեղացան և պատրաստվում էին հեռանալ, իսկ մյուսներն անհոգ ծիծաղում էին. իբր՝ մե՛զ ինչ:

Տանտերերն ինձ էլ առաջարկեցին ընկերովի խմել, բայց մերժեցի: Ես դեռ չէի մոռացել գարեջրի հետ եղած պատմությունը և չէի ցանկանում իմ փորձը հարստացնել: Իմ չար բախտից երիտասարդ իտալացի Պիտերը, մի նենգ մարդ, նկատելով, որ մենակ եմ նստած, հանկարծ ցավակցեց ինձ և սեղանի վրայով ինձ մեկնեց կես գավաթ գինի: Ես մերժեցի: Նրա դեմքն անմիջապես մռայլ արտահայտություն ստացավ, և նա սկսեց ավելի համառորեն ստիպել: Եվ հենց այդ ժամանակ էլ սիրտս մի ահ ընկավ. պատճառը հիմա կբացատրեմ:

Մայրս իր տեսությունն ուներ: Նախ՝ նա հաստատ համոզված էր, որ մարդկային ցեղի բոլոր սևահեր ու սևաչվի ներկայացուցիչները խաբեբաներ են: Ավելորդ է ասել, որ մայրս ինքը խարտյաշ կին էր: Նրա մյուս խոր հավատն այն էր, որ սևաչվի լատինական ժողովուրդները շուտ վիրավորվող են, խարդախ ու արնածարավ: Մորիցս փոխ առնելով կյանքի իմաստությունը, ես հիշողությանս մեջ շատ ամուր պահեցի նրա խոսքերը, որ եթե իտալացուն վիրավորես, թեկուզ շատ դատարկ մի բանով կամ ակամա, նա անմիջապես ձեռքը դանակին կտանի: «Եվ դանակը թիկունքդ կխրի»,— միշտ ասում էր մայրս:

Չնայած հենց այսօր ուզում էի տեսնել, թե Սև Մեթը ինչպես պիտի սպանի Թոմ Մորրիսիին, բայց հիմա ամենից քիչ էր գրավում թիկունքս խրված դանակով ինձ հաճույք պատճառելու հեռանկարը: Այդ ժամանակ դեռ չէի սովորել հասկանալ խոսքի և գործի միջև եղած տարբերությունը: Ես կուրորեն հավատում էի այն բանին, ինչ ասում էր մայրս իտալացիների մասին: Մյուս կողմից, իմ մեջ դեռ սաղմնային վիճակում մի պատկերացում կար, որ հյուրընկալությունը սուրբ բան է: Ես հյուրընկալվել եմ դաժան, շուտ վիրավորվող ու արնախում իտալացու մոտ: Ինձ ներշնչել էին, որ եթե նրան վիրավորեմ, դանակով ինձ այնպես կհարվածի, ինչպես սմբակով հարվածում է կամակոր ձին, երբ նրան զայրացնում ես: Դժբախտաբար, այդ Պիտերը հենց այնպիսի սև աչքեր ուներ, որոնցից ինձ զգուշացրել էր մայրս: Դրանք նման չէին ինձ ծանոթ մարդկանց, մեր ընտանիքի անդամների աչքերի գույնին՝ կապույտ, գորշ,

շագանակագույն կամ էլ իռլանդացիների աչքերի բարի գույնին՝ երկնքի լազուրին: Գուցե Պիտերը գինով էր, համենայն դեպս, նրա աչքերը փայլում էին անտրացիտի նման և ծաղրական կայծեր էին արձակում: Բայց ինձ համար այդ աչքերի արտահայտությունը հանելուկային էր. կարո՞ղ էի ես, յոթ տարեկան տղաս, վերլուծել, հասկանալ, որ ինձ հետ կատակ են անում: Պիտերի հայացքում կարդացի իմ մահվան դատավճիռը և իմ մերժումը կրկնեցի արդեն ավելի քիչ վճռական: Այդ ժամանակ Պիտերի աչքերը ավելի սարսափելի դարձան: Դաժան ու հրամայական նայելով, իտալացին ինձ մոտեցրեց գինով լի գավաթը:

Ի՞նչ էր մնում անել: Հետագայում ես շատ անգամ եմ դեմ-դիմաց հանդիպել մահվանը, բայց մի այնպիսի սարսռեցնող սարսափ, ինչպիսին զգացի ես այդ ժամանակ, այլևս երբեք չունեցա: Ես գավաթը մոտեցրի շուրթերիս: Պիտերի հայացքը մեղմացավ: Ուրեմն նա ինձ չի սպանի, ուրախացա ես: Սիրտս հանգստացավ, բայց ստամոքսումս, աստված գիտե, թե ինչ էր կատարվում: Գինին նոր էր քաշած, ամենաէժանագին տեսակից էր, դառն ու թթու, պատրաստված էր անպետք խաղողից և քամված էր տակառի հատակից: Ավելի զզվելի էր, քան գարեջուրը: Դեղը խմելու մի միջոց կա. խմել առանց մտածելու: Հենց այդ միջոցն էլ օգտագործեցի. գլուխս ետ գցելով, դատարկեցի գավաթը: Հետո ջղաձգաբար կուլ տվեցի, աշխատելով այդ թույնը պահել իմ մեջ, որը կարծես թե կրակով այրեց իմ ներսը:

Ես պատկերացնում եմ, թե Պիտերը ինչքան զարմացած կլիներ: Նա նորից մի կես գավաթ լցրեց և դրեց իմ առաջ: Սարսափից ուղղակի սառած, բայց հասկանալով, որ ճակատագրից չեմ կարող խուսափել, ես կուլ տվեցի երկրորդ գավաթը: Այս բանը Պիտերին բոլորովին անհավատալի թվաց: Որոշելով ուրիշին էլ իր հետաքրքիր հայտնագործությունից բաժին հանել, նա մոտ կանչեց մի ջահել, բեղավոր իտալացու՝ Դոմինիկին. թող մի նայի, թե ի՞նչ հրաշք է: Ինձ համար մի լիքը գավաթ լցրին: Ախր ի՞նչ զոհողություն ասես, որ չես անում կյանքդ փրկելու համար: Ես օգնության կանչեցի իմ ամբողջ արիությունը, խեղդեցի սրտախառնուքը և խմեցի:

Դոմինիկը հայտարարեց, որ կյանքում այդպիսի քաջ տղա չի տեսել: Նա էլի երկու անգամ լիքը լցրեց իմ գավաթը և նայեց, թե ինչպես եմ խմում գինին: Հենց այդ ժամանակ էլ իմ հերոսությունը գրավեց մյուսների ուշադրությունը: Ինձ շրջապատեցին տարիքն առած բատրակները, Հին Աշխարհից եկած իտալացիներ, որոնք անգլերեն չէին հասկանում և իռլանդացի աղջիկների հետ չէին պարում: Ես տեսնում էի թուխ, կոշտուկոպիտ դեմքեր, կարմիր վերնաշապիկներ, կաշվե գոտիներ և գիտեի, որ ինձ շրջապատող բոլոր մարդկանց մոտ, ծովահենների նման, դանակներ կան: Իսկ Պիտերը և Դոմինիկը անընդհատ պահանջում էին, որ ես ցույց տամ, թե ինչպես եմ խմում:

Եթե իմ անիծված երևակայությունը չլիներ, կհրաժարվեի և ինձ հետ այդպիսի դեպք չէր պատահի: Բայց մեր բոլոր տղաները տարված էին պարով, և ոչ ոք չկար, որ ինձ դժբախտությունից դուրս բերեր: Չգիտեմ, թե այդ սարսափելի թույնից այն ժամանակ ինչքան ստիպված եղա փորս լցնել: Հիշում եմ միայն անսահման վախը, որ կար ինձ շրջապատած արյունարբու ավազակախմբի նկատմամբ, կոշտ տախտակից պատրաստված սեղանը՝ վրան գինի թափած, մեկ էլ անթիվ-անհամար գավաթները՝ կրակե հեղուկով, որ ես անընդհատ խմում էի ու խմում: Ինչքան էլ գինին սարսափելի լիներ, մահացու վերք ստանալը ավելի վատ էր. և մտքումս անընդհատ կրկնում էի, թե պետք է կենդանի մնամ:

Հիմա, փորձից խելոք դարձած, ես հասկանում եմ, թե այն ժամանակ ինչպես գիտակցությունս չկորցրեցի: Արդեն ասել եմ, որ վախից սառել էի, կաթվածահար եղել և կարողանում էի միայն մեքենաբար բարձրացնել ձեռքս ու գավաթ գավաթի հետևից բերանս տանել: Ես քարացել, մի անոթ էի դարձել, որի մեջ գինի էին լցնում: Վախից ստամոքսս ուժասպառ էր եղել: Մինչև անգամ սիրտս չէր խառնում: Զարմանալի չէ, որ իտալացիները ինձ հրաշք երեխա համարեցին, տեսնելով, թե ինչպես ավտոմատի անտարբերությամբ այդքան գինի եմ կուլ տալիս: Սնապարծություն թող չլինի, եթե ասեմ, որ այդպիսի տեսարանը նրանց համար հրաշք էր:

Արդեն հրաժեշտ տալու ժամանակն էր: Տղաների հարբած արարքները ավելի հեռատես աղջիկներին ստիպեցին տուն շտապել: Ես ինձ գտա դրսում, իմ փոքրիկ ընկերուհու կողքին: Նրան այդպիսի դժբախտություն չէր պատահել, ինչպես ինձ: Ոչ ոք չէր փորձել խմեցնել: Նա հմայվածի նման նայում էր մեր տղաների օյիններին, որոնք աշխատում էին հավասարակշռություն պահել իրենց ընկերուհիների կողքից քայլելիս: Հետո սկսեց նրանց ծաղրել: Այդ բանն ինձ շատ զվարճալի թվաց, և ես էլ սկսեցի ութ գրել: Բայց չէ՞ որ իմ ընկերուհին չէր խմել, իսկ իմ այդ չարաճճիությունից գինու շոգին գլխիս խփեց: Հենց առաջին քայլերից ես ավելի լավ արեցի, քան նա, իսկ մի քանի րոպե հետո այնպիսի թռիչք կատարեցի, որ ինքս զարմացա: Ես նկատեցի, թե ինչպես մի տղա, որն օրորվելով մի տասը քայլ գնաց, կանգ առավ ճամփեզրին, մռայլ հայացքը հառեց առվակին և իր խորամիտ զննումը վերջացրեց նրանով, որ գլորվեց առվի մեջ: Այդ բանը շատ ծիծաղելի թվաց և, աշխատելով նմանվել նրան, ես էլ գնացի դեպի առվակը, իհարկե, առանց ընկնելու մտադրության: Սթափվեցի արդեն առվի մեջ, որտեղից ինձ դուրս քաշեցին վախեցած աղջիկները:

Հանկարծ ինձ ձանձրացրեց հիմարություններ անելը: Կատակելու տրամադրությունը միանգամից ցնդեց: Աչքերիս առաջ ամեն ինչ պտտվեց, շնչելը դժվարացավ, և ես սկսեցի ագահաբար օդ ներշնչել: Երկու աղջիկներ թևերիցս բռնած տանում էին: Ոտքերս ասես կապարից լինեին: Քունքերս ու սիրտս թխկթխկում էին, կարծես մուրճով էին հարվածում: Թե որ ես թույլ մարդ լինեի, այն ժամանակ անպայման կմեռնեի: Չնայած դիմացկուն էի, բայց մահվան դուռն էի հասել, մի բան, որ գլխի չէին ընկնում անհանգստացած ուղեկցուհիներս: Ես լսում էի նրանք ինչպես են վիճում՝ թե ով է մեղավոր, մի քանիսը մինչև անգամ լալիս էին, խղճալով իրենց, խղճալով ինձ, գանգատվելով իրենց տղաներից, որոնք այդպիսի արարքներ թույլ տվեցին: Բայց ես անտարբեր էի այդ բոլորի նկատմամբ: Ես շնչահեղձ էի լինում. օդը չէր բավականացնում: Ամեն մի քայլը տանջանք էր ինձ համար: Մինչև տուն չորս մղոն ճանապարհ կար: Չո՜րս մղոն: Ինչպես մշուշի մեջ, ես տեսա գետակի կամուրջը. հիշում եմ, ինձ թվաց, թե այդ կամուրջը շատ է հեռու: Բայց մի հարյուր ոտնաչափ էլ չէր լինի: Հասնելով կամուրջին, թուլացած ներքև գլորվեցի և բերանքսիվայր փռվեցի գետնին: Աղջիկները փորձեցին բարձրացնել ինձ, բայց շարժվել անգամ չէի կարողանում: Նրանք օգնություն կանչեցին: Մեզ մոտեցավ տասնյոթամյա Լարրին, որը նույնպես հարբած էր, և սկսեց արհեստական շնչառություն տալ, թռչկոտելով իմ կրծքի վրա: Հիշում եմ, չնայած շատ աղոտ, աղջիկների ծղրտոցը, որոնք մոտեցան Լարրիին և մի կողմ քաշեցին: Այլևս ոչինչ չեմ հիշում, բայց հետո ինձ պատմեցին, որ Լարրին մտավ կամրջի տակ, պառկեց ու մինչև առավոտ քնեց այնտեղ:

Երբ աչքերս բացեցի, արդեն մութ էր: Ամբողջ ճանապարհը ինձ տարել էին գիտակցությունս կորցրած վիճակում և տանը պառկեցրել անկողնում: Ես ծանր հիվանդի նման զառանցում էի: Ապրած սարսափները, որոնք չէին կարողանում տեղավորվել իմ մանկական գիտակցության ոլորտում, տանջալից ցնորքների մեջ էին գցում ինձ: Ինչ-որ մեկին սպանում էին, հետո մարդասպանները ընկնում էին իմ հետևից: Ես գոռում էի, աղմկում, պաշտպանվում: Անտանելի տանջվում էի: Երբ որ նոպաներից հետո գիտակցությունս մի պահ պարզվում էր, լսում էի մորս ձայնը. «Ա՛խ, ի՞նչ է լինելու սրա վերջը: Երեխաս խելքը թռցրել է»: Եվ նորից էի սկսում զառանցել, շնչահեղձ լինել մի նոր մղձավանջից. ես մի դեղին տան մեջ եմ, ինձ ծեծում են վերակացուները, իսկ շուրջս վայրենի աղաղակում են խելագարները:

Մի անգամ լսել և մտքումս պահել էի մեծերի խոսակցությունը Սան-Ֆրանցիսկոյի չինական անառակատների մասին: Եվ ահա զառանցանքի մեջ ինձ թվաց, թե մի գետնափոր եմ ընկել, և հազարավոր անառակատների ամուր դռների հետևում, հազար անգամ գնում եմ մահվան գիրկն ու ետ գալիս: Հանկարծ տեսնում եմ հորս. նա նստած է ստորգետնյա գերեզմաններից մեկում և չինացիների հետ խաղ է անում ոսկով, որը սփռված է սեղաններին: Ես սարսափելի հայհոյանքներ տեղացի, վեր թռա անկողնուց, դուրս պրծա հարազատներիս ձեռքերից և հայհոյեցի հորս՝ ամենահետին խոսքերով: Ես կրկնեցի այն բոլոր զզվելի հայհոյանքները, որ առանց հսկողության մնացած երեխան լսում է գյուղական տղամարդկանցից, բայց սովորական պայմաններում երբեք

չի համարձակվում բարձրաձայն ասել: Զառանցանքի մեջ ես հայհոյեցի հորս. սրիկան նստած է գետնափորում և չինացիների հետ խաղ է անում, չինացիների, որոնք երկար հյուսեր ունեն ու ծուռ մագիլներ:

Զարմանում եմ, թե այն ժամանակ ինչպես չմեռա: Հազիվ թե յոթնամյա տղայի երակներն ու նյարդային կենտրոնները ընդունակ լինեն դիմանալու սպիտակ տենդի այդ ահավոր նոպաներին: Այն գիշեր, երբ ես ընկա Գարեհատիկ Ձոնի ձեռքը, մեր փայտաշեն տանը ոչ ոք չքնեց: Բայց Լարրին, որը գիշերեց կամուրջի տակ, երևի այդպես չզառանցեց: Երևի իր համար մեռելի պես քնեց: Առավոտյան, գուցե, գինովությունից միայն գլուխն էր տրաքվում. ահա բոլորը: Եթե նա հիմա կենդանի լինի, ապա հազիվ թե հիշի այդ գիշերը. ինչ է, կյանքում քի՞չ բաներ են պատահում: Բայց ահա այդ գիշերը հավիտյան տպավորվեց հիշողությանս մեջ: Այդ ժամանակվանից անցել է երեսուն տարի, սակայն հիմա էլ, երբ գրում եմ այս տողերը, հիշում եմ խեղդող մղձավանջը և նորից եմ զգում այն տառապանքները, որ ապրեցի այդ գիշեր:

Ես երկար ժամանակ հիվանդ պառկեցի և մայրս արդեն կարող էր չհիշեցնել հարբեցողության վնասի մասին: Նա մտածում էր, որ ես վատ արարք եմ կատարել, շա՜տ վատ: Մի՞թե ինքը այդպես է սովորեցրել: Իսկ ես, չհամարձակվելով հակաճառել նրան, չիմանալով անգամ ինչպես պատմել իմ արարքի պատճառը, անկարող էի, իհարկե, բացատրել, որ հենց նրա խրատներն էլ առիթ դարձան այս բոլորին: Չէ՞ որ եթե նրա ասածները չլինեին սև աչքերի ու իտալացիների մասին, ես բերանս չէի տանի այդ զզվելի թթու բանը: Մեծանալուց հետո միայն հասկացա, թե որն էր այդ խայտառակ դեպքի իրական պատճառը:

Առողջանալու ժամանակ շատ բաների մասին էի մտածում: Այդ օրերին դեռ շատ բան չէի հասկանում, բայց ինչ-որ բան ինձ համար բոլորովին պարզ դարձավ: Ես մտածում էի, որ մեղք եմ գործել, բայց մարդիկ դարձյալ անարդար են: Չէ՞ որ ես մեղավոր չէի, չնայած վատ բան արեցի: Բայց և այնպես ինքս ինձ երդվեցի, որ այլևս չեմ խմի: Կատաղած շունը ջրից այնպես չէր վախենում, ինչպես այն ժամանակ ես վախենում էի գինուց:

Բայց էլի՛ պիտի ընդգծեմ. ինչքան էլ ինձ վրա թանկ նստեց այդ փորձը, սակայն չխանգարեց իմ հետագա բարեկամությանը Գարեհատիկ Ձոնի հետ: Արդեն այն ժամանակ ամեն ինչ իմ շուրջը դեպի նրան էր մղում: Նախ՝ բոլոր մեծահասակները, բացառությամբ մորս, որը խիստ ծայրահեղ հայացքներ ուներ, այս դեպքը շատ բարեհոգի էին ընդունում: Դատա՜րկ բան է: Ի՜նչ ամաչելու բան կա որ: Երկրորդ՝ իմ խայտառակության վկաները, տղաներն ու աղջիկները, ծիծաղելով պատմում էին, թե այդ օրը ով ինչպես աչքի ընկավ, և հիշում էին զանազան զվարճալի մանրամասներ. թե Լարրին ինչպես ցատկեց իմ կրծքին, իսկ հետո մեռածի պես փռվեց կամրջի տակ, ինչպես մի ուրիշ տղա գիշերն անցկացրեց ավազակույտի վրա, իսկ երրորդը առուն ընկավ: Այդ բոլորից ես մի բան հասկացա, որ ոչ ոք այդ դեպքը ամոթալի չի համարում: Ընդհակառակը, ես խիզախ մի գործ կատարեցի, որով կարելի է պարծենալ: Շրջապատողները այդ բանն ընդունեցին որպես մի նշանակալից դեպք, որը մի պահ մոռացնել տվեց միշտ մառախուղի մեջ կորած ծովափի տխուր օրերը:

Իռլանդացի ֆերմերները բարեհոգի նախատում էին ինձ, թփթփացնում մեջքս, և շուտով ինքս իմ աչքում հերոս դարձա: Պիտերը, Դոմինիկը արիության համար գովում էին ինձ: Հասարակական բարոյախոսությունը չէր արգելում խմել: Խմում էին, ի միջի այլոց, բոլորը: Մեր հասարակության մեջ չխմող չկար: Մինչև անգամ փոքրիկ գյուղական դպրոցի սպիտակահեր ուսուցիչը Գարեհատիկ Ձոնին անձնատուր լինելու օրերին մեզ հերթից դուրս արձակուրդ էր տալիս: Ոչ մի բարոյական արգելք այս մարզում գոյություն չուներ: Ոգելից խմիչքից առաջացած իմ զզվանքը զուտ ֆիզիոլոգիական բնույթ ուներ: Ինձ այդ սատանայական թույնը դուր չէր գալիս:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Այդպես էլ երբեք չկարողացա հաղթահարել ոգելից խմիչքի նկատմամբ ունեցած իմ ֆիզիկական զզվանքը: Բայց խեղդում էի այդ զզվանքը: Եվ հիմա էլ, ամեն անգամ խմելիս, ջանում եմ խեղդել: Իմ ճաշակը չէր հաշտվում դրա հետ, իսկ ես գիտեի. օգտակար է այն, ինչ համեղ է: Բայց մարդիկ խմում էին, առանց մտածելու օգուտի մասին, նրանք ուզում էին միայն թմրեցնել ուղեղը, իսկ թե մարմինը տանջվում է... ի՞նչ արած, ավելի վատ նրա համար:

Սակայն, չնայած ոգելից խմիչքի նկատմամբ ունեցած ֆիզիկական զզվանքին, իմ մանկական ամենապայծառ հուշերը կապված են գինիների հետ: Նստած կարտոֆիլով լցված սայլին, որը, խրվելով ավազների մեջ, քարշ էին տալիս մեր ձիերը, ես կծկվում էի խոնավությունից, չիմանալով ինչպես ձգել թմրած ոտքերս, բայց ճանապարհն ինձ երկար չէր թվում. ես գնում էի ու երազում: Երազում, որ ահա իմ հայրը կամ մեկ ուրիշը, նա, ով բռնել է սանձը, կանգ կառնի Կոլմեի գինետան մոտ և կմտնի խմելու: Ես էլ ներս կվազեմ, կտաքանամ հսկայական վառարանի մոտ և մի կարկանդակ կստանամ: Սովորական կարկանդակը ինձ հեքիաթային ուտելիք էր թվում: Ուրեմն, գինետներից էլ օգուտ կա: Նորից տեղավորվելով սայլին, ես մի ամբողջ ժամ վայելում էի կարկանդակը: Զգույշ կծելով փոքրիկ, շատ փոքրիկ կտորներ, վախենալով մի փշրանք անգամ կորցնելուց, ես այնքան երկար էի ծամում, որ ի վերջո դա ջրիկ շիլայի էր վերածվում, որը պարզապես կախարդական համ ուներ: Ես աշխատում էի կուլ չտալ, այլ միայն վայելում էի, պտտելով լեզվիս վրա, խոթելով մերթ մի այտիս տակ, մերթ մյուս, մինչև որ հալվում էր և կաթիլ-կաթիլ հոսում կոկորդիս մեջ: Ինքը՝ Հորաս Ֆլերչերը կարող էր սովորել ինձանից:

Ես սիրում էի գինետները: Հատկապես Սան-Ֆրանցիսկոյի գինետները: Այնտեղ ի՞նչ համեղ բաներ ասես չկան: Զարմանալի բուլկիներ ու թխվածքներ, պանիր, երշիկ, սարդինա՝ աստվածային ուտելիք, այնպիսի բաներ, որ ծնվածս օրից մեր տանը չեմ տեսել: Հիշում եմ, գինետան տերը մի անգամ ինձ քաղցր ըմպելիքով՝ սոդաջրի հետ խառնած օշարակով հյուրասիրեց: Հայրս դրա համար չվճարեց, գինետան տերը հյուրասիրեց ձրի և այդ պատճառով էլ ինձ համար դարձավ բարության ու առատաձեռնության մարմնացում: Ես երկար ժամանակ մտածում էի նրա մասին և հավիտյան մնաց իմ հիշողության մեջ, չնայած նրան տեսա միայն մեկ անգամ, երբ դեռ յոթ տարեկան էի: Նրա գինետունը գտնվում էր Սան-Ֆրանցիսկոյում, Մարկեթ-սթրիտից հարավ: Մուտքի ձախ կողմում վաճառասեղանն էր՝ խմիչքներով: Աջ կողմում մի ուրիշ վաճառասեղան կար, վրան ձրի նախաճաշիկ: Սրահը նեղ ու երկար էր, որի ծայրին, գարեջրի տակառների հետևում, կլոր սեղաններ ու աթոռներ էին դրված: Գինետան տերը կապտաչ, խարտյաշ մի մարդ էր, որի շեկ ու փափուկ մազերը դուրս էին ցցված մետաքսե սև թասակի տակից: Լավ եմ հիշում, որ նրա հագին շագանակագույն գործված ժիլետ էր և շշերի երկար շարքի մեջ մինչև անգամ հիմա էլ կարող եմ ցույց տալ այն տեղը, որտեղից վերցրեց կարմիր օշարակով լի սրվակը: Նա շատ երկար զրուցեց հորս հետ, իսկ ես, հիացած նրան նայելով, ներծծում էի քաղցր ջուրը: Եվ մինչև օրս էլ իմ մեջ մի երախտապարտ հիշողություն է մնացել:

Չնայած ոգելից խմիչքից իմ գլխին եկած փորձանքներին, որոնք այնքան ողբերգական վերջացան երկու անգամ էլ, Գարեհատիկ Ձոնը շարունակում էր ծաղրել և իր մատչելիությամբ գրավել ինձ. նրան հասնելու համար հարկավոր էր միայն ձեռքը պարզել: Գինետունը իմ մանկական երևակայության վրա դեռ անուղղակի ներգործություն ուներ, բայց արդեն բավական ուժեղ: Աշխարհը ճանաչել սկսած երեխան գինետունը արդեն հիանալի տեղ էր համարում: Ո՛չ խանութներում, ո՛չ հասարակական վայրերում, ո՛չ տներում, ուր մարդիկ են ապրում, ոչ ոք իմ առջև դուռը բաց չէր անում, չէր հրավիրում կրակի մոտ տաքանալու կամ էլ պատի մոտ գտնվող նեղ դարակից չէր տալիս կախարդական ըմպելիք: Բոլոր դռները միշտ փակ էին, միայն գինետան դռներն էին բաց: Միշտ և ամենուր, խճուղիների վրա ու գյուղամիջյան ճանապարհներին, բանուկ փողոցներում ու ամայի նրբանցքներում, ես միշտ էլ գտնում էի սրտաբաց գինետներ, ձմռան ցրտերին տաք ու պայծառ լուսավորված, ամառվա շոգերին՝ մութ ու զով: Գինետանը զգացվում էր հյուրընկալություն օտարի նկատմամբ, եթե չասեմ, տնական հանգստավետություն:

Երբ իմ տասը տարին լրացավ, մեր ընտանիքը թողեց ֆերման և քաղաք տեղափոխվեց: Ես այնտեղ սկսեցի փոստատարություն անել: Ինչո՞ւ: Նախ՝ մեր ընտանիքը փողի կարիք ուներ,

երկրորդ՝ ինձ անհրաժեշտ էր շարժում ու թարմ օդ: Բանը նրանումն էր, որ ես իմացա ձրի գրադարանի տեղը և այնքան էի կարդում, որ շշմում էի: Այն ֆերմաներում, ուր մենք առաջ ապրում էինք, կարդալու ոչինչ չկար: Ինչ-որ հրաշքով ինձ հաջողվեց չորս գիրք ձեռք բերել, և ես դրանք ագահությամբ կարդացի: Առաջինը Հարֆիլդի /Հարֆիլդ Ջեյմս Աբրահամ (1831—1881) — ԱՄՆ-ի քաղաքական գործիչ, մասնակցել է 1861—1865 թվականների քաղաքացիական պատերազմին, որպես հյուսիսայինների կողմնակից/ կենսագրությունն էր, երկրորդը՝ Պոլ դե Շեյուի /Պոլ դե Շեյու (1837—1903) — ամերիկացի ճանապարհորդ, որը հայտնի է Աֆրիկայում կատարած իր ուղևորություններով/ «Ճանապարհորդություն Աֆրիկայում», երրորդը՝ Ույդայի/ Ույդա — XII դարի անգլիացի կին գրող Լուիզա դե լա Ռամեի կեղծանունը, որի գրչին են պատկանում դարավերջին ժողովրդականություն վայելող մի քանի գրքեր: Այստեղ, երևի, Լոնդոնը նկատի է ունեցել Ույդայի «Սինյու» (1875) վեպը/ վեպն էր, որի վերջին քառասուն էջը չկար, և չորրորդը՝ Իրվինգի «Ալգամբրան» /«Ալգամբրա» — ամերիկացի նշանավոր գրող Վաշինգտոն Իրվինգի (1783—1859) հեքիաթների ու ակնարկների ժողովածուն/: «Ալգամբրան» տվեց մեր դպրոցի ուսուցչուհին: Ես ամաչկոտ տղա էի, ի տարբերություն Օլիվեր Թվիստի, իմ լեզուն չէր պտտում, որ էլի ուզեի, չնայած վերադարձնելով Իրվինգի վեպը, ես հույս ունեի, որ ուսուցչուհին ինքը մի բան կառաջարկի, բայց նա ոչինչ չտվեց, երևի ինձ անշնորհակալ համարելով, և ես դպրոցից վերադառնալիս, ամբողջ ճանապարհին, որը կլիներ մոտ երեք մղոն, վիրավորանքից լաց եղա: Դրանից հետո նվաղած սրտով ես շատ երկար սպասեցի, որ ինձ մի որևէ գիրք տա: Շատ անգամ վճռեցի խնդրել, բայց վերջին պահին լեզուս կապ էր ընկնում:

Եվ ահա ես հայտնվեցի Օքլենդում, ուր ձրի գրադարանի դարակներում հայտնաբերեցի հսկայական, մինչ այդ անծանոթ մի աշխարհ՝ հազարավոր գրքեր, ավելի հետաքրքիր, քան այն չորսը: Այն ժամանակ փոքրահասակ ընթերցողներին գրադարան չէին թողնում և ինձ հետաքրքիր դեպքեր պատահեցին: Հիշում եմ, գրացուցակում իմ ուշադրությունը գրավեց «Պերիգրին Փիկլի արկածները» /«Պերիգրին Փիկլի արկածները» — անգլիացի նշանավոր գրող Սմոլեթի (1721—1771) վեպը/ վերնագրով գիրքը: Ես լրացրեցի պահանջագիրը, և գրադարանավարուհին տվեց Սմոլեթի երկերի ժողովածուն, մի բարակ հատոր, առանց գրաքննության կրճատումների: Ես կլանում էի այն բոլորը, ինչ տալիս էին, բայց առանձնապես շատ էի սիրում պատմական վեպերը և արկածային գրքերը, ինչպես նաև զանազան ճանապարհորդների հիշողությունները: Ես կարդում էի առավոտները, օրվա ընթացքում և գիշերը: Կարդում էի անկողնում, ուտելիս, դպրոց գնալու ճանապարհին և տուն վերադառնալիս, կարդում էի ընդմիջումներին, երբ մյուս երեխաները դրսում խաղ էին անում: Ինձ մոտ նյարդային ցնցումներ սկսվեցին: Ով էլ որ ինձ մոտենում էր, ասում էի. «Հեռացի՛ր: Մի՛ ջղայնացրու ինձ»:

Այսպես, ուրեմն, տասը տարեկան հասակում ես փողոց ընկա, որպես լրագիր վաճառող: Այժմ ես կարդալու ժամանակ չունեի: Վազվզում էի քաղաքում և միաժամանակ սովորում էի կռվել, քացով խփել, սովորում էի համարձակ լինել և ուրիշների աչքերին թոզ փչել: Ես օժտված էի հետաքրքրասիրությամբ ու երևակայությամբ և ամեն ինչ ներծծում էի սպունգի նման: Ամեն ինչի հետ միասին ինձ հետաքրքրում էին նաև պանդոկները: Եվ պանդոկ չկար, որ չմտնեի: Բրոդվեյի արևելյան կողմում ընկած ամբողջ թաղամասում, Վեցերորդ և Յոթերորդ փողոցների միջև, ամեն քայլափոխին գինետներ էին հանդիպում:

Այս տեղերում ուրիշ կյանք էր թագավորում: Տղամարդիկ հատկապես բարձր էին խոսում, որոտալից ծիծաղում էին. ամեն ինչի մեջ այնպիսի մի թափ էր զգացվում, որը չկար առօրյա ձանձրալի կյանքում: Այստեղ եռում էին կրքերը, երբեմն էլ՝ շատ լուրջ. գործի էին դրվում ծանր բռունցքները, հոսում էր արյունը, և մարմնեղ ոստիկանները, հրելով ամբոխին, շտապում էին դեպքի վայրը: Տղայի համար, որի գլուխը լիքը լցված էր անվախ ճանապարհորդների ու նավաստիների կռիվների պատմություններով, գինետների տուրուդմփոցները, երբ ուրիշ բան չկար, գրավիչ բաներ էին թվում: Չէ՞ որ երբեք հետաքրքիր չի կարելի համարել թերթերը ձեռքին մի դռնից մյուսը վազելը: Իսկ այստեղ, անգամ թունդ հարբեցողների մոտ, որոնք գլուխները դրած

սեղաններին կամ էլ հատակին մեռելի պես քնած են, ինչ-որ խորհրդավոր ու հանելուկային բան կա:

Եվ մի բան էլ. գինետները օրինականացված էին: Քաղաքի մեծերը դրանք վավերացրել էին, արտոնագրեր տվել: Ոմանք, որոնք ավելի քիչ փորձ ունեին, գտնում էին, որ գինետունը ինչ-որ սարսափելի բան է: Գուցե, առարկում էի ես, բայց ի՞նչ իմաստով: Շա՛տ հետաքրքիր է: Հետաքրքիր են և՛ ծովահենները, և՛ խորտակվող նավերը, և՛ ամեն տեսակի ճակատամարտերը, բայց ո՞ր տղան ուրախ չի լինի զոհել իր կյանքը դրանք տեսնելու համար:

Պետք է ավելացնել, որ գինետներում ես հանդիպում էի նշանավոր մարդկանց. լրագրողների ու խմբագիրների, փաստաբանների ու դատավորների: Նրանք գինետների վրա հասարակական հավանության կնիք էին դնում: Դա միայն բորբոքում էր իմ հետաքրքրությունը: Ուրեմն, այդ մարդկանց համար էլ գինետներում ինչ-որ գրավիչ, անսովոր բան կա, մի բան, որը ես էլ էի զգում և փնտրում: Ես աշխատում էի հասկանալ, թե դա ինչ բան է. չէ՞ որ մարդիկ հենց այնպես չեն թողնում գալիս այստեղ, ինչպես ճանճերը մեղրի վրա: Աշխարհն ինձ թվում էր լուսավոր և ուրախ, դեռ չգիտեի, թե վիշտն ինչ է, դրա համար չէի հասկանում, որ գինետան մշտական այցելուները այստեղ խեղդում էին տաժանակիր աշխատանքի հոգնածությունը և անջնջելի հոգեկան դառնությունը:

Մի կարծեք, թե ես էլ էի խմում: Մինչև տասնհինգ տարեկան հասակս բերանս գինի չէի առնում, չնայած շփվում էի հարբեցողների հետ և հաճախ էի այցելում նման տեղեր: Չէի խմում միայն այն պատճառով, որ այդ բանն ինձ դուր չէր գալիս: Հինգ տարվա մեջ ես մի քանի անգամ փոխեցի աշխատանքս: Որոշ ժամանակ աշխատեցի պահեստում, սառույց էի տեղափոխում, հետո կեգելարանում, որտեղ սպիրտային խմիչքների բար կար, սպասյակ դարձա, հետո հավաքարար՝ զբոսայգու գարեջրի կրպակներում, ուր կիրակնօրյա զբոսանքներ էին կազմակերպվում:

Ձոզի Հարփերը, մի ուրախ ու հաստլիկ կին, գարեջրատուն էր պահում Տելեգրաֆ-ավենյուի և 39-րդ փողոցի անկյունում: Այնտեղ ես մի ամբողջ տարի երեկոյան թերթեր էի տանում, մինչև որ ինձ տեղափոխեցին Օքլենդի մյուս շրջանը, նավաշինարանները, որոնք վատ համբավ ունեին: Առաջին ամսվա վերջին ես գնացի Ձոզի Հարփերի մոտ փողը ստանալու, և նա ինձ համար մի գավաթ գինի լցրեց: Ես անհարմար զգացի հրաժարվել և խմեցի: Իսկ դրանից հետո միշտ աշխատում էի հանդիպել բուֆետապանին, ոչ թե նրան:

Կեգելարանում աշխատելուս առաջին օրը բուֆետապանը, հաստատված սովորության համաձայն, ընդմիջման ժամանակ մեզ՝ սպասյակներիս, խմելու հրավիրեց: Բոլորը գարեջուր խնդրեցին: Իսկ ես՝ լիմոնադ: Տղաները քրքջացին, իսկ բուֆետապանը զարմացած ու անվստահ նայեց ինձ: Բայց և այնպես բացեց լիմոնադի շիշը: Հետո, աշխատանքի ժամին հարմար պահ գտնելով, տղաները բացատրեցին, որ ես զայրացրեցի բուֆետապանին: Մի շիշ լիմոնադը ավելի թանկ արժե, քան գարեջրի բաժակը, ուրեմն ինքդ հասկացիր. եթե չես ուզում առանց աշխատանքի մնալ՝ գարեջուր խմիր: Բացի դրանից, չէ՞ որ գարեջուրը կշտացնող բան է: Իսկ լիմոնադի մեջ ի՞նչ կա: Դրանից հետո եթե ինձ չէր հաջողվում խուսափել, ես գարեջուր էի խմում և ամեն անգամ զարմանում էի, թե դրա մեջ մարդիկ ի՞նչ լավ բան են գտնում: Երևի, ինչ-որ բան չէի հասկանում:

Ես միայն քաղցրավենիք էի սիրում: Հինգ սենթով կարելի էր հինգ հատ մեծ-մեծ շոկոլադե գնդիկներ առնել և վայելել դրանք անվերջ-անսահման: Այդպիսի մի գնդիկ կարող էի մի ամբողջ ժամ ուտել: Ես սիրում էի նաև շագանակագույն, առաձգական նուգան /Նուգա — ընկույզից պատրաստված քաղցրեղեն/, որը մի մեքսիկացի էր վաճառում: Հինգ սենթով նա այնպիսի մի մեծ կտոր էր տալիս, որ երեք ժամում էլ չես կարող ուտել վերջացնել: Նուգա ուտելուց հետո ես հաճախ ճաշելու կարիք չէի զգում: Կուշտ էի լինում, իսկ գարեջրով երբեք փոր չես լցնի:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Բայց կյանքը ինձ համար նոր ճակատամարտեր էր պատրաստել Գարեհատիկ Ձոնի դեմ: Իմ տասնչորս տարին արդեն լրացել էր: Կարդալով ծովագնացների մասին, երազելով արևադարձային կղզիների և ծովային անհայտ հեռուների մասին, ինձ համար շարժական ողնուցով մի մակույկ ճարեցի ու նրանով ակոսում էի Սան Ֆրանցիսկոյի ծոցի և Օքլենդի ծովախորշի մերձափնյա ջրերը: Ես ուզում էի նավաստի դառնալ, ուզում էի ազատվել ձանձրույթից ու միօրինակությունից: Իմ պատանեկության ծաղկման շրջանում էի, երազում էի արտասովոր արկածների ու ծովահենների հրոսակախմբի մասին, չկասկածելով անգամ, որ թե՛ արկածները, թե՛ հրոսակախումբը մի աղբյուր ունեն՝ ոգելից խմիչքը:

Եվ ահա մի անգամ, երբ բարձրացնում էի առագաստը, ինձ մոտեցավ Սքոթին: Նա տասնյոթամյա բարձրահասակ մի տղա էր, որը, իր ասելով, փոքրավոր էր եղել բրիտանական նավի վրա և այնտեղից փախել էր Ավստրալիայում կանգ առնելու ժամանակ: Աշխատանքի անցնելով մի ուրիշ շոգենավում, հասել էր Սան Ֆրանցիսկո և հիմա մտադիր է ծառայության մտնել կետորսական նավի վրա: Խարսխակայանում, կետորսական տորմիղից ոչ հեռու, կանգնած է «Այդլեր» յախտան: Նրա պահակը հարպունահարն է, որը պատրաստվում է «Բոնանզա» կետորսական նավով ճանապարհ ելնել: Չե՞մ համաձայնվի արդյոք, նրան՝ Սքոթիին, իմ մակույկով այդ հարպունահարի մոտ տանել:

Ախր ինչպե՞ս կարող եմ չհամաձայնել այն բանից հետո, երբ այնքան հետաքրքիր բաներ եմ լսել մաքսանենգորեն Հավայական կղզիներից ափիոն տեղափոխող այդ նավի և նրա պահակ հարպունահարի մասին: Ես հաճախ էի տեսնում այդ երիտասարդին և նախանձում նրա ազատ կյանքին. նա ծովից երբեք չի բաժանվում, մինչև անգամ քնում է «Այդլերի» վրա, իսկ ես պետք է միշտ տանը քնեի: Այդ երիտասարդը տասնինը տարեկան կլիներ (ի միջի այլոց, որ հարպունահար է, ստիպված էին հավատալ նրա ասելով. ուրիշ ոչ մի վկայություն չկար), բայց ինձ համար այնքան հերոսական մի անձնավորություն էր, որ երբեք սիրտ չէի անի մինչև անգամ հետը խոսել, և ես միշտ ակնածալից հեռավորության վրա էի մնում նրա յախտայից: Այսպես, ուրեմն, կհրաժարվե՞մ փախած նավաստի Սքոթիին տանել նրա մոտ, մաքսանենգների յախտան: Մի՞թե դա խելքի մոտ բան է:

Լսելով մեր կանչը, հարպունահարը տախտակամած ելավ և հրավիրեց իր մոտ: Մեծ ու փորձված նավաստու նման ես ետ հրեցի նավակը, որպեսզի չքերծեմ սպիտակ ներկված յախտան, և ճարպիկ շարժումով նավակը կապեցի ցած նետված ֆալին: Մենք ներքև իջանք: Մինչ այդ ինձ երբեք չէր վիճակվել նավասենյակ տեսնել: Պատից կախված հագուստից բորբոսի հոտ էր գալիս: Ի՜նչ կա որ: Չէ՞ որ ծալ-ծալ աստառ ունեցող այդ կաշվե բաճկոնը և կապույտ թիկնոցը հագնում են միայն նավաստիները: Ե՛վ բրեզենտե գլխարկները, և՛ ռետինե բարձրաճիտ կոշիկները, և՛ մոմլաթե անձրևանոցները նույնպես նավաստիներն են հագնում: Նավասենյակում, երևի, հաշվի էր առնված տարածության ամեն մի դյույմը, ահա թե ինչու այդքան նեղ մահճակալներ են սարքված, ծալովի սեղաններ, պատին ամրացված ինչ-որ տարօրինակ պահարաններ: Ես տեսա ամենագետ կողմնացույցը, լապտերը՝ կարդանի կախարանի վրա, անկյունում, կապույտ կողմը վեր, անխնամ փաթաթված ծովային քարտեզներ, ազդանշանային դրոշակներ՝ այբբենական կարգով, և օրացույց, որն ամրացված էր պատին՝ ծովային կարկինի սուր ծայրով: Ա՛յ սա կյա՜նք է: Վերջապես ես նավ ընկա, և այստեղ, մաքսանենգների յախտայում, հարպունահարն ու փախստական անգլիացի նավաստին, որն իրեն Սքոթի էր անվանում, ինձ հետ խոսում էին ինչպես հավասարի հետ:

Տասնիննամյա հարպունահարը և տասնյոթամյա նավաստին իրենց իսկական տղամարդու պես էին պահում: Տանտերը անմիջապես ակնարկեց, որ վատ չէր լինի մի քիչ խմել, և հյուրը, փորփրելով գրպանները, մի քանի կոպեկ դուրս բերեց: Հարպունահարը վերցրեց տափաշիշը և գնաց գաղտնի անառակատունը (գարեջրատներ մոտերքում չկային) վիսկի ճարելու: Մենք փոքր գավաթներով խմում էինք զզվելի օղին: Թող չասեն, որ ես թույլ եմ կամ էլ տեղի կտամ: Այս երկուսը

տղամարդ տղաներ էին, և դա երևում էր նրանց խմելուց: Ով խմել գիտե, նա տղամարդ է: Եվ ես նրանց հետ խմում էի գավաթ գավաթի հետևից, ոչինչ չխառնելով օղուն և ոչինչ չուտելով, չնայած այդ գարշանքը չէր կարելի համեմատել ո՛չ մեքսիկական նուգայի, ոչ էլ աստվածային շոկոլադե գնդիկի հետ: Ես ցնցվում էի ամեն մի գավաթի վրա, սիրտս խառնում էր, բայց քաջաբար թաքցնում էի իմ զզվանքը:

Այդ երեկո դատարկ տափաշշով մենք մի քանի անգամ գնացինք և վերադարձանք լիքը լցրած: Ես նույնպես մասնակցեցի ծախսին, տղամարդու նման մեջտեղ հանելով իմ ամբողջ հարստությունը՝ քսան սենթը, իհարկե, ոչ առանց թաքուն ափսոսանքի. ինչքա՞ն կոնֆետ կարող էի առնել այդ փողով: Խմիչքից մենք բավական հարբեցինք: Հարպունահարը Սքոթիին պատմում էր Հորն հրվանդանի մոտ պատահող փոթորիկների և հարավային հողմերի, Լապլատայի ցուրտ քամիների, Բերինգի ծովի ահավոր ալեկոծության և մրրիկների, Արկտիկայի սառույցների մեջ մնացած կետորսական նավերի մասին:

— Այնտեղ այնքան էլ երկար չես կարող լողալ: Ձուրը ոնց որ սառույց լինի,— մտերմաբար ասաց նա՝ դառնալով ինձ:— Մի րոպեում ցուրտը ձեռքերդ ու ոտքերդ կտանի և վե՛րջ: Իսկ եթե կետը շուռ տա նավակը, անմիջապես պառկիր թիակի երկայնքով, այն ժամանակ, մինչև անգամ եթե ոտքդ հանկարծ բռնվի, կարող ես ջրի վրա մնալ:

— Հասկանալի է,— շնորհակալությամբ գլխով արեցի, համոզված, որ կետորս պիտի դառնամ և ինձ աղետ է սպասում Սառուցյալ օվկիանոսում: Այդ թանկագին խորհուրդը շատ լուրջ ընդունեցի և մինչև օրս էլ հիշում եմ:

Ես սկզբում շատ չէի խոսում: Աստվա՛ծ իմ, ախր ես ի՞նչ եմ նրանց հետ համեմատած՝ տասնչորսամյա մի տղա, որը դեռ օվկիանոսի հոտը չի առել: Ինձ մնում էր միայն լսել, թե ինչ են ասում այդ փորձված ծովագայլերը և նրանցից ետ չմնալով, կոնծում էի գավաթ գավաթի հետևից: Թող տեսնեն, որ ես ինչքան չլինի տղամարդ եմ:

Գինովությունն իրեն զգացնել էր տալիս: Կամաց-կամաց անհետանում էին նավասենյակի անծուկ պատերը և հարպունահարի ու Սքոթիի խոսքերը մխրճվում էին իմ գիտակցության մեջ, ինչպես քամու կատաղի հոսանք. երևակայությունն ինձ օրորում էր ալիքների վրա, և ես արդեն մտովի ապրում էի հոյակապ, կատաղի, մոլեգին ծովային արկածները: Մենք խմում էինք ընկերության կենացը: Ձսպվածությունն անհետանում էր, անվստահությունը ոնց որ դանակով կտրես: Հանկարծ թվաց, թե մենք արդեն վաղուցվանից գիտենք իրար և հանդիսավոր երդում տվեցինք, որ սրանից հետո նավարկության կգնանք անպայման երեքս միասին: Հարպունահարը պատմեց իր անհաջողությունների և թաքուն մեղքերի մասին: Սքոթին լաց եղավ, հիշելով Էդինբուրգում թողած իր ծեր մորը, որն ինչպես ինքն էր ասում, ազնվական ծագում ունի և իր պատճառով ընկել է նեղության մեջ. մայրը ստիպված էր եղել ամեն ինչից զրկվել, որպեսզի շոգենավային ընկերությանը վճարեր իր տղայի ծովային մասնագիտություն սովորեցնելու վարձը: Մոր նվիրական երազանքն է եղել Սքոթիին տեսնել առևտրական նավատորմի սպա ու ջենթլմեն դարձած և նա շատ է վշտացել, իմանալով, որ իր սիրելի որդին Ավստրալիայում փախել է նավից և ուրիշ նավի վրա հասարակ ծովային դարձել: Իր խոսքերը հաստատելու համար Սքոթին գրպանից հանեց մոր վերջին շատ տխուր նամակը և լալով, բարձրաձայն կարդաց: Իմ ու հարպունահարի աչքերն էլ արցունքոտվեցին, և մենք երդվեցինք, որ բոլորս միասին աշխատանքի կանցնենք կետորսական «Բոնանզա» նավում և, երբ վերջացնելով նավարկությունը, շատ փող կստանանք, կգնանք Էդինբուրգ ու ինչ որ աշխատել ենք, բոլորը կլցնենք բարի պառավի գոգը:

Իսկ գինովությունն ավելի ու ավելի էր բորբոքում իմ ուղեղը: Ո՞վ կարող էր հանձին ինձ՝ հիմա ճանաչել ամաչկոտ ու համեստ այն տղային: Հիմա նորահայտ Գարեհատիկ Ձոնի երկվորյակը իշխում էր իմ շուրթերին և ձայնս լսելի էր դարձել. թող իմանան, որ ես էլ տղամարդ եմ, արկածների անվախ որսորդ: Ես սկսեցի պարծենալ, թե իմ մակույկով ամենակատաղի հարավարևմտյան քամու ժամանակ ինչպես եմ լողում ծովածոցում, երբ մեծ շխունաների

նավապետները սիրտ չեն անում խարիսխ բարձրացնել: Հետո ես (կամ էլ իմ երկվորյակը՝ Գարեհատիկ Ջոնը, դա նույն բանն է) հայտարարեցի նավաստի Սքոթիին, որ նա, չնայած նավարկել է օվկիանոսային նավերով և գիտե նրանց կառուցվածքը, բայց ես առագաստանավերի գործում վարպետ եմ. կարող եմ նրան ահագին բան սովորեցնել:

Ի միջի այլոց ասեմ, որ դա սուտ չէր, չնայած ուրիշ ժամանակ իմ բնածին համեստությունը թույլ չէր տա բարձրաձայն վիճել Սքոթիի փորձառության վերաբերյալ: Բայց Գարեհատիկի հատկությունն այդպիսին է. նա բաց է անում լեզուն, և մարդ դուրս է տալիս իր ամենագաղտնի մտքերը:

Սքոթին, որին Գարեհատիկ Ջոնը նույնպես ինչ-որ բան էր շշնջացել, բնականաբար, վիրավորվեց: Բայց ես չզիջեցի: Ես սրան, այս փախստական տիպին, ցույց կտամ, որ նշանակություն չունի, թե նա տասնյոթ տարեկան է: Մենք տաքացանք և գլուխներս գովեցինք, կռվարար աքաղաղների նման իրար վրա քշեցինք, բայց հարպունահարը ստիպեց հաշտվել և մի-մի գավաթ էլ խմել: Դրանից հետո մենք քնքուշ գրկախառնվեցինք և երդվեցինք հավիտյան բարեկամ լինել: Այդ ժամանակ էլ ես հիշեցի այն կիրակին, Սան Մաթեոյի ֆերման և երկու հսկաներին՝ Սև Մեթին ու Թոմ Մորրիսիին, որոնք սկզբում կռվեցին և հետո այնպես, ինչպես մենք, հաշտվեցին: Այս համեմատությունը օգնեց, որ ինձ բոլորովին մեծ զգամ:

Շուտով սկսվեց երգը. Սքոթին ու հարպունահարը ինչ-որ ծովային երգ ծղրտացին, ես էլ ձայնակցեցի: «Այդլերի» վրա ես առաջին անգամ լսեցի «Փչի՛ր, համընթաց քամի», «Ամպն է լողում», «Վիսկի, Ջոնի, վիսկի» երգերը: Ես երանության գագաթնակետին էի հասել: Ահա իսկական կյանքը: Ոչ թե իմ տխո՞ւր գոյությունը. Օքլենդի ծովածոցը, թերթերը ձեռքին վազվզելը, սառույց տեղափոխելը, կեգլիի հետ գործ ունենալը: Ամբողջ աշխարհը հիմա իմն էր, և բոլոր ճանապարհները սկսվում էին իմ ոտքերի տակից: Գարեհատիկ Ջոնը բորբոքել էր երևակայությունս, իմ առջև բացելով մի այնպիսի ապագա, որը լի էր անսովոր դեպքերով:

Մենք արդեն հասարակ մահկանացուներ չէինք, այլ գինովցած ջահել աստվածներ, չտեսնված խելոք, մեծահոգի ու հզոր: Հիմա մի քիչ ավելի մեծանալուց հետո հասկանում եմ, որ եթե ալկոհոլը մարդուն միշտ բարձունքները տաներ, ապա կցանկանայի ամեն օր խմել: Բայց մեր աշխարհում հատուցումը անխուսափելի է: Գոյություն ունի երկաթյա մի օրենք. ուժը փոխհատուցվում է թուլությամբ, հոգու թռիչքի փոխարեն՝ հոգեկան անկումով, արիության ակնթարթի փոխարեն՝ կեղտի մեջ սողալով: Եթե երկար, շա՜տ երկար ժամանակվա ընթացքում քեզ համար երջանկության մի րոպե կարողանաս կորզել, հետո քեզանից մի վաշխառուական տոկոս կգանձվի. կյանքդ կկարճանա:

Զգացումների ուժը և զգացումների մնայունությունը ջրի և կրակի նման հավիտենական թշնամիներ են: Համատեղ գոյություն ունենալ չեն կարող: Եվ մինչև անգամ այնպիսի մի կախարդ, ինչպիսին ինքը Գարեհատիկ Ջոնն է, նա էլ օրգանական քիմիայի այնպիսի մի ստրուկ է, ինչպես մենք՝ մահկանացուներս: Մենք հատուցում ենք մեր նյարդերի մարաթոնյան վազքի համար, և Գարեհատիկ Ջոնը մեզ չի ազատի փոխհատուցումից: Նա կարող է մեզ վեր բարձրացնել, բայց հավիտյան այնտեղ պահել չի կարող, հակառակ դեպքում բոլոր մարդիկ նրա կողմնակիցները կդառնային: Դրա փոխարեն, եթե դու ոտքդ դրել ես նրա ճանապարհին, ուրեմն վճարիր այդ դիվային պարի համար:

Սակայն վերն ասածը ավելի հասուն մտածողության արդյունք էր: Այդ բանը դեռ չէր հասկանում տասնչորսամյա տղան, որը «Այդլերի» նավասենյակում հարպունահարի ու նավաստու միջև նստած, վայելում էր ծովայինների հագուստներից փչող բորբոսի հոտը և ձայնակցում նոր ընկերների՝ «Յանկի՛, ձեզ օգնության են գալիս» երգին:

Հարբածի սրտաբացության պոռթկալու պահին մենք գոռում էինք և բոլորս միասին խոսում: Ես շատ ամուր օրգանիզմ ունեի, ջայլամի ստամոքս, և ամբողջ ուժով շարունակեցի մրցումը, իսկ Սքոթին կամաց-կամաց սկսեց հանձնվել: Նրա խոսքը անկապ դարձավ. ոչ այն է՝ բառեր չէր

գտնում, ոչ այն է՝ լեզուն էր փաթ ընկնում: Թունավորված գիտակցությունը մշուշվեց: Աչքերի խելոք արտահայտությունը կորավ: Հարբած ուղեղը թուլացրեց դեմքի ու մարմնի մկանները (ուղիղ նստելու համար կամք էր պետք): Կորավ շարժումները ղեկավարելու ընդունակությունը: Սքոթին ցանկացավ վիսկի լցնել, բայց թուլացած ձեռքից գավաթը ցած ընկավ: Ես շատ զարմացա, երբ նա դառը լաց եղավ, հետո ոտքերը գցեց մահճակալին ու անմիջապես քուն մտավ:

Ծիծաղելով մեր ձախորդ բաժակակցի վրա, ես ու հարպունահարը շարունակեցինք խմել վերջին տափաշիշը, Սքոթիի ծանր խռմփոցի նվագակցության տակ: Վերջապես հարպունահարն էլ գլորվեց. ռազմադաշտում մենակ մնացի:

Ես հպարտությամբ էի լցված: Գարեհատիկ Ջոնը՝ նույնպես: Ահա թե ինչպիսի քաջն եմ ես: Երկուսին էլ հաղթեցի: Նրանք գինուց անզգայացած փռվել են, իսկ ես ամուր կանգնած եմ ոտքերիս վրա: Հիմա մինչև անգամ տախտակամած կելնեմ՝ մաքուր օդ շնչելու: «Այդլերի» այս կերուխումը ցույց տվեց, որ ես կլայեկած ստամոքս ունեմ և երկար ժամանակ չեմ հարբում: Ջահել ժամանակ ես շատ էի պարծենում իմ այդ հատկությամբ, բայց հիմա հասկանում եմ, որ իմ դժբախտությունը հենց դրա մեջ էր: Ավելի լավ է մարդ երկու-երեք գավաթից հետո հարբի և, ընդհակառակը, դժբախտ է նա, ով կարող է անվերջ խմել ու չհարբել:

Մութն արդեն ընկնում էր, երբ ես տախտակամած ելա: Նավասենյակում ինձ համար էլ տեղ կճարվի, բայց ես պետք է տուն գնայի: Բացի դրանից, ինքս ինձ ցանկանում էի ապացուցել, որ դիմացկուն տղա եմ: Նավեզրի մոտ օրորվում էր իմ մակույկը: Տեղատվությունը վերջացել էր: Ջուրը հեռանում էր՝ կռվելով օվկիանոսից ժամում քառասուն մղոն արագությամբ փչող ուժեղ քամու դեմ: Ես տեսա ալիքների սուր կատարները և նրանց ներքևում՝ տեղատվության հոսանքը:

Բարձրացրի առագաստը, նստեցի ռումպելի մոտ, իջեցրի շկոտները և դեպի ափ գնացի: Մակույկը թեքվեց և կատաղի օրորվեց: Ջրի շատրվանը թրջեց ինձ: Ես բարձր տրամադրության մեջ էի: Լողում էի, երգելով «Փչի՛ր, համընթաց քամի» երգը և ինձ արդեն փոքրիկ տղա չէի համարում, որը փտում է ձանձրալի Օքլենդում, այլ տղամարդ, աստված. ինքը՝ բնությունն էլ սանձահարված իմ կամքից, հնազանդվում էր ինձ:

Տեղատվությունը վերջացավ: Ջուրը մոտ հարյուր յարդ հեռացավ ափից, բացելով փափուկ, տղմոտ հատակը: Ես առաջ տվեցի քիլը և խրվեցի տիղմի մեջ. հավաքեցի առագաստները և իմ սովորության համաձայն կանգնելով նավախելին, սկսեցի թիավարել: Հենց այդտեղ էլ ես կորցրեցի հավասարակշռությունս և օրորվելով ընկա, դեմքով ուղիղ դեպի կպչուն ցեխը: Բայց, որ ես հարբած էի, կարողացա հասկանալ միայն այն ժամանակ, երբ ոտքի ելա ամբողջովին տղմաթաթախ: Քիլին կպած խեցիները չանգռել էին ինձ, և արյուն էր գալիս: Ոչինչ, դատարկ բան է: Այնտեղ, խարսխակայանում, երկու ամրակազմ նավաստիներ խմիչքից անզգայացած՝ փռվել են մահճակալներին, և ո՞վ է նրանց հաղթել: Իհարկե ե՛ս: Ուրեմն, ես տղամարդ եմ: Արդեն կարողանում եմ կանգնած մնալ, չնայած մինչև ծնկներս թաղված եմ ցեխի մեջ: Նավ վերադառնալը իմ արժանապատվությունից ցած էի համարում: Հրում էի մակույկս և քարշ գալով տիղմի մեջ՝ բարձր երգում. թող բոլորն էլ իմանան, որ ես տղամարդ եմ:

Հատուցումը չստիպեց իրեն երկար սպասել: Ես մի քանի օր հիվանդացա, ձեռքերիս քերծվածքները թարախակալեցին և մի շաբաթ շարունակ ոնց որ առանց ձեռքերի լինեի, մինչև անգամ վերնաշապիկս ոչ կարողանում էի հանել, ոչ էլ հագնել:

Երդվեցի այլևս չխմել: Վե՛րջ: Թե չէ վնասն ավելի շատ է, քան օգուտը: Հատուցումը շա՛տ թանկ է: Խղճի խայթ չէի զգում, այլ՝ միայն ֆիզիկական զզվանք: Ինձ թվում էր, թե ոչ մի ուրախ րոպե չի կարող փոխհատուցել տանջանքի ժամերին վատ տրամադրությանը: Վերսկսելով զբոսանքները իմ մակույկով, ես աշխատում էի, ինչքան կարող եմ, հեռու մնալ «Այդլերից»: Սքոթին այլևս չէր երևում: Հարպունահարը դարձյալ նույն տեղումն էր, բայց ես խուսափում էի նրանից: Մի անգամ, նկատելով, որ նա ափ է դուրս գալիս, ես թաքնվեցի պահեստի հետևը: Վախենում էի, որ նորից կառաջարկի խմել, գուցե մոտը լիքը տափաշիշ կա:

Բայց և այնպես,— և հենց դրա մեջ էլ թաքնված է Գարեհատիկ Ձոնի կախարդանքը,— «Այդլերի» կերուխումը իմ միապաղաղ կյանքում շատ պայծառ մի իրադարձություն էր: Ես դա հաճախ էի հիշում իր բոլոր մանրամասներով: Ի միջի այլոց, հենց դա էլ ինձ համար պարզ դարձրեց տղամարդկանց վարվելակերպի մի քանի տարօրինակ կողմերը: Սքոթին ինձ մոտ լաց էր լինում, որ ինքը անպետք տղա է, տանջվում էր Էդինբուրգում թողած մոր՝ ազնվական ծագում ունեցող այդ տիկնոջ թշվառ բախտի համար: Հարպունահարը պատմում էր իր հետ պատահած զարմանալի, հետաքրքիր բաներ: Այդ բազմաթիվ հուզող ակնարկները այն մասին, թե ինչպիսին է կյանքը իմ նեղ աշխարհի սահմաններից այն կողմ, բորբոքում էին երևակայությունս և հավատացած էի, որ ես այդ երկուսից պակաս արժանի չեմ այդպիսի կյանքի համար: Իմ առջև բացվում էին տղամարդկային հոգու գաղտնարանները և իմ սեփականը նույնպես. ես այնտեղ այնպիսի կարողություններ և ուժեր էի գտնում, որոնք առաջ մտքովս անգամ չէին անցնում:

Այո՛, այն օրը յուրահատուկ օր էր: Մինչև հիմա էլ այդպիսին է թվում: Նրա հուշը ուղղակի փորագրված է իմ ուղեղի մեջ: Բայց դրա փոխարեն փոխհատուցում էր պահանջվում: Ես հրաժարվեցի վճարել և վերադարձա իմ «գնդիկներին» ու մեքսիկական նուգային: Բախտիցս էլ, իմ առողջ կազմվածքը չէր թողնում ոգելից խմիչքին մոտենալ: Ինձ համար զզվելի էր այդ գարշելի թույնը: Բայց հանգամանքները նորից ու նորից ինձ մղում էին դեպի հարբեցողության ճանապարհը: Երկար տարիներ գործ ունենալով Գարեհատիկի հետ, ես սովորեցի, սկսեցի ամենուր փնտրել նրան, ուր որ հավաքվում էին տղամարդիկ, և գովում էի, ինչպես ընկերոջս ու բարերարիս կգովեի: Եվ դրա հետ միաժամանակ արհամարհում ու ատում էի նրան: Այո՛, տարօրինակ ընկեր է այդ Գարեհատիկ Ձոնը:

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

Նոր էր լրացել իմ տասնհինգ տարին, երբ աշխատանքի ընդունվեցի պահածոյի գործարանում: Մի քանի ամիս անընդհատ օրական ամենաքիչը տասը ժամ էի աշխատում: Եթե դրան ավելացնենք ճաշի ընդմիջումը, ճանապարհը՝ մինչև ֆաբրիկա և ֆաբրիկայից էլ տուն, այն ժամանակը, որ հարկավոր էր առավոտյան վեր կենալու, հագնվելու և նախաճաշելու, իսկ երեկոյան ընթրելու, հանվելու և պառկելու համար, ապա քսանչորս ժամից հազիվ ինը ժամ մնա: Հապա թող այդ ինը ժամում առողջ պատանին հասցնի քունն առնել: Բայց ես այդ ինը ժամից էլ մի բան գողանում էի ընթերցանության համար, մինչև որ քունը փակում էր աչքերս:

Պատահում էր, որ մինչև կեսգիշեր մեզ պահում էին գործարանում: Իսկ երբեմն էլ աշխատանքային օրը երկարում էր տասնութ, քսան ժամով: Մի անգամ ստիպված եղա մեքենայի մոտ երեսունվեց ժամ կանգնած մնալ: Մի քանի շաբաթ անընդհատ ես ֆաբրիկայից տուն էի գնում տասնմեկից ոչ շուտ և անկողին էի մտնում միայն տասներկուսն անց կեսին, իսկ չորսն անց կեսին արդեն վեր էի կենում և արագ-արագ հագնվելով ու մի բան ուտելով, աշխատանքի էի շտապում, որպեսզի ուղիղ յոթին, շչակը տալուն պես, մեքենայի մոտ լինեմ:

Հիմա մի որպե անգամ չէի գտնում իմ սիրած զբաղմունքի՝ ընթերցանության համար, բայց այստեղ ի՞նչ գործ ունի Գարեհատիկ Ձոնը: Ի՞նչ կապ ունի տասնհինգամյա տղայի աշխատանքային վիճակագրությունը պատմելու հետ: Օ՛, շատ մեծ: Դատեցեք ինքներդ: Ինքս ինձ հարց էի տալիս. մի՞թե կյանքի իմաստը բանող անասուն լինելու մեջ է: Ախր Օքլենդում ոչ մի ձի այդքան չի աշխատում: Եթե կյանքը դա է, ապա ինձ բնավ էլ չի հրապուրում: Ես մտածում էի խեցեպատ մակույկիս մասին, հիշում էի ծովածոցի զեփյուռը, լուսաբացն ու մայրամուտը, որոնք այլևս չէի տեսնում, հիշում էի, թե ծովի աղի հոտը ինչպես է խուտուտ տալիս ռունգները և աղի ջուրը ինչպես է այրում մաշկը, երբ սուզվում ես, հիշում էի, որ աշխարհը լի է գեղեցիկ, զարմանալի, անսովոր բաներով, բայց այդ բոլորը ինձ համար անհասանելի են: Ինձ թվում էր, որ տաժանակիր աշխատանքից ազատվելու միակ միջոցը ամեն ինչ թողնել ու ծով գնալն է: Ծովում միշտ էլ կարող եմ մի կտոր հաց վաստակել: Բայց ծովը անխուսափելիորեն մղում էր դեպի

Գարեհատիկ Ջոնի գիրկը. ես դա չգիտեի և երբ իմացա, իմ մեջ բավական վճռականություն գտա պահածոների այդ անիծյալ մեքենայի մոտ չվերադառնալու համար:

Ես ձգտում էի այնտեղ, ուր փչում էին արկածների քամիները: Իսկ արկածների քամիները ոստրեահենների նավերը քշում էին Սան-Ֆրանցիսկոյի ծովածոցի երկայնքով: Գիշերային հարձակումները օտար ոստրեային տիրույթների վրա, տուրուդմփոցը ծանծաղուտներում, ավարով վերադարձը քաղաքային խարսխակայանների մոտով, իսկ առավոտ վաղ՝ շուկան, գնորդները՝ առևտրականներ ու պանդոկապաններ... Ուրիշների ունեցվածքի վրա հարձակվելը համարվում էր քրեական հանցագործություն, որի համար բանտ, կալանավորի շերտավոր հագուստ և շարքերով քայլել էր սպասվում: Է՛հ, ի՞նչ արած, ասում էի ինքս ինձ, մինչև անգամ բանտում աշխատանքային օրն ավելի կարճ է, քան պահածոյի ֆաբրիկայում: Ավելի հետաքրքիր է ոստրեահեն լինել կամ էլ բանտարկյալ, քան թե մեքենայի ճորտ: Ես արկածների, ռոմանտիկայի ծարավ էի, և արբեցուցիչ ջահելությունը լցնում էր իմ հոգին:

Եվ ահա ես գնացի իմ նախկին ստնտուի՝ Ջեննիի մոտ, որի սև կուրծքը ծծել էի մանուկ հասակում: Նա մի քիչ ավելի հարուստ էր, քան իմ ծնողները. հիվանդապահուհի էր և դրա համար լավ վարձատրություն էր ստանում: Չի՞ կարող արդյոք մի քիչ փող պարտք տալ իր «սպիտակ որդուն»: Դա ի՞նչ հարցնելու բան է որ: Վերցրո՛ւ, ինչքան քեզ պետք է:

Հետո ես փնտրեցի Ֆրանսիացի Ֆրենկին, այն ոստրեահենին, որը, ինչպես լսել էի, ցանկանում էր վաճառել իր «Կարուսել» անունով նավակը: Նավակը խարիսխ էր գցել ալամեդյան կողմում, Ուեբսթերյան կամուրջի մոտ. երբ գնացի Ֆրենկի մոտ, նա հյուրեր ուներ, որոնց քաղցր գինի էր հյուրասիրում: Գործի մասին խոսելով, մենք տախտակամած ելանք: Այո՛, նա պատրաստ է վաճառել իր նավակը: Բայց այսօր կիրակի է: Բացի դրանից, մոտը հյուրեր կան: Վաղը նա կայքագիր կպատրաստի, և ես կարող եմ արդեն համարվել նավի տերը: Իսկ հիմա նա ինձ հրավիրում է իր ընկերների հետ ծանոթանալու: Հյուրերը նստած էին ներքևում. երկու քույրեր՝ Մեյմին ու Տեսսը, որոնց պատշաճության համար ուղեկցում էր ոմն միսիս Հեդլին, տասնվեցամյա ոստրեահենը, որի մականունը Վիսկի Բոբ էր, և սևաբեղ նավահանգստային առնետը, քսանամյա Բլոճ Հիլին: Մեյմին Բլոճի ազգականուհին էր, որին մեծարում էին ոստրեահենների Թագուհի անունով, և կերուխումի ժամանակ նա միշտ էլ նստում էր պատվավոր տեղում: Ֆրենկը սիրահարված էր նրան (մի բան, որն այն ժամանակ չգիտեի), բայց աղջիկը ոչ մի կերպ չէր համաձայնվում ամուսնանալ նրա հետ:

Մեր գործարքը նշանավորելու համար Ֆրենկը մեծ շշից ինձ համար մի բաժակ կարմիր գինի լցրեց: Ես հիշեցի իտալական ֆերմայի կարմիր գինին և ցնցվեցի: Մինչև անգամ գարեջրի ու վիսկիի նկատմամբ ես այդպիսի զզվանք չէի զգում: Բայց Թագուհին բարձրացնելով իր կիսատ բաժակը, հայացքը հառել էր վրաս: Իմ մեջ էլ հպարտություն կա: Չնայած տասնհինգ տարեկան եմ, բայց թույլ չեմ տա, որ Թագուհուն մեծ համարեն, իսկ ինձ՝ ոչ: Դեռ շուրջս էլ ուրիշ մարդիկ կան. նրա քույրը, միսիս Հեդլին, ոստրեահեն մի տղա, բեղավոր Բլոճը, բոլորն էլ լիք լցված բաժակներով: Եվ մի՞թե թույլ կտամ, որ ծծկերի տպավորություն թողնեմ: Ո՛չ, հազար անգամ ոչ: Ավելի շուտ ամբողջ շիշը կխմեմ: Եվ ես տղամարդու նման դատարկեցի իմ բաժակը:

Ֆրանսիացի Ֆրենկը շատ ուրախ էր գործարքի համար, որը ես հաստատեցի կանխավճարով՝ քսանդոլարանոց մի ոսկեդրամով: Նա նորից բոլորի համար գինի լցրեց: Ես արդեն պատեհություն էի ունեցել համոզվելու իմ օրգանիզմի դիմացկունության մեջ և մտածում էի, որ եթե նրանց հետ թեկուզ մի քիչ խմեմ, ապա ստիպված չեմ լինի ամբողջ շաբաթ տառապել: Ինձ համար սարսափելի չէր նրանց հետ հավասար խմելը, քանի որ մինչև իմ գալը նրանք, ինչպես պետքն էր, հասցրել էին կոնծել:

Սկսեցին երգել: Բլոճը երգեց «Բոստոնի գողերը» և «Սևուկ Լյուն», Թագուհին՝ «Եթե ես թռչնակ լինեի», իսկ նրա քույրը՝ Տեսսը՝ «Ա՛խ, մի՛ նեղացնի իմ աղջկան» երգերը: Ուրախությունը քանի գնում, այնքան ծավալվում էր: Ես տեսա, որ բոլորովին էլ պարտադիր չէ ամեն անգամ խմել. ոչ ոք,

միևնույն է, չի նկատում, և ոչինչ էլ չի հարցնում, այնպես որ, բազրիքի կողմը թեքվելով, ես իմ գինին ծովն էի թափում:

Ես այսպես էի դատում. մարդիկ շատ տարօրինակ են, ինչո՞ւ է նրանց այս զզվելի բանը դուր գալիս: Լա՜վ, դա նրանց գործն է: Ես չէ, որ պետք է նրանց սովորեցնեմ: Ընդհակառակը եթե ցանկանում եմ, որ ինձ մեծ համարեն, պետք է ձևացնեմ, թե խմելն ինձ էլ է դուր գալիս: Համաձայն եմ: Ձե՛ռքդ տուր: Բայց ես շատ քիչ պիտի խմեմ, միայն այնքան, ինչքան անհրաժեշտ է պատիվս պահելու համար:

Այդ ընթացքում Թագուհին սկսեց սեթևեթել նորահայտ ծովահենի, այսինքն՝ ինձ հետ: Ոչ թե ինչ-որ մեկի, այլ նավակի տիրոջ հետ: Նա բարձրացավ տախտակամած մի քիչ թարմ օդ շնչելու և ինձ էլ իր հետ վերև քարշ տվեց: Իմ մտքով անգամ չէր անցնում, բայց նա, իհարկե, գիտեր, որ ներքևում, նավասենյակում, Ֆրենկը զայրույթից կատաղել է: Շուտով մեզ միացան Տեսսն ու Բլոճը, հետո էլ՝ Բոբը և, վերջապես, միսիս Հեդլին՝ Ֆրենկի հետ: Մենք, բաժակները ձեռքներիս, նստած երգում էինք և երբեմն գինով շիշը իրար էինք տալիս: Միակ չհարբածը նրանց մեջ ես էի:

Եվ ես, իհարկե, բոլորից երջանիկ էի: Երեկ, այս ժամանակ նստած էի մեքենայի մոտ, գարշելի հեղձուկ օդում և անընդհատ միևնույն գործողությունն էի կատարում: Ի՞նչ հակադրություն տախտակամածին տիրող անհոգ ուրախության հետ: Ես հրաշքով ընկա այստեղ և ահա յուրայինի պես նստած եմ արկածախնդիր ոստրեահենների մեջ, որոնք չեն ցանկանում լինել հաստատված կարգերի ստրուկները, որոնք արհամարհում են բոլոր արգելքներն ու օրենքները և դարձել են իրենց բախտի տերը: Գարեհատիկ Ջոնը օգնեց ինձ՝ դեն նետելու շփոթությունն ու վախը և հաղորդակից դառնալ ազատ հոգիների այս միությանը:

Երեկոյան մեղմ քամին ներխուժում էր իմ թոքերը, ալեկոծում ծովածոցի ջրերը, քշում շալանդաները, որոնք անհամբեր ոռնում էին, պահանջելով, որ կամուրջները բարձրացնեն: Շուրջը դեսուդեն էին գնում կարմիր խողովակավոր քարշանավերը, և նրանց փրփրադեզ քղանցքները օրորում էին մեր նավակը: Պահեստից դուրս քաշեցին շաքարով բեռնված բարժան, որն անցավ մեր մոտից: Արևի ճառագայթները ոսկեզօծել էին մանր ալիքները. կյանքը հոյակապ էր թվում: Բլոճը երգեց.

Չէ՞ որ սա Լյուն է, օ՜, իմ սևուկ Լյուն,

Ո՞ւր էիր կորել դու օրեր քանի...

Ա՜խ, նստած բանտում

Բախտս էի կարդում,

Արդյոք սիրելիս ինձ ձեռք կմեկնի՞:

Ինձ համար սա ապստամբություն էր, ռոմանտիկ ոգու մարմնացում, արգելված, բայց փայլով ու համարձակությամբ լցված ինչ-որ բան: Ես գիտեի, որ վաղը պահածոյի ֆաբրիկա չեմ գնալու: Վաղը դառնալու եմ ոստրեահեն, սկսելու եմ ավազակություն անել ամենաբաց ծովահենի նման, ինչպես կարելի է մեր ժամանակներում, Սան-Ֆրանցիսկոյի ծովածոցում: Բլոճն արդեն համաձայնել է լողալ ինձ հետ, մեն-մենակ ներկայացնել իմ ամբողջ անձնակազմը և մինչև անգամ ուտելիք պատրաստել, երբ նավակը ես վարելիս լինեմ: Օրվա կարգը այսպիսին պիտի լինի. առավոտյան ուտելիքի և խմելու ջրի պաշար կտեսնենք, հետո կբարձրացնենք մեծ առագաստը՝ գրոտը (այդպիսի մեծ առագաստով ես դեռ երբեք չեմ նավարկել) և, տեղատվությունը վերջանալուն պես, դուրս կգանք քամուն դեմ հանդիման: Հենց որ մակընթացությունը սկսվի, մենք կպակասեցնենք առագաստները, կսլանանք դեպի Ասպարագուս կղզին և այնտեղ խարիսխ կգցենք ափից մի քանի մղոն հեռու: Վերջապես, կիրականանա իմ երազանքը. ես ջրերի վրա պիտի քնեմ: Հաջորդ օրը երբ արթնանամ, շուրջս ջուր կլինի, իսկ հետո, ամբողջ ժամանակ, օր ու գիշեր, ջրերի վրա պիտի լինեմ:

Երբ արևը մայր մտնելու ժամանակ Ֆրանսիացի Ֆրենկը պատրաստվում էր իր հյուրերին ափ իջեցնել, Թագուհին խնդրեց, որ իրեն իմ մակույկով տանեմ: Սակայն ես չհասկացա, թե ինչու Ֆրենկը հանկարծ ափ դուրս գալու միտքը փոխեց և հյուրերին տեղ հասցնելու գործը Վիսկի Բոբին հանձնելով, մնաց նավակում: Չհասկացա նաև, թե ինչու Բլոճը քմծիծաղով իմ ականջին շշնջաց. «Գրողը տանի, ախպե՛րս, դու ոչինչ ձեռքիցդ չես փախցնում»: Ախր, կարո՞ղ էր արդյոք իմ մտքով անցնել, որ ճերմակահեր, հիսունամյա այդ մարդը խանդում էր ինձ՝ փոքրիկ տղայիս:

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

Երկուշաբթի օրը, առավոտ վաղ, ինչպես պայմանավորվել էինք գործարքը վերջացնելու համար, հանդիպեցինք Ջոնի Հեյնհոլդի գարեջրատանը, որը «Վերջին հավանականություն» անունն էր կրում: Ես վճարեցի ինչքան պետք էր և ստացա կայքագիրը, որից հետո Ֆրանսիացի Ֆրենկը հյուրասիրեց: Այդ բանն ինձ չզարմացրեց. երևի մի այդպիսի սովորություն կա, ընդսմին, շատ խելացի. փող ստացողը «թրջում է» գործարքը այնտեղ, ուր այն կնքվում է: Ինձ զարմացնում էր մի ուրիշ բան. Ֆրենկը հանուն ինչի՞ է հյուրասիրում բոլորին: Ահա մենք երկուսով խմում ենք, դա ճիշտ է, բայց ինչո՞ւ հրավիրել նաև Ջոնի Հեյնհոլդին՝ գարեջրատան տիրոջը: Ես անմիջապես մտածեցի, որ նա փող է աշխատում և այն գավաթից, որը ինքն է խմում: Հրավիրեց նաև Բլոճին և Վիսկի Բոբին. ինչքան չլինի ընկերներ էին, միասին էին նավարկել: Բայց ի՞նչ գործ ունեին նավահանգստային բեռնակիրներ Բիլլ Քելլին և Սուփ Քենեդին:

Շուտով մեզ միացավ Փեթը՝ Թագուհու եղբայրը, և մենք յոթ հոգի դարձանք: Օրը նոր էր սկսվում և բոլորն էլ իրենց համար վիսկի պատվիրեցին: Ինձ ի՞նչ էր մնում անել տղամարդկանց այս ընկերակցության մեջ, որոնք խմել էին սկսել դեռ վաղ առավոտից: «Վիսկի՛», հրամայեցի ես անտարբեր ձայնով, կարծես թե դա ինձ համար սովորական բան էր: Ես գավաթը միանգամից դատարկեցի: Բը՜ռռ: Մինչև օրս էլ բերանումս զգում եմ այդ զզվելի համը:

Իմանալով, որ Ֆրանսիացի Ֆրենկը հյուրասիրության համար ութսուն սենթ վճարեց, ես սարսափեցի: Ութսուն սե՜նթ: Իմ խնայող հոգին հուզվեց: Այն, ինչ խմեցինք մենք խաղ ու պարով, մի ակնթարթում, հավասար էր ֆաբրիկայի իմ ութժամյա աշխատանքի վարձին: Եվ օգուտն ի՜նչ... Դառը բան ու վե՜րջ: Շա՜տ շռայլ մարդ է այս Ֆրանսիացի Ֆրենկը, խոսք չկա:

Իմ համբերությունը հատավ: Ուզում էի դուրս գալ այդտեղից և անմիջապես վազել դեպի իմ հիասքանչ նավակը: Բայց, չգիտես ինչու, ոչ ոք չէր ուզում հեռանալ: Մինչև անգամ Բլոճը, որ մեն-մենակ իմ ամբողջ անձնակազմն էր, դանդաղում էր: Իսկ ես, հիմարս, այնպես էլ գլխի չընկա, թե նրանք ինչի են սպասում: Արդեն հետո հաճախ էի աշխատում պատկերացնել, թե ես այն ժամանակ ինչպես էի երևում նրանց աչքում. օտարին ընդունել են իրենց ընկերության մեջ, իսկ նա գոնե մի անգամ մարդկանց չհյուրասիրեց:

Ֆրանսիացի Ֆրենկը, որ դեռ երեկվանից էր կատաղած իմ դեմ, «Կարուսելի» բոլոր փողերը ստանալուց հետո այլևս չէր թաքցնում իր զայրույթը: Ես զգացի այդ բանը, նկատելով նրա չար հայացքը, բայց պատճառը չէի կարողանում հասկանալ: Մարդկանց ինչքան մոտիկից էի ճանաչում, այնքան նրանք ինձ համար առեղծվածային էին դառնում: Ջոնի Հեյնհոլդը վաճառասեղանի վրայով թեքվեց դեպի իմ կողմը և շշնջաց.

— Նա քո վրա ատամներ է սրում: Զգուշացի՛ր:

Ես ներողամտորեն գլխով արեցի այն մարդու նման, որը փորձից խելոք է դարձել և ճանաչում է մարդկային ցեղը: Բայց հոգուս մեջ տարակուսում էի: Աստվա՜ծ իմ: Տասնհինգ տարվա մեջ միայն տաժանակիր աշխատանք էի տեսել ու մեկ էլ ընթերցանությամբ զբաղվել, այն էլ երբ ազատ ժամանակ էր լինում: Բացի դրանից, ես բոլորովին անտարբեր էի ոստրեահեների Թագուհու նկատմամբ և չէի պատկերացնում, թե Ֆրենկը, որպես իսկական ֆրանսիացի, խենթի պես սիրում է նրան: Կարո՞ղ էի արդյոք գլխի ընկնել, որ ակամա վիրավորել եմ Ֆրենկին, որ նավահանգստում

արդեն չարախինդ շշուկներ էին պտտվում այն մասին, թե Թագուհին հենց որ տեսել է ինձ, անմիջապես նրանից հրաժարվել է: Պարզ է, եթե ես այդ բանն իմանայի, ապա կհասկանայի, թե ինչու Թագուհու եղբոր՝ Փեթի, տրամադրությունը ընկած է:

Վիսկի Բոբն ինձ մի կողմ կանչեց:

— Մի խորհուրդ տամ քեզ. աչքերդ չորս արա,— շշնջաց նա:— Ֆրենկը վտանգավոր մարդ է: Ես նրա հետ մի տեղ եմ գնում, ոստրե որսալու համար շխունա ենք գնելու: Թե որ ծանծաղուտներում նրան հանդիպես, տես հա՛, աչքիցդ չփախցնես: Նա սպառնում է նավդ խորտակել: Գիշերը, եթե իմանաս, որ նա մոտակայքում է, խարիսխդ քաշիր և հեռացիր: Հա՛, չմոռանաս, լույսերդ էլ հանգցնել: Հասկացա՞ր:

Այդ էր պակաս, որ չհասկանայի: Ես գլխով արեցի, շնորհակալ եղա խորհրդի համար՝ ինչպես տղամարդը տղամարդուն, և մոտեցա վաճառասեղանի մոտ կանգնած իմ ընկերակիցներին: Այդպես էլ նրանց չհյուրասիրեցի: Մտքովս էլ չէր անցնում, թե նրանք դրան են սպասում: Հետո ես Բլոճի հետ հեռացա և նույնիսկ հիմա էլ ամոթից կարմրում եմ մինչև ականջներս, երբ փորձում եմ պատկերացնել, թե այն ժամանակ մարդիկ ինչե՛ր կարող էին ասած լինել իմ մասին:

Ես Բլոճից, իբր թե պատահաբար, հարցրեցի, թե Ֆրենկը ինչո՞ւ է կատաղում:

— Խանդում է և դրանից էլ կատաղում է,— պատասխանեց նա:

— Ի՞նչ ես ասում,— ժպտացի ես ու մտածեցի. «Ա՛յ քեզ հիմար բան»:

Դժվար չէ հասկանալ, թե ի՞նչ տղամարդկային հպարտություն արթնացրեց տասնհինգամյա տղայի մեջ այն բանը, որ Ֆրանսիացի Ֆրենկը, հիսունն անց մի տղամարդ, այդ արկածախնդիրն ու բոլոր օվկիանոսներում եղած նավաստին, խանդում է ինձ այն աղջկա պատճառով, որը շատ ռոմանտիկ մականուն ունի՝ «Ոստրեահենների թագուհի»: Նման բան ես կարդացել էի գրքերում, բայց որ ինձ հետ կպատահեր, չէի պատկերացնում: Գուցե, հետագայում կպատահի, բայց թե ե՞րբ: Չէ՞ որ այն առավոտ, երբ մենք առաջին անգամ բարձրացրինք գրոտը և վեր քաշելով խարիսխը, առագաստները պարզած սլացանք դեպի ծովածոցը՝ բոլոր քամիների դեմ հանդիման, ես դեռ բոլորովին դեղնակտուց թռչնակ էի:

Այսպես, ուրեմն, ես հրաժեշտ տվեցի պահածոյի ֆաբրիկայի տառապալից աշխատանքին և ոստրեահեն դարձա: Ճիշտ է մի բան, որ կերուխումը ինձ մտերմացրեց ծովահեններին, և գալիքն էլ հենց նույն բանն էր խոստանում: Բայց հո դրա համար չեմ կարող ճանապարհից ետ դառնալ: Ամեն տեղ, ուր թագավորում է ազատ կյանքը, տղամարդիկ խմում են: Ռոմանտիկային ու արկածներին միշտ էլ ուղեկցում է շիշը: Հանուն առաջինի և երկրորդի, պետք է սովորել երրորդին: Եթե չես ուզում, ապա վերադարձիր ձրի գրադարանի գրքերի մոտ և կարդա ուրիշների քաջագործությունների մասին, բայց արդեն սեփականի մասին մի՛ մտածիր անգամ, եթե ժամում տասը սենթ վաստակելու համար պահածոյի մեքենայի կողքին աշխատելը խիզախություն չես համարում:

Ո՛չ, մինչև անգամ նավաստիների այս անհեթեթ ու շռայլ կիրքը գարեջրի, գինու և վիսկիի նկատմամբ ինձ չէր խրտնեցնում ջրի վրա ունենալիք հեքիաթային կյանքից: Ենթադրենք, նրանց, չգիտես ինչու, դուր է գալիս նայել, թե ես ինչպես եմ խմում: Ի՞նչ արած, եթե նրանք նորից պիտի այդ զզվելի բանը գնեն և զոռով հյուրասիրեն ինձ, ստիպված պիտի լինեմ խմել: Դա կլինի իմ հատուցումը նրանց ընկերության փոխարեն: Միայն թե չհարբեմ: Կարողացա չէ՞, դուրս պրծնել այն կիրակի օրը, երբ պայմանավորվում էինք «Կարուսելը» գնելու համար, բայց չէ որ այնտեղ, նավակում, բացի ինձանից, բոլորն էլ հարբած էին: Լավ, որոշված է. կխմեմ, եթե այդ բանը նրանց հաճույք է պատճառում, բայց ամեն կերպ կջանամ չհարբել:

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

Շփվելով ոստրեահենների հետ և ինքս ինձ ստիպելով, որ խմեմ, ես առանց որևէ ներքին ցանկության թունդ հարբեցող դարձա:

Ինչքան շատ էի ծանոթանում նոր կյանքի հետ, այնքան նրա մեջ հրապույրներ էի գտնում: Երբեք չեմ մոռանա իմ երջանկությունը, երբ առաջին անգամ ծովահենների տորմիղի հետ ոստրեի գիշերային որսի ելա: Բոլոր ծովահենները հավաքվել էին «Էննի» յախտայում. և՛ ուժեղ տղամարդիկ, և՛ նիհար ծովային առնետներ, շատերը բանտային անցյալով. ի միջի այլոց, նրանք բոլորն էլ օրենքի թշնամիներ էին և, հետևաբար, բոլորն էլ կալանքի թեկնածուներ: Ոտքերին երկարաճիտ ռետինե կոշիկներ էին, ձկնորսական հագուստներ. նրանք խոսում էին խռպոտ շշնջոցով, իսկ Մեծ Ջորջի գոտկի տակ խրված էին ատրճանակներ, որպես ապացույց այն բանի, թե նա կատակ անել չի սիրում:

Հիմա, հիշելով անցյալը, ես հասկանում եմ, թե ի՜նչ հիմար ու ամոթալի գործով էի զբաղվում: Բայց այն ժամանակ ավելի լավ օրինակ ինձ համար չէի տեսնում, իսկ Գարեհատիկ Ջոնը ինձ բարեկամ էր թվում և ես սկսել էի ընտելանալ նրան: Ծովահենների հրոսակախումբը իմ սրտովն էր, հիմա ես էլ մասնակից էի դառնում արկածների, որոնց մասին մինչ այդ միայն գրքերից գիտեի:

Վագր Նելսոնը (նրան այդպես էին ասում իր հորից՝ Ծեր Վագրից զանազանելու համար) իր ընկերակից Ձկան հետ նավարկում էր «Հյուսիսային եղջերվով»: Ձուկը գլխից ձեռ քաշած մարդ էր, բայց Նելսոնն արդեն ոչ մի չափ ու սահման չգիտեր, պարզապես խելագար էր: Քսան տարեկան այդ տղան Հերկուլեսի կազմվածք ուներ: Երկու տարի հետո նրան Բենիշիում սպանեցին, և ոստիկանական հետաքննիչը ասում էր, որ այդպիսի ուժեղ կազմվածք դեռ չի հանդիպել, չնայած իր կյանքում քիչ ննջեցյալներ չի տեսել:

Նելսոնը ոչ գրել, ոչ էլ կարդալ գիտեր: Փոքր հասակից հայրը նրան իր հետ ծով էր տանում և շխունան նրա երկրորդ տունը դարձավ: Այդ տղան առասպելական ուժ ուներ, և նավահանգստում առաջնակարգ կռվողի համբավ էր վայելում: Նա երբեմն կատաղության սարսափելի նոպաներ էր ունենում և երբ բոլորովին կորցնում էր բանականությունը, արդեն պատասխան չէր տալիս իր արարքների համար: Ես նրա հետ ծանոթացա առաջին անգամ ոստրեի որսի դուրս գալիս. նա ուռկան էր քաշում, չնայած փոթորիկ էր և մյուսները կրկնակի խարիսխներ նետած, սիրտ չէին անում ափին մոտենալ:

Ա՛յ թե տղա էր այդ Նելսոնը: Զարմանալի չէ, որ ես հպարտությունից փայլեցի, երբ «Վերջին հավանականություն» գարեջրատան մոտ նա հետս խոսեց: Եվ պատկերացրեք, թե ինձ հետ ի՞նչ կատարվեց, երբ նա խմելու հրավիրեց: Մենք մոտեցանք վաճառասեղանին, մի-մի բաժակ գարեջուր խմեցինք, և նա ինձ հետ, ինչպես իր հասակակցի, խոսեց ոստրեների ու նավերի, վերջին խորհրդավոր դեպքի մասին. ինչ-որ մեկը կոտորակով գնդակոծել էր «Էննի» յախտայի գրոտը:

Մենք կանգնած էինք զրուցում: «Ի՞նչ ենք այստեղ ցցվել,— տարակուսեցի ես:— Գարեջուրը խմեցինք վերջացրինք: Բայց մի՞թե կարելի է առաջինը հեռանալ, եթե մեծ Նելսոնին դուր է գալիս կանգնել այսպես վաճառասեղանին հենված»: Քիչ հետո, ի զարմանս ինձ, նա առաջարկեց խմել երկրորդ բաժակը: Ես համաձայնեցի: Զրույցը շարունակվեց: Նելսոնը գնալու ոչ մի ցանկություն չուներ:

Համբերություն ունեցեք. ես պիտի պատմեմ, թե այն ժամանակ ի՜նչ էի մտածում և ի՜նչ անշնորհքն էի: Առաջին՝ իմ ինքնասիրությունը շատ էր շոյում Նելսոնի հետ ընկերություն անելը, որը ոստրեահենների և նավահանգստային արկածախնդիրների մեջ հերոսի անուն էր վաստակել: Դժբախտաբար Նելսոնը ցանկանում էր խմեցնել ինձ: Ես ոչ մի բարոյական համոզմունք չունեի գարեջուրը չխմելու համար, պարզապես այդ խմիչքը տանել չէի կարողանում: Բայց մի՞թե դա պատճառ է, որպեսզի հրաժարվեի Նելսոնի ընկերությունից: Նրա մտքով անցել է ինձ հետ խմել: Շատ լավ, ես պատրաստ եմ մի անգամ էլ տանջվել նրա բավականության համար: Այսպես, ուրեմն, մենք շարունակում էինք մեր զրույցը և գարեջուր էինք խմում. պատվիրում և

վճարում էր Նելսոնը: Կարծում եմ, նրան պարզապես հետաքրքրությունն էր դրդել. ես, հետաքրքիր է, ի՞նչ թռչնակ եմ: Քանի՞ բաժակ կարող եմ նրա հաշվին խմել, մինչև որ վերջապես գլխի ընկնեմ, թե ինքս էլ պիտի հյուրասիրեմ:

Չորս բաժակ խմելուց հետո հիշելով իմ երդումը չափավորության մասին, մտածեցի՝ բավակա՞ն է: Ես պետք է նավակ վերադառնամ, բացատրեցի Նելսոնին: Նավակը կանգնած էր նավահանգստում, այստեղից հարյուր յարդ հեռու: Մենք հրաժեշտ տվեցինք: Ես գնացի դեպի նավահանգիստ, ինձ հետ էլ Գարեհատիկ Ջոնը, որն իմ մեջ էր փոխադրվել վեց բաժակ գարեջրից հետո: Գլուխս խշշում էր, բայց ուղեղս հիանալի էր աշխատում: Զգում էի անսովոր հպարտության հորձանքը. ահա ես էլ իսկական ոստրեահեն դարձա, շտապում եմ դեպի սեփական նավակը, պանդոկում ծովահենների պարագլխի՝ Նելսոնի հետ ընկերաբար խմելուց հետո: Ես ոչ մի կերպ չէի կարողանում մոռանալ, թե մենք ինչպես երկուսով, հենված վաճառասեղանին, գարեջուր էինք խմում: Տարօրինակ են մարդիկ, մտածում էի ես, ինչ հաճույք կա ահագին փող ծախսել մի տղայի վրա, որի համար խմիչքը զզվելի է:

Դրա մասին մտածելիս, ես հիշեցի, թե մարդիկ ինչպես են երկուսով գարեջրատուն գալիս և հերթականությամբ վճարում: Իսկ «Այդլերի» վրա մենք երեքով վճարեցինք վիսկիի փողը, գրպաններից դուրս հանելով ամբողջ մանրը: Ես հիշեցի նաև այն օրենքը, որին հետևում են բոլոր տղաները. եթե դու այսօր ընկերոջդ հյուրասիրեցիր «գնդիկով» կամ էլ նուգայով, մյուս անգամ նա պիտի հյուրասիրի:

Ահա թե ինչու Նելսոնը ցցվել մնացել էր վաճառասեղանի մոտ: Նա սպասում էր պատասխան հյուրասիրության: Իսկ ես նրա հաշվին ամբողջ վեց բաժակ կոնծեցի, և ոչ մի բաժակ ինքս չառա: Մի՞թե սա վերաբերմունք է մեծ Նելսոնի նկատմամբ: Ես զգացի, որ դեմքս կարմրում է: Նստելով նավահանգստի արգելասյան վրա, դեմքս առա ափերիս մեջ: Ամոթից այտերս, վիզս, ճակատս այրվում էին: Հազիվ թե երբևէ ստիպված լինեի այդպես սոսկալի կարմրել:

Նստած այնտեղ, նավահանգստի արգելասյան վրա, ամոթից կարմրած, շատ բան նորից կշռադատեցի և վերագնահատեցի: Ես ծնվել եմ աղքատ ընտանիքում: Մեծացել եմ աղքատության մեջ: Հաճախ էի սոված մնում: Երբեք ուրիշ երեխաների նման խաղալիքներ չեմ ունեցել: Իմ ամենավաղ հիշողություններն անգամ թունավորված են աղքատությամբ, մշտական կարիքով: Ութ տարեկան հասակում առաջին անգամ շապիկ հագա, որը գնված էր խանութում: Այո՛, շապիկ: Եվ երբ շապիկս լվանում էին, ես ստիպված նորից էի հագնում տանը կարված ինչ-որ աներևակայելի մի բան: Ես այնպես էի պարծենում իմ նոր շապիկով, որ չէի ուզում վրայից բան հագնել: Այդ պատճառով էլ առաջին անգամ կյանքումս ես ըմբոստացա մորս դեմ և չնայած ընկա հիստերիկ վիճակի մեջ, բայց հասա այն բանին, որ նա թույլատրեց շապիկը հագնել վրայից, որ բոլորն էլ տեսնեն:

Միայն նա, ով միշտ քաղցած է ապրել, ընդունակ է իսկապես գնահատել ուտելիքը, միայն ծովայինները և անապատի բնակիչները գիտեն խմելու ջրի գինը: Եվ միայն երեխան, որը երազել գիտե, սովորում է գնահատել այն, ինչը մինչ այդ նրա համար անմատչելի էր: Դեռ շատ փոքր տղա էի, երբ համոզվեցի, թե ամեն ինչի պետք է սեփական ուժերով հասնեմ: Դաստիարակված լինելով աղքատության մեջ, ես ժլատ մարդ դարձա: Իմ առաջին ինքնուրույն ձեռք բերած բանը ծխախոտի նկարների հավաքածուն էր, ծխախոտի գործարանատերերի ալբոմ-մրցանակը և նրանց ռեկլամային պլակատները: Իմ աշխատավարձից ծնողներս ինձ փող չէին տալիս և, ես չծախվող թերթերը փոխանակում էի այս գանձերի հետ: Եթե նույնանման օրինակներ էին ձեռքս ընկնում, ես տղաների հետ փոխում էի ուրիշ բաներով:

Շատ շուտով դարձա բոլոր ծխախոտային ռեկլամների տերը. «Նշանավոր արշավային ձիերը», «Փարիզի գեղեցկուհիները», «Բոլոր ազգությունների կանայք», «Բոլոր ազգային դրոշները», «Նշանավոր դերասանները», «Բռնցքամարտի չեմպիոնները» և այլն: Ամեն հավաքածուն երեք տեսակ էր. քարտեր, պլակատներ և ալբոմներ:

Հետո սկսեցի հավաքել ալբոմների երկրորդ օրինակները և փոխել ուրիշ գանձերի հետ, որոնք տղաներն առնում էին իրենց ծնողներից վերցրած փողով և, իհարկե, չէին կարող ինձ նման հասկանալ դրանց իսկական գինը, ինձ նման, որը ծախսելու մի սենթ անգամ չուներ: Փոխանակում էի փոստանիշներ, քարեր, թռչունի ձվեր, խաղագնդիկներ: (Ես ագաթե մի հոյակապ հավաքածու ունեի, այնպիսին, որը ոչ մեկը չուներ: Իմ այդ հպարտությունը մի քանի հատ էր, որոնց արժեքը մոտ երեք դոլար կլիներ. դա քսան սենթի փոխարեն ինձ մոտ գրավ էր դրել մի ցրիչ տղա: Նա ետ գնել չհասցրեց, քանի որ ուղղիչ գաղութ տարան):

Ես պատրաստ էի անընդհատ փոխել, մինչև որ ստանայի փափագածս այս կամ այն առարկան: Այս գործում ես կատարելության հասա և ժլատի համբավ վաստակեցի: Ինձ հետ գործ բռնելիս հնավաճառն անգամ լաց կլիներ մեր առևտրի վերջում: Տղաներն իմ օգնությանն էին դիմում, եթե անհրաժեշտ էր լինում փալասներ, շշեր, հին պարկեր կամ նավթի բիդոններ վաճառել, և իմ ծառայության համար վճարում էին:

Ահա այդպիսին էր այն պատանին, որը հիմա նստած էր նավահանգստում. խնայող, հաշվենկատ, սովոր ճակատի քրտինքով ֆաբրիկայում ժամում տասը սենթ աշխատելուն, իսկ այս պահին զբաղված այն մտքերով, թե գարեջուրը, որի ամեն մի բաժակը հինգ սենթ արժեր, կայծակի արագությամբ կլանեցին, այն էլ առանց որևէ օգուտի: Ես ընկել էի այնպիսի մարդկանց միջավայրը, որոնցով հիանում էի: Ինձ դուր էր գալիս նրանց ընկերակցությունը: Եվ մի՞թե մշտական ժլատությունն ու գծուծությունը երբևէ ինձ տվել են, թեկուզ չնչին չափով, այն մեծ հաճույքը, որ զգում էի ոստրեահենների մեջ: Այսպես ուրեմն, ո՞րն է թանկ. փո՞ղը, թե՞ հաճույքը: Այդ մարդիկ առանց ափսոսալու քամուն են տալիս հնգանոցները, շա՛տ հնգանոցներ: Նրանք թքած ունեն փողի վրա, կարող են առանց աչքերը թարթելու ութ մարդու հյուրասիրել վիսկիով, որի ամեն մի գավաթը տասը սենթ արժե, ինչպես այդ բանն արեց Ֆրանսիացի Ֆրենկը կամ Նելսոնը, որն հենց այսօր վաթսուն սենթ վճարեց երկու հոգու համար գարեջուր առնելիս:

Դե որոշի՛ր: Գործը լուրջ է: Ընտրությունը քո առջևն է. փո՞ղը, թե՞ ընկերները, ժլատությո՞ւնը, թե՞ ռոմանտիկան: Կամ մոռացիր, թե ինչ թանկ բան է փողը, կամ էլ հրաժարվիր այդ մարդկանց ընկերությունից, որոնք ինչ-որ անհասկանալի մի կիրք ունեն թունդ խմիչքների նկատմամբ:

Ես գնացի դեպի գարեջրատուն. առաջվա նման նրա մոտ թրև էր գալիս Նելսոնը:

— Մտնենք մի-մի բաժակ խմենք,— հրավիրեցի ես:

Մենք նորից մոտեցանք վաճառասեղանին, խմեցինք, խոսեցինք, բայց այս անգամ տասը սենթ ես վճարեցի: Ամբողջ մի ժամ մեքենայի մոտ աշխատելու գինը տվեցի այս զզվելի ըմպելիքի մի բաժակի համար, որը խմել անգամ չէի ցանկանում: Բայց հիմա այդ բանն ինձ համար բոլորովին էլ դժվար չէր: Ես հիմա ուրիշ հայացքով եմ նայում իրերին: Գլխավորը փողը չէ: Գլխավորը ընկերությունն է:

— Մի բաժա՞կ էլ,— հարցրեցի ես:

Մենք երկրորդ բաժակը ևս խմեցինք, այս անգամ էլ դարձյալ իմ հաշվին: Նելսոնը, փորձված հարբեցողի նման, վաճառասեղանի մոտ կանգնած տիրոջը հրամայեց.

— Ինձ փոքրով, Ջոննի՛:

Վերջինս գլխով արեց և լցրեց բաժակի կեսից էլ քիչ, չնայած վերցրեց լրիվ արժեքը՝ հինգ սենթ:

Արդեն հարբած էի և այդ խարդախությունն ինձ չանհանգստացրեց: Ընդհանրապես, ես սովորում էի: Երևի, բանը խմածի քանակի մեջ չէ. մինչև անգամ այդ էլ հասկացա: Ես ու Նելսոնը հասել էինք այն աստիճանին, երբ խմում էինք արդեն ոչ թե հանուն գարեջրի, այլ միայն ընկերության համար: Դարձյալ մի կարևոր հայտնագործություն. ես նույնպես կարող եմ ինձ համար փոքր բաժին պատվիրել և ընկերակցության բեռը երկու երրորդով կթեթևանա:

— Նավակ գնացի փող բերելու,— ասացի անտարբեր ձայնով, խմելով գարեջուրը: Հույս ունեի, որ Նելսոնի համար պարզ կդառնա, թե ինչու ինձ թույլ տվեցի նրա հաշվին վեց բաժակ խմել:

— Ի՞նչ ես ասում, պետք չէր գնալ,— զարմացավ նա:— Այդպիսի տղային Ջոննին հաճույքով պարտքով էլ կտար: Ճիշտ չէ՞, Ջոննի:

— Դա էլ խո՞սք է,— ժպտաց Ջոննին:

— Իմ հաշվին մոտդ ինչքա՞ն է գրված,— հետաքրքրվեց Նելսոնը:

Ջոննին վաճառասեղանի տակից հանեց գրասենյակային մատյանը, գտավ Նելսոնի ազգանունը և ինչ-որ հաշիվներ արեց: Պարզվեց, որ գումարը մի քանի դոլար էր: Ես էլ ցանկացա սեփական հաշիվ ունենալ այդ մատյանում: Դա իսկական համերաշխության քայլ էր թվում:

Մի քանի բաժակ էլ խմելուց հետո, որոնց փողը ես վճարեցի, Նելսոնը ցանկացավ գնալ: Մենք լավ ընկերների պես հրաժեշտ տվեցինք, և ես օրորվելով նավահանգիստ գնացի, ուր կանգնած էր իմ «Կարուսելը»: Մինչ այդ Բլոճը ընթրիք էր պատրաստել և կրակ էր վառել:

— Դու այդ որտե՞ղ ես կատարդ տաքացրել,— ժպտաց նա, ինձ նայելով նավասանդուղքի վրայից:

— Այնտե՛ղ, Նելսոնի հետ,— անտարբերությամբ ասացի ես, աշխատելով թաքցնել իմ հպարտությունը:

Այստեղ իմ գլխում մի միտք փայլեց. չէ՞ որ Բլոճն էլ է նրա ընկերներից: Հիմա քանի որ սկսել էի նոր ձևով ապրել, ապա պետք է վարժվեմ դրան:

— Գնացինք,— ասացի ես,— հայդա Ջոննիի մոտ, խմելո՛ւ:

Ճանապարհին հանդիպեցինք հենց նոր ափ իջած Ջկանը: Նելսոնի ընկերակից բեղավոր Ջուկը մոտ երեսուն տարեկան, կտրիճ ու գեղեցիկ մի տղամարդ էր. այդ մականունը իսկի էլ նրան չէր սազում:

— Գնանք, խմենք,— առաջարկեցի ես:

Նա ընդունեց իմ առաջարկությունը, և մենք երեքով շարունակեցինք մեր ճանապարհը: Գարեջրատան դռներում մենք հանդիպեցինք այնտեղից դուրս եկող Փեթին՝ Թագուհու եղբորը:

— Ո՞ւր ես փախչում,— հարցրեցի ևս բարևելուց հետո:— Գնում ենք խմելու: Արի մեզ հետ:

— Դե ես արդեն խմել եմ,— ասաց նա:

— Ի՞նչ է նշանակում «արդեն»: Մի բաժակ էլ կարելի է:

Հարկ չեղավ Փեթին շատ խնդրել և երկու բաժակ գարեջրից հետո ես նվաճեցի նրա համակրանքը: Այո՛, այդ օրը ես շատ բան իմացա Գարեհատիկի մասին: Ցավ չէ, որ խմելը զզվելի բան է: Տասը սենթով, համարյա թե ձրի, մռայլ ու հավերժ դժգոհ երիտասարդը, որը պատրաստ էր իմ թշնամին լինել, դարձավ իմ սիրելի ընկերը: Մենք նրա հետ խաղաղ զրուցեցինք այն մասին, թե ինչպես է գնում ոստրեի որսը, նավահանգստում կատարված զանազան դեպքերի մասին, մինչև անգամ նրա տրամադրությունը բացվեց և ավելի սիրալիր դարձավ:

— Ինձ փոքր տուր, Ջոննի,— հրամայեցի ես, չնայած բոլորը մեծ բաժակով վերցրին:

Պետք էր լսել, թե փորձված քեֆ անողի ինչպիսի անտարբեր տեսքով ասացի այդ: Երևի, բացի Ջոննի Հեյնհոլդից, ոչ ոք էլ գլխի չընկավ, որ ես դեռ նորելուկ եմ այս գործում:

Ես լսեցի, թե ինչպես Բլոճը շշուկով հարցրեց նրան.

— Որտե՞ղ է հասցրել այդպես կոնծել:

— Դե, այստեղ, Նելսոնի հետ, համարյա ժամը երկուսից քեֆ էին անում,— պատասխանեց Ջոննին:

Ես ձևացրի, թե չեմ լսում, բայց հոգուս մեջ ցնծում էի: Մինչև անգամ պանդոկապանն ինձ տղամարդու տեղ է դնում: «Նելսոնի հետ այստեղ քեֆ էին անում»... Սքանչելի խոսքեր: Պանդոկապանը գարեջրի գավաթով ձեռնադրման արարողություն կատարեց:

Ես հիշեցի այն առավոտը, երբ Ֆրանսիացի Ֆրենկը, վաճառելով «Կարուսելը», հյուրասիրեց Ջոննիին: Տեսնելով, որ բոլորի բաժակներն էլ լցված են, ես ասացի. «Ձեզ էլ մի՛ մոռացեք, Ջոննի»: Այնպես ստացվեց, կարծես թե ես վաղուց էի մտածում ասել այդ, բայց զբաղված էի Ջկան ու Փեթի հետ խոսելով:

Ջոննին ինձ վրա մի թափանցող հայացք գցեց, զարմանալով, երևի, այն բանից, թե ես ի՞նչ արագությամբ եմ տիրապետում այդ գիտությանը, և իր համար վիսկի լցրեց առանձին շշից: Մի պահ իմ խնայող սիրտը կծկվեց: Այն, ինչ Ջոննին իր համար լցրեց, արժե տասը սենթ, իսկ մերը՝ հինգ: Բայց ես անմիջապես էլ վանեցի այդ հիմար միտքը և, հիշելով իմ նոր սկզբունքները, աշխատեցի ինքս ինձ չմատնել:

— Ապառիկ գրեք, լա՞վ,— ասացի ես, երբ մենք դատարկեցինք բաժակները, և շատ բախտավոր էի զգում ինձ, երբ նրա մատյանի մաքուր թերթի վրա տեսա իմ անունը և երեսուն թվանշանը, իմ հյուրասիրության գինը: Երևակայությունս ինձ պատկերեց այդ թերթիկը ապագայում: Շատ ու շատ ջնջված թվերի սյունակներ, իսկ վերջինը՝ բաց:

Ես բոլորին հյուրասիրեցի երկրորդ անգամ և զարմացա, երբ Ջոննին պարտքի տակ չմնաց իր խմած վիսկիի տասը սենթի փոխարեն: Այս անգամ բոլորը տվեց իր հաշվին և, ինչպես ես գլխի ընկա, ինձ հետ մաքուր քվիտ եղավ:

— Իսկ հիմա «Սենթ-Լուիս» գնանք,— առաջարկեց Բլոճը, երբ մենք փողոց ելանք: Փեթը տուն գնաց. նա ամբողջ օրը ածուխ էր բեռնել, իսկ Ջուկը գնաց իր շխունան՝ ընթրիք պատրաստելու:

Մենք երկուսով «Սենթ-Լուիս» գնացինք: Այդ գարեջրատանը ես առաջին անգամ էի լինում: Մեծ դահլիճում մոտ հիսուն մարդ հավաքված կլիներ, բոլորն էլ հիմնականում նավահանգստային բեռնակիրներ: Ես այնտեղ նորից հանդիպեցի Սուփ Քենեդիին և Բիլլ Քելլիին: Եկան նաև «Էննիի» Սմիթը, հենց այն Սմիթը, որը գոտու տակ ատրճանակներ էր խրել: Երևաց և Վագր Նելսոնը: Ես այնտեղ, բացի դրանից, նոր մարդկանց հետ ծանոթացա. այս գարեջրատան տերերի՝ Վիգի եղբայրների և Ջոյի հետ, որի մականունը Սագ էր: Նա չար աչքեր ուներ և ջարդված քիթ: Այս Սագը գույնզգույն բաճկոն էր հագել և հրեշտակի նման շրթնահարմոն էր նվագում, ավելի ճիշտ՝ հարբած հրեշտակի նման: Նա անուն էր հանել իր կատաղի կերուխումներով, որոնք զարմացնում ու հիացնում էին մինչև անգամ Օքլենդի նավահանգստային հարբեցողներին:

Հյուրասիրելով նոր բաժակակիցներին (որոնք, ի միջի այլոց, իրենք էլ էին վճարում), ես հանկարծ հիշեցի, որ այս շաբաթ հազիվ թե կարողանամ վերադարձնել իմ ստնտու Ջեննիի պարտքի հերթական բաժինը: «Դե, ոչի՞նչ,— մտածեցի ես, կամ ավելի շուտ իմ փոխարեն մտածեց Գարեհատիկ Ջոնը,— դու տղամարդ ես և պետք է մարդկանց հետ ծանոթանաս: Դայակ Ջեննին առանց այդ փողերի էլ յոլա կգնա: Նա հո՛ սովից չի մեռնի: Անպայման բանկում էլ փող կունենա: Թող սպասի, քիչ-քիչ կվճարեմ»:

Այսպիսով, ես իմացա Գարեհատիկ Ջոնի մի հատկությունը ևս: Նա խարխլում է բարոյական հիմքերը: Անազնիվ արարքները, թվում է, աներևակայելի կլինեն, երբ մարդը լուրջ է, իսկ հարբածը այդ կատարում է առանց խղճի խայթի: Այստեղ դու անուժ ես, քանի որ Գարեհատիկ Ջոնը կանգնում է քո անակնկալ ցանկությունների և բարոյական օրենքների միջև, որոնց դու միշտ հետևել ես:

Ես դադարեցի մտածել դայակ Ջեննիի պարտքի մասին և ծանոթանալով նոր մարդկանց հետ, այլևս չէի խնայում իմ պղնձադրամները: Իսկ գլուխս ավելի ու ավելի էր մթագնում: Չգիտեմ, թե

այդ երեկո ո՞վ տարավ ինձ նավակ և պառկեցրեց մահճակալին. ամենայն հավանականությամբ՝ Բլոճը:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

Այսպես ուրեմն, ես հասա այն բանին, որ ինձ էլ սկսեցին տղամարդու տեղ դնել: Ես հիանալի հարաբերություններ հաստատեցի նավահանգստի մարդկանց և ոստրեահենների հետ: Նրանք գտնում էին, որ հիանալի տղա եմ և վախկոտներից չեմ: Ի միջի այլոց, այն ժամանակ նավահանգստում փողի նկատմամբ նոր հայացք ձեռք բերելով, ես մշտապես կորցրեցի նրա նկատմամբ ունեցած իմ հետաքրքրությունը: Ոչ ոք ինձ այլևս ժլատ չէր համարում, ընդհակառակը, իմ թեթևամիտ վերաբերմունքը փողի նկատմամբ հիմա էլ տագնապի աղբյուր է բոլոր հարազատներիս համար:

Ես այնքան էի առատաձեռն դարձել, որ մի մարդու միջոցով մորս խնդրեցի, որ կանչի մեր փողոցի տղաներին և բաժանի իմ հավաքածուները: Եվ մինչև անգամ երբեք չհետաքրքրվեցի, թե ո՛ւմ ինչ հասավ: Ես տղամարդ էի դարձել և աշխատում էի մոռանալ այն բոլորը, ինչ ինձ կապում էր մանկությանս հետ:

Իմ համբավը տարածվում էր: Լսելով այն պատմությունը, թե Ֆրենկը փորձ է արել իր շխունայով հարվածել «Կարուսելին», իսկ ես ոտքերով ռումպելը բռնած, որպեսզի նավակը չշեղվի իր ուղուց, երկփողանին ուղղել եմ նրան, նավահանգստի մարդիկ ասում էին. «Այս տղայի մեջ մի բան կա, բայց ափսո՜ս, որ ջահել է»: Եվ ցանկանալով ապացուցել, որ դա իսկապես այդպես է, իմ օգնականիս հետ, երկուսով, երբեմն պատահում էր շուկա էինք տանում ավելի շատ ոստրե, քան մյուս նավավարները, երբեմն ծովածոցի հեռավոր կամ հարավային մասի վրա միասին հարձակում գործելուց հետո ես ամենից շուտ էի վերադառնում Ասպագուս կղզու մոտ գտնվող խարսխակայանը: Իսկ մի անգամ, շաբաթ օրվա առավոտյան, գիշերային որսից հետո իմ «Կարուսելը» Օքլենդ բերեցի և չնայած ղեկս կորցրել էի, բայց բոլոր նավերից շուտ տեղ հասա և ձուկ վաճառելու այդ ավանդական օրը առանց որևէ մրցակցի կարողացա մեծ օգուտով սաղացնել իմ ապրանքը: Մի այսպիսի դեպք էլ կատարվեց. ես «Կարուսելը» տեղ հասցրեցի քլիվերով, որովհետև Սքոթին այրել էր իմ մեծ առագաստը՝ գրոտը (այո՜, մի՛ զարմացեք, հենց այն Սքոթին, որի հետ մենք մի օր քեֆ էինք անում «Այդլերում». իռլանդացուց հետո, որը փոխարինել էր Բլոճին, նա որոշ ժամանակ իմ օգնականը դարձավ):

Սակայն իմ համբավը միայն ծովում կատարած սխրանքները չտարածեցին: Ցամաքում էլ ընկերական տղա էի համարվում, որը հյուրասիրելու համար փող չի խնայում: Հենց այդ բանն էլ պատճառ դարձավ, որ ինձ «Ոստրեահենների թագավոր» մականունը տվեցին: Մտքովս էլ չէր անցնում, որ Օքլենդի նավահանգստային քեֆասերները, որոնք սկզբնական շրջանում ինձ շշմեցրել էին իրենց վարմունքով, շուտով, իրենց հերթին, պիտի շշմեն իմ համարձակ արարքներից:

Ինչ էլ որ պատահեր կյանքում, դա միշտ էլ նշվում էր կերուխումով: Պանդոկը աղքատների ակումբն է, պանդոկը նրանց հավաքատեղին է: Մենք պայմանավորվում էինք հանդիպել մերթ մեկ, մերթ մյուս պանդոկում: Պանդոկում մենք տոնում էինք մեր հաջողությունը, պանդոկում սգում էինք անհաջողության համար, պանդոկում նոր մարդկանց հետ էինք ծանոթանում:

Մի՞թե կարելի է մոռանալ Նելսոնի հոր հետ ծանոթանալու օրը, որի անունը Ծեր Վագր էր:

Դա տեղի ունեցավ «Վերջին հավանականություն» գարեջրատանը: Մեզ ծանոթացրեց Ջոննի Հեյնհոլդը: Միայն հենց այն փաստը, որ ծերունին Նելսոնի հայրն է, ինքնին ուշադրության արժանի բան էր: Բացի դրանից, նա ծովեզրյա «Էննի Մայն» շխունայի տերն էր ու նավապետը, իսկ ես երազում էի այդ շխունայի վրա նավաստի դառնալ: Բայց ինձ համար կարևորն այն էր, որ նա կարծես մարմնավորում էր ռոմանտիկան: Նա կապուտաչ, շիկահեր չորուկ-մորուկ մի վիկինգ էր,

և չնայած տարիքին՝ ուժեղ էր ու մկանոտ: Հին ժամանակ, երբ ծովային մասնագիտությունը շատ վտանգավոր էր, նա բոլոր ազգությունների դրոշների տակ էլ նավարկել էր:

Ես նրա մասին շատ առասպելական պատմություններ էի լսել և սովորել էի հեռվից հեռու հարգել: Գինետան շնորհիվ կարողացա նրան մոտիկից ճանաչել: Բայց մինչև անգամ այստեղ, եթե խմիչք չլիներ, ծանոթությունը կարող էր սահմանափակվել ձեռքսեղմումով կամ էլ, լավագույն դեպքում, երկու-երեք խոսքով (ծերունին քչախոս էր):

— Մի բաժակ գարեջուր կխմե՞ք,— առաջարկեցի ես սիրալիր համառությամբ, մի պահ լռելուց հետո, որն իմ կարծիքով, պանդոկային կարգուկանոնն էր պահանջում:

Հասկանալի է, որ ընդունելով իմ առաջարկությունը, Նելսոնը պիտի ինձ հետ խոսեր, իսկ Ջոննին, որպես տանտեր, ընդհանուր խոսակցության ժամանակ մեկ-մեկ խառնվում էր զրույցին: Երբ մենք մի-մի բաժակ խմեցինք, նավապետ Նելսոնը իր պարտքը համարեց ինձ էլ հյուրասիրել: Դա ավելի աշխուժացրեց մեր զրույցը, և Ջոննին, տեսնելով, որ իր մասնակցության կարիքը այլևս չկա, զբաղվեց ուրիշ այցելուներով:

Ինչքան շատ էինք խմում, այնքան նավապետ Նելսոնը բարեհամբույր էր դառնում: Նա հանձինս ինձ գտավ մի ուշադիր լսողի, որը գրքեր կարդալով շատ լավ գիտեր ծովայինների կյանքը: Եվ, այդ ամառային օրը, վերհիշելով իր հախուռն ջահելությունը, նա ինձ շատ հետաքրքիր դեպքեր պատմեց: Եթե չլիներ Գարեհատիկ Ջոնը, եթե գարեջուրը չլիներ, որը ես առատաձեռն լցնում էի բաժակները, ծեր ծովագայլը հազիվ թե ինձ հետ մինչև երեկո նստեր:

Ուշադիր Ջոննի Հեյնհոլդը վաճառասեղանի մոտ իր դիտակետից ինձ թաքուն նշան արեց, որ ես հարբում եմ և ժամանակն է «փոքրին» անցնելու: Բայց քանի դեռ նավապետ Նելսոնը մեծ բաժակով էր խմում, իմ հպարտությունը թույլ չտվեց, որ նրանից ետ մնամ: Եվ միայն այն ժամանակ, երբ ծեր նավապետը իր համար փոքր բաժակով պահանջեց, ես հետևեցի նրա օրինակին: Ա՛յ թե հարբած էի, երբ վրա հասավ հուզիչ ու երկար հրաժեշտի պահը: Բայց ես գոհ էի, որ ինձ հաջողվեց խմեցնել Ծեր Վագրին: Պատանեկան համեստությունն ինձ թույլ չտվեց կասկածել, որ փորձված ծեր ծովահենը ավելի է հարբած, քան ես:

Հետո Բլոճը, Փեթը, Ջուկը, Ջոննի Հեյնհոլդը և ուրիշներ ինձ պատմեցին, թե Նելսոնը շատ լավ կարծիք է հայտնել իմ մասին. իբր, ի՜նչ լավ տղա է... Ծերուկի համար այս բանը հատկապես անսովոր էր. բոլորն էլ գիտեին նրա չար, դաժան բնավորությունը: Նա երբեք ոչ ոքի մասին լավ բան չի ասել (մինչև անգամ իր «Վագր» մականունը նա ստացել է այն սովորության համար, որ կատաղության նոպայի ժամանակ նետվում է մարդկանց վրա և իր սուր եղունգները խրում է հակառակորդի դեմքը): Ես գրավեցի նրա բարյացակամությունը միմիայն Գարեհատիկ Ջոնի շնորհիվ: Ես այս դեպքը պատմեցի որպես այն բազմաթիվ հրապույրների, գայթակղության և հաճոյակատարության օրինակներից մեկը, որոնց օգնությամբ Գարեհատիկ Ջոնը իր համար կողմնակիցներ է հավաքագրում:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

Բայց և այնպես իմ մեջ ալկոհոլի օրգանական պահանջ չառաջացավ: Չնայած այդ տարիներին ես շատ էի խմում, բայց գինու նկատմամբ բնական ձգտում չէի զգում: Կերուխումները մտել էին իմ կյանքի մեջ, ինչպես մտել էին ինձ շրջապատող մարդկանց կյանքի մեջ: Բայց ինձ հետ ոչ մի ոգելից խմիչք չէի վերցնում նավակ. ծովում խմել չէի ուզում: Սակայն հենց որ «Կարուսելը» կանգնեցնում էի նավամատույցում և մի որևէ պանդոկ մտնում, ուր գինին հոսում էր գետի նման և բոլորը խմում էին ու հյուրասիրում մյուսներին, զգում էի, որ որպես տղամարդ պետք է ես էլ խմեմ՝ իմ հասարակական պարտքը կատարած լինելու համար:

Լինում էր և այնպես, որ քաղաքի նավամատույցում կամ էլ ավազոտ ծանծաղուտում կանգնած ժամանակ ինձ իր քրոջ հետ այցելում էր Թագուհին, իրենց եղբոր՝ Փեթի և միսիս Հեդլիի ուղեկցությամբ: Որպես նավակի տեր, ես պետք է հյուրասիրեի, այդ բառի նրանց հասկացողությամբ: Դրա համար էլ շտապ ափ էի ուղարկում Բլոճին, Իռլանդացուն կամ էլ Սքոթիին (նայած թե այդ ժամանակ դրանցից ով էր իմ նավի անձնակազմը լինում), ձեռքները տալով գարեջրի ամանը կամ էլ շիշը՝ կարմիր գինի բերելու համար: Ուրիշ այցելություններ էլ էին լինում. հաստամռութ ոստիկաններ ու խուզարկուներ, որոնք սովորաբար «Կարուսելի» վրա էին հայտնվում այն պահին, երբ ես մթության քողի տակ ոստրեներ էի վաճառում, և քանի որ մենք այդ մարդկանց իշխանության տակ էինք, ստիպված էի լինում ոստրե հյուրասիրել պղպեղով պատրաստված կծու արգանակի հետ և սեղանին էլ մի լիքը սափոր գարեջուր դնել, երբեմն էլ շշեր՝ ավելի թունդ խմիչքով:

Բայց ինչքան էլ շատ խմեի, Գարեհատիկ Ջոնը ինձ չէր հաղթում: Ինձ դուր էր գալիս բարեկամական մթնոլորտ ստեղծելու նրա կարողությունը, և ոչ թե ինքը: Երբ խմողների հասարակության մեջ էի լինում, միշտ էլ աշխատում էի պահել իմ տղամարդկային արժանապատվությունը, բայց հոգուս խորքում առաջվա նման ամոթալի կերպով քաղցրավենիք էի երազում: Ի միջի այլոց, ես ավելի շուտ կմեռնեի, քան թույլ կտայի, որ ուրիշները իմ այդ գաղտնիքն իմանային: Բայց հենց որ «անձնակազմիս» քաղաք էի ճամփում՝ գիշերելու, մենակության մեջ անձնատուր էի լինում իմ մոլությանը: Ես գրադարան էի գնում գրքերը փոխելու, հետո քսանհինգ սենթով տարբեր կոնֆետներ էի առնում, այնպիսիները, որոնք կարելի է շատ երկար ծծել, ինձ գցում էի նավակ, փակվում նավասենյակում, և գիրքը ձեռքս առնելով, պառկում էի մահճակալին ու մի կոնֆետը մյուսի հետևից բերանս ուղարկելով, երջանիկ ժամեր վայելում: Ահա, իսկապես հենց այդ ժամերին էի հաճույք զգում: Հրուշակեղենի կրպակում ծախսած քսանհինգ սենթն ինձ ավելի շատ էր ուրախություն պարգևում, քան պանդոկներում կորցրած դոլարները:

Կամաց-կամաց ներքաշվելով հարբեցողության մեջ, ես սկսեցի նկատել, որ կյանքի բոլոր պայծառ պահերը անփոփոխ կերպով կապված են կերուխումների հետ: Դրանք բոլորն էլ անմոռանալի դեպքեր էին: Այնպիսի մարդիկ, ինչպիսին Ջո Սագն էր, օրերի հաշիվը պահում էին քեֆից քեֆ ընկած ժամանակով: Նավահանգստային բոլոր բեռնակիրները անհամբեր սպասում էին շաբաթ երեկոյին, որ խմելու գնան: Մենք՝ ոստրեահեններս, սովորաբար սկսում էինք խմել, հենց որ վաճառում էինք մեր ապրանքը, չնայած հաճախ երկու-երեք գավաթը և պատահական հանդիպումը որևէ ընկերոջ հետ, արտահերթ կերուխումի պատճառ էին դառնում:

Հենց այդպիսի կերուխումներն էին ինձ ամենից շատ դուր գալիս: Այդ ժամանակ էր, որ տեղի էր ունենում ինչ-որ անսպասելի ու հուզիչ մի բան: Օրինակ, մի կիրակի Նելսոնը Ֆրենկի և նավապետ Սփրինքի հետ միասին գողացավ Վիսկի Բոբի և Հույն Նիքի մակույկը՝ սաղմոն որսալու համար: Սրանք էլ, իրենց հերթին, այդ մակույկը մի ուրիշից էին թռցրել: Ոստրեահենների տորմիղում փոփոխություններ եղան: Նելսոնը «Էննիի» վրա կռվեց Բիլլ Քելլիի հետ և ման էր գալիս աջ թևից վիրավոր: Հետո վիճելով Ջկան հետ, կորցրեց իր ընկերակցին և ձեռքն այդպես վիրակապված սկսեց լողալ «Հյուսիսային եղջերվով»՝ երկու նոր նավաստիների հետ, որոնք վախեցած Նելսոնի վայրի կտրիճությունից, փախան նրա մոտից: Նրանք ափին Նելսոնի սարսափելի տաքարյունության մասին այնպիսի բաներ պատմեցին, որ այլևս ոչ ոք չէր համաձայնվում նրա մոտ աշխատելու գնալ: Անձնակազմ չունենալու պատճառով նրա շխունան խարիսխ գցած մնացել էր ավազուտ ծանծաղուտում: Նրա կողքին կանգնած էր իմ «Կարուսելը», որն առանց գրոտ-առագաստի էր մնացել: Նավում ապրում էինք ես ու Սքոթին: Վիսկի Բոբը Ֆրենկից հեռացավ և Հույն Նիքի հետ գնաց գետի հոսանքն ի վեր՝ ձուկ որսալու:

Այդ արշավանքի արդյունքը եղավ սաղմոն որսալու նոր մակույկը, որը նրանք թռցրել էին իտալացի ձկնորսից: Խեղճ իտալացին շրջեց բոլոր ոստրեահենների մեջ, փնտրելով իր մակույկը. այն բանից, որ Բոբը և Նիքին ճամփորդության են ելել, մենք եզրակացրինք, որ նրանք են գողացել: Բայց ո՞ւր է մակույկը: Հարյուրավոր ձկնորսներ՝ հույներ և իտալացիներ, տակնուվրա արեցին

ամբողջ գետն ու ծովածոցը, նայեցին բոլոր ճահճուտներն ու մորուտները, բայց չգտան: Ի վերջո մակույկի հուսահատ տերը հայտարարեց, որ հիսուն դոլար կտա նրան, ով մակույկի տեղը ցույց տա: Դա մեծացրեց մեր հետաքրքրությունը, բայց ավելի խորացրեց գաղտնիքը:

Մի անգամ, կիրակի օրը, հայտնվեց ծեր նավապետ Սփինքը և ասաց, որ ուզում է ինձ հետ առանձին խոսել: Նրա ասելով, այդ առավոտ ինքը ձուկ էր որսում ալամեդյան պարոմային հին կայանի մոտ: Երբ տեղատվությունը սկսվել էր, նա նկատել էր արգելասյանը կապված մի պարան, որը գնում էր ջրի տակ: Ինչքան էլ աշխատել էր տեսնել, թե ինչից է կապված պարանի մյուս ծայրը, չէր կարողացել: Մի քիչ հեռվում նա այդպիսի մի ուրիշ պարան էլ էր տեսել, մյուս արգելասյունից կապված, որը նույնպես թաքցրած էր ավազների մեջ և իրեն չէր հաջողվել դուրս քաշել: Նա հավատացած էր, որ այնտեղ թաղված է գողացված մակույկը: Եթե մակույկը վերադարձնեինք տիրոջը, ապա հիսուն դոլար կստանայինք: Բայց գողերի պատվի մասին ես առանձնահատուկ հասկացողություն ունեի և հրաժարվեցի այդ գործին մասնակցելուց:

Ես արդեն ասացի, որ Ֆրենկը կռվել էր Վիսկի Բոբի հետ, Նելսոնը նույնպես նրա թշնամին էր: (Խե՜ղճ Վիսկի Բոբ: Նա այնքան բարեհոգի, թուլակամ և առատաձեռն մարդ էր, բնածին հարբեցող: Ծնվել էր աղքատ ընտանիքում: Մահը վերջ տվեց նրա ծովահենային կյանքին: Երբ նրա մարմինը ափի մոտ դուրս քաշեցին ջրից, մի քանի տեղ ծակծկված էր գնդակներից:) Նավապետ Սփինքի գնալուց մի ժամ հետո, ես նրան տեսա «Հյուսիսային եղջերվի» վրա: Նա Նելսոնի հետ էր: Նրա հետևից գնում էր Ֆրենկի շխունան:

Շուտով նրանք վերադարձան տարօրինակ ձևով, կողք կողքի: Երբ մոտեցան, տեսա, որ «Եղջերվից» և Ֆրենկի շխունայից կապված է ձկնորսական մի մակույկ: Տեղատվությունն իր կեսին էր հասել և նավերի քթերը խրվեցին ծանծաղուտի ավազների մեջ: Ծանծաղուտը խրվեց նաև մակույկը:

Առանց հապաղելու, Հանսը՝ Ֆրենկի նավաստին, քանդեց նավակը և սկսեց շտապ-շտապ թիավարել հյուսիս՝ դեպի նավահանգիստը: Նրա ուղևորության նպատակի մասին պերճախոս վկայում էր նավախելին դրված շիշը: Տղամարդիկ անհամբեր ուզում էին թրջել հիսուն դոլարը, որն այդքան հեշտ ճանապարհով էր վաստակված: Այդպես է ընդունված Գարեհատիկի համախոհների մոտ: Նրանք խմում են, տոնելով հաջողությունը, իսկ եթե դեռ հաջողություն չկա, նրանք խմում են ապագա հաջողության համար: Իսկ երբ վրա է հասնում անհաջողությունը, խմում են, որ դա մոռանան: Նրանք խմում են բարեկամին հանդիպելու ժամանակ, խմում են, երբ կռվում են ու կորցնում ընկերոջը: Եթե սերը վերջանում է բախտավորությամբ, ապա այստեղ հենց ինքը աստված է սահմանել խմելը: Իսկ եթե ոչ, ապա խմելու ավելի շատ պատճառ կա: Անգործության ժամանակ նրանք իրենց փրկությունը հարբեցողության մեջ են տեսնում. այն ժամանակ և եռանդ է հայտնվում, և նախաձեռնություն: Լուրջ ժամանակ խմել են ցանկանում, իսկ երբ խմում են, ավելի շատ են ուզում:

Հասկանալի է, որ ինձ ու Սքոթիին էլ որպես ընկերների, նույնպես խմելու կանչեցին: Այսպիսով, մենք էլ օգնեցինք բաժանելու դեռ չսպանված արջի մորթին. չէ՞ որ հիսուն դոլարը դեռ ոչ ոք չէր ստացել: Եվ ահա տանջալից ու ձանձրալի կիրակի օրը հանկարծ վերածվեց մի հիասքանչ տոնի: Մենք շատախոսում էինք ու երգում, ծիծաղում էինք ու պարծենում մեր քաջագործություններով, իսկ Ֆրենկն ու Նելսոնը հետևում էին, որ բաժակները դատարկ չմնան: Քաղաքային նավահանգստից մեր քեֆը շատ լավ էր երևում, և ահա այնտեղից սկսեցին մեզ մոտ գալ ախպեր-տղերքը: Նավակ նավակի հետևից մոտենում էր մեր կանգնած տեղին, և Հանսը հազիվ էր հասցնում ծանծաղուտից մինչև ափ գնալ ու ետ դառնալ մերթ դատարկ շշով, մերթ էլ՝ լիքը:

Հանկարծ որտեղից որտեղ հայտնվեցին Վիսկի Բոբը և Հույն Նիքը ու սկսեցին ընկեր ծովահեններին զայրացած կշտամբել այն բանի համար, որ համարձակվել են իրենց որսը թռցնել: Ֆրենկը Գարեհատիկ Զոնի թելադրանքով կեղծ բարեպաշտական մի ճառ ասաց բարեգործության ու ազնվության մասին և չնայելով իր հիսուն տարիներին, Վիսկի Բոբին քարշ տվեց ավազների վրա ու սկսեց ծեծել: Հույն Նիքին ճանկեց կարճ կոթով բահը և նետվեց ընկերոջն

օգնելու, բայց Հանսը մի ակնթարթում նրա հախիցը եկավ: Արնոտված Բոբին ու Նիքիին գցեցին նավակի մեջ և իրենց հաղթանակը նշանավորելու համար վերսկսեցին կերուխումը:

Այդ ժամանակ էլ հյուրերը՝ խայտաբղետ, բազմազգի մի հրոսակախումբ, ալկոհոլից տաքացած, գլուխները կորցրեցին: Հարություն առան մոռացված վեճերը, բորբոքվեց հին թշնամությունը: Օդի մեջ արյան հոտ զգացվեց: Բավական էր, որ բեռնակիրը հիշեր շխունայի նավաստու ինչ-որ ժամանակ իրեն հասցրած վիրավորանքը, կամ էլ, ընդհակառակը, նավաստին հիշեր, որ իրեն վիրավորել է բեռնակիրը, բավական էր ոստրեահենը մեկին ինչ-որ բանի համար մեղադրեր կամ էլ լսեր իր հասցեին ուղղված մեղադրանք, մի ակնթարթում սեղմվում էին բռունցքները ու տուրուդմփոցը սկսվում էր: Եվ ամեն մի տուրուդմփոց վերջանում էր հաշտությամբ ու նոր կերուխումով, և թշնամիները, որ հանգստացել էին մեր ընդհանուր ջանքերով, անմիջապես գրկախառնվում էին ու հավիտենական ընկեր լինելու երդում տալիս:

Եվ պետք էր կարծես Սուի Քենեդին հենց մի այդպիսի պահ ընտրեր դեռ Ձկան մոտ աշխատելու ժամանակ «Եղջերվի» վրա թողած իր հին վերնաշապիկի հետևից գալու համար: Ձկան Նելսոնի վեճի ժամանակ նա առաջինի կողմն էր: Որպեսզի պարզ լինի, ասենք, որ իր վերնաշապիկը պահանջելու համար նրան այստեղ էր բերել ոչ այլ ոք, քան Գարեհատիկ Ջոնը: Քենեդին արդեն հասցրել էր «Սենթ-Լուիս» գարեջրատանը մի լավ կոնծել: Խոսքը հետևեց խոսքին և գործի անցան բռունցքները: Դա պատահեց քոկփիթում: Տեսնելով, որ երկու առողջ ձեռքերով մարդիկ հարձակվել են միձեռքանու վրա, Ֆրենկը կատաղեց և նրա վրա շպրտեց երկաթե լինգը. չգիտեմ, թե այն ժամանակ Սուփի գլուխը ինչ հրաշքով փրկվեց: (Եթե «Հյուսիսային եղջերուն» մնացել է, ապա նրա ֆալշբորտի վրա կարելի է տեսնել լինգի այդ հետքը:)

Կատաղությունից ծամածռված դեմքով, Նելսոնը փաթաթանի միջից դուրս քաշեց իր վիրակապված ձեռքը և մեզ, որ փորձում էինք խելքի բերել նրան, մի կողմ հրելով, արցունքների միջից մռնչաց, թե Սուփ Քենեդուն մի ձեռքով էլ գետին կփռի: Մենք ստիպված էինք նրանց թողնել, որ գնան ափի ավազների վրա իրենց ուժերը փորձելու: Տեսնելով, որ Նելսոնի վիճակը ծանր է, Ֆրենկը (և նրա հետ էլ Գարեհատիկ Ջոնը) նետվեց նրան օգնելու, մի բան, որը օրենքով չէր: Այդ ժամանակ էլ Սքոթին բողոքեց և Ֆրենկին ետ քաշեց, իսկ սա, կատաղած, հրեց Սքոթիին, գետին գլորեց ու սկսեց ծեծել: Կծիկ դարձած՝ նրանք մոտ քսան ոտնաչափ գլորվեցին ավազների վրա: Դժվարությամբ նրանց իրարից բաժանեցին: Այդ ընթացքում կռվի մեջ մտան և ուրիշները: Նրանց մի կերպ հաջողվեց հանգստացնել. իհարկե, խմիչքի և ուրիշ բաների օգնությամբ: Բայց Նելսոնը և Սուփ Քենեդին չէին դադարեցնում ձեռնամարտը: Ժամանակ առ ժամանակ մենք տարբեր խորհուրդներով մոտենում էինք նրանց, ինչպես, օրինակ. «Աչքերի մեջ ավազ շփիր»: (Դա ասվում էր այն ժամանակ, երբ նրանք բոլորովին ուժասպառ փռված էին մնում ավազների վրա): Եվ ավազը թռչում էր դեպի թշնամիների աչքերը. հետո կարճատև դադարը վերջանում էր, երկուսն էլ ոտքի էին կանգնում և նորից կռվում էին մինչև ուժասպառ լինելը:

Հասկանալի է, որ այս բոլորը խղճուկ, անմիտ և անասնականորեն կոպիտ բան էր, բայց աշխատեք հասկանալ ինձ: Դեռ տասնվեց տարեկան չկայի, բայց այրվում էի արկածների տենչից, գլուխս լիքը լցված էր ծովահենների և ծովագնացների մասին եղած պատմություններով, թալանված քաղաքներով ու ընդհարումներով, իսկ այն զզվելի բանը, որ ես խմում էի, ավելի էր բորբոքում իմ ուղեղը: Ինձ շրջապատում էր կոպիտ ու վայրենի հրոսակախումբը, միանգամայն բնական այն տեղերի համար, ուր ես էի ապրում և այն ժամանակների համար, որն ընտրել էի ծնվելու համար: Բայց ես չէի կորցնում իմ ապագայի հույսը: Սա միայն սկիզբն է: Ծանծաղուտից ծովային ճանապարհը ինձ Ոսկե Դարպասով կտանի արկածների անսահման աշխարհը, որտեղ կռիվներ կլինեն ոչ թե հին փալասների և գողացված ձկնորսական նավակների համար, այլ հանուն բարձր գաղափարների ու ռոմանտիկ նպատակների:

Իսկ առայժմ քեֆ անող ընկերներիս ընդհանուր հաճույքի համար ես էլ կռվեցի Սքոթիի հետ. սկսեցի ծաղրել նրան, որ թույլ տվեց ծերուկ Ֆրենկին՝ իրեն երկու թիակների վրա պառկեցնել: Բանը վերջացավ նրանով, որ Սքոթին հրաժարվեց ինձ մոտ աշխատելուց և երեկոյան, թռցնելով

իմ երկու վերմակներն էլ, փախավ: Գիշերը, երբ ոստրեահենները մեռելի պես հարբած փռվել էին, մակընթացությունը բարձրացրեց Ֆրենկի շխունան և «Հյուսիսային եղջերուն», որ խարիսխ նետած կանգնել էին: Ձկնորսական մակույկը, որը լցված էր ջրով ու քարերով, առաջվա նման մնաց հատակին:

Առավոտյան կողմ ես վայրենի աղաղակներ լսեցի, որոնք գալիս էին «Եղջերվից», և, վաղորդյան ցրտից կծկված, դուրս եկա տեսնեմ, թե ինչ է պատահել: Իմ առջև մի տեսարան բացվեց, որը նավահանգստում հետո երկար ժամանակ ծիծաղով էին հիշում: Գեղեցիկ մակույկը ընկած էր ավազներին՝ փշրված, բլիթի նման տափակած. դրա վրա բարձրացել էին Ֆրենկի շխունան ու «Եղջերուն»: Մակույկի ամուր, կաղնե ֆորշտվենը ջարդել էր «Եղջերվի» հատակի տախտակը, և մակընթացությունն սկսվելուն պես ջուրը լցվել էր ճեղքի մեջ: Նելսոնը արթնացավ, երբ արդեն նրա մահճակալը ծածկվել էր ջրով: Ես օգնեցի ջուրը դուրս թափելու և ճեղքը ծածկելու գործում:

Հետո Նելսոնը նախաճաշ պատրաստեց, և ուտելու ժամանակ մենք խոսեցինք իրերի դրության մասին: Նա մի կոպեկ չուներ: Ես էլ չունեի: Հիսուն դոլարի մասին հիմա մտածել անգամ չէր կարելի. ո՞վ կվճարի տաշեղների այս խղճուկ կույտի համար: Վիրավոր ձեռքի պատճառով Նելսոնը շարքից դուրս էր եկել, իսկ նավը անձնակազմ չուներ: Իմ առագաստը այրվել էր, և ես էլ առանց օգնականի էի մնացել:

— Արի երկուսով, հը՞,— առաջարկեց Նելսոնը:

— Արի,— պատասխանեցի ես:

Այսպես ես ընկեր դարձա Վագրին, ծովահեններից ամենակատաղիին ու ամենասանձարձակին: Ջոնսի Հեյնհոլդից պարտք վերցնելով, մենք ուտելիքների պաշար տեսանք, տակառները լցրեցինք խմելու ջրով և հենց նույն օրն էլ լողացինք դեպի ոստրեի ծանծաղուտները:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

Խոստովանում եմ, երբեք չեմ փոշմանել, որ այդ խելագար ամիսները անց եմ կացրել Նելսոնի հետ: Ով-ով, բայց նա արդեն նավավարություն գիտեր, չնայած ամեն ոք, ով նավարկում էր նրա հետ, վախից դողում էր: Նրան հաճույք էր պատճառում, երբ մազ էր մնում, որ կործանվի, այնպիսի օյիններ էր թափում, որոնց մասին ուրիշները երազել անգամ չէին կարող: Նելսոնը մի մոլագարություն ուներ. նրան թվում էր, թե ռիֆերը վերցնելը ամոթ բան է: Մեր համատեղ նավարկության ժամանակ ես չեմ հիշում, որ երբևէ «Եղջերվի» վրա առագաստների ռիֆերը վերցներ, մինչև անգամ ամենաուժեղ քամու ժամանակ: Հենց այդ պատճառով էլ մեր տախտակամածը երբեք չէր չորանում: Մենք գնում էինք առանց աջ ու ձախ նայելու, լրիվ բացված առագաստներով: Եվ երբ մեր մտքով անցավ, թե Օքլենդի նավահանգիստը մեզ չի կարող բավականին սուր տպավորություններ տալ, թողեցինք այն և ավելի հեռուն գնացինք:

Այդպիսի հիասքանչ կյանքը ինձ համար հնարավոր դարձավ միայն Գարեհատիկ Ջոնի շնորհիվ: Ի միջի այլոց, հենց այդ պատճառով էլ նրա վրա զայրացած եմ: Չէ՞ որ ես միայն մի բան էի ուզում. ազատ կյանք, հետաքրքիր արկածներ, բայց դրանց հասնել կարող էի միայն Գարեհատիկ Ջոնի օգնությամբ: Այդպես էր սովորությունը այն մարդկանց, որոնք նման կյանք էին ընտրել: Եվ քանի որ ես մտադրվել էի այնպես ապրել, ինչպես նրանք էին ապրում, պետք է նմանվեի նրանց: Կարո՞ղ էի արդյոք առանց գարեջրի մտերմանալ Նելսոնին և ընկերանալ նրա հետ: Եթե ես այն օրը հրաժարվեի նրա հետ խմելուց և հյուրասիրելուց, ինձ իր մոտ չէր վերցնի: Նա ուզում էր մի այնպիսի ընկեր ունենալ, որի հետ ոչ միայն կարելի է աշխատել, այլև կերուխում անել:

Ես մինչև գլուխս սուզվեցի նոր կյանքի մեջ, յուրացնելով մի սխալ կարծիք, թե Գարեհատիկի էությունն այն է, որ մարդուն հալից գցի և անասուն դարձնի, նրան առաջուց տանելով հարբեցողության այն բոլոր աստիճաններով, որին կարող է դիմանալ միայն երկաթե

առողջությունը: Ես տանել չէի կարողանում խմիչքի համը և պանդոկ էի գնում միայն նրա համար, որ խմեմ ու հարբեմ: Դեռ երեկվա ժլատ ու խնայող փոքրիկ Շեյլոկը, որը հնավաճառին լացացնում էր և քիչ մնաց գիտակցությունը կորցներ, երբ Ֆրենկը մի րոպեում ութ հոգու համար վիսկի գնելիս ութսուն սենթ վատնեց, հիմա փողերը շաղ էր տալիս ամենամոլի հարբեցողից էլ վատ:

Հիշում եմ, մի անգամ Նելսոնի հետ ափ իջա: Իմ գրպանում հարյուր ութսուն դոլար կար: Ես ուզում էի նախ ինձ համար հագուստ առնել, իսկ հետո միայն խմել: Անհրաժեշտ էր նոր շորեր գնել: Ամբողջ ունեցվածքս հագիս շորերն էին. պատառոտված ռետինե երկարաճիտ կոշիկներ, որոնք այնպես էին ծակծկված, որ, բարեբախտաբար, ջուրը մեջը չէր մնում, մեկ դոլար արժողությամբ բանվորական արտահագուստ, քառասուն սենթանոց չթե վերնաշապիկ և մեկ էլ նավաստիական պարուսինե գլխարկ: Ուրիշ գլխարկ չունեի, այնպես որ ստիպված էի ափ իջնելիս դա ծածկել: Նկատի ունեցեք, որ ես չեմ խոսում ո՛չ սպիտակեղենի, ո՛չ գուլպաների մասին այն պարզ պատճառով, որ չունեի:

Հագուստեղենի խանութ հասնելու համար պետք է անցնեի տասնյակ պանդոկների մոտով: Դրա համար էլ նախ խմելու գնացի: Հագուստեղենի խանութին այնպես էլ չհասա: Հաջորդ առավոտ նավ վերադարձա առանց կոպեկի, թմրած գլխով, բայց ինքս ինձնից գոհ, և մենք ճանապարհ ընկանք: Հագիս առաջվա փալասներն էին, իսկ հարյուր ութսուն դոլարից մի սենթ անգամ չէր մնացել: Անտեղյակ մարդիկ, թերևս, չհավատան, թե ինձ նման մի ջահել տղա, համարյա թե երեխա, կարող է տասներկու ժամվա մեջ հարյուր ութսուն դոլար խմել: Բայց դա կարող եմ ապացուցել:

Ես մինչև անգամ չէի վշտանում այդ դոլարների համար: Հպարտությամբ էի լցված. հավանորեն տեղական հարբեցողները համոզվեցին, որ կարող եմ բոլորից լավ շաղ տալ փողերս: Ուժեղ մարդկանց ցույց տվեցի, որ ես էլ եմ ուժեղ: Նրանք կարող էին մի ավելորդ անգամ համոզվել, որ ես լրիվ իրավունք ունեմ Թագավոր կոչումը կրելու: Այն, որ ես փողերի հետ այդպես էի վարվում, երևի իմ աղքատիկ մանկության և փոքր հասակում տեսած ծանր աշխատանքից վրեժ լուծելու համար էր: Իմ ուղեղի ինչ-որ տեղում թաքնված էր, երևի, այն միտքը, թե լավ է հարբեցողների խմբապետ լինել, քան թե մեքենայի ստրուկ: Երբ տասներկու ժամ անընդհատ գործարանից դուրս չեն գալիս, կյանքը զրկվում է իր հետաքրքրությունից: Բայց դրա փոխարեն, ըստ ձեզ, մի՞թե մեծ իրադարձություն չէ, որ տասներկու ժամվա մեջ մարդ հարյուր ութսուն դոլար խմի, հը՞: Եթե այդպես չէ, ուրեմն ե՛ս եմ սխալ:

Ես մանրամասն չեմ պատմի Գարեհատիկ Ջոնի հետ ունեցած իմ բարեկամության մասին, այլ միայն կնշեմ այն փաստերը, որոնցից պարզ կդառնա, թե նա որքան նենգ է: Ինձ սպիտակ տենդից փրկեցին միայն երեք հանգամանք. նախ՝ շատ ուժեղ օրգանիզմը, երկրորդ՝ առողջ կյանքը ծովի վրա, մաքուր օդում և, երրորդ՝ այն, որ միայն դեպքից դեպք էի խմում: Որսի դուրս գալիս մենք երբեք հետներս գարեջուր կամ վիսկի չէինք վերցնում:

Իմ առջև բացվում էր աշխարհը: Ես արդեն մի քանի մղոն ծովային ճանապարհ գիտեի, շատ մեծ ու փոքր քաղաքներում և ափի երկայնքով փռված ձկնորսական գյուղերում էի եղել: Մի թաքուն ձայն ինձ ավելի հեռուն էր կանչում: Ի՞նչ էի փնտրում: Չգիտե՛մ: Բայց զգում էի, որ առջևում դեռ շատ հետաքրքիր բաներ կան: Իսկ Նելսոնին աշխարհի այս մի կտորն էլ ընդարձակ էր թվում: Նա կարոտում էր իր սիրելի Օքլենդի նավահանգստին և ի վերջո որոշեց վերադառնալ. մենք լավ բարեկամների նման իրար հրաժեշտ տվեցինք:

Մենակ մնալով՝ ես որոշեցի Քարկինեզ նեղուցի մոտ գտնվող Բենիշի փոքրիկ քաղաքը իմ շտաբը դարձնել: Այստեղ, ձկնորսական բարկասների մի ամբողջ նավատորմիղի մեջ, որը խռնված էր ծովափին, հարբեցողների ու թափառաշրջիկների մի ջերմ ընկերություն կար, որոնց միացա և ես: Զբաղվում էի սաղմոնի որսով և ակոսում էի ծովածոցի ու գետի ջրերը, որպես ձկնորսական պարեկի գործակալ, բայց ավելի ու ավելի շատ ժամանակ էի անցկացնում ափին, որտեղ գինեմոլության գծով փորձ էի ձեռք բերում և անընդհատ քեֆերի մեջ էի: Խմելու մեջ ինձ ոչ ոք չէր կարող գերազանցել, բայց պարծենալու համար հաճախ ավելի շատ էի խմում, քան թե պետք էր:

Մի առավոտ ինձ դուրս քաշեցին չորացնելու համար փռված ձկնորսական ուռկանների միջից, որտեղ խճճվել էի հարբած վիճակում, չիմանալով, թե ո՛ր աշխարհում եմ գտնվում: Այս առթիվ շատ խոսակցություն, կատակ ու ծիծաղ եղավ: Ախր ինչպե՞ս նորից չխմես: Ես ման էի գալիս հերոսի նման: Կատակ բան չկարծե՛ք:

Բայց դրա փոխարեն երեք շաբաթվա թունդ հարբեցողությունից հետո որոշեցի. բավական է: Գագաթը նվաճված է: Ուրիշ հաճույքներ գտնելու ժամանակն է: Հարբած թե սթափ, մի ներքին ձայն ինձ միշտ շշնջում էր, որ հարբեցողությունը և ավազակային հարձակումները դեռ բոլորը չէ: Իմ բախտն է, որ լսեցի այդ ձայնը և միշտ էլ լսում եմ: Բնավորությունս է այդպես: Իսկ այն ժամանակ այդ ձայնը ինձ կանչում էր արար աշխարհում թափառելու: Բայց դա ողջամտության ձայնը չէր, ո՞չ. այդտեղ և հետաքրքրասիրության, և՛ մի տեղ չնստելու, և գեղեցկի ծարավ կար, որը, երևի, ինչ-որ տեղ անցողակի տեսել էի, գուցե զգացել միայն: Էլ ինչո՞ւ ապրել, հարցնում էի ինքս ինձ, եթե կյանքն այս է: Ո՛չ, անպայման մի բան էլ կա: (Պետք է նշեմ, երբ ես կամաց-կամաց իսկական հարբեցող դարձա, այդ ձայնը, որն ասում էր, թե կյանքը հարուստ է ուրիշ բաներով, շատ օգնեց ինձ Գարեհատիկի հետ կռվելիս:)

Ի միջի այլոց կյանքս փոխելու որոշումը արագացրեց Գարեհատիկի մի հրեշավոր օյինը, որը ցույց տվեց, թե հարբեցողությունը ինչպիսի անելանելի անդունդի մեջ կարող է մարդուն գլորել: Մի ճոխ կերուխումից հետո ես գիշերվա մեկին գնացի իմ նավակը քնելու: Քարկինեզ նեղուցում շատ ուժեղ հոսանք կա, ջուրը փրփրում է ինչպես ջրաղացի անիվի տակ: Այն ժամանակ, երբ ես նավակ մտա, լրիվ տեղատվություն էր: Ես ոտքերիս վրա չկարողացա մնալ և շրմփացի ջուրը: Ո՛չ նավակայանում, ո՛չ էլ նավակի վրա մարդ չկար: Հոսանքը սկսեց քշել ինձ: Բայց ես չվախեցա: Մինչև անգամ այս անսպասելի դեպքը դուր եկավ ինձ: Ես լավ էի լող տալիս, ջուրը շոյում էր իմ տաքացած մարմինը սառը սավանի նման:

Բայց հենց այդ ժամանակ էլ Գարեհատիկ Ձոնը իր խելագար օյինը խաղաց. իմ մեջ մի վայրի ցանկություն առաջ բերեց՝ հանձնվել ալիքների կամքին: Ես երբեք չէի մտածում մահվան մասին, իսկ ինքնասպանության մասին՝ առավել ևս: Բայց այդ ժամանակ խելքիս փչեց, որ դա հիանալի վերջ կլինի իմ կարճ, բայց պայծառ կյանքի համար: Ես, որ դեռ չէի զգացել ո՛չ աղջկա, ո՛չ կնոջ, ո՛չ էլ երեխայի սերը, արվեստի հետ շփվելու բախտը չէի տեսել, չէի գրոհել աստղերի պես սառը փիլիսոփայության բարձունքները և տեսել էի հոյակապ աշխարհի մի մասնիկը միայն, այն էլ քորոցի գլխիկի չափ, մտածում էի, որ ամեն ինչ արդեն գիտեմ, ամեն ինչ տեսել եմ, ամեն ինչ փորձել և հիմա ժամանակն է երկրային գոյությանս վերջ տալու: Սա, իհարկե, Գարեհատիկի կատակներն էին. պտտեցրեց գլուխս, թակարդը գցեց և հարբած քաշ տվեց մեռնելու:

Ուրիշ բան գուցե ոչ, բայց սա նա շատ լավ է կարողանում: Այսպես, ուրեմն, ամեն ինչ տեսել եմ, և բոլորն էլ դատարկ բան է: Բաժակը լցվել է, ինձ ատում էի այն անասնական կյանքի պատճառով, որ վարում էին վերջին ժամանակներս և հասկանում էի, թե մեղքերիս համար ինձ ինչ է սպասվում: Կենդանի օրինակը այն դժբախտ թափառաշրջիկներն ու անգործ մարդիկ էին, որոնք իմ հաշվին էին խմում: Կյանքում նրանք այլևս ոչինչ չունեին: Հը՛, ինչ է, դո՞ւ էլ ես ուզում այդպիսին դառնալ: Ո՛չ, հազար անգամ ո՛չ: Ես լաց էի լինում քաղցր վշտից, որ կործանվում է ջահել հերոսը: (Ո՛վ չի տեսել աչքերը թաց մելամաղձոտ գինեմոլների, որոնք ուզածդ պանդոկի անփոխարինելի սեփականությունն են: Եթե այնտեղ ավելի հարմար ունկնդիրներ չի գտնում, ապա նա իր հոգին բաց է անում պանդոկապանի առջև, իսկ սա պարտավոր է լսել. հենց դրա համար էլ նրան վճարում են:)

Ձուրը հիանալի էր: Տղամարդը հենց այդպես էլ պիտի մեռնի: Գարեհատիկ Ձոնը մի ուրիշ երգ սկսեց իմ հարբած ուղեղում: Կարիք չկա տխրել ու լաց լինել: Դա հերոսի մահ է, որը կամավոր որոշել է կյանքի հետ հաշիվները փակել: Եվ ես սկսեցի բարձրաձայն երգել նախամահյան մի երգ, մինչև որ ջրերի խշշոցն ու շառաչը ինձ հիշեցրին, թե որտեղ եմ գտնվում:

Բենիշիից ներքև, այնտեղ, ուր Սոլանո նավամատույցը խրված է ծովի մեջ, նեղուցը լայնանում է և առաջացնում այսպես կոչված Թերներյան ծոցը: Ես լողում էի մերձափնյա հոսանքի հետ, որը

գնում է դեպի Սոլանո նավամատույցը և այնտեղից էլ դեպի ծոցը: Ինձ վաղուց հայտնի էր, որ այն տեղում, ուր հոսանքը թեքվում է Մեռյալի կղզուց և գնում դեպի նավամատույցը, շատ ուժեղ մի ջրապտույտ է առաջանում: Ես ամենևին էլ ցցագերաններին զարկվելու ցանկություն չունեի: Այդ դեպքում մի ամբողջ ժամ պետք կլինի ծոցից դուրս գալու համար:

Ես ջրի մեջ հանեցի շորերս և ուժեղ շարժելով թևերս, լողացի հոսանքի լայնքով: Եվ այն ժամանակ միայն, երբ տեսա, որ նավամատույցի լույսերը հետևում մնացին, ես պառկեցի մեջքիս և հանգստացա: Ուժեղ լարումն իզուր չանցավ. ես երկար ժամանակ չէի կարողանում շունչս ետ բերել:

Ուրախացած, որ հաջողվեց խուսափել ջրապտույտից, ես նորից երգեցի իմ նախամահյան երգը, ավելի շուտ պոպուրրին, որը կարող է հանպատրաստից հնարել գինովությունից խելքը թռցրած պատանին «Մի՛ երգիր, սպասիր,— շշնջաց Գարեհատիկ Ջոնը:— Սոլանոյում ամբողջ գիշեր մարդիկ են լինում: Այնտեղ կարող են երկաթուղայիններ էլ լինել: Կլսեն ձայնդ, նավակ կնստեն և օգնության կշտապեն, իսկ դու ախր չես ուզում, որ քեզ փրկեն»: Իհարկե, ո՛չ: Ա՛յ քեզ բան: Ո՛չ մի դեպքում: Եվ ես պառկած մնացի մեջքիս վրա, աստղազարդ երկնքի տակ, նայում էի, թե ինչպես են լողում ու անցնում նավամատույցի ծանոթ կրակները՝ կարմիր, կանաչ, սպիտակ և զգացված հրաժեշտ էի տալիս բոլորին ու յուրաքանչյուրին՝ առանձին-առանձին:

Հայտնվելով նեղուցի մեջտեղում՝ ես նորից ու նորից սկսեցի երգել: Լողում էի հոսանքին հանձնված, թևերս երբեմն մի քանի անգամ թափահարում էի ոչ այն է քնած, ոչ այն է արթուն վիճակում: Այդպես մի քանի ժամ անցավ. լուսաբացից առաջ ցուրտն ինձ այնպես սթափեցրեց, որ սկսեցի հետաքրքրվել, թե որտեղ եմ գտնվում, և մտածեցի՝ կարո՞ղ եմ լողալով մտնել Սան-Պաբլոյի ծոցը, քանի դեռ մակընթացությունը չի սկսել, որը կարող է ինձ դեպի ետ քշել:

Հետո զգացի, որ սարսափելի հոգնել եմ և սառել: Գինովությունս անցել էր, և ես արդեն մեռնել չէի ուզում: Քոնտրա Կոստայում սկսեցին ուրվագծվել Սելբի պղնձաձուլական գործարանի շինությունները և Ձիու կղզու փարոսը: Ես որոշեցի լողալ դեպի Սոլանոյի ափը, բայց, ուժասպառ ու սառած, ծալեցի ձեռքերս և հանձնվեցի հոսանքին, միայն երբեմն մի քանի շարժումներ էի անում, որպեսզի ջրի երեսին մնամ, որն ավելի ու ավելի անհանգիստ էր դառնում սկսված մակընթացությունից: Հենց այդ ժամանակ էլ ես սարսափեցի: Բոլորովին սթափվել էի և ոչ մի դեպքում մեռնել չէի ուզում: Շատ և շատ բաների համար արժեր ապրել: Բայց որքան շատ պատճառներ էի գտնում, այնքան փրկվելու քիչ հնարավորություն էր մնում:

Լուսաբացը վրա հասավ Ձիու կղզու փարոսի մոտ: Չորս ժամ անընդհատ ջրում մնալուց հետո ես ընկա ջրապտույտների վտանգավոր շերտի մեջ, որոնք առաջանում էին Վալլեհո և Քարկինեզ նեղուցների ուժեղ հոսանքներից. բացի դրանից, սկսված մակընթացությունը Սան-Պաբլոյից ալիքներ քշեց բերեց, և այդ երեք ուժերը պայքարի մեջ մտան: Քամի բարձրացավ, կարճ ու գահավեժ ալիքները սկսեցին ծեծել ինձ, և ես արդեն ջուր կուլ տվեցի: Որպես փորձված լողորդ, հասկանում էի, որ շուտով իմ վերջը կգա: Եվ հանկարծ, չգիտես թե որտեղից, մի ձկնորսական բարկաս հայտնվեց. ինչ-որ մի հույն դեպի Վալլեհո էր գնում. մի անգամ էլ իմ առողջությունը և ֆիզիկական դիմացկունությունը ինձ ազատեցին Գարեհատիկի դավերից:

Ի դեպ պետք է ասեմ, որ Գարեհատիկ Ջոնը այդպիսի վտանգավոր խաղեր միայն իմ գլխին չէր խաղում: Նորին ողորմածության մեղքով կատարված ինքնասպանությունների տոկոսը, վիճակագրական տվյալներով, սարսափելի մի պատկեր է ներկայացնում: Թող ինձ հետ կատարված դեպքը տիպական չլինի. առողջ, ոտք ու ձեռքը տեղը, կենսուրախ պատանին ոչ մի հիմք չունի իրեն կյանքից զրկելու: Բայց եթե ես դրանից առաջ երկար ժամանակ գինեմոլություն արած չլինեի և՛ նյարդերս, և՛ ուղեղս թունավորված չէին լինի, ու ես սպիտակ տենդի նոպայի պահին չէի գայթակղվի այն տպավորությունից, որն ինձ խոստանում էր ռոմանտիկ կործանումը: Ի միջի այլոց, հին ու մոլի հարբեցողներն էլ, որոնք հիասթափվել են կյանքից և կորցրել մարդկային կերպարանքը, հաճախ, նույնպես երկար ժամանակ հարբեցողությանը անձնատուր

լինելուց հետո, որոշում են ինքնասպան լինել, երբ նրանց նյարդերը և ուղեղը լրիվ թմրած են լինում:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ

Եվ ահա ես հրաժեշտ տվեցի Բենիշին, ուր քիչ մնաց, որ Գարեհատիկ Ջոնը վերջ տար կյանքիս և հնազանդվելով իմ ներքին ձայնին, ես նորություն փնտրելու համար հեռուները գնացի: Բայց ուր էլ թափառում էի, ճանապարհը միշտ էլ դեպի գինետունն էր տանում: Գինետունը աղքատների ակումբն է և միայն այնտեղ կարող էի գնալ: Այնտեղ կարելի էր ծանոթություններ հաստատել: Կարելի էր մոտենալ վաճառասեղանին և զրույց սկսել հենց առաջին հանդիպած մարդու հետ: Ախր, թափառումների ժամանակ օտար քաղաքում էլ ո՞ւր կարող էի գնալ: Դրա փոխարեն հենց որ ոտքս գինետան շեմքից ներս էի դնում, ինձ այլևս մենակ չէի զգում:

Թույլ տվեք այստեղ մի շեղում կատարել, որն արդեն կապված է մեր օրերի հետ: Անցյալ տարի ես չորս ձի լծեցի կառքին և Չարմիանի հետ երեքուկես ամիս ճամփորդեցի Կալիֆորնիայի և Օրեգոնի լեռնային խուլ վայրերում: Ամեն առավոտ նստում էի գրելու իմ վեպը և երբ վերջացնում էի օրվա բաժինը, մենք շարունակում էինք ճանապարհը ու երեկոյան կանգ էինք առնում մի նոր տեղում: Հյուրանոցներ հազվադեպ էին պատահում, ճանապարհի պայմանները շատ բազմազան էին, և ես միշտ էլ ստիպված էի լինում նախօրոք ծրագրել մեր երթուղին, առաջին հերթին մտածելով իմ աշխատանքի մասին: Հարկավոր էր և՛ գործ անել, և՛ ժամանակին ճամփա ելնել: Երբեմն, հաշվի առնելով երկար ճանապարհը, ես վեր էի կենում առավոտյան ժամը հինգին և անմիջապես գործի էի անցնում: Երբ, ասենք, հաջորդ կայանը մոտ էր, ես կարող էի նստել և մի ինը ժամ գրել:

Բայց երթուղին ինչպե՞ս ծրագրել: Հասնելով մի որևէ քաղաք, ես ձիերը կապում էի ախոռում, և հենց այդտեղից էլ, դեռ հյուրանոց ոտք չդրած, շտապում էի գինետուն: Ամենից առաջ հարկավոր էր խմել. խմել շատ էի ուզում, բայց գործնական պատճառ էլ կար. ինձ տեղեկություններ էին հարկավոր: Եվ այսպես, բաժակը ձեռքիս, սովորականի նման դիմում էի գինետան տիրոջը. «Ձեզ համար էլ լցրեք, խնդրեմ»: Մենք խմում էինք, և ես սկսում էի հարցուփորձ անել. ճանապարհները ինչպիսի՞ն են և որտե՞ղ կարելի է կանգ առնել:

— Սպասեք մի մտածեմ,— երբեմն ասում էր գինետան տերը,— Թարուոթեր գետաբաժնի վրայով է անցնում ճանապարհը: Առաջ լավ ճանապարհ էր: Ես այդտեղով անցել եմ երեք տարի առաջ: Բայց գարնանը քարուքանդ է եղել: Ավելի լավ է, թերևս Ջերրիից հարցնենք: Հե՛յ Ջերրի (կամ Թոմ, կամ Բիլլ),— ձայն էր տալիս նա վաճառասեղանի մյուս ծայրին կանգնած մարդուն,— Թարուոթերի ճամփան ո՞նց է: Դու անցյալ շաբաթ Ուիլքինս այդ ճանապարհով գնացիր:

Եվ մինչ ծանրաշարժ Ջերրին, Բիլլը կամ Թոմը իրենց մտքերը կարտահայտեին մի ճառով, ես հրավիրում եմ նրան միանալ մեզ: Սկսում են քննարկել այս կամ այն ճանապարհի ու հյուրանոցի առավելությունները, քանի՛ ժամից կհասնեմ և որտեղ է կարմրախայտ որսալու ամենալավ տեղերը: Զրույցին կամաց-կամաց միանում են էլի ինչ-որ մարդիկ. նորից խմելու մի պատճառ ևս:

Էլի մեկ-երկու գինետներ, և ես մի քիչ գինովցած, արդեն գիտեմ այստեղի համարյա թե բոլոր բնակիչներին, քաղաքին և նրա շրջակայքին վերաբերող ամեն ինչ: Հասցնում եմ ծանոթանալ տեղի փաստաբանի, թերթի խմբագրի, քաղաքական գործիչների, եկվոր ֆերմերների, որսորդների ու հանքափորների հետ, և երբ երեկոյան ես ու Չարմիանը դուրս ենք գալիս գլխավոր փողոցում զբոսնելու, նա չի կարողանում հասկանալ, թե բոլորովին օտար քաղաքում որտեղի՞ց այսքան շատ ծանոթներ:

Ահա թե Գարեհատիկ Ջոնը ինչպիսի օգնություն է ցույց տալիս, այդ միջոցով մարդկանց վրա ավելի մեծ իշխանություն ձեռք բերելով: Եվ ինչքան էլ աշխարհից աշխարհ եմ թափառել, ամենուր նույն բանն եմ նկատել: Եվ Լատինական թաղամասի կաբարեում, և՛ իտալական հետամնաց

գյուղակի սրճատանը, և՛ ծովափնյա քաղաքի նավահանգստային գինետանը, և՛ պերճաշուք ակումբում, ուր վիսկին խմում են սոդայաջրով, այս ամենը Գարեհատիկի իշխանության շնորհիվ մարդկանց իրար են մոտեցնում: Ապագայում, երբ կյանքը ավելի լավ կդառնա, և Գարեհատիկ Ջոնը բարբարոսության մյուս հատկանիշների հետ միասին կդադարի գոյություն ունենալուց, հարկ կլինի գինետների փոխարեն այնպիսի հաստատություններ ստեղծելու մասին մտածել, ուր մարդիկ կարող են հավաքվել, ծանոթանալ, գտնել իրար և իմանալ այն, ինչ իրենց հարկավոր է:

Բայց դառնանք մեր ընդհատված պատմությանը: Բենիշիից հետո իմ ճանապարհը նորից էր գնում գինետների միջով: Բարոյական արգելքներ ես չէի զգում, բայց ոգելից խմիչքի համը առաջվա նման զզվելի էր ինձ համար: Եվ չնայած Գարեհատիկ Ջոնի նկատմամբ տածած ամբողջ հարգանքին, նրա հետ սկսեցի զգույշ վարվել. չէ՞ որ ինձ հետ չար կատակ խաղաց, քարշ տվեց տարավ, որ խեղդի, երբ բոլորովին էլ մեռնել չէի ուզում: Ես խմում էի, բայց նրան չէի մոռանում և հաստատ որոշել էի վճռական հակահարված տալ, եթե նորից փորձ անի ինձ ինքնասպանության մղել:

Այսպես, ուրեմն, ինչքան քաղաք, այնքան գինետուն և նոր ծանոթներ: Եթե ես քնելու համար փող չունենայի, ապա գիտեի, որ գինետանը, համենայն դեպս, կարող եմ մի աթոռ դնել տաք, գոգռացող վառարանի մոտ: Գինետանը կարելի էր լվացվել, սանրվել, մաքրել հագուստը: Դրանք զարմանալի հարմարավետ հաստատություններ են և մեզ մոտ՝ Արևմուտքում, ամեն քայլափոխի հանդիպում են:

Ոչ մի անծանոթի տուն ես այդպես հեշտությամբ չէի մտնի: Ոչ ոք իմ առաջ դուռը բաց չէր անի և չէր առաջարկի տաքանալ կրակի մոտ: Եկեղեցին ես չէի ճանաչում: Եկեղեցականները խորթ էին ինձ համար, և ես մինչև անգամ չէի ձգտում ծանոթանալ: Ի՜նչ անգույն է նրանց կյանքը, մտածում էի ես, ոչ մի ցնցող իրադարձություն, հետաքրքիր ապրում: Իմ աչքում եկեղեցականները պատկանում էին այն տիպի մարդկանց թվին, որոնք ապրում են պատյանի մեջ. իրենց տեղից ոչ մի քայլ չեն հեռանում, նեղմիտ են, սահմանափակ, գլուխները լցված է նախապաշարումներով և սիստեմի կարգերի ստրուկներն են: Ո՛չ ավյուն ունեն, ո՛չ երևակայություն, ո՛չ ընկերության զգացում: Իսկ ես ուզում եմ, որ իմ բարեկամները լավ մարդիկ լինեն՝ բարի, սիրալիր, առատաձեռն ու մեծահոգի, թեկուզ լցված անխոհեմ խիզախությամբ, բայց ոչ նապաստակի հոգով:

Ի դեպ, հենց լավ մարդկանց՝ տաքարյուն, համարձակ, ազնիվ, զգայուն, մարդկային ամենասիրելի թուլություններ ունեցողներին է Գարեհատիկ Ջոնը բռնում իր ցանցում: Սրան ավելացնենք մեղադրանքի ցուցակը. նա հանգցնում է հոգու կրակը, գինու մեջ խեղդում է մտքի կենդանությունը և եթե միանգամից չի կործանում իր զոհերին ու բանականությունից չի զրկում, այնուամենայնիվ հաշմում է նրանց, անողոք դարձնում սիրտը, ոչնչացնում այն բոլոր ազնվությունները, որ բնությունն է պարգևել նրանց:

Բայց և այնպես, հասուն տարիների փորձից ելնելով կասեմ, աստված հեռու պահի այն բոլոր սովորական մարդկանցից, որոնց լավ չի կարելի համարել, քանի որ նրանցից սառնություն է փչում. նրանք չեն ծխում, չեն խմում, չեն հայհոյում ու դրա հետ էլ ոչինչ չեն դատապարտում, երբեք համարձակ քայլի չեն դիմում: Դրանք բոլորն էլ փոքրոգի մարդուկներ են, որոնք խեղդում են իրենց հոգում կյանքի կրակը, չեն համարձակվում պատառոտել իրենց կենցաղի ոստայնը: Դուք նրանց չեք հանդիպի գինետներում և չեք տեսնի բարիկադների վրա: Նրանց չեն գրավում անհայտ հեռուները և ընդունակ չեն ինքնամոռաց կերպով սիրել: Նրանք իրենց հոգսերն ունեն. ոտքերը չթրջել, չհոգնեցնել սիրտը, իրենց փոքրիկ տաղանդով ձեռքից բաց չթողնել չնչին հնարավորությունը՝ քաղքենիական հաջողության հասնելու համար:

Այսպես ուրեմն, Գարեհատիկ Ջոնը նստած է մեղադրյալի աթոռին: Ինչքա՜ն լավ, արժեքավոր մարդկանց է, որոնց պակասությունները նրանց առավելություններից են բխում՝ չափազանց մեծ ուժից, չափազանց խիզախությունից, հոգու կրակից և ազնիվ խիզախումից, Գարեհատիկ Ջոնը բռնում և ոչնչացնում: Իհարկե, նա ոչնչացնում է նաև թուլակամներին, բայց հիմա դրանց մասին չեմ խոսում: Ես խոսում եմ ամենաթանկագին մարդկային նյութի մասին, որը անխնա այրում է: Եվ

այդ բոլորն այն բանից է, որ այս Գարեհատիկ Ջոնը ցցված է ամեն մի փողոցում, ամեն մի խաչմերուկում: Նա միշտ էլ մատչելի է, գտնվում է օրենքի պաշտպանության տակ, նրան պատիվ է տալիս հերթապահ ոստիկանը, չխանգարելով, որ գրավի մարդուն և տանի այն տեղերը, ուր հավաքվում են հիասքանչ, խիզախ մարդիկ ու խմում են մեռնելու աստիճան: Եթե Գարեհատիկին ճանապարհից հեռացնեին, խիզախ մարդիկ ավելի քիչ կծնվեին, բայց նրանք չէին կործանի իրենց, այլ կապրեին և օգուտ կտային:

Ես միշտ նկատել եմ, որ հարբածներին հատուկ է ընկերության զգացումը: Պատահում է, քայլում ես կոճափայտերի վրայով դեպի ջրհան կայանը,— ապրանքատար գնացքին սպասելու համար,— և հանկարծ դեմ ես առնում «ալկայի» խմբին (այդպես են կոչվում դեղատնային սպիրտ խմող թափառաշրջիկները): Նրանք բարձրաձայն և ուրախ ողջունում են անծանոթներին, մոտ են կանչում ու առաջարկում իրենց հետ սպիրտ խմել, որին վարպետորեն ջուր են խառնում: Եվ ահա նստում եմ նրանց կողքին՝ կերուխումի. շուտով գլուխս սկսում է պտտվել, և Գարեհատիկ Ջոնը շշնջում է ականջիս, թե կյանքը հիասքանչ է, թե մենք բոլորս էլ քաջ ու հիանալի մարդիկ ենք և որ գլխավորն է՝ քամու պես ազատ ենք. կուզենանք՝ թավալ կտանք գետնին, կուզենանք՝ ոչ, և պատրաստ ենք թքելու ամբողջ մարդկության վրա, որն աղտոտվել է կյանքի անձուկ նեխած ճահճում:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ

Իմ թափառումներից հետո Օքլենդ վերադառնալով, ես նորից նավահանգիստ ընկա և նորից սկսեցի ընկերություն անել Նելսոնի հետ, որը հիմա շարունակ թրև էր գալիս ծովափին և ավելի ցոփ կյանք էր վարում, քան առաջ, երբ լողում էր ինձ հետ: Ես ամբողջ ժամանակս նրա հետ էի անցկացնում, բացի այն բացառիկ դեպքերից, երբ ինձ կարճ ժամանակով որևէ շխունայի վրա էին վերցնում, ուր աշխատող ձեռքի պակաս կար:

Այսպիսով, ես զրկված էի առողջության համար օգտակար այն օրերից, երբ մաքուր օդում զբաղվում էի ֆիզիկական աշխատանքով և ոգելից խմիչք չէի գործածում: Այժմ ես խմում էի ամեն օր, առանց չափ ու սահմանի, և դեռ չէի հաղթահարել այն հեղհեղուկ պատկերացումը, թե իբր Գարեհատիկի ամբողջ հմայքը նրանում է, որ մարդ իրեն հասցնի անզգայության անասնական աստիճանի: Կարծես ամբողջովին ներծծված ալկոհոլով, ես համարյա թե դուրս չէի գալիս գինետներից և դարձել էի դրանց մշտական հաճախորդը:

Հիմա արդեն Գարեհատիկ Ջոնը ինձ իր թակարդն էր գցում ավելի խորամանկ ու խարդախ ձևով, քան այն անգամ, երբ ինձ քարշ տվեց ծովում խեղդելու: Ես տասնյոթ տարեկան չկայի և արհամարհում էի ամեն մի մշտական աշխատանք, ինձ մյուս թոկից փախածներից վատը չէի համարում, և խմում էի, ինչքան կարողանում էի, որ նրանցից ետ չմնամ: Ես չգիտեի, թե ինչ բան է մանկությունը. շատ վաղ հասունանալով, իմ տարիքին անհամապատասխան լցված էի կյանքի փորձով ու ցինիկ էի: Բախտը ինձ աղջկական սեր դեռ չէր նվիրել, բայց արդեն քարշ էր տվել արյան ու կրակի միջով, և ես հավատացած էի, թե կյանքի ու սիրո դպրոցը անցել եմ սկզբից մինչև վերջ: Բայց այդ գիտությունը ինձ համար օգտակար չէր. բնավորությամբ բոլորովին էլ հոռետես չէի, բայց հավատացած էի, որ կյանքը զզվելի ու ձանձրալի մի բան է:

Հասկանո՞ւմ եք, Գարեհատիկ Ջոնը բթացրել էր իմ զգացումները, մեռցրել արկածներ որոնելու ցանկությունը, կյանքի հանդեպ եղած հետաքրքրությունը: Ինձ համար միևնույն էր, թե ինչ կա մոլորակի մյուս կողմում: Այնտեղ էլ, երևի, տղամարդիկ ու կանայք այնպես են ապրում, ինչպես մենք, ամուսնանում են, քարշ են տալիս իրենց լուծը, խեղդված չնչին հոգսերի մեջ և, իհարկե, խմում են: Հո խմելու համար աշխարհի ծայրը չպիտի գնաս: Ամենից հեշտ է գնալ Ջո Վիգի մոտ և ամեն ինչ քո տրամադրության տակ կլինի: Կամ էլ Ջոնսի Հեյնհոլդի «Վերջին հավանականություն» պանդոկը: Իսկ գինետները անթիվ-անհամար են:

Ալկոհոլը ինչքան շատ էր ներծծվում իմ մարմնի և ուղեղի կենդանի հյուսվածքների մեջ, այնքան խուլ էր հնչում կյանքի կանչը: Կենդանի-կենդանի փտել և մեռնել կարելի է Օքլենդում, դրա համար կարիք չկա քարշ գալ յոթ սարից այն կողմ: Եվ եթե Գարեհատիկ Ջոնին լրիվ ազատություն տամ, ապա նա շատ հեշտ կարող է իմ հախից գալ: Ես սկսել էի մոռանալ, թե ինչ բան է ախորժակը, բայց դրա փոխարեն լավ գիտեի մի ուրիշ զգացում, երբ առավոտյան վեր ես կենում, օրորվում ես, ներսդ այրվում է, ձեռքերդ դողում են, և դու միայն մի ցանկություն ունես՝ խումարությունից դուրս գալ թունդ վիսկիի մի գավաթով (օ՛, Գարեհատիկ Ջոն գիտե գլխահան անել: Այրված, շշված ու թունավորված մարմինը և ուղեղը սպասում են, որ իրենց կազատի հենց այն նույն թույնը, որը քիչ մնաց իրենց վերջը տար):

Գարեհատիկի խարդավանքին չափ ու սահման չկա: Սկզբում փորձեց ինձ ինքնասպանության հասցնել, հետո որոշեց ինձ հետ այլ ձևով հաշիվը մաքրել, դրանից ոչ պակաս եռանդուն միջոցներով: Բայց, երևի, դա քիչ համարելով, մի նոր խորամանկություն հնարեց և անկասկած կկործաներ ինձ, եթե ինքս խելքս գլուխս չհավաքեի և չսկսեի առանց ետ նայելու խմել: Ես վերջապես հասկացա, որ իմ հազվագյուտ դիմացկունությունն էլ սահման ունի, իսկ նա, Գարեհատիկը, հոգնել չգիտե: Ես հասկացա, որ մի երկու ժամում կարող է ինձ հետ հաշիվ տեսնել, չնայած իմ ամուր գլխին, ուժեղ ուսերին ու հզոր կրծքին, պառկեցնել զույգ թիակներիս վրա և խեղդել իր դիվային մամլիչով:

Մի անգամ երեկոյան ես ու Նելսոնը նստած էինք «Օվերլենդ» գարեջրատանը: Նստած էինք այդտեղ, որովհետև առանց կոպեկ էինք մնացել, իսկ դա մունիցիպալ ընտրությունների նախօրյակին էր: Գիտեք չէ՞, որ նախընտրական կամպանիայի ժամանակ տեղի քաղաքական գործիչները սովորաբար մի գարեջրատնից մյուսն են գնում, ընտրողների ձայներ որսալու հույսով: Եվ ահա մարդը նստած է սեղանի մոտ և մտածում է, թե ինչպե՞ս կոկորդը թրջի, որևէ մեկը մի բաժակ չի՞ հյուրասիրի, կամ, գուցե, արժե մի ուրիշ տեղ գնալ և ապառիկ խնդրել, երբ հանկարծ անսպասելի բացվում է դուռն ու ներս է մտնում լավ հագնված ջենթլմենների մի խումբ, որոնք բոլորի հետ իրենց հասարակ են պահում և շատերի հետ մտերիմ խոսակցության մեջ են մտնում: Բոլորիս համար պատրաստ է ժպիտն ու ողջույնի բացականչությունը, և՛ քեզ, որ մի հինգ սենթ էլ չունես մի բաժակ գարեջրի համար, և անկյունում նստած այն երկչոտ թափառաշրջիկի, որի ազգանունը, իհարկե, ոչ մի ընտրական ցուցակում չկա ու չի կարող լինել, որովհետև ժամանակավորապես բնակվում է նավահանգստային հյուրանոցում: Հենց որ գարեջրատան սրահն են մտնում կրծքները դուրս ցցած, լայնաթիկունք ու մեծ փորերով պարոնայք քաղաքագետները, որոնց հենց ինքը տեր աստված է ստեղծել որպես լավատեսների ու կյանքի տերերի, դու փրկված ես: Դու զգում ես, որ քո երեկոն կորած չէ, հիմքը, համենայն դեպս, դրված է: Իսկ հետո, մեկ էլ տեսար, աստված էլի մի որևէ առատաձեռն քեռու կուղարկի և հաջողությունը լիուլի կլինի: Թույլ չտալով, որ քեզ խնդրեն, մոտենում ես սեղանին, մի քանի բաժակ ես դատարկում, և քեզ լուսավորում են այն ջենթլմենի ազգանունով և այն բանով, թե ժողովրդական ընտրության ժամանակ նա ինչ պաշտոն է ցանկանում:

Գարեջրատներում քաղաքագետների այս շրջագայություններն ինձ օգնեցին հասկանալու նրանց բարերար գործունեության մի քանի կողմերի դառն ճշմարտությունը և ցրել այն պատրանքները, որոնք ինձ ներշնչել էին այնպիսի գրավիչ գրքերը, ինչպիսիք են՝ «Մուրճահարը» և «Նավավարից մինչև պրեզիդենտ»-ը:

Այսպես ուրեմն, այն երեկո ես ու Նելսոնը չորացած կոկորդներով, գրպաններումս առանց քոռ կոպեկի, նստած էինք գարեջրատանը, բայց որպես իսկական հարբեցողներ, հոգիներումս մի հույս կար, թե մի տեղից խմելու բան կգա: Հիմնական հույսներս, իհարկե, թեկնածուների վրա էր: Հանկարծ ներս է վազում հռչակված քեֆասեր Ջո Հուսը՝ կատաղի աչքերով և ջարդված քթով, հագին իր գույնզգույն ժիլետը:

— Գնացի՛նք, տղե՛րք, ձրի խմիչք կա,— ասաց նա,— խմիր թեկուզ մի տակառ: Ես անմիջապես ձեր մասին մտածեցի: Մենակ թե չուշանանք:

Մենք, իհարկե, հետաքրքրվեցինք:

— Որտե՞ղ է:

— Ճամփին կպատմեմ. Գնանք, թե չէ կուշանանք:

Նա արագ քայլերով մեզ դեպի քաղաքի բնակելի մասը տարավ:

— Այս գործը կազմակերպել է Հենքոքի հրշեջ խումբը,— բացատրեց Ջոն:— Մեզանից շատ բան չեն պահանջում. հագնել հրշեջի կարմիր զգեստ, սաղավարտ դնել և ձեռքներիս մի ջահ վերցնել: Դեպի Հեյուորթս թափոր պիտի գնա: Մեզ այնտեղ կտանեն հատուկ գնացքով: (Կարծեմ, Հեյուորթս էր: Գուցե Սան-Լեանդրո կամ էլ Նայլս: Թեկուզ սպանեք էլ, չեմ հիշում, թե Հենքոքի հրշեջները ի՞նչ կուսակցության էին պատկանում՝ դեմոկրատակա՞ն, թե՞ հանրապետական: Ինչևիցե, ղեկավարությանը թվում էր, թե թափորի համար ժողովուրդը քիչ է, դրա համար էլ խմիչք խոստանալով, կամավորներ էին հավաքագրում):

— Այնտեղ ինչ ասես, որ չեն պատրաստել,— պատմում էր Ջո Հուսը:— Վիսկին ոնց որ ծով լինի: Թեկնածուները գինետների ամբողջ պաշարը գնել են: Ամեն ինչ ձրի է: Մոտեցիր ու խմիր: Ա՛յ թե քեֆ կանենք, հա՛...

Ութերորդ փողոցում գտնվող հրշեջ շենքում, Բրոդվեյից ոչ հեռու, մենք վրաներս գցեցինք հրշեջի շորերն ու հագանք սաղավարտները, զինվեցինք ջահերով, որից հետո մեզ հոտի պես քշեցին կայարան և նստեցրին վագոնները: Ի միջի այլոց, մեզ խմելու բան չտվեցին և մենք առանց քաշվելու փնթփնթում էինք: Բայց այդ քաղաքագետները խորամանկ ժողովուրդ են, իմանալով, թե ում հետ գործ ունեն, նրանք Հեյուորթսում էլ մեզ չհյուրասիրեցին: Հրամանը այդպիսին էր. սկզբում ջահերով գնա, իսկ հետո՝ խմիր:

Ուզած-չուզած հնազանդվեցինք: Բայց հենց որ թափորը վերջացավ, բացվեցին բոլոր գինետները: Ամենուր լրացուցիչ սպասավորներ էին վարձել և ամեն մի վաճառասեղանի մոտ վեց շարքով հավաքվել էին խմել ցանկացողները: Ժամանակ չկար թաց սեղանները մաքրել, լվանալ ամանները. բուֆետապանները հազիվ էին հասցնում միայն բաժակները լցնել: Օքլենդի նավահանգստային հարբեցողները սպասել չէին ուզում:

Բայց հերթ կանգնելը և ամեն բաժակի համար գլուխ ջարդելը մեզ շատ ձանձրալի զբաղմունք թվաց: Չէ՞ որ բոլորն առանց այդ էլ մերն է: Մեզ համար է գնված: Մի՞թե մենք ազնվորեն չմասնակցեցինք ջահերթին: Այդ բոլորը հաշվի առնելով, մենք թևային հարձակման անցանք. վաճառասեղանին մոտեցանք հետևի կողմից, մի կողմ հրեցինք բողոքել ցանկացող բուֆետապաններին և մի-մի խտիտ շիշ վերցրինք:

Փողոցում շշերի բերանները խփելով մայթի ցեմենտյա եզրերին, ջարդեցինք ու սկսեցինք խմել: Ջո Հուսը և Նելսոնը վախենում էին անխառն վիսկիի մեծ բաժիններից, իսկ ես՝ ոչ: Ես դեռ այն սխալ տեսակետին էի, թե պետք է խմել այնքան, ինչքան տեղավորվում է. հատկապես, երբ ձրի է: Մենք հյուրասիրեցինք ուրիշներին էլ, չմոռանալով, իհարկե, մեզ: Ես բոլորից շատ էի կոնծում. բայց պետք է խոստովանեմ, որ խմում էի առանց հաճույքի, հիշելով այն գարեջուրը, որից թունավորվեցի հինգ տարեկան հասակում, և այն գինին, որից հիվանդացա, երբ յոթ տարեկան էի: Ես վիսկին խմում էի դառը դեղի նման, ամեն կերպ աշխատելով հաղթահարել զզվանքս: Գործը մի գինետանը վերջացնելով, մենք գնացինք մի ուրիշը, հետո երրորդը. ամեն տեղ ձրի վիսկին հոսում էր գետի նման և ամենուրեք մենք ավար գրավելու նույն մեթոդն էինք կիրառում:

Չգիտեմ, թե ինչքան խմեցի. երկու քվա՞րտ, թե՞ հինգ: Միայն գիտեմ, որ կերուխումի սկզբում ես մի շնչով քառորդ քվարտ վիսկի էի գցում, առանց ջուր խմելու կամ ավելացնելու:

Տեղական քաղաքագետները, որոնք բավական փորձված էին այդպիսի գործերում, օքլենդցի հարբեցողներին թույլ չտվեցին քաղաքում մնալ: Դրա համար էլ վերադարձի գնացքը ուղարկելուց առաջ հատուկ մի խումբ շրջեց գինետները: Գինին արդեն գլուխս էր խփել: Ինձ ու Նելսոնին դուրս

բերեցին, և մենք հայտնվեցինք բավականին անկանոն մի շարասյան պոչում: Ես հերոսական ճիգեր գործադրեցի բոլորի հետ հավասար գնալու համար, բայց համարյա թե չէի իշխում իմ մարմնին: Ոտքերս ծալվում էին, գլխումս մշուշ էր, սիրտս արագ էր խփում, և օդը չէր բավականացնում:

Իմ ուժերը արագ հալչում էին, և մթագնած գիտակցությունս թելադրում էր, որ ցած կընկնեմ և չեմ հասնի գնացքին, եթե այսպես շարասյան հետևից գնալու լինեմ: Ես շարքից դուրս եկա և վազեցի ճամփեզրի արահետով, ծառերի ստվերաշատ ճյուղերի տակով: Նելսոնը ծիծաղելով վազեց իմ հետևից: Բաներ կան, որոնք հավիտյան մնում են մարդու հիշողության մեջ մղձավանջային երազի նման: Ես պարզ հիշում եմ ծառերի փարթամ կատարները և այն լարումը, որը պատել էր ինձ, երբ վազում էի դրանց տակով, հաճախ սայթաքելով ու վայր ընկնելով, ի մեծ հաճույս իմ հարբած եղբայրների: Նրանց թվում էր, թե ես պարզապես գժություն եմ անում, իրենց հաճույք պատճառելու համար: Նրանք իսկի էլ գլխի չէին ընկնում, որ Գարեհատիկ Ձոնը մահացու կերպով բռնել է իմ կոկորդից: Ես նրա հետ մնացել էի երես առ երես և դառն վիրավորանքը այրում էր սիրտս. ոչ ոքի մտքով անգամ չէր անցնում, որ կռվում եմ մահվան հետ: Ես խեղդվողի նման, մարդկանց աչքի առաջ, սուզվում էի, իսկ նրանք կարծում էին, թե կատակ եմ անում իրենց զվարճացնելու համար:

Վազեցի մի քիչ, ընկա և կորցրեցի գիտակցությունս: Ականատեսները պատմում էին, թե հետո ինչ եղավ: Ուժեղ Նելսոնը գրկեց ինձ և մինչև կայարան տարավ: Նա ինձ վագոն բարձրացրեց և գցեց նստարանին, իսկ ես քացի-քացի էի անում ու խռխռում: Նելսոնը, որն այնքան էլ նրբազգացություն չուներ, բայց էլի հասկացավ, որ բանս բուրդ է: Հիմա եմ հասկանում, որ մազ էր մնում մեռնեի: Թերևս մահվանը երբեք այդքան մոտ չեմ եղել: Բայց չգիտեի, թե այն ժամանակ ինձ հետ ինչ էր կատարվում. դա արդեն հետո Նելսոնը պատմեց:

Ներսս վառվում էր դժոխային կրակով, և ինձ թվում էր, թե խեղդվում եմ: Օ՜դ: Օ՜դ: Ես նետվեցի լուսամուտը բաց անելու, բայց չկարողացա. վագոնի բոլոր լուսամուտները պտուտակներով ամրացված էին: Նելսոնը կարծեց, թե ինձ մոտ սպիտակ տենդ է սկսվել, և ես ցանկանում եմ լուսամուտից ցած նետվել: Ինձ հանգստացնելու նրա բոլոր փորձերը ոչ մի արդյունք չտվեցին: Ես խլեցի ինչ-որ մեկի ջահը և ամբողջ ուժով հարվածեցի ապակուն:

Պետք է ասել, որ Օքլենդի նավահանգստային հարբեցողների մեջ երկու խմբավորում կար. Նելսոնի կողմնակիցներ և հակառակորդներ: Վագոնում երկուսի ներկայացուցիչներից էլ կային, ընդ որում, շատ թունդ խմած: Երբ ես ջարդեցի լուսամուտը, Նելսոնի հակառակորդները ուրախացան դրանից: Նրանցից մեկը տարավ-բերեց և հարվածեց իմ ատամներին և այնպես ուժեղ, որ ես գետին փռվեցի: Դա ընդհանուր տուրուդմփոցի համար ազդանշան ծառայեց: Այդ բոլորի մասին ես հետո իմացա. դա էր վկայում նաև իմ այտը, որին հաջորդ օրը ձեռք տալ անհնար էր: Բայց ինձ վիրավորողը ստացավ ինչ որ պետք էր և փռվեց ինձ վրա, իսկ Նելսոնն ամբողջ մարմնով ընկավ սրա վրա. դրանից հետո այնպիսի մի ճակատամարտ սկսվեց, որ շուտով մի անվնաս ապակի չմնաց, և քիչ մնաց վագոնն էլ ջարդուփխուրդ անեն:

Թերևս իմ բախտից էր, որ ինձ ցած գլորեցին, և ես խաղից դուրս ընկա: Կտրուկ շարժումները, որ ես անում էի տուրուդմփոցի ժամանակ, ուժեղացնում էին սրտիս աշխատանքը, և իմ տարաբախտ թոքերը ավելի շատ էին թթվածին պահանջում:

Երբ տուրուդմփոցը վերջացավ, և ես աչքերս բացեցի, դեռ գիտակցությունս տեղը չէր եկել: Խեղդվող մարդու նման, ոչինչ չգիտակցելով, մեքենաբար շարունակում էի պայքարը տարերքի դեմ: Չեմ հիշում, թե ինչ էի անում, բայց այնպես կատաղի «օ՜դ», «օ՜դ» էի գոռում, որ Նելսոնը վերջապես գլխի ընկավ. դրությունը լուրջ է և գործից ինքնասպանության հոտ չի գալիս: Նա լուսամուտի շրջանակից հանեց ջարդված ապակին, ինձ հնարավորություն տվեց գլուխս դուրս հանել և ամուր բռնեց իմ գոտուց, որ հանկարծ ցած չընկնեմ: Այդպես ես մինչև Օքլենդ հասա, կատաղի դիմադրություն ցույց տալով ինձ նորից վագոն քաշելու Նելսոնի բոլոր փորձերին:

Սրտիս ուզածի չափ օդ կուլ տալուց հետո միայն ես զգացի, որ գիտակցությունս տեղը եկավ: Միակ զգացումը այն պահից սկսած, երբ ես ցած ընկա արահետում, ծառի տակ, մինչև այն պահը, երբ արթնացա մյուս երեկո, մահացու շնչարգելության զգացումն էր. ես կանգնած եմ, գլուխս դուրս հանած, գնացքը սլանում է, ականջներումս սուլում է քամին, շոգեքարշի կայծերն այրում են դեմքս, իսկ ես ագահորեն բացել եմ բերանս և չեմ կարողանում շնչելուց հագեցնալ: Ինձ ստիպեցին շնչել ինչքան կարող եմ խոր, կտրուկ, կարճ ներշնչումներով, աշխատելով թոքերիս մեջ հնարավորին չափ շատ օդ առնել: Հասկանում էի, որ առանց դրա ինձ մահ է սպառնում. ես ջրի տակ երկար դիմացող լողորդի փորձ ունեի: Այն պահերին, երբ գիտակցությունս վերադառնում էր, վերադառնում էր և տանջալից շնչարգելության զգացումը ու ես փրկվում էի միայն նրանով, որ դեմքս դարձնում էի քամուն ու կայծերին և շնչում էի, ագահորեն շնչում:

Այլևս ոչինչ չեմ հիշում: Ես սթափվեցի միայն հաջորդ երեկոյան, նավահանգստի գիշերօթիկում: Կողքիս ոչ ոք չկար: Ոչ ոք բժիշկ չէր կանչել. ես կարող էի շատ պարզ ձևով հոգիս աստծուն տալ: Բայց Նելսոնը և մյուսները մտածել էին, որ խումարանալու համար ամենից լավը քնելն է և ինձ թողել էին ուշաթափ վիճակում՝ ամբողջ տասնյոթ ժամ: Բժիշկներին հայտնի է, թե ինչքան մարդիկ են մեռել մի քվարտ վիսկիից: Սովորաբար գրում են, որ դրանք փորձված հարբեցողներ էին, բայց կործանվեցին նրանից, որ գրազով խմեցին. ո՛վ շատ կխմի: Այդ ժամանակ, իհարկե, ես այդ բանը չգիտեի: Այսպես ուրեմն, ես մի դաս էլ ստացա: Եվ եթե կենդանի մնացի, ապա դա ոչ թե իմ քաջությունից ու վաստակից էր, այլ իմ բախտից ու ամուր առողջությունից: Առողջությունս նորից հաղթեց Գարեհատիկ Ջոնին: Ես փրկվեցի նոր որոգայթից, մի անգամ էլ դուրս պրծա ճահճուտից և հասկանալով իմ համարձակ քայլի ահավոր հետևանքները, սովորեցի առաջվանից ավելի զգուշությամբ խմել:

Օ՜, աստված իմ: Այդ օրվանից անցել է քսան տարի և ես, պետք է խոստովանեմ, ժամանակս իզուր չեմ վատնել. շատ բան տեսա, զգացի և արեցի, որովհետև ամեն անգամ ցնցվում էի այն մտքից, որ այս երկու հիասքանչ տասնամյակները կարող էին և չլինել: Բայց չէ՞ որ Գարեհատիկ Ջոնը Հենքոքյան հրշեջների կերուխումից սկսած՝ ինձ հետ շատ էր չարչարվել:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ

Ես մտածեցի հեռավոր նավարկության ելնել 1892 թվականի ձմեռնամուտին: Եվ բոլորովին էլ ո՛չ այն պատճառով, որ Հեյուորթսի հրշեջների հետ կատարած ուղևորությունն ինձ դաս եղավ: Ես առաջվա նման հարբեցողությամբ էի զբաղվում և գինետներից համարյա թե դուրս չէի գալիս: Ես հասկացա, որ վիսկիից օգուտ չկա, սակայն դրանում դատապարտելի բան չէի գտնում: Վիսկին վտանգավոր բան է, բայց դրանից շատ ավելի վտանգավոր բաներ կան: Այո՛, ոմանք մեռնում են վիսկիից, բայց մի՞թե չի պատահում, որ ձկնորսի մակույկը շուռ է գալիս, և նա խեղդվում է: Իսկ թափառաշրջիկների հետ դժբախտ դեպքեր քի՞չ են պատահում. ընկնում են գնացքի տակ և վե՛րջ: Եթե ամեն բան խելքով անես, այն ժամանակ սարսափելի չեն լինի ո՛չ քամին, ո՛չ ծովը, ո՛չ գնացքները, ո՛չ գինետները: Մարդիկ խմում են, դու էլ խմիր, միայն թե զգույշ եղիր, որպեսզի չկրկնվեն այն ժամանակները, երբ դու կոնծում էիր մի ամբողջ քվարտ, գուցե ավելի:

Այսպես ուրեմն, ես հասկացա, որ Գարեհատիկ Ջոնը իր հետևորդներին դեպի կործանում է տանում և դրա համար էլ որոշեցի նավարկության ելնել: Ճիշտ է, որ մահվան արահետը բավական աղոտ էի պատկերացնում, բայց արդեն տեսնում էի երկու կածաններ, որոնք ինչ-որ տեղ միահյուսվում էին: Ամենից առաջ, նայելով շրջապատին, ես նկատեցի, որ մեր՝ կերուխում սիրողներիս վարած կյանքը ավելի վտանգավոր է, քան մյուս մարդկանց կյանքը:

Գարեհատիկ Ջոնը խախտում է բարոյական հիմքերը և դեպի ոճրագործություն տանում: Ես համոզվեցի, որ հարբածը ընդունակ է այնպիսի արարքների, որոնք երբեք էլ չէր անի, եթե խմած չլիներ: Բայց սա դեռ ամենասարսափելին չէ: Ամենից սարսափելին պատիժն է: Ոճրագործությունը կործանում է ոճրագործին: Իմ բաժակակից ընկերները չխմած ժամանակ հիասքանչ, անշառ

տղաներ են, բայց հենց որ խմում են, դառնում են ավազակներ ու թոկից փախածներ: Ահա մի օր ոստիկանատուն տարան, և մենք նրանց վրա խաչ քաշեցինք: Ինձ թույլ տվեցին տեսակցել նրանցից մի քանիսի հետ ծովածոցի մյուս ափին՝ բանտ ուղարկելուց առաջ: Եվ նրանց շուրթերից շատ հաճախ էի լսում.

«Թե որ այն ժամանակ հարբած չլինեի...»

Գարեհատիկի ողորմածությամբ այնպիսի հրեշավոր գործեր էին կատարվում, որոնք ցնցում էին մինչև անգամ իմ կոշտացած հոգին:

Նրա համար, ով անդադար խմում է, երկրորդ մահացու արահետն է պատրաստ: Այդպիսի մարդը կարող է ոչ տանել, ոչ բերել և մեկ էլ ոտքերը ձգել: Կպառկի ինչ-որ դատարկ հիվանդությամբ, որն այնքան էլ վտանգավոր չէ ու մեկ էլ տեսար, մոմի պես կհանգչի: Եվ նրան, այդ մենակ, անտեր մարդուն, մի գեղեցիկ օր կգտնեն անկողնում մեռած: Մի ուրիշն էլ կամ կխեղդվի, կամ դժբախտ պատահարի զոհ կդառնա Բիլլ Քելլիի նման, որը հարբած վիճակում նավը բեռնաթափելիս մատը արմատից կտրեց: Բայց չէ՞ որ նույն հաջողությամբ կարող էր և գլխից զրկվել:

Եվ ահա ծանրութեթև անելով այդ հավանականությունները, ես որոշեցի փրկվել Գարեհատիկից: Այդպես շատ արագ կարող ես այն աշխարհը գնալ, բայց իմ ջահելության կենսասիրության առկայությամբ այդպիսի հեռանկար ինձ չէր գրավում: Բայց ինչպե՞ս փրկվել: Միայն փախուստով: Սան-Ֆրանցիսկոյի ծոցում ձմեռում էր գազանորս նավատորմիղը, ես գինետներում հանդիպում էի նավավարների, որսորդների, ղեկորդների ու թիավարների: Նրանց մեջ հանդիպեցի ծովարջի որսորդ Փիթ Հոլթին, որի հետ էլ պայմանավորվեցի աշխատանքի մասին. նա ինձ իր շխունայի վրա թիավար վերցրեց: Ես ու Փիթը անմիջապես մեր նոր միությունը ամրապնդեցինք խմելով, և ամեն մեկս մի վեց գավաթ գցեցինք:

Եվ անմիջապես իմ մեջ վերակենդանացավ տեղս փոխելու ձգտումը, որը Գարեհատիկ Ջոնը աշխատում էր մոռացնել տալ: Օքլենդի նավահանգստում անցկացրած գինետնային կյանքը ինձ անտանելի էր թվում և նույնիսկ տարօրինակ էր, թե մինչև հիմա դրա մեջ ի՞նչ գրավիչ բան եմ գտել: Ես սկսեցի վախենալ իմ կյանքի համար. հանկարծ ինձ որևէ բան չպատահի՝ մինչև մեկնելս, որը նշանակված էր հունվարին: Ինձ սկսեցի ավելի համեստ պահել, քիչ էի խմում, տանը հաճախ էի լինում: Խոսափում էի ընկերներիս ցոփ կերուխումներին մասնակցելուց, իսկ երբ Նելսոնը կատաղում էր, խուսափում էի և իմ ընկերոջից:

1893 թվականի հունվարի 12-ին լրացավ իմ տասնյոթ տարին, իսկ հունվարի 20-ին հավաքագրման գործակալությունում պայմանագիր կնքեցի «Սոֆի Սեզերլենդ» եռակայմ ձկնորսական շխունայի վրա նավաստի աշխատելու համար, որը մեկնելու էր Ճապոնիայի ափերը: Եվ ինչ եք կարծում, մենք չթրջեցի՞նք այդպիսի մի իրադարձության առթիվ: Ջո Վիգին մանրեց իմ կանխավճարի չեքը, և ես հյուրասիրեցի. հետո Փիթ Հոլթը հյուրասիրեց, նրանից հետո՝ Ջո Վիգին և մյուս որսորդները: Ի՜նչ կարող ես անել, այդպես է տղամարդկանց սովորությունը, և ես՝ տասնյոթամյա պատանիս չէ, որ խելք պիտի սովորեցնեի հասուն, փառապանծ ու խիզախ այրերին:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ

«Սոֆի Սեզերլենդի» վրա ոգելից խմիչք չկար և ոչինչ մեր անխռով տրամադրությունը չէր փչացնում: Հիսունմեկ օր մենք լող էինք տալիս հյուսիսարևելյան պասսատի հարավային շերտում, գնալով դեպի Բոնինի կղզիները: Այս կղզիախումբը ճապոնական կղզիներից հեռու է և կանադական ու ամերիկյան ձկնորսական նավատորմիկների հավաքատեղին էր: Նրանք այստեղ խմելու ջրի պաշար էին վերցնում և նորոգում նավերը՝ ծովարջի երեքամսյա որսորդության դուրս գալուց առաջ, որը պիտի սկսվեր Ճապոնիայի հյուսիսային ափերից և հասներ մինչև Բերինգի ծովը:

Հիսունմեկ օրվա խաղաղ նավարկությունը, առանց սովորական հարբեցողության, ամրապնդեց իմ ուժերը: Օրգանիզմս մաքրվեց թույնից, և ես վիսկի խմելու կամ նույնիսկ այդ մասին հիշելու ոչ մի ցանկություն չունեի: Հասկանալի է, որ բաքում անպայման խոսում էին խմելու մասին, նավաստիները հումորով և նկատելի բավականությամբ պատմում էին հարբած ժամանակ իրենց գլխով անցած արկածների մասին, որոնք, ինչպես երևում էր, նրանց ուղեղներում ավելի խոր հետքեր էին թողել, քան իրենց կյանքի տպավորություններով հարուստ այլ դեպքեր:

Բաքի ամենաավագ նավաստին Լուիսն էր, չաղ-չաղ, հիսնամյա, խմել սիրող նավապետը: Նրան կործանել էր Գարեհատիկ Ջոնը, և նա իր կարիերան վերջացնում էր այնպես, ինչպես սկսել էր՝ բաքային նավաստու պաշտոնով: Այս օրինակն ինձ վրա մեծ տպավորություն գործեց: Գարեհատիկ Ջոնը միշտ չէ, որ մահացու հարված է հասցնում, երբեմն նա կործանում է ուրիշ ճանապարհով: Լուիսին նա չսպանեց, բայց ավելի վատ վարվեց: Նրան զրկեց իշխելու իրավունքից, կյանքում ունեցած տեղից և կենսական բարիքներից, ոտնատակ տվեց նրա ինքնասիրությունը և թիանավ աքսորեց. Լուիսը պիտի մինչև իր կյանքի վերջը աշխատեր որպես հասարակ նավաստի և քանի որ նախանձելի առողջություն ուներ, ապա այդ վերջը դեռ շատ հեռու էր:

Մենք ավարտեցինք խաղաղօվկիանոսյան ուղևորությունը և, մեր հետևում թողնելով Բոնինի կղզիների անտառածածկ հրաբխաշղթաները, խութերի միջով անցանք դեպի լավ պաշտպանված նավահանգիստը և խարիսխ նետեցինք այնտեղ, ուր արդեն կանգնած էին մեր շխունայի նման մոտ քսան թափառական նավեր: Ափից մեզ էր հասնում ինչ-որ անծանոթ բույսերի բույրը: Տեղացիները տարօրինակ մակույկներով և ճապոնացիները՝ սամպաններով /Սամպան — տափակ հատակով, փայտյա առագաստանավի տեսակ, որը տարածված է Հեռավոր Արևելքում, հատկապես Չինաստանում/, որոնք ավելի տարօրինակ էին, ետ ու առաջ էին ընթանում ծոցում և բարձրանում էին մեր նավի վրա: Առաջին անգամ կյանքումս ես օտար երկրում էի, նավարկել ու հասել էի յոթ ծովից այն կողմ, որպեսզի սեփական աչքերով տեսնեմ այն, ինչ մինչև հիմա կարդացել եմ միայն գրքերում: Ես այրվում էի ափ իջնելու անհամբերությունից:

Ես եռակի դաշինք էի կնքել շվեդ Վիկտորի և նորվեգացի Աքսելի հետ (մենք այնպես անբաժան էինք դարձել, որ նավարկության ամբողջ ընթացքում մեզ «Սուրբ երրորդություն» էին ասում): Նայելով արահետին, որն անհետանում էր վայրի կիրճում և այնտեղից ոլորվում դեպի զառիթափ, սառած լավայով ծածկված լեռը, իսկ հետո շարունակում բարձրանալ արմավենիների ու ծաղիկների միջով, Վիկտորը առաջարկեց այդ ճանապարհով գնալ: Երևի այնտեղ շատ գեղատեսիլ վայրեր կան, տեղացիների արտասովոր գյուղակներ և, ընդհանրապես, անթիվ-անհամար հետաքրքիր բաներ: Մենք համաձայնեցինք: Աքսելը մի ուրիշ առաջարկություն արեց՝ ձկնորսության գնալ: Մենք դրան էլ ուրախությամբ համաձայնեցինք, որոշելով սամպան ճարել և հետներս երկու-երեք ճապոնացի ձկնորսներ տանել, որոնք լավ տեղեր գիտեն: Ինչ վերաբերում էր ինձ, բոլորն էլ հետաքրքիր էր. և ես պատրաստ էի ամեն տեղ էլ գնալ:

Խորհրդակցելուց հետո մենք մակույկը ջուրն իջեցրինք և խուսանավելով բուստե խութերի միջով, մոտեցանք ափին: Այնտեղ մեր մակույկը դուրս քաշեցինք սպիտակ բուստե ավազի վրա և կոկոսյան արմավենիների ստվերի տակ քայլեցինք դեպի կղզու խորքերը: Շուտով մենք հայտնվեցինք մի փոքրիկ քաղաքի կենտրոնում, ուր գլուխը կորցրած, անօգնական, ճապոնացի մի խումբ ոստիկանների աչքի առաջ, կատաղի ուրախությամբ խմում էին, երգում ու պարում բազմաթիվ ազգերի պատկանող մի քանի հարյուր նավաստիներ: Վիկտորն ու Աքսելն ասացին, որ ոտքով երկար զբոսանք կատարելուց առաջ անհրաժեշտ է մի-մի բաժակ գցել: Ես կարո՞ղ էի հրաժարվել իմ քաջարի ընկերների հետ խմելուց: Պետք է վերցնել բաժակները և խմել բարեկամության կենացը: Այսպես է սովորությունը: Մենք ծիծաղում էինք մեր նավապետի վրա, արհամարհելով նրան, որ ժուժկալ է ու ոչինչ չի խմում: Ես բոլորովին խմել չէի ուզում, բայց չէի կարող լավ ընկերոջ ու հիանալի երիտասարդի իմ համարումը ոտքի տակ գցել: Մինչև անգամ հանկարծակի Լուիսի մասին հիշելն իսկ ինձ չկանգնեցրեց, երբ ես կուլ տվեցի դառն, այրող հեղուկը: Այո՛, Գարեհատիկ Ջոնը նրան վերջնականապես խորտակել է, բայց դա ինձ չի

վերաբերում. ես ջահել եմ: Իմ արյունը կարմիր է ու տաք, օրգանիզմս էլ՝ երկաթից: Ինչ խոսք, ջահելությունը միշտ էլ արհամարհանքով ծիծաղում է ժամանակի կործանարար ներգործության վրա:

Մեզ մատուցեցին ինչ-որ անծանոթ, սարսափելի թունդ մի խմիչք: Դրա ծագումը դժվար էր որոշել, երևի, տեղական խմիչք էր: Բայց այդ ջրի նման անգույն խմիչքը կրակի պես այրում էր և մի ակնթարթում տապալում գետին: Այդ խմիչքը լցված էր հոլանդական ջինի տափակ շշերի մեջ, որոնց վրա դեռ մնացել էին հին պիտակները, պատշաճ անունով՝ «Խարիսխ»: Մեզ համար այդ խմիչքը իսկապես որ խարիսխ դարձավ. դրանից այն կողմ մենք չգնացինք: Եվ չգնացինք սամպանով ձուկ որսալու: Քաղաքում ամբողջ տասը օր մնալուց հետո մենք չհասանք անգամ այն արահետին, որը սկսվում էր լեռան լերկ լանջից և վերև բարձրանում ծառերի ու ծաղիկների միջով:

Քաղաքում մենք հանդիպեցինք մյուս նավերից իջած հին ծանոթների, որոնց տեսել էինք ուղևորությունից առաջ, Սան-Ֆրանցիսկոյի գինետներում: Ամեն ծանոթի հետ հանդիպումը նշանավորվում էր խմելով, դրան հետևում էր աշխույժ խոսակցությունը, հետո նորից էինք խմում, երգում և ընդհանրապես հիմարություններ էինք անում, մինչև որ գլուխս պտտվեց և ամեն ինչ հիասքանչ թվաց. և՛ այս միջավայրը, և՛ բուստե ափերին թափառող այս մարդիկ, ամուր, կոփված այս ծովագնացները, որոնց շարքին էլ, հոգու մեղք անելով, ինձ էի դասում: Ուղեղումս սկսեցին պտտվել հինավուրց բալլադների կերպարները. քաջ ասպետները՝ կերուխումի հսկայական դահլիճում և կլոր սեղանի մոտ նստած ամենալավերը, որոնք ավելի արժանավոր էին ճանաչվել. վիքինգներ, որոնք հենց նոր էին վերադարձել ծովային արշավներից, բայց պատրաստ էին, հենց առաջին կոչով, նորից մարտի մեջ նետվել... Ո՛չ, չեն անցել այդ օրերը, մենք այդ փառապանծ հինավուրց ցեղի զավակներն ենք:

Կեսօրին Վիկտորը գինովությունից այնպես խելքը թռցրեց, որ պատրաստ էր ծեծել բոլորին և ամեն ինչ ջարդուխուրդ անել: Կյանքում շատ եմ տեսել կատաղի խելագարների, որոնց արարքները շատ քիչ բանով էին տարբերվում ընկերոջս արածներից, բայց պետք է ասեմ, որ նրանք, թերևս, ավելի հանգիստ էին պահում իրենց: Ես ու Աքսելը շուտ-շուտ մեջ էինք ընկնում, աշխատելով խելքի բերել մեր կատաղած ընկերոջը, բայց նրա հարվածներից մեզ էլ էր բաժին հասնում. ի վերջո գործի դնելով տարբեր հնարանքներ և հարբածի մեր ամբողջ խորամանկությունը, կարողացանք նրան դուրս քաշել գինետնից, գլորել մակույկը և շխունա վերադառնալ:

Բայց Վիկտորը դեռ չէր հասցրել ոտքը տախտակամածին դնել, որ այստեղ էլ անկարգություն սկսեց: Նա կարող էր յոթ հոգու միանգամից գետին տապալել, և կատաղության նոպայի մեջ արդեն իր արարքների համար պատասխան չէր կարող տալ: Ես շատ լավ եմ հիշում մի նավաստու հետ կապված դեպքը, որին Վիկտորը քշեց այն խցիկը, ուր շղթաներն էին պահվում: Բարեբախտաբար այդ նավաստին քաշվեց մի անկյուն և դրա շնորհիվ փրկվեց, իսկ Վիկտորն իր ծանր բռունցքներով այնքան հարվածեց խարսխաշղթային, որ արյունլվիկ եղավ: Երբ նրան այդտեղից հանեցինք, ցնորվածի նման ուրիշ օյին սարքեց. իրեն նշանավոր լողորդ կարծելով, ջուրը թռավ, ցանկացավ ցույց տալ իր շնորհքը և սկսեց խփված դելֆինի նման թպրտալ ու աղի ջուր կուլ տալ:

Դուրս քաշեցինք մեր խելքը թռցրած ընկերոջը, նավասենյակ տարանք և նոր էինք նրա շորերը հանել ու պառկեցրել մահճակալին, որ մենք էլ զգացինք, թե հազիվ ենք ոտքի վրա կանգնում: Բայց ինձ ու Աքսելին թվում էր, թե մենք դեռ քիչ ենք մեզ տեսել և նորից ափ գնացինք, թողնելով, որ Վիկտորը խռմփացնի իր մահճակալին: Հետաքրքիր է, իրենք՝ խմել սիրող նավաստիները, Վիկտորի մասին ի՞նչ են ասում. «Այսպիսի մարդուն մի՞թե կարելի է թույլ տալ, որ խմի»: Այս ասելիս նրանք դժգոհ օրորում էին գլուխները: Վիկտորը շատ բանիմաց նավաստի էր և բաքում բոլորը նրան հիանալի ընկեր էին համարում: Օրինակելի ծովային էր, վայելում էր ընդհանուրի սերն ու հարգանքը: Եվ ահա Գարեհատիկ Ջոնը նրան խելագար դարձրեց: Հենց այս բանն էր

անհանգստացնում նավի մյուս հարբեցողներին: Նրանք գիտեին, որ մի ավելորդ բաժակ գցելուց (և ո՞ր նավաստին չէր կարող այդպիսի մեղք գործել) կարելի է խելքը թռցնել, բայց, հասկանալի է, միայն մի քիչ: Կատաղությունը հաշվի մեջ չէր: Դա փչացնում էր շրջապատողների տրամադրությունը և հաճախ ողբերգությամբ էր վերջանում: Բայց մի թեթև գժություն անելը սովորական բան էր թվում: Իսկ ես կասեմ՝ ճիշտ չէ: Մի՞թե մարդկությունը կարող է հաշտվել խելագարության հետ, ինչ ձևով էլ որ դա արտահայտվի: Եվ ո՞վ կարող է մարդուն այնպիսի խելագարության հասցնել, ինչպես Գարեհատիկ Ջոնն է հասցնում:

Բայց վերադառնամ իմ պատմությանը: Թափառելով քաղաքում՝ ես ու Աքսելը ճապոնական մի գինետուն ընկանք և, հանգիստ նստելով սեղանի մոտ, սկսեցինք նայել, թե ում վրա ավելի շատ կապտուկներ կան: Ամեն ինչ հանգիստ ու խաղաղ էր, մենք ինչ-որ խմիչք պատվիրեցինք և առանց շտապելու խմում էինք, հիշելով օրվա դեպքերը: Մենք այնքան ուրախ էինք այդպես լուռ ու հանգիստ նստելու համար, որ որոշեցինք էլի խմել: Քիչ անց ներս մտավ մեր շխունայի նավաստիներից մեկը, հետո մի քանիսը, և մենք կամաց-կամաց ամբողջ խմբով սկսեցինք խմել: Դրանից հետո երաժշտություն պահանջեցինք, բայց հենց այդ ժամանակ էլ, խլացնելով ճապոնական սամիսենները և տայկոն /Սամիսեն, տայկո — ճապոնական երաժշտական գործիքներ/, փողոցից մի հուսահատ ճիչ լսվեց: Մենք անմիջապես գլխի ընկանք, թե ով է: Արյունով լցված աչքերով, կատաղի թափահարելով հզոր ձեռքերը և սարսափելի ճչալով, մոռանալով, որ դուռ գոյություն ունի, պատռելով տնակի թղթե պատերը, սրահ ներխուժեց Վիկտորը: Նրան խեղդում էր գազանային կատաղությունը, նա ծարավի էր արյան, միևնույն է, թե ում արյունը կլիներ դա: Երաժիշտները կծիկները դրեցին, մենք էլ՝ ոմանք դռնով, ոմանք պատի միջով, և բոլորս միայն մեկ ցանկություն ունեինք՝ փրկվել:

Երբ Վիկտորը հանգստացավ և անզգա դրության մեջ ընկավ, մենք գինետան տիրոջ հետ լեզու գտանք, վճարելով մեր ընկերոջ պատճառած բոլոր վնասների համար, և ես ու Աքսելը դուրս եկանք խմելու համար ավելի խաղաղ մի տեղ փնտրելու: Գլխավոր փողոցում չէր դադարում կատաղի ուրախությունը: Հարյուրավոր նավաստիներ գլուխները կորցրած՝ պարում և ուրախանում էին: Տեսնելով, որ ոստիկանության պետը անկարող է հյուրերին խելքի բերել կարգի պահապանների իր փոքրաթիվ ուժերով, գաղութի նահանգապետը հրաման արձակեց բոլոր նավապետներին, որ մինչև արևը մայր մտնելը իրենց նավաստիներին հավաքեն:

Ի՞նչ: Մի՞թե դա վերաբերմունք է: Հազիվ էր այս նորությունը տարածվել շխունաներում, բոլորը, ասես քամուց քշված, ափ իջան: Մինչև անգամ նրանք, ովքեր չէին էլ մտածում քաղաք գնալ, մակույկներ նստեցին: Նահանգապետի չարաբաստիկ կարգադրությունը ընդհանուր անկարգության պատճառ դարձավ: Արևը վաղուց արդեն մայր էր մտել, բայց մարդկանց զայրույթը դեռ չէր հանդարտվել. հապա թող փորձի մեզ այստեղից քշե՛լ: Ամենից շատ հավաքվել էին նահանգապետի տան առաջ. ամբոխը նավաստիական երգեր էր երգում, աղմուկ-աղաղակով ու դոփյունով վիրգինյան կադրիլ և ուրիշ ժողովրդական պարեր էին պարում, «Խարսխի» տափակ շշերը ձեռքից ձեռք էին անցնում: Ոստիկանությունը չնայած համալրված էր օժանդակ ուժերով, բայց անկարող էր որևէ բան նախաձեռնել, և խումբ-խումբ հավաքված ոստիկանները, գլուխները կորցրած, սպասում էին նահանգապետի հետագա կարգադրություններին: Բայց սա, իհարկե, խելացի կերպով ձեռնպահ էր մնում: Իսկ ինձ այս բաքոսյան խնջույքը շատ էր դուր գալիս: Ինձ համար կարծես թե վերածնվել էին իսպանական տիրապետության ժամանակները /Ջ. Լոնդոնը նկատի ունի իսպանացի ծովագնացների Խաղաղօվկիանոսյան արշիպելագներում և ամերիկյան ափերին առաջին անգամ հաստատվելու ժամանակաշրջանը/: Ես տեսնում էի միայն խիզախություն ու հանդգնություն. ահա թե ինչպես ենք գործում մենք՝ անվախ ծովագնացներս, ճապոնական թղթե տների արանքում:

Նահանգապետը այդպես էլ քաղաքը մաքրելու հրաման չտվեց, և ես ու Աքսելը դեռ երկար ժամանակ մի գինետնից մյուսն էինք գնում: Հետո, արդեն բավականին գինովցած, ես ինչ-որ օյին սարքեցի, որի պատճառով էլ մենք իրար կորցրինք: Մնալով մենակ՝ ես շարունակեցի նոր ծանոթություններ հաստատել, խմել և ավելի ու ավելի հարբել: Հիշում եմ, ինչ-որ տեղ ես նստեցի

ճապոնացի ձկնորսների, մեր նավատորմի հավայացի ղեկորդների և դանիացի ջահել նավաստու կողքին, որը վերջերս էր եկել Արգենտինայից, ուր որպես քավբոյ էր աշխատում: Այս դանիացին շատ էր հետաքրքրվում ազգային սովորություններով ու ծեսերով: Դրա համար էլ մենք պահպանելով ճապոնական վարվելակերպը, խմում էինք սակեն՝ անգույն, տաք ու թույլ այդ խմիչքը, որը մատուցում էին պստիկ ճենապակյա բաժակներով:

Ես հիշում եմ նաև իմ հանդիպումը տասնութ-քսան տարեկան, անգլիական միջին կարողության ընտանիքի երկու երիտասարդների հետ: Նրանք նավի փոքրավորներ էին, փախել էին նավից, ուր ծովային գործ էին ուսանում, և ի վերջո ձկնորսական շխունայի վրա նավաստիներ էին դարձել: Այդ առողջ, կարմրաթուշ, պայծառ աչքերով տղաները, որոնք համարյա թե իմ հասակակիցներն էին, ինձ նման տղամարդկային կյանքի էին վարժվում: Ի միջի այլոց, նրանց արդեն կարելի էր տղամարդ համարել: Թույլ սակե չէին ուզում խմել: Նրանք ավելի թունդ թույն էին ուզում՝ «Խարսխի» շշերով թույն, որը հեղուկ բոցի նման տարածվում էր երակներում և բոցավառում ուղեղը: Հիշում եմ, այդ տղաները մելամաղձոտ ռոմանս էին երգում, որն այսպիսի մի կրկներգ ուներ.

Զավա՛կս, հպարտ եմ քեզանով,

Մատանիս տալիս եմ սիրով,

Թե որ քեզ աղետ պատահի,

Չարիքից հեռու կպահի:

Երգը խեղդվում էր հարբած արցունքների մեջ. մոր համար այդպիսի զավակը ոչ թե հպարտություն է, այլ ամոթանք: Ես էլ էի երգում նրանց հետ ու լալիս, վայելելով նրանց վսեմ զգացումների ողբերգությունը և աշխատելով իմ հարբած ուղեղում ինչ-որ եզրակացությունների հանգել այն մասին, թե ի՛նչ բան է կյանքը և ի՛նչ բան է ռոմանտիկան: Եվ ահա վերջին պատկերը, որը մխված է մնացել իմ հիշողության մեջ (մնացած բոլորը պարուրված է մնացել ժամանակի մշուշում). ես և իմ փոքրավորները գրկված կանգնած էինք և մի կողմից մյուսն էինք օրորվում: Իսկ մեր գլխավերևում աստղացան երկինքն էր: Բոլորը ուրախ նավաստիական երգեր էին երգում, բացի մի նավաստուց, որը նստած գետնին հեկեկում էր. բոլորը համաչափ դոփում էին և թափ տալիս տափակ շշերը: Ամեն կողմից խռպոտ ձայներ էին լսվում, որոնք այսպիսի երգեր էին երգում. կյանքը հիասքանչ է, հոյակապ, երազային և լի է գլխապտույտ խելագարությամբ:

Դրանից հետո խավա՛ր, բայց ահա բացում եմ աչքերս և արշալույսի աղոտ լույսի մեջ տեսնում եմ մի ճապոնուհու, որը հոգատար թեքվել էր, ինձ վրա: Դա տեղական նավահանգստի լոցմանի կինն էր. պառկած էի նրա տան դռանը: Ես մրսում էի, դողում և ինձ շատ վատ էի զգում երեկոյան կերուխումից հետո: Ինչո՞ւ եմ այդպես թեթև հագնված: Ա՜խ, այն անիծյալ փոքրավորները: Այս անգամ էլ փախան: Եվ իմ ունեցածն էլ հետները տարան: Կորավ իմ ժամացույցը: Կորան փողերը. չէ՞ որ մոտս մի քանի դոլար էր մնացել: Բաճկոնս էլ չկար, գոտիս էլ: Մինչև անգամ կոշիկներս էին տարել:

Ահա Բոնինյան կղզիներում այսպես անցան տասը օրերը: Ես նկարագրեցի միայն մեկ օրը: Վիկտորն իր նոպայից հետո խելքը գլուխը հավաքեց, միացավ մեզ, և մենք երեքով նորից շարունակեցինք կոնծաբանությունը, ճիշտ է, հիմա արդեն մի քիչ զգույշ: Իսկ ինչ վերաբերում է ծաղիկների միջով գնացող արահետին, ավա՜ղ, մենք այնպես էլ չհասանք և չտեսանք լեռնային գեղեցկությունները: Դրա փոխարեն մենք բավական լավ ծանոթացանք փոքրիկ քաղաքին և «Խարսխի» շշին:

Տուժած մարդը պետք է մյուսներին էլ նախազգուշացնի վտանգի մասին: Ես կարող էի ավելի հեռուն տեսնել, կարող էի իսկական հաճույք ստանալ Բոնինյան կղզիներում մնալուց, եթե ինձ այնպես պահեի, ինչպես պետք էր: Ի միջի այլոց, դատողություններ անել այն մասին, թե քեզ ինչպես պիտի պահես և ինչպես պիտի չպահես, բավական անմիտ զբաղմունք է: Կարևորը միայն

մի բան է. իսկապես քեզ ինչպես ես պահում: Մարդիկ դատողություններ են անում ճիշտ ու անվիճելի փաստերով: Հենց դրա մասին էլ պատմեցի: Ինձ այնպես էի պահում, ինչպես Բոնինյան կղզիներն ընկած մյուս նավաստիները, ինչպես միլիոնավոր մյուս տղամարդիկ, չնայած այդ պահին աշխարհի որ ծայրին էլ գտնվելիս լինեին: Ամեն ինչ ինձ դեպի այդ ուղին էր մղում. չէ՞ որ ես փոքրիկ տղա էի, ճիշտ է անվախ, բայց աստված չէի. մի խոսքով, սովորական էակ, որը ձգտում է նմանվել մեծերին, որոնք, եթե ուզում եք, նրան շատ էին հարգանք ներշնչում իրենց ուժով, հպարտությամբ, ազատասիրությամբ: Եվ այս բոլորից բացի՝ առատաձեռնությամբ. նրանք սեփական կյանքի համար չէին դողում:

Այս ճանապարհին ոչ մի խոչընդոտ չկար: Դա հիշեցնում էր բակում եղած բաց ջրհորը, որի շուրջը խաղում էին երեխաները: Սրտոտ փոքրիկներին, որոնք դեռ հազիվհազ են քայլում, բայց արդեն լի են կյանքի նկատմամբ եղած հետաքրքրությամբ, անօգուտ է ասել. «Մի մոտեցիր, վտանգավոր է»: Միևնույն է, կմոտենան: Ծնողները գիտեն այդ բանը: Եվ գիտեն, որ երեխաներից ոմանք, որոնք ավելի հետաքրքրասեր են ու քաջ, անպայման կգլորվեն ջրհորը: Դրանից խուսափելու համար մի ճիշտ միջոց կա. ծածկել ջրհորը: Այդպես պետք է վարվել և Գարեհատիկ Ձոնի հետ: Հասուն տղամարդկանց և աճող երիտասարդությանը հարբեցողությունից չեն կարող հեռու պահել ո՛չ խոսքերը, ո՛չ էլ խրատները, եթե ոգելից խմիչքը միշտ այդպես մատչելի լինի ու դրա օգտագործումը քաջության, արիության և հոգու մեծության խորհրդանշան ծառայի:

Քսաներորդ դարի մարդկանց համար միակ ելքը ջրհորի բերանը փակելն է: Քսաներորդ դարն իր էությամբ պետք է քսաներորդ դար դառնա և ոչ թե հին օրերի վերապրուկ: Բարբարոսության բոլոր նշանները՝ վհուկներին այրելը, կրոնական անհանդուրժողականությունը, կույր հավատը և նման բաներ, պետք է վտարվեն մեր կյանքից ու դրանց հետ էլ՝ ոչ բոլորովին վերջին տեղը գրավող Գարեհատիկ Ձոնը:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՅՈԹԵՐՈՐԴ

Բոնինյան կղզիներից մենք դեպի հյուսիս գնացինք և ծովակատուների մի հոտի հանդիպելով, հետապնդեցինք մինչև հյուսիսային կողմերը: Մենք երեք ամսից ավելի որսով զբաղվեցինք, չնայած ճքճքան ցրտերին և անթափանց մշուշին, որը հաճախ էր շաբաթներով ծածկում արևը: Դա դաժան, ծանր աշխատանք էր, որի ժամանակ ոչ ոք չէր խմում, անգամ չէր մտածում վիսկիի մասին: Հետո մենք ուղղություն վերցրեցինք դեպի հարավ, Յոկոհամա. մենք մեծ քանակությամբ ծովակատուների մորթիներ էինք տանում և նախօրոք վայելում էինք լավ ռոճիկ ստանալու հաճույքը:

Ես շատ էի ուզում ափ իջնել, տեսնել Ճապոնիան, բայց երբ խարիսխ գցեցինք, մեզ ստիպեցին ամբողջ օրը շխունան մաքրել և միայն երեկոյան թողեցին ափ գնալ: Եվ ամեն ինչ ընթացավ սովորականի նման, քանի որ տղամարդկանց մեջ այդպես է ընդունված. Գարեհատիկ Ձոնը բռնեց իմ օձիքից և իր հետ տարավ: Նավապետը մեզ հասանելիք փողը տվեց որսորդներին և կարգադրեց նրանց հետևից ճապոնական մի գինետուն գնալ, ուր մեզ պիտի սպասեն: Մենք այնտեղ գնացինք ռիկշաներով: Գինետանը տերուտնօրինություն էին անում մեր տղաները: Վիսկին հոսում էր գետի նման: Բոլորը հանկարծակի հարստացել էին և հյուրասիրում էին իրար: Վերջացել էին աշխատանքային լարված օրերը. մնա՛ս բարով, հարկադրված ժուժկալություն, մնաս բարով, կարգապահություն: Մենք առողջ, կենսախինդ մարդիկ էինք և, իհարկե, ամենից առաջ ձգտում էինք խմել: Իսկ հետո, ասում էինք մենք, կգնանք քաղաքը նայելու:

Բայց կրկնվեց հին պատմությունը: Կենացները հետևում էին կենացներին, կախարդական ջերմությունը հորդում էր մեր երակներում, ձայները փափուկ էին դառնում, հոգիները նույնպես. աստված չանի որևէ մեկին նեղացնեն: Ինչպե՞ս է, որ մեկի հետ խմում ես, մյուսի հետ չես ցանկանում: Մենք բոլորս ընկերներ ենք, իրար հետ ենք փոթորկին դիմացել, միասին ենք ջոկել ու ամրացրել թոկասարքերը, իրար փոխարինել ղեկանիվի մոտ, միասին ենք աշխատել քլիվերի վրա

և ամեն անգամ, երբ շխունայի քթամասը դուրս էր պրծնում ջրի տակից, շտապում էինք նայել, թե ալիքը մեր ընկերներից որևէ մեկին ջուրը չի՞ գցել: Դրա համար էլ բոլորը խմում էին և բոլորն էլ հյուրասիրում. ձայները ավելի բարձր դարձան ու սկսվեցին անվերջանալի հուշերը մեծահոգի ընկերական արարքների մասին. տուրուդմփոցներն ու վեճերը մոռացվել էին, և յուրաքանչյուրը անկեղծորեն հավատում էր, որ իր բաժակակիցները աշխարհի ամենալավ մարդիկ են:

Մենք այդ գինետունը ընկանք երեկոյան և մինչև առավոտ ոչ մի Ճապոնիա էլ չտեսա այս գինետնից բացի, որը խմելու սովորական մի տեղ էր, որպիսիք և՛ մեզ մոտ, և՛ ամեն երկրում ինչքա՞ն ուզես:

Մենք Յոկոհամայում երկու շաբաթ մնացինք, բայց Ճապոնիայի մասին ունեցած մեր բոլոր տպավորությունները, թերևս, սահմանափակվեցին միայն նավահանգստային գինետներով: Ժամանակ առ ժամանակ, միօրինակությունից դուրս գալու համար, առանձնահատուկ կերուխումներ էինք կազմակերպում: Մի այդպիսի քեֆից հետո ես հերոսության պես մի բան արեցի. մութ գիշերով լողալով շխունա հասա և, մինչ ես մեռելի նման քնած էի, ծովային ոստիկանությունը, ծովափին գտնելով իմ զգեստները, ամբողջ նավահանգիստը տակնուվրա արեց դիակս գտնելու հույսով:

Գուցե հանուն այդպիսի հաճույքի էլ մարդիկ խմում են, մտածեցի ես: Մեր նեղ աշխարհում իմ հարբած արարքը նշանակալից իրադարձություն համարեցին: Ամբողջ նավահանգիստը միայն դրա մասին էր խոսում: Ճապոնացի մակույկավարների և նավահանգստային գինետների այցելուների աչքում մի քանի օր ես հերոս էի: Դա մի արտասովոր դեպք էր, դեպք, որով ես կարող եմ հպարտանալ: Մինչև անգամ հիմա, քսան տարի անց հիշելով այդ ես մի թաքուն հպարտություն եմ զգում: Դա իմ կյանքում մի պայծառ պահ էր. Վիկտորի համար այդպիսի հաճույք էր, երևի, Բոնհոնյան կղզիներում գինետունը քարուքանդ անելը, իսկ անգլիացի փախած փոքրավորների համար՝ թալանել պատահական ծանոթին, այսինքն՝ ինձ:

Հետաքրքիրն այն է, որ ես առաջվա պես չեմ կարողանում հասկանալ, թե ինչի՞ մեջ է Գարեհատիկ Ջոնի թաքուն հմայքը: Ինձ համար ալկոհոլը զզվելի էր, խմելը ոչ մի հաճույք չէր պատճառում, չէր գրավում և այն ազդեցությունը, որ խմիչքը թողնում էր իմ օրգանիզմի վրա. ես այդ ազդեցության կարիքը չէի զգում: Խմում էի, որովհետև խմում էին այն մարդիկ, որոնց հետ շփվում էի, խմում էի, որովհետև հպարտությունս թույլ չէր տալիս, որ նրանց տղամարդ համարեին, իսկ ինձ՝ ոչ: Բայց հոգուս խորքում ես մնացել էի նույն քաղցրասերը և օգտվելով հանգամանքներից, երբ ինձ չէին տեսնում, կոնֆետներ էի գնում ու ընկնում երանության գիրկը:

Ուրախ ու զվարթ երգի տակ մենք բարձրացրինք խարիսխը և դուրս եկանք Յոկոհամայի նավահանգստից, ուղղություն վերցնելով դեպի Սան-Ֆրանցիսկո: Մենք օգտվեցինք հյուսիսային պասսատից, նավախելին փչում էր ուժեղ արևմտյան քամին, և երեսունյոթ օրվա ընթացքում բարեհաջող կտրեցինք անցանք Խաղաղ օվկիանոսը: Այնտեղ վերջնահաշվից բավականին փող պետք է ստանայինք և այդ երեսունյոթ օրերի ընթացքում մենք, իհարկե, բերաններս առանց խմիչք առնելու, միայն ծրագրեր էինք մշակում, թե ինչպես ենք ծախսելու այդ փողերը:

Յուրաքանչյուրը ամենից առաջ կրկնում էր այն դարձվածքը, որ միշտ կարելի է լսել տուն վերադարձող նավի բաքում. «Միայն ոչ այդ նավահանգստային հյուրանոցների շնագայլերի մոտ»: Հետո ափսոսում էին Յոկոհամայում ծախսած փողերը, ապա յուրաքանչյուրը բարձրաձայն սկսում էր երազել ամենանվիրական բանի մասին: Վիկտորը, օրինակ, ասում էր, հենց որ Սան-Ֆրանցիսկոյում վերջնահաշիվը ստանա, մինչև անգամ չի նայի ո՛չ նավահանգստին, ո՛չ էլ Բարբարայի ափին ու գինետանը, այլ անմիջապես կգնա և հայտարարություն կտա, թե համեստ բանվորական ընտանիքում գիշերօթիկ մի սենյակ է փնտրում:

— Տեղ կճարեմ, հետո մի քանի շաբաթով պարել սովորելու կգնամ, կծանոթանամ լավ աղջիկների ու տղաների հետ,— երազում էր նա:— Մարդկանց հետ ընկերություն կանեմ, հյուր և երեկույթներ

կգնամ, կապրեմ իմ սեփական փողերով. մինչև հունվար կբավականացնի, հետո ձկնորսական շխունայի վրա գործի կանցնեմ:

Նա այլևս չի խմի, վե՛րջ: Նա լավ գիտե, թե խմելու հետևանքը ինչ է լինում, հատկապես իր մոտ. խմում է, կորցնում գիտակցությունը, դրա հետ էլ՝ փողերը: Իր դառն փորձից գիտեր, թե ի՞նչ հետևանքներ կունենա եռօրյա կերուխումը նավահանգստային գիշատիչ շնագայլերի հետ և կարող եք չկասկածել, որ նա նախապատվություն է տալիս ձմեռն անցկացնել իրեն դուր եկող հասարակության մեջ:

Աքսել Հունդերսոնը, որը պարեր և նման աշխարհիկ հաճույքներ չէր սիրում, այսպես ասաց.

— Ես շատ փող պիտի ստանամ: Հիմա կարող եմ հայրենիք մեկնել: Արդեն տասնհինգ տարի է, որ մորս ու հարազատներիս չեմ տեսել: Հենց որ փող ստանամ, տուն կուղարկեմ, որպեսզի ինձ սպասեն: Իսկ ես գործի կանցնեմ մի լավ շոգենավի վրա և մինչև Եվրոպա հասնելս էլի փող կաշխատեմ: Մյուս փողերի հետ միասին մի կլորիկ գումար կստացվի. այդքան շատ ես երբեք դեռ չեմ ունեցել: Տանն ինձ արքայազնի նման կընդունեն: Դուք չեք կարող պատկերացնել, թե Նորվեգիայում կյանքը որքան էժան է: Ես բոլորի համար նվերներ կառնեմ և ամբողջ տարին միլիոնատիրոջ նման կապրեմ: Հետո նորից ծով կգնամ:

— Իմ ծրագրերն էլ այսպիսին են,— հայտարարեց Շեք Ջոնը:— Ամբողջ երեք տարի տանից նամակ չեմ ստացել և արդեն տասը տարի կլինի, ինչ հեռացել եմ այնտեղից: Աքսել, Շվեդիայում էլ կյանքը այդպես էժան է, ինչպես Նորվեգիայում: Ես գյուղացի եմ, մեր ընտանիքն ապրում է գյուղում: Ես էլ ամբողջ ստացածս տուն կուղարկեմ, և մենք երկուսով գործի կանցնենք նույն շոգենավի վրա: Կշրջանցենք Հորնը և մնա՛ս բարով, Ամերիկա: Միայն թե արի լավը ընտրենք:

Այս խոսակցության հետևանքն այն եղավ, որ Աքսելն այնպես ոգևորվեց շվեդական հովվերգությամբ, իսկ Շեկ Ջոնը՝ նորվեգական գունագեղ սովորություններով, որ երկուսն էլ ցանկություն հայտնեցին միասին գնալ: Որոշեցին առաջին կես տարին ապրել Շվեդիայում, Ջոնի ազգականների մոտ, իսկ մյուս կեսը՝ Նորվեգիայում, Աքսելի ազգականների մոտ: Մինչև նավարկության վերջին օրը նրանք իրարից անբաժան էին, անդադար տարբեր ձևերով քննարկում էին այս միակ թեման:

Լողլող Ջոնին խորթ էին ազգակցական կապերը: Բայց որպես նավաստի աշխատելն էլ ծանձրալի էր: Նա էլ էր մտածում նավահանգստային հյուրանոց այլևս ոտք չդնել: Վիկտորի նման մի խաղաղ ընտանիքում սենյակ կվարձի, կընդունվի ծովային ուսումնարան և նավապետ կդառնա: Մյուսները նույնպես համարյա թե նույն ցանկությունն ունեին: Բոլորն էլ երդվում էին, որ ի վերջո խելքները գլուխները կհավաքեն և փողերն այլևս քամուն չեն տա: Թող գրողի ծոցը գնան ամեն տեսակի գիշերօթևանները, նավահանգստային հասարակաց տները, հարբեցողությունը: Բաքում ընդհանուր նշանաբանն այս էր:

Նավաստիները խնայող դարձան: Այդպիսի խոհեմություն նրանք երբեք հանդես չէին բերել: Այլևս տնտեսի մոտից հին հագուստներ չէին գնում: Մեր փալասներով յոլա կգնանք, ասում էին նրանք, հին կարկատանին ամենաֆանտաստիկ չափերի կարկատաններ ավելացնելով: Այդ կարկատանները հենց այդպես էլ կոչվում էին. «Հետադարձ ուղևորություն»: Մարդիկ տնտեսում էին մինչև անգամ լուցկու մեջ, սպասելով, որ երկու-երեք մարդ ծխամորճները լցնեն:

Հենց որ մենք մտանք Սան-Ֆրանցիսկո նավահանգիստը, և բժշկական քննությունը վերջացավ, մեր խունան շրջապատեցին նավահանգստային հյուրանոցների գործակալների մակույկները: Նրանք հեղեղեցին տախտակամածը և յուրաքանչյուրն սկսեց գովել իր հյուրանոցը: Ամեն մեկի թևի տակ ձրի վիսկիի շիշ կար: Բայց մենք մեզ ամուր պահեցինք և առաջարկեցինք, քանի ուշ չէ, պոչները քաշեն, հետևներից էլ մի լավ հայհոյանք կապեցինք: Ո՛չ նրանց հյուրանոցն ենք ուզում, ո՛չ էլ վիսկին: Մենք խնայող, ոգելից խմիչքից հրաժարված նավաստիներ ենք և գիտենք, թե մեր փողերն ինչպես ծախսենք:

Ի վերջո, վերջնահաշիվը ստանալուց հետո, մենք գրասենյակից դուրս եկանք գրպաններս փողով լիքը: Մեր շուրջը անմիջապես սկսեցին պտտվել նավահանգստային գիշատիչները: Մեր տղաներն իրար նայեցին: Յոթ երկար ու ձիգ ամիսներ միասին էինք անցկացրել և ահա մեր ճանապարհները բաժանվում են: Մնում է կատարել հրաժեշտի ընկերական վերջին ծեսը (ի՞նչ կարող ես անել, այդպես է ընդունված):

— Դե՛, տղերք, գնացինք,— ասաց նավապետը:

Անխուսափելի գինետունը հենց կողքներիս էր: Մի քիչ այն կողմ՝ ինչքա՜ն ուզես: Երբ մենք ներս էինք մտնում, գիշատիչներն ուղղակի մեր շուրջն էին պտտվում: Նրանցից մի քանիսը մեզ հետ ներս մտան, բայց մենք չցանկացանք հետները գործ ունենալ:

Մենք մի շարք կազմեցինք երկար վաճառասեղանի մոտ. նավապետը, օգնականը, վեց որսորդներ, վեց ղեկորդներ և հինգ թիավարներ: Թիավարներից մեկը չկար. Ջերիմո հրվանդանի մոտ ձյունամրրիկի ժամանակ մենք նրան թաղեցինք ծովում, ոտքերից ածխի մի պարկ կապելով: Հրաժեշտը նշելու համար հավաքվել էինք տասնինը մարդ: Յոթ ամիսների դժվարին աշխատանքը և՛ փոթորկի պահին, և՛ հանգիստ եղանակին, մնացել էր հետևում, ու մենք վերջին անգամ էինք նայում իրար: Հազիվ թե նորից հանդիպենք. ճակատագիրը մարդկանց քշում է աշխարհով մեկ: Տասնինը մարդ էր հավաքվել հրաժեշտի քեֆին: Նավապետը հյուրասիրում էր, մենք խմում էինք: Հետո օգնականը, ազդու նայելով մեզ, պահանջեց լցնել տասնինը բաժակ էլ: Մենք սիրում էինք և՛ նրան, և՛ նավապետին, երկուսն էլ լավ մարդիկ էին, ու մի՞թե կարելի է մեկի հետ խմելուց հետո մերժել մյուսին:

Հետո մեր մակույկի որսորդ Փիթ Հոլթը հյուրասիրեց (նա խեղդվեց մեկ տարի հետո, երբ «Մերի Թոմասը» իր ամբողջ անձնակազմով խորտակվեց): Ժամանակը հոսում էր, բաժակներն անդադար լցվում էին, շուրջը զրնգում էր ձայների ուրախ գվվոցը, գլուխս պտտվում էր: Վեց որսորդներն էլ պահանջում էին, որ իրենց հետ թեկուզ մի բաժակ գինի խմեինք հանուն սուրբ բարեկամության: Վեց ղեկորդները և հինգ թիավարները նույն բանն էին պահանջում: Բոլորն էլ փող ունեին և յուրաքանչյուրը մտածում էր, որ իր փողը մյուսների փողից վատ չէ և ցանկանում էին ցույց տալ իրենց առատաձեռն, անկախ բնավորությունը:

Բաժակները տասնինն անգամ լցվեցին: Գարեհատիկ Ջոնը բոլոր հիմքերն ուներ տոնելու իր հաղթանակը: Ո՞ւր կորան սիրով փայփայած բոլոր ծրագրերը: Մեր խումբը գինետնից ընկավ ուղիղ նավահանգստային գիշատիչների գիրկը: Նավաստիների դրամագլուխը երկար չդիմացավ. ոմանց մոտ մի շաբաթ, ոմանց մոտ մեկ-երկու օր: Երբ բոլոր փողերը խմեցին, հյուրանոցների տերերը քեֆասերներին ճանապարհեցին դեպի մեկնող նավերը: Գեղեցիկ Վիկտորը ինչ-որ ծանոթի միջոցով աշխատանքի անցավ լողափի փրկարար ջոկատում: Նա այնպես էլ պարեր սովորելու չգնաց և թերթերում հայտարարություն չտվեց, թե բանվորական ընտանիքում սենյակ է փնտրում: Լողող Ջոնն էլ չընդունվեց ծովային ուսումնարան: Շաբաթվա վերջում նրան բախտ վիճակվեց գետանավի վրա բեռնակիր դառնալ: Շեկ Ջոնը և Աքսելը Սկանդինավիայում ապրող իրենց բարեկամներին մի սենթ էլ չուղարկեցին: Նրանց էլ, ինչպես մեր շխունայի բոլոր նավաստիներին, բախտը տարբեր տեղեր գցեց, ավելի ճիշտ նրանց դեպի նավերը ճանապարհեցին նավահանգստային հյուրանոցների տերերը, և նրանք մեկնեցին ակոսելու ծովերը, որպեսզի այդ շնագայլերին վերադարձնեն այն առասպելական փոխտվությունները, որի երեսն անգամ չէին տեսել:

Ինձ փրկեց այն հանգամանքը, որ հարազատներ, տուն ունեի և կարող էի վերադառնալ: Ես կտրեցի անցա ծովածոցը, Օքլենդ հասա և, ի դեպ, կարող էի հիանալ, թե ինչպես են գործերը մահվան ճանապարհին: Նելսոնն արդեն կենդանի չէր. նրան գնդակահարել էին, երբ հարբած վիճակում փորձել էր ոստիկանությանը դիմադրություն ցույց տալ: Նրա ընկերը նստած էր բանտում: Վիսկի Բոբը անհետացել էր: Պարզ չէր, թե ուր էին կորել Ծերուկ Քոուլը, Ծերուկ Սմուջը և Բոբ Սմիթը: «Էննիի» մյուս Սմիթը, որը գոտկի տակ ատրճանակ էր պահում, խեղդվել էր: Ֆրանսիացի Ֆրենկը, լուրերի համաձայն, թաքնվել էր ինչ-որ տեղ, գետի վերին հոսանքում, և

վախենում էր քաղաքում երևալ իր գործած մեղքի պատճառով: Մի քանիսն իրենց մեղքերն էին քավում Սան-Քվենտինի և Ֆոլսեմի բանտերում: Մեծ Ալեքը, որին հույների Արքա էին ասում, Բենիշիի իմ ընկերն ու բաժակակիցը, կրկնակի սպանություն էր կատարել և արտասահման էր փախել: Ֆիթցսիմմոնսը, որի հետ միասին ծառայում էինք ձկնորսական պարեկությունում, ծանր հիվանդացել էր ու մահացել. դանակով խփել էին մեջքին, վիրավորել թոքերը, և բարդացումը վերջացել էր թոքախտով: Եվ այլն ու նման բաներ. մահվան ճանապարհը լեցուն էր անուններով, ծանոթներով, և, դատելով այն բանից, որ ճանաչում էի այդ մարդկանց, նրանք բոլորն էլ Գարեհատիկի զոհերն էին, միայն մեկ բացառությամբ. «Էննիի» Սմիթը նրա մեղքով չկործանվեց:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ

Օքլենդի նավահանգստում իմ ապրած զարմանքը բոլորովին անցավ: Այնտեղ թագավորող և՛ կենցաղը, և՛ սովորությունները դադարեցին ինձ գրավելուց: Ես այլևս չէի ցանկանում խմել և անգործ թրև գալ: Նորից սկսեցի հաճախել Օքլենդի ձրի գրադարանը, այս անգամ, ի դեպ, արդեն կարդացածս ավելի լավ էի հասկանում: Մյուս կողմից, մայրս հաճախ էր հիշեցնում, որ բավական է անգործ թրև գամ, խելքս գլուխս հավաքելու և մշտական գործ գտնելու ժամանակն է: Մեր ընտանիքը մեծ կարիքի մեջ էր: Դրա համար էլ ես ջութի ֆաբրիկա մտա, ուր ժամի համար տասը սենթ էին վճարում, մեկ դոլար՝ տասժամյա բանվորական օրվա համար, այսինքն՝ այնքան, ինչքան մի քանի տարի առաջ պահածոյի գործարանում, չնայած ես ավելի ուժեղ էի դարձել և ավելի լավ էի աշխատում: Ասենք, խոստացան օրական քսանհինգ սենթով ավելացնել աշխատավարձս:

Այդպես սկսվեց առաքինի կյանքիս այս շրջանը: Մի քանի ամիս անընդհատ ես բերանս մի կաթիլ ոգելից խմիչք չառա: Բայց առողջ, մկանուտ տասնյոթամյա պատանուն, որին դեռ միօրինակ ֆիզիկական աշխատանքը չի այլանդակել, գրքերից բացի հարկավոր է լավ հանգիստ ու հետաքրքիր ժամանցներ:

Մի անգամ ես ընկա Քրիստոնեական երիտասարդության միություն: Այնտեղ թագավորում էր առողջ, սպորտային ոգին, բայց այդ բոլորից մանկական խաղի հոտ էր փչում: Ինձ համար արդեն ուշ էր այդպիսի կյանքի մեջ մտնելը: Ես ո՛չ փոքրիկ տղա էի, ո՛չ էլ պատանի, սովորել էի ոտք մեկնել մեծերի հետ և չնայած իմ մատաղ տարիքին, արդեն հասցրել էի ծանոթանալ կյանքի շատ մութ ու սարսափելի կողմերին: Քրիստոնեական երիտասարդության միության տղաները ինձ հետ վարվում էին, ինչպես կվարվեն օտար մոլորակից իջած մարդու հետ: Մենք իրար լեզու չէինք հասկանում կյանքի փորձից ելնելով՝ ինձ, դրանց հետ համեմատած, ծեր էի համարում (հիմա, հիշելով այդ, ես հասկանում եմ, որ երբեք մանկություն չեմ ունեցել): Բայց ինչ ուզում է լինի, Միության տղաներն իմ աչքին միամիտ մանկիկներ էին: Սակայն դա դժբախտության կեսը կլիներ, եթե իմ նոր ծանոթների կողմից հոգեկան նեցուկ գտնեի: Ցավոք, այդ էլ չկար. գրքերից ես ավելի լավ էի գլուխ հանում, քան նրանք: Նրանց աղքատիկ գործնական իմացությունը և նույնքան աղքատիկ մտավոր զարգացումը գումարվելով իրար խոշոր բացասական գումար էին տալիս, որ գերազանցում էր նրանց բարոյական արժանիքներին ու սպորտում ձեռք բերած հաջողություններին:

Մի խոսքով, ինձ համար հետաքրքիր չէր խաղալ նախապատրաստականի աշակերտների հետ: Ես զրկված էի այդպիսի մաքուր, ճշմարիտ կյանքով ապրելու հնարավորությունից, որովհետև իմ դաստիարակը երկար ժամանակ եղել է Գարեհատիկ Ջոնը: Ես շատ վաղ իմացա գուցե և ավելորդ բաներ: Այսուամենայնիվ, երբ ավելի լավ ժամանակներ գան, ու Գարեհատիկ Ջոնը վտարվի մեր կյանքից, երբ մարդիկ դադարեն դրա կարիքը զգալուց, Քրիստոնեական երիտասարդական միությանը, գուցե, մի ուրիշ ավելի հետաքրքիր ու նախաձեռնող կազմակերպության, բախտ կվիճակվի զվարճացնել նրանց, որոնք հիմա իրենց կոչումը գտնում են հարբեցողության և մյուսներին խմեցնելու մեջ: Բայց առայժմ մենք այլ ձևով ենք ապրում, դրա համար էլ կխոսենք ժամանակակից կյանքի մասին, որը գիտենք:

Ես աշխատում էի ջութի ֆաբրիկայում օրը տասը ժամ: Աշխատանքը ձանձրալի էր, միօրինակ: Իսկ ես ապրել էի ուզում: Ուզում էի ինձ ցույց տալ ոչ միայն օրը տասը սենթով հաստոցի մոտ ճարպիկ աշխատելով, այլև ուրիշ բանում: Այս դեպքում գարեջրատները և գինետները, պարզ է, բացառվում էին: Ես մեծացել էի ու իմ մեջ արդեն նոր հակումներ, հուզող ցանկություններ էի զգում, մի բան, որն առաջ չէի նկատել: Լավ էր, որ հենց այդ ժամանակ իմ բախտը բերեց. ես ծանոթացա Լուիս Շաթոկի հետ: Մենք ընկերներ դարձանք:

Լուիսը հիասքանչ տղա էր և բոլորովին փչացած չէր: Բայց նա սիրում էր զանազան անմեղ չարաճճիություններ և իրեն, աստված գիտե, թե ի՞նչ բազմափորձ քաղաքային լովելաս էր պատկերացնում: Իսկ ինձ այդպիսին չէի համարում: Լուիսը գեղեցիկ էր, լավ շարժուձև ուներ և պաշտում էր կանացի սեռը: Աղջիկների հետ ժամադրությունը և սիրային կապը գրավում էին նրան ամենահետաքրքիր սպորտի նման: Ես այդ գործում անփորձ էի: Մինչ այդ աշխատում էի իմ տղամարդկությունը ուրիշ գործերում ցույց տալ: Կյանքի սիրային կողմը ինձ համար գոյություն չուներ: Այդ պատճառով էլ, երբ մի անգամ Լուիսն ասաց «Ադյե» և պերճաշուք ձևով բարձրացնելով լայնեզր գլխարկը՝ ողջունեց ինչ-որ ծանոթ աղջկա և անմիջապես գնաց ուղեկցելու, նախանձեցի նրան: Ես էլ ցանկացա մասնակցել այդ խաղին:

— Ի՞նչ կա որ,— ասաց Լուիսը,— քեզ համար մի աղջիկ գտիր և վե՛րջ:

Բայց դա ավելի դժվար էր, քան թվում էր հեռվից: Թույլ տվեք մի փոքրիկ շեղում կատարեմ, որպեսզի ձեզ համար ավելի պարզ դառնա: Լուիսը աղջիկների հետ տնային պայմաններում չէր հանդիպում: Նա գնալ-գալ չուներ այնպիսի տները, ուր ջահել աղջիկներ կային, իսկ ես՝ առավել ևս: Չէ՞ որ դա ինձ համար բոլորովին նոր մի աշխարհ էր: Ոչ ես, ոչ էլ Լուիսը չէինք կարող պարեր սովորելու գնալ կամ երեկույթների մասնակցել, ուր սովորաբար ծանոթանում են ջահելները: Դրա համար մենք փող չունեինք: Լուիսը դարբնի օգնական էր աշխատում և ինձանից մի քիչ շատ էր վաստակում: Մենք երկուսս էլ ապրում էինք մեր հարազատների մոտ և ծախսի համար տանը փող էինք տալիս: Ճաշի և բնակարանի, սիգարեթների և ամենահամեստ նոր իրերի համար ծախսվում էր մեր աշխատավարձի առյուծի բաժինը. անձնական ծախքերի համար օրական մնում էր յոթանասուն սենթ կամ էլ որ մի քիչ զոռում էինք՝ մեկ դոլար: Մենք փողներս իրար վրա էինք դնում և բաժանում ճիշտ երկու մասի, իսկ այն դեպքերում, երբ մեզանից մեկը որևէ ջահել աղջկա հետ պիտի հանդիպեր, ամբողջ մնացորդը նրան էինք տալիս. տրամվայով մինչև Բլեր-Փարկ գնալու և գալու համար՝ քսան սենթ, երեսուն սենթ երկու բաժին պաղպաղակի համար և ծայրահեղ դեպքում՝ քսան, հատուկ ռեստորանում մեքսիկական տեմալիի /Տեմալի — մեքսիկական ազգային ճաշատեսակ/ համար. ավելի էժան հյուրասիրելու բան չկար:

Փող չունենալն ինձ չէր դառնացնում: Ատելությունը փողի նկատմամբ, որ ես ժառանգել էի ոստրեահենևներից, մնաց իմ ամբողջ կյանքում: Խնայողությունն ինձ ոչ մի ուրախություն չէր պատճառում. իմ փիլիսոփայությունը իր մարմնացումը կյանքում էր գտել. ես անտարբեր էի փողի նկատմամբ, երբ գրպանումս տասը սենթ էլ չկար, և այն ժամանակ, երբ վաճառասեղանի մոտ էի հավաքում ընկերներիս ու խմողների մի ամբողջ խումբ և նրանց հետ տասնյակ դոլարներ քամուն տալիս:

Բայց, այնուամենայնիվ, աղջիկ որտեղի՞ց գտնել: Լուիսին ծանոթ ընտանիքներում աղջիկներ չկային: Սեփական ծանոթներ դեռ չունեի: Իսկ իր փոքրաթիվ ընկերուհիներից ոչ մեկին Լուիսը չէր ուզում զիջել. ջահել տղաների մոտ այդպես է ընդունված: Ասենք, նա երբեմն իր ծանոթ աղջիկներից խնդրում էր ինձ համար իրենց ընկերուհիներից մեկին բերել, բայց դրանցից ոչ ոք ինձ դուր չէր գալիս. նրանք բոլորն էլ շատ քոսոտ աղջիկներ էին լինում, համեմատած այն գեղեցկուհիների հետ, որոնց ընտրում էր Լուիսը:

— Ստիպված ես ինձ նման վարվել,— ասաց նա ի վերջո:— Եթե ես ցանկանում եմ ծանոթանալ, ապա ծանոթանում եմ: Դու էլ այդպես արա:

Ահա թե ինձ ինչպես էր սովորեցնում: Մի՛ մոռացեք, որ փող մեզ մոտ շատ քիչ էր լինում: Մեզ համար հեշտ չէր վճարել ճաշի, բնակարանի համար ու մի քիչ մարդավարի հագնվել: Մենք նրանց հանդիպում էինք աշխատանքից հետո, փողոցում, երբեմն էլ խուլ նրբանցքի ծխախոտի կրպակում: Դա միակ տեղն էր, ուր մեզ թույլ էինք տալիս մտնել: Այդտեղ մենք սիգարեթ էինք առնում, երբեմն էլ՝ անանուխի բերան այրող սառնաշաքար (հա՛, մոռացա ասել. ես ու Լուիսը նույն կիրքն ունեինք կոնֆետների նկատմամբ և պատրաստ էինք անվերջ ուտել: Բայց ո՛չ նա, ո՛չ էլ ես չէինք խմում և գինետներ չէինք հաճախում):

Այսպես ուրեմն, ես խոսք բացեցի աղջիկների մասին: Լուիսի խորհրդով ամենապարզ միջոցին պիտի դիմեի. ընտրեի նրան, ով ինձ դուր է գալիս, մոտենայի ու ծանոթանայի: Ես ու Լուիսը սովորաբար զբոսնում էինք փողոցներում: Աղջիկները նույնպես զույգ-զույգ ման էին գալիս: Եթե աղջիկը նկատում է, որ մեկն իրեն է նայում, ապա ինքն էլ անպայման սկսում է աչքերով ուտել (ես արդեն միջին տարիքի մարդ եմ, բայց հիմա էլ, ինչ քաղաք կամ գյուղ էլ մտնելու լինեմ, իմ սովոր աչքը անմիջապես նկատում է այն տղաների ու աղջիկների հայացքների քնքուշ, անմեղ խաղը, որոնք գարնանային և ամառային երեկոներին չեն կարողանում տանը նստել):

Ցավն այն է, որ ես, իմ ջահել տարիներին այդքան բան տեսած մի մարդ, կյանքիս այս հովվերգական շրջանում հանկարծ երեխայի նման համեստ ու ամաչկոտ դարձա: Լուիսը անդադար ինձ քաջալերում էր: Բայց ես հեռու էի մնում աղջիկներից: Նրանք ինձ համար երկրային արարածներ չէին: Վտանգավոր պահին վախկոտի նման տեղի էի տալիս:

Այդ ժամանակ Լուիսն անցնում էր գործնական դասերի. արտահայտիչ հայացք, ժպիտ, վճռական շարժում, նրբակիրթ ողջույն, հաջողված մի խոսք և որպես պատասխան՝ շփոթմունք, քրքիջ, աչքերի սեթևեթ խոնարհում: Մեկ էլ տեսար, իմ ընկերն արդեն ծանոթացել է և ինձ գլխով է անում. իբր, արի այստեղ, ծանոթացնեմ: Բայց հենց որ մենք զույգ-զույգ բաժանվում էինք, միշտ էլ նկատում էի, որ Լուիսն իր համար լավն է ընտրել, իսկ ինձ վատն է թողել:

Ժամանակի ընթացքում, տարբեր պատմություններից հետո, որոնց մանրամասների մեջ հիմա մտնել չեմ ուզում, ես, իհարկե, մի քիչ փորձ ձեռք բերեցի այդ գործերում, իմ ծանոթ աղջիկների թիվը շատացավ, սովորեցի քաղաքավարի հանել գլխարկս, և նրանք հաճույքով համաձայնում էին ինձ հետ երեկոյան զբոսնել: Բայց աղջիկների սրտերը նվաճել ինձ միանգամից չհաջողվեց: Ես ջղայնանում էի ու բարկանում: Այդ ամբողջ ընթացքում գարեջրատունը ինձ չգրավեց: Հետագայում, հասուն տարիքիս, երբ զբաղվում էի սոցիոլոգիական ընդհանրացումներով, ես շատ եմ մտածել մեր ռոմանտիկ արկածախնդրության մասին: Այդ բոլորը հիասքանչ էր, համակված երիտասարդական մաքրությամբ, և իմ ընդհանրացումները ավելի շուտ վերաբերում էին կենսաբանության ոլորտին, քան սոցիոլոգիային: Դրա միտքը մոտավորապես այսպիսին էր. եթե բացառենք հագուստի մեջ եղած տարբերությունը, ապա «նշանավոր լեդին և Ձուդի օ'Գրեդին մնացած բաներում հավասար են» /Անգլիացի բանաստեղծ Ռ. Քիպլինգի (1865—1936 թթ.) տողերից մեկը/:

Շուտով աղջիկների սիրույն արժանանալու իմ հերթն էլ եկավ, և ես ճաշակեցի քնքուշ զգացման ամբողջ հմայքը: Այդ հիասքանչ էակի անունը Հեյդի էր: Նրա տասնվեց տարին դեռ չէր լրացել և այնպիսի մի զգեստ էր հագնում, որի փեշերը հազիվ էին հասնում բարձրաճիտ կոշիկների ծայրերին: Մենք հանդիպեցինք Փրկության բանակի ժողովին, բայց նա այդ կազմակերպության անդամ չէր, և նրա մորաքույրը, որ նստած էր կողքին, մյուս կողմից, նույնպես անդամ չէր. հետաքրքրությունից դրդված մի կես ժամով ներս էին մտել: Նա ապրում էր գյուղում և այդ ժամանակ այնտեղ այդպիսի կազմակերպություն դեռ չկար: Լուիսն էլ էր ներկա և հետևում էր մեզ: Ինձ թվում է, թե նա սահմանափակվում էր միայն նայելով, շատ հասարակ մի պատճառով. Հեյդին չէր պատկանում այն տիպի կանանց թվին, որոնք նրան դուր էին գալիս:

Մենք այդ անմոռաց կես ժամվա ընթացքում չէինք խոսում, այլ վախվորած հայացքներ էինք փոխանակում, անմիջապես փախցնելով աչքերս, բայց, այնուամենայնիվ, մի քանի անգամ մեր հայացքները հանդիպեցին: Նա նիհար, երկարավուն դեմք ուներ և հիասքանչ շագանակագույն

աչքեր: Քիթը պարզապես սքանչելի էր, բերանը նույնպես, չնայած մի փոքր կամակոր էր: Գլխին շոթլանդական բերետ էր, որի տակից դուրս էին թափվել շագանակագույն մազերը. այդպիսի գեղեցիկ գույնի մազեր երբեք չէի տեսել: Այդ կես ժամը ինձ համոզեց, որ սերը՝ առաջին իսկ հայացքից, հնարովի բան չէ:

Իմ երանությունը երկար չտևեց. Հեյդին ու իր մորաքույրը, չսպասելով ժողովի ավարտվելուն, գնացին (այդ բանը Փրկության բանակում չի արգելվում), որից հետո ժողովը ինձ համար կորցրեց իր հմայքը, և քաղաքավարությունից դրդված մի-երկու րոպե նստելուց հետո ես ու Լուիսն էլ դեպի ելքը գնացինք: Հենց այդ ժամանակ էլ վերջին շարքերից մի կին վեր կացավ և նետվեց իմ հետևից: Ես այստեղ նրա արտաքինը չեմ նկարագրի: Նա այն կանանցից էր, որոնց հետ բարեկամացել էի նավահանգստում, և տեսնելով ինձ, ճանաչել էր: Նելսոնը իր հոգին տվել էր նրա ձեռքերի վրա, և կինը մտածում էր, որ ես իր միակ բարեկամն եմ: Նա ցանկանում էր պատմել, թե ինչպիսի պարագաներում սպանվեց Նելսոնը, ես ինքս էլ էի ցանկանում իմանալ այդ: Եվ ահա բերետով աղջկա նկատմամբ նոր ծնվող պատանեկան սիրուց շեղվելով, գնացի ետ, դեպի փորձված վայրի զգացումների աշխարհը: Հենց որ նա վերջացրեց իր տխուր պատմությունը, ես վազեցի Լուիսին փնտրելու և վախը սրտումս մտածում էի, որ իմ առաջին սիրույն կորցրեցի, նույնիսկ ինչպես հարկն է չկարողանալով ծանոթանալ: Բայց Լուիսը ուրիշ տղա էր. նա ասաց, որ այդ աղջկա անունը Հեյդի է և գիտե, թե որտեղ է ապրում: Նա ամեն օր իրենց դարբնոցի առջևով գնում է Լաֆայետի դպրոցը և տուն գալիս: Բացի դրանից, նրան մի քանի անգամ տեսել է մեկ ուրիշ աշակերտուհու՝ Ռութի հետ, հետո՝ Նիտայի, Ռութի ընկերուհու հետ, որի մոտ, ծխախոտի կրպակում մենք սառնաշաքար էինք առնում: Այսպես կանենք, կգնանք Նիտայի մոտ և կխնդրենք Ռութին մի երկտող ուղարկել Հեյդիին հանձնելու համար: Եթե այդ բանը հաջողվի, ինձ մնում է միայն երկտողը գրել:

Մեր հնարանքը հաջողվեց: Միջոց գտնելով կեսժամյա հանդիպումների համար, ես ճանաչեցի պատանեկան սիրո բախտավոր խենթությունը: Ասում են, որ դա կյանքում ամենաուժեղ սերը չէ: Բայց որ դա ամենաքնքուշն է, ես ամենայն համարձակությամբ պնդում եմ այդ բանը: Օ՜, ինչ հիասքանչ էր այդ բոլորը: Բայց ոչ մի աղջիկ ինձ նման երկչոտ երկրպագու չի ունեցել, չնայած իմ տարիքին անհամապատասխան, շատ էի փչացած: Բայց ես աղջիկներին լավ չէի ճանաչում: Ես՝ ոստրեահենների թագավորս, որը եղել էր հեռավոր երկրներում՝ մեծերին հավասար, փոթորկի ժամանակ նավը ղեկավարելու և նավահանգստային ամենազզվելի անառականոցներում քարշ գալու վարպետ, որը միշտ պատրաստ է մասնակցելու գինետների տուրուդմփոցին, իսկ հետո վաճառասեղանի մոտ հյուրասիրել ամբողջ անձնակազմին, գլուխս կորցրել էի, չիմանալով ինչպես վարվել կարճ շորով այդ բարալիկ, անչափահաս աղջկա հետ, որի միամտությունը համահավասար էր կյանքի իմ ճանաչողությանը, մի բան, որի մեջ ինքս ինձ խելքի ծով էի կարծում:

Հիշում եմ, երկուսով ընկողմանել էինք նստարանին, աստղացան երկնքի տակ: Մեզ բավականին տարածություն էր բաժանում, երևի մեկ ոտնաչափ: Նստած էինք կիսով չափ թեքված, արմունկներս հենած նստարանի թիկնակին և միայն մեկ-երկու անգամ մեր արմունկները իրար դիպան: Երջանկությունից գլուխս կորցրած՝ ինչ-որ բան էի ասում, զգուշությամբ ընտրելով բառերը. հանկարծ անսպասելի չվիրավորեմ նրա քնքուշ լսելիքը: Եվ այդ ամբողջ ժամանակ ջանք էի թափում մտածելու, թե հիմա ինչ պետք է անեմ: Աղջիկները ի՞նչ են սպասում իրենց սիրեցյալներից, որոնք նստած են նրանց կողքին: Այս աղջիկը ի՞նչ է սպասում ինձանից: Սպասում է, որ համբուրե՞մ իրեն: Գուցե փորձե՞մ: Եթե նա այդ բանին է սպասում, իսկ ես չեմ համբուրում, ապա իմ մասին ի՞նչ է մտածում:

Հիմա ես հասկանում եմ. նա ինձանից խելոք դուրս եկավ, կարճ շրջազգեստով այս անչափահաս աղջիկը: Նա հաճախ է հանդիպել տղաների և հիմա կանացի սեթևեթանքով կարծես թե օրհնում էր ինձ: Նա հանել էր ձեռնոցները: Չեմ հիշում, թե ես ինչ դուրս տվեցի, որից նա զայրացավ և իր ձեռնոցներով թեթևակի հարվածեց իմ շրթունքներին: Ուրախությունից քիչ մնաց շունչս կտրվեր:

Մինչև հիմա էլ հիշողությանս մեջ է մնացել օծանելիքի քնքուշ բուրմունքը, որ տարածվում էր այդ ձեռնոցներից:

Եվ անմիջապես էլ կասկածները պատեցին ինձ: Հետո ի՞նչ անել: Բռնե՞լ այդ ձեռքը, որն իմ քթի տակ թափ է տալիս հոտավետ ձեռնոցները: Համբուրե՞լ իմ Հեյդիին, թե՝ սկզբում գրկել: Գուցե հարկավոր է մոտ նստել:

Ես ո՛չ այդ արեցի, ո՛չ մյուսը, ո՛չ էլ երրորդը: Պարզապես սիրտ չարեցի: Կոճղի նման վեր ընկած՝ տանջվում էի սիրուց: Հրաժեշտ տալիս էլ չհամբուրեցի նրան: Հիշում եմ մեր առաջին համբույրը. դա ուրիշ անգամ էր, նույնպես երեկոյան, հրաժեշտի ժամանակ: Ես այդ պահին օգնության կանչեցի իմ ամբողջ համարձակությունը և սիրտ արեցի: Մենք մի տասը անգամ թաքուն հանդիպեցինք և մի տասը անգամ, ոչ ավելի, համբուրվեցինք այնպես, ինչպես փոքրիկ տղաներն ու աղջիկներն են համբուրվում՝ շտապ, անմեղ, կարծես ինչ-որ բանից զարմացած: Ես երբեք չէի կարող նրան որևէ տեղ հրավիրել, մինչև անգամ ցերեկային ներկայացման: Միայն մեկ անգամ հյուրասիրեցի հինգսենթանոց սառնաշաքարով: Բայց ինձ թվում էր, թե նրան դուր եմ գալիս: Իմ մասին չեմ խոսում. ես մինչև ականջներս սիրահարված էի, և մի տարուց ավելի նա իմ երազանքը դարձավ: Այդ սիրո հուշը ինձ համար թանկ է մինչև հիմա:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ

Չխմող մարդկանց հետ ես երբեք խմելու մասին չէի մտածում: Լուիսը չէր խմում: Ո՛չ ես, ո՛չ էլ նա այդ բանը մեզ թույլ տալ չէինք կարող,— իսկ որ ամենակարևորն է,— ո՛չ ես, ո՛չ էլ նա խմելու ցանկություն չունեինք: Մենք նորմալ, առողջ, սթափ երիտասարդներ էինք: Եթե ոգելից խմիչքը մեզ գրավեր, մենք մեր աղքատությամբ հանդերձ, անպայման նրան հասնելու ճանապարհ կգտնեինք:

Ամեն երեկո, աշխատանքից հետո մենք տուն էինք գնում ընթրելու: Հետո լվացված ու մաքուր հագնված հանդիպում էինք անկյունում կամ էլ ծխախոտի կրպակում: Բայց տաք աշունը վերջացավ և ցրտին ու ցեխին փողոցներում քարշ գալն այնքան էլ դուրեկան չէ: Ծխախոտի կրպակում էլ տաք չէր: Նիտան կամ մի ուրիշը, որը կանգնած էր լինում վաճառասեղանի մոտ, շտապում էր գնալ հետևի սենյակը, որտեղ վառարանն էր վառվում: Մեզ այնտեղ չէին հրավիրում, իսկ կրպակում ցուրտ էր, ինչպես դրսում:

Ի՞նչ անել: Միակ ելքը գարեջրատուն գնալն էր, ուր հավաքվում էին տղամարդիկ և բարեկամանում Գարեհատիկի հետ: Ես լավ եմ հիշում քամոտ ու խոնավ այն երեկոն, երբ մենք, դողալով, որովհետև վերարկու գնելու փող չունեինք, որոշեցինք գարեջրատուն մտնել: Այնտեղ միշտ տաք էր և դուրեկան: Մենք առանց խմելու ցանկության այնտեղ գնացինք, չնայած գիտեինք, որ դա բարեգործական հիմնարկ չէ և չի կարելի առանց որևէ բան պատվիրելու նստել:

Շատ քիչ փող ունեինք: Չէինք կարող ծախսել այն մանրը, որը պետք էր տրամվայի համար, եթե հանկարծ աղջիկների հանդիպեինք (մենակ ժամանակ մենք երբեք տրամվայ չէինք նստում, այլ ոտքով էինք գնում): Բայց գարեջրատուն ընկնելով, որոշեցինք ինչքան կարող ենք փողներս խնայենք: Խաղաթղթեր պահանջեցինք, նստեցինք սեղանի մոտ և մի ժամ շարունակ էքյու խաղացինք: Առաջինը Լուիսը գարեջուր պատվիրեց, հետո՝ ես. երկու բաժակ, տասը սենթով: Դրանից էժան բան չկար, բայց մենք մինչև անգամ այդ փողը դժվարությամբ տվեցինք:

Մենք նայում էինք այցելուներին: Դրանք համարյա բոլորն էլ տարիքն առած բանվորներ էին: Հիմնականում՝ գերմանացիներ, որոնք այստեղ հանդիպում էին իրենց ծանոթներին և մեզ վրա ոչ մի ուշադրություն չէին դարձնում: Մեզ այս գարեջրատունը դուր չեկավ, և մենք այդտեղից դժգոհ դուրս եկանք, կորցնելով և՛ երեկոն, և՛ քսան սենթը, մեզ համար ոչ անհրաժեշտ գարեջրի համար:

Հետո, երեկոները մենք ուրիշ ինչ-որ տեղեր էլ գնացինք և ի վերջո ընկանք «Նացիոնալ» գարեջրատունը, որը գտնվում էր Տասներորդ և Ֆրանկլինի փողոցների անկյունում: Այստեղ ավելի հաճելի հասարակություն էր հավաքվում: Լուիսը ինչ-որ ծանոթների հանդիպեց, ես՝ իմ նախկին դասընկերներին, որոնց հետ դպրոց էի գնում, երբ դեռ կարճ տաբատ էի հագնում: Մենք հիշեցինք մի քանի տղաների, հարցրեցինք որտե՛ղ է այս մեկը, որտե՛ղ այն մյուսը և, իհարկե, խմեցինք: Սկզբում նրանք մեզ հյուրասիրեցին: Հետո, ինչպես կարգն է, մենք հյուրասիրեցինք: Դա չտեսնված տհաճ բան էր, քանի որ մեր դրամագլուխը քառասուն-հիսուն սենթով պակասեցրեց:

Մենք լավ երեկո անցկացրինք, բայց և լավ էլ սնանկացանք: Միանգամից բոլոր փողերը, որ ետ էինք գցել ամբողջ շաբաթվա ընթացքում, քամուն տվեցինք: Մենք բոլորս էլ որոշեցինք այցելել այս գարեջրատունը, միայն թե ավելի տնտեսող լինել: Եվ հենց առաջիկա շաբաթվա ընթացքում մենք շատ խիստ ռեժիմ սահմանեցինք: Ստիպված էինք հրաժարվել Արևմտյան շրջանում ապրող երկու աղջիկներին հանդիպելուց, որոնց հետ մտադիր էինք մտերմանալ: Նրանց հետ պիտի հանդիպեինք հաջորդ երեկոյան, բայց հրաժարվեցինք այդ հաճույքից. տրամվայի փող չմնաց աղջիկներին տուն տանելու համար: Բազմաթիվ մարդկանց նման, որոնք ֆինանսական դժվար կացության մեջ են ընկնում, մենք ստիպված եղանք ընդհատել մեր «աշխարհիկ կյանքը», գոնե մինչև շաբաթ օրվա ռոճիկը: Ստիպված ես ու Լուիսը ժամադրվում էինք գոմում հանդիպելու համար և մինչև մեր կամավոր ճգնավորության վերջը այնտեղ երկուսով էքյու կամ քազինո էինք խաղում և, չնայած մեր բաճկոնակները մինչև կոկորդներս կոճկված էին, դողում էինք ցրտից:

Հաճախ էինք «Նացիոնալ» գնում, բայց ծախսում էինք այն նվազագույն գումարը, որն անհրաժեշտ էր երեկոն տաք տեղում անցկացնելու համար: Երբեմն, ի միջի այլոց, մեր գլխին անսպասելի դժբախտություն էր թափվում, օրինակ, երկու անգամ իրար վրա մեզ սանչո-պեդրո խաղի մեջ քաշեցին՝ հինգով խմելու համար: Այդպիսի դժբախտության պատճառով ամբողջ մի կարողություն էր կորչում,— քսանհինգից մինչև ութսուն սենթ,— դե գնա ու իմացիր, թե քանի՞ խաղացող գարեջուր կպահանջի, որի ամեն մի բաժակը տասը սենթ արժեր: Ճիշտ է, հիմա մենք հնարավորություն ունեինք ժամանակավորապես խուսափել սնանկացումից. այդ գարեջրատանը ապառիկ էինք խմում: Բայց պարզ է, որ այդպիսի իրավիճակը միայն ձգձգում էր հատուցման ճակատագրական ժամը և ավելի մեծ ծախսերի պատճառ դառնում, քան եթե միանգամից վճարեինք: (Հաջորդ տարվա գարնանը ես անսպասելի թողեցի Օքլենդը և չհասցրեցի գարեջրատան տիրոջը վճարել մի դոլար. յոթանասունհինգ սենթ, իսկ մի քանի տարուց հետո վերադառնալով մեր քաղաքը, արդեն չգտա այդ մարդուն: Այդպես էլ իմ պարտքը չվճարված մնաց, և եթե իմ պարտատիրոջը բախտ վիճակվի կարդալ այս տողերը, թող նկատի ունենա, որ ես պատրաստ եմ նրա առաջին իսկ պահանջով հաշիվս մաքրել):

«Նացիոնալի» այս օրինակը ես բերում եմ, որպեսզի մի անգամ էլ ցույց տամ, որ Գարեհատիկ Ձոնը օգտվում է ներգործության բոլոր միջոցներից՝ հրապուրելուց. մինչև կոպիտ ուժը, հասարակական այնպիսի կառուցվածքում, երբ ամեն անկյունում ու ամեն խաչմերուկում գինետներ կան: Մենք առողջ, ջահել տղաներ էինք: Մեզ երբեք էլ խմիչքը չէր գրավում, դրա համար փող էլ չունեինք: Բայց անձրևին ու ցրտին գնալու ոչ մի տեղ չկար և մենք ուզեինք-չուզեինք գինետուն էինք գնում և վերջին կոպեկները ծախսում գարեջրի վրա: Մի քանի քննադատներ կարող են առարկել, որ մենք նույն հաջողությամբ կարող էինք գնալ Քրիստոնեական երիտասարդության միությունը, երեկոյան դպրոց, մի որևէ խմբակի մասնակցել կամ էլ, ի վերջո, գնալ հասակակից տղաների մոտ: Սրան ես, իհարկե, մի խելքը գլխին պատասխան չեմ կարող տալ, միայն գիտեմ, որ չէինք գնում: Չէինք գնում և վե՛րջ: Հիմա էլ իմ ու Լուիսի նման հարյուրհազարավոր այդպիսի ջահելների կգտնեք, որոնց հրապուրում է ու կանչում Գարեհատիկ Ձոնը, բռնում թևատակերից և քարշ տալիս տաք, հարմարավետ գինետունը, ուր իրեն հատուկ խարդավանքով կամաց-կամաց նրանց գինեմոլ է դարձնում:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ

Ձութի ֆաբրիկայի տերերը աշխատավարձս օրական քսանհինգ սենթով ավելացնելու խոստումը չկատարեցին, և, որպես Միացյալ Նահանգների ազատ քաղաքացի, որի նախնիները կռվել էին ամերիկյան բոլոր պատերազմներում, սկսած հնդկացիների դեմ գաղութատերերի մղած ամենաառաջին ճակատամարտերից՝ հեղափոխությունից դեռ շատ առաջ, ես օգտվեցի ազատ աշխատանքի իմ իրավունքից և հայտարարեցի, որ նրանց հետ ամեն տեսակի հարաբերությունները խզում եմ:

Առաջվա նման ինձ համար մշտական զբաղմունք գտնելու վճռականությամբ լցված՝ ես հասկանում էի, որ չորակավորված բանվոր լինելը շատ է խանգարում: Հարկավոր է տիրապետել մի որևէ մասնագիտության, ասենք, էլեկտրատեխնիկ դառնալ: Էլեկտրիկների կարիքը քանի գնում, այնքան մեծանում է: Բայց ինչպե՞ս սովորել այդ գործը: Տեխնոլոգիական դպրոց կամ համալսարան մտնել չէի կարող. փող չկար, իսկ որ գլխավորն է, պատշաճ հարգանք չէի զգում գիտության տաճարների նկատմամբ: Ինձ այնպիսի գործնական մարդ էի համարում, որպիսիք պետք են այս գործնական աշխարհում: Բացի դրանից, ես դեռ հավատում էի այն առասպելին, որը Ամերիկայում, մանկության տարիներից ի վեր, մոր կաթի հետ էր մտնում մարդու մեջ:

Նավավար տղան կարողացավ պրեզիդենտ դառնալ: Ուզածդ պատանին, որն առևտրական ֆիրմայում գործի է անցնում, աստիճանաբար կարող է բարձրանալ և դառնալ ֆիրմայի կրտսեր գործընկերը, եթե նվիրված է գործին, ձգտում ունի, խնայող է և ոգելից խմիչքներ չի գործածում: Իսկ հետո ավագ գործընկեր դառնալը ժամանակի հարց է: Շատ հաճախ, եթե առասպելին հավատալու լինենք, այդ պատանին, ապացուցելով իր մտադրության լրջությունը, ամուսնանում է իր տիրոջ աղջկա հետ: Այժմ, գեղեցիկ սեռի հետ վարվելու որոշ փորձ ձեռք բերելուց հետո, համոզված էի իմ հաջողության մեջ: Ես էլ կամուսնանամ տիրոջս աղջկա հետ: Էլ ի՞նչ կասկած կարող է լինել: Ամերիկյան առասպելների բոլոր հերոսներն էլ հենց որ բեղեր են թողնում, հասնում են այդ բանին:

Խաչ քաշելով բոլոր արկածների վրա, ես էլեկտրակայան գնացի, որը հոսանք էր մատակարարում քաղաքի տրամվայի գծերից մեկին: Իր շքեղ կահավորված առանձնասենյակում ինձ ընդունեց հենց ինքը՝ դիրեկտորը, և ես այդ շքեղությունից տառացիորեն ցնցվեցի: Բայց այնուամենայնիվ սիրտ առա ու խոսեցի... Ես դիրեկտորին ասացի, թե ցանկանում եմ էլեկտրամոնտյոր դառնալ, ոչ մի գործ ինձ չի վախեցնում, սովոր եմ դժվար աշխատանքին, իսկ ինչ վերաբերում է իմ ֆիզիկական պիտանիությանը, ապա թող նայի ինձ և համոզվի: Ասացի, թե պատրաստ եմ սկսել ամենափոքր պաշտոնից և ինձ համար ճանապարհ հարթել սեփական ուժերով, որ ցանկանում եմ ամբողջովին նվիրվել հենց այս մասնագիտությանը և նրա հարգարժան հիմնարկությանը:

Դիրեկտորը ինձ լսում էր բարեհոգի ժպիտով: Այդպիսի սկզբունքներով ես հեռու կգնամ, հայտարարեց նա: Նրա պարտականությունն է՝ օժանդակել երիտասարդ ամերիկացիներին, որոնք ձգտում են ինքնուրույն իրենց համար ճամփա բացել: Ձեռնարկատերերը միշտ էլ փնտրում են այնպիսի պատանիների, ինչպիսին ես եմ, բայց, ցավոք, դրանք շատ քիչ են: Իմ ցանկությունը արժանի է ամենաբարձրագույն գովասանքի և կաշխատի հնարավորություն ստեղծել՝ իմ ուժերը ի հայտ բերելու (ես նրան լսում էի ուրախ բաբախող սրտով և մտածում էի. սրա աղջի՞կն է, արդյոք, դառնալու իմ կինը):

— Ինքնուրույն տեղամաս ստանալուց առաջ, ուր դու կընդհարվես մասնագիտության բոլոր բարդություններին ու նրբություններին,— նախազգուշացրեց նա,— անհրաժեշտ է դեպոյում աշխատել, ուր կատարվում է մոտորների նորոգում և տեղադրում: (Այստեղ ես վերջնականապես որոշեցի, որ իմ կինը հենց սրա աղջիկը պիտի լինի, և սկսեցի մտածել ուրիշ բաների մասին. տրամվայի ընկերության արժեթղթերից սրա մոտ շա՞տ կան արդյոք):

— Բայց նկատի ունեցեք,— շարունակեց դիրեկտորը,— որ առանց նախապատրաստության ոչ ոք քեզ օգնական չի նշանակի: Արտադրամասում տեղ զբաղեցնելուն պետք է ծառայելով արժանանալ: Դեպոյում պետք է սկսել ավելի համեստ աշխատանքից՝ հավաքարարությունից: Հատակը ավլել, լուսամուտները լվանալ, շենքում կարգ ու կանոն պահպանել... Երբ դուք

կապացուցեք, որ այդ պարտականությունները կատարում եք, ապա կարող են էլեկտրամոնտյորի օգնական դարձնել:

Ինձ համար այնքան էլ պարզ չէր, թեև ավելն ու հավաքելը ինչ ձևով է օգնում էլեկտրամոնտյորի մասնագիտությանը պատրաստվելուն, բայց գրքերում, որպես օրենք, բոլորը սկսում են սև աշխատանքից և, շնորհիվ իրենց ջանասիրության, ի վերջո դառնում են ամբողջ ձեռնարկության տերը:

— Ե՞րբ աշխատանքի գամ,— հարցրեցի, ցանկանալով ինչքան կարող եմ շուտ սկսեմ իմ գլխապտույտ կարիերան:

— Քանի որ մենք երկուսս էլ հասկանում ենք, որ պետք է սկսել ամենացածր աստիճանից,— ասաց դիրեկտորը,— ապա նկատի ունեցեք, որ դեպոն բավականին բարձր բան է: Պետք է մեքենայական բաժնում յուղող աշխատեք:

Իմ սիրտը դող ընկավ. տիրոջ աղջկան հասնելու համար երկար ճանապարհ է պետք: Բայց հաջորդ պահին հանգստացա: Ոչի՞նչ, ավելի հեշտ կլինի լավ էլեկտրատեխնիկ դառնալ, եթե ինչպես պետքն է իմանամ շոգեշարժիչը: Հսկայական մեքենայական դահլիճում յուղող աշխատելիս, ես կսովորեմ յուրաքանչյուր պտուտակը, յուրաքանչյուր պնդօղակը: Աստվա՛ծ իմ: Ապագան նորից փայլփլեց իմ դիմաց ծիածանային բոլոր գույներով:

— Ե՞րբ աշխատանքի գամ,— կրկնեցի զգացված ձայնով:

— Սպասե՛ք: Մեքենայական բաժանմունքն էլ դեռ ամենաառաջին աստիճանը չէ,— ասաց նա:— Այնտեղ նույնպես առանց նախապատրաստության չի կարելի ընդունվել: Պետք է, բնականաբար, սկսել կաթսայատնից: Ես տեսնում եմ, որ դուք խելոք տղա եք, ուրեմն պետք է հասկանաք, որ անգամ հնոցի մեջ ածուխ գցելը մի ամբողջ գիտություն է, ոչ թե հասարակ մի բան, ինչպես թվում է ոմանց: Եվ թող ձեզ հայտնի լինի, որ ամբողջ քարածուխը, որը հատկացված է վառելու համար, մենք ուշի-ուշով կշռում ենք և այդպիսով ուսումնասիրում քարածխի տարբեր տեսակների ջերմային գործակիցը: Մենք ճիշտ գիտենք մեր արտադրանքի ինքնարժեքը և հետևում ենք հնոցապաններին, որպեսզի նրանք չիմանալուց կամ անբարեխղճությունից չվատնեն ածուխը:— Դիրեկտորը նորից ժպտաց:— Տեսնում եք, չէ՞, թե ինչ մեծ նշանակություն ունի առաջին հայացքից չնչին թվացող հարցը: Եվ այդ բնագավառում ձեր գիտելիքներն ինչքան շատ լինեն, այնքան լավ աշխատող կարող եք դառնալ. դրանով հարգելի կդառնաք և՛ մեր աչքին, և՛ ձեր սեփական: Հը՛, ինչպես է, համաձա՞յն եք:

— Անպայման,— քաջ-քաջ պատասխանեցի ես,— ինչքան շուտ, այնքան լավ:

— Ա՛յ, հիանալի է: Վաղը ժամը յոթին եկեք:

Ինձ տարան և ցույց տվեցին, թե ինչ պիտի անեմ: Հայտնեցին և պայմանները. տասը ժամ աշխատանք, ո՛չ. տոներ, ո՛չ էլ կիրակի, ամբողջ ամիսը միայն մեկ հանգստի օր: Ռոճիկը՝ երեսուն դոլար: Այնքան էլ շատ չէ: Չէ՞ որ մի քանի տարի առաջ պահածոյի գործարանում նույնքան էի ստանում տասը ժամի համար: Ի միջի այլոց ինձ մխիթարում էի այն բանով, որ մինչև հիմա ինձ ոչ ոք ավելի չի վճարել, որովհետև որակավորում չունեի: Սրանից հետո ուրիշ կերպ կլինի: Ես ընդունվում եմ արհեստ սովորելու, մասնագիտություն ստանալու և կարիերա ձեռք բերելու, հարստության և դիրեկտորի աղջկա ձեռքը տիրելու համար:

Ես սկսում եմ, ինչպես պետք է, այբ-ից: Բոլոր օրենքներով: Ածուխ եմ տալիս հնոցապաններին, նրանք գցում են հնոցը, ջերմային էներգիան վեր է ածվում գոլորշու, գոլորշին՝ էլեկտրականության, իսկ դրանից հետո սկսվում է էլեկտրամեխանիկների գործը: Անտարակույս, ածուխ տալուց է սկսվում բոլորը, եթե, իհարկե, դիրեկտորի մտքով չանցնի ինձ հանքերը ուղարկել, ուր ածուխ են հանում, որպեսզի ավելի լավ պատկերացում ունենամ էլեկտրական էներգիայի աղբյուրի մասին, որը շարժման մեջ է դնում տրամվայը:

Աշխատա՞նք: Ինձ արդեն վիճակվել էր կողք կողքի աշխատել տղամարդկանց հետ, սակայն թվում էր, թե դա պարզապես խաղ էր: Բայց ի՞նչ տասը ժամ: Ես ածուխ էի մատակարարում երկու հերթափոխներին էլ և մինչև անգամ կեսօրյա ընդմիջմանը չէի հանգստանում. երբեք երեկոյան ութից շուտ գործս չէի վերջացնում: Աշխատում էի օրական տասներկու-տասներեք ժամ և արտաժամյա գործի համար ոչինչ չէի ստանում, ինչպես ստանում էի պահածոյի ֆաբրիկայում:

Ինչո՞ւ: Ձեզ բաց կանեմ գաղտնիքը և չզարմանաք: Ես երկու մարդու գործ էի անում: Մինչև իմ աշխատանքի անցնելը ցերեկային հերթափոխին սպասարկում էր մի ուժեղ, չափահաս բանվոր, իսկ գիշերը՝ ուրիշը, նույնպես, իհարկե, չափահաս և ուժեղ: Յուրաքանչյուրին ամիսը վճարում էին քառասուն դոլար: Դիրեկտորը տնտեսելու համար ստիպեց ինձ աշխատել երկուսի փոխարեն և երեսուն դոլար նշանակեց: Ես կարծում էի, թե նա պատրաստվում է ինձ էլեկտրամոնտյոր դարձնել: Իսկ նա պարզապես ցանկանում էր ընկերության համար ամիսը հիսուն դոլար խնայել:

Բայց չգիտեի, որ երկուսի փոխարեն եմ աշխատում: Ինձ այդ բանը ոչ ոք չասաց. դիրեկտորը բոլորին զգուշացրել էր, որ չասեն: Առաջին օրը ուղղակի կաշվիցս դուրս եկա, այնպես աշխատեցի. կայծակնային արագությամբ քարածուխ էի լցնում երկաթե ձեռնասայլակի մեջ, վազելով քշում էի մինչև կշեռքը, կշռում, սլանում էի կաթսայատուն և քարածուխը շուռ տալիս հնոցի առաջ:

Աշխատա՞նք: Ես ավելին էի անում, քան այն երկու մեծահասակները, որոնց փոխարեն ինձ էին վարձել: Նրանցից յուրաքանչյուրը քարածուխ էր բերում կաթսաների մոտ և լցնում հնոցի առջևում գտնվող թուջե հարթակին: Ես այդպես կարող էի անել միայն ցերեկային հերթափոխի համար, իսկ գիշերայինի համար քարածուխը պիտի կուտակեի հնոցատան անկյունում: Սրահում նեղվածք էր, առաջուց նախատեսված էր եղել օժանդակ նպատակների համար: Ես ստիպված էի լինում գիշերվա համար մի ամբողջ սար նախապատրաստել, ամրացնել հաստ գերաններով, իսկ հետո բահով քարածուխը վեր նետել:

Այդ առաջին առավոտը ես քրտինքի մեջ կորել էի, բայց թափս չէի թուլացնում, չնայած զգում էի, որ ուժասպառ եմ լինում: Առավոտը ժամը տասին այնքան էներգիա էի ծախսել, որ սովածացա: Ես դուրս քաշեցի ճաշի համար բերած հացի հաստ կտորն ու կարագը և ամբողջովին քարածխի փոշու մեջ կորած՝ կանգնած կերա, չնայած, որ հոգնածությունից ծնկներս ծալվում էին: Ժամը տասնմեկին ճաշի իմ կաթսայիկը արդեն դատարկ էր: Ինչ արած, միևնույն է: Դրա փոխարեն կարող եմ ամբողջ ընդմիջման ժամանակ աշխատել: Ընդմիջումն անցավ, անցավ և օրվա երկրորդ կեսը: Վրա հասավ երեկոն, լույսերը վառվեցին, իսկ ես դեռ աշխատում էի: Ցերեկվա հնոցապանը գնաց, հերթափոխի կանգնեց գիշերայինը: Իսկ ես կրում էի ու կրո՛ւմ քարածուխը:

Ութ անց կեսին, սոված ու բոլորովին ուժասպառ, ես լվացվեցի, փոխեցի շորերս և ոտներս քարշ տալով՝ գնացի տրամվայի կանգառը: Մինչև տուն երեք մղոն ճանապարհ կլիներ. ինձ տվել էին ծառայողի տրամվայի տոմս, նախազգուշացնելով, սակայն, որ կարող եմ նստել այն դեպքում միայն, եթե վճարովի ուղևորներ չկան: Ես խցկվեցի հետևի հարթակի մի անկյունը, աղոթելով աստծուն, որ ոչ ոք ինձ այդ տեղից չքշի: Վագոնը կամաց-կամաց լցվում էր: Ես դեռ կես ճանապարհն էլ չէի անցել, երբ մի կին մտավ, որի համար այլևս տեղ չկար: Փորձ արեցի վեր կենալ և, օ, սարսափ, չկարողացա: Ցուրտ քամին կարծես ինձ կպցրել էր իմ տեղից: Ամբողջ ճանապարհին ես տանջվեցի, աշխատելով ձգել տնքացող հոդերս ու մկաններս, որպեսզի ի վերջո վեր կենամ ու կանգնեմ ոտնակին: Երբ տրամվայը հասավ մեր կանգառին, ես ցած թռա և միայն հրաշքով չփռվեցի գետնին:

Դժվարությամբ քարշ տալով ոտքերս, ես անցա երկու թաղամաս և կաղալով, թուլացած ներս ընկա խոհանոց: Մինչ մայրս ինձ համար ընթրիք կպատրաստեր, հարձակվեցի հացի ու կարագի վրա, բայց, մինչև անգամ չհասցնելով հագեցնել քաղցս և չսպասելով, որ միսը տապակվի, մեռածի նման քնեցի: Ինչքան էլ մայրս բոթբոթեց ինձ, այնպես էլ չարթնացա և չկերա մսի իմ բաժինը: Տեսնելով, որ ինձ արթնացնել հնարավոր չէ, նա օգնության կանչեց հորս և երկուսով ինձ քարշ տվեցին սենյակ: Այնտեղ հնձված խոտի պես փռվեցի անկողնում: Ծնողներս հանեցին շորերս,

ծածկեցին, իսկ առավոտյան մի նոր տառապանք սկսվեց. մեծ դժվարությամբ արթնացրին: Ես մի կերպ վեր կացա, բայց դրան մի ուրիշ դժբախտություն էլ ավելացավ. դաստակներս ուռել էին: Դրա փոխարեն ես կուշտ կերա՝ երեկվա թողած ընթրիքի տեղը հանելով, և ինձ հետ երեկվանից երկու անգամ շատ ուտելիք վերցրեցի:

Այ թե աշխատանք էր, հա՜: Միթե տասնութ տարեկան երիտասարդը կարող է հասակն առած, ուժեղ երկու բանվորներից ավելի քարածուխ տեղափոխել: Ոչի՜նչ, վատ աշխատանք չէ: Ճաշի ընդմիջումից դեռ շատ առաջ ես մինչև վերջին փշրանքը կերա հետս բերածը: Բայց ուզում էի այդ մարդկանց ցույց տալ, թե ինչի է ընդունակ ուժեղ երիտասարդը, որը որոշել է իր համար ճամփա հարթել: Թարսի նման էլ ձեռքերս ավելի ուռեցին և հրաժարվեցին ծառայելուց: Ո՜վ չգիտե, թե քայլելիս ինչքա՜ն ցավ է պատճառում, երբ ոտքի ջիլը ձգվում է: Պատկերացրեք, ինչպիսի տանջանք էր բահով ածուխ հավաքելը և ծանր սայլակը քաշելը, երբ երկու ձեռքիդ հոդերն էլ ցավում են:

Հը՛մ, համա թե աշխատա՜նք էր: Ես շուտ-շուտ մերթ այստեղ էի նստում, մերթ այնտեղ, որևէ մի թաքուն անկյունում և ստորացումից ու զայրույթից, հոգնածությունից ու հուսահատությունից լալիս էի: Երկրորդ օրը ամենատանջալիցն էր, և եթե ես երեսուն ժամ դիմացա, մինչև անգամ գիշերային հերթափոխի համար պատրաստեցի ամբողջ քարածուխը, շնորհիվ միայն ցերեկվա հնոցապանի, որը լայն գոտիներով կապկպեց դաստակներս: Նա այնպես ամուր փաթաթեց, կարծես գիպսի մեջ դրեց: Այդ գոտիները պարզապես փրկեցին ինձ, արգելեցին, որ ուռուցքը տարածվի:

Այսպես սկսեցի սովորել էլեկտրամոնտյորի գործը: Ամեն երեկո ինձ մի կերպ տուն էի գցում և չհասցնելով անգամ ընթրել, գլուխս սեղանին դնելով՝ քնում էի: Ինձ քարշ էին տալիս մինչև մահճակալը և փոքրիկի պես շորերս հանում: Ամեն առավոտ, ահագին ուտելիք հավաքելով, ասես մի սովյալ աշխարհ էի ուղևորվում, ես երեք տակ ծալված, աշխատանքի էի գնում:

Գրադարանից այլևս գրքեր չէի վերցնում: Աղջիկների հետ չէի ժամադրվում: Ես բանող անասուն էի դարձել: Աշխատում էի, ուտում ու քնում, բայց ուղեղս ամբողջ ժամանակ ասես քնի մեջ լիներ: Դա մի մղձավանջ էր: Ես աշխատում էի ամեն օր, անգամ կիրակիները, կանխավ երազելով այն միակ ազատ օրը, որ տալիս էին ինձ ամսվա վերջին. ահա թե երբ կարող եմ քնել ինչքան սիրտս ուզի: Ամբողջ օրը թավալ կտամ անկողնում ու ոչինչ չեմ անի:

Բայց տարօրինակ բան. այդ ընթացքում ես ոչ մի անգամ չխմեցի, նույնիսկ մտքովս չանցավ: Այնինչ գիտեի, որ շատ հոգնած մարդիկ իրենց խմելուն են տալիս: Այդպիսի դեպքեր տեսել էի, մինչև անգամ ինձ վրա փորձել: Բայց ոգելից խմիչքը ինձ համար չափազանց օտար մի բան էր և մտքովս չէր անցնում, որ եթե խմեմ, ավելի թեթև կզգամ: Ինչո՞ւ եմ այս օրինակը բերում: Որպեսզի ապացուցեմ, թե ես ոգելից խմիչքի կարիք չէի զգում: Միայն հետագայում, շատ տարիներ հետո, շշի հետ հաճախակի հանդիպելու պատճառով Գարեհատիկը սկսեց բացահայտ կերպով գրավել ինձ:

Հաճախ էի նկատում, որ ցերեկվա հնոցապանը ինչ-որ տարօրինակ հայացքով է ինձ նայում: Վերջապես մի անգամ նա խոսեց, նախապես ինձնից երդում վերցնելուց հետո, թե ոչ ոքի ոչինչ չեմ ասի: Դիրեկտորը սպառնացել էր, որ եթե լեզուն շաղ տա, վերջը լավ չի լինի: Հետո նա պատմեց երկու հեռացված բանվորների և այն մասին, թե նրանք ինչքան էին ստանում: Ես մենակ, երեսուն դոլարով անում էի այն, ինչ երկուսը՝ ութսուն դոլարով: Նա ինձ վաղուց պատմած կլիներ այդ բանը, բայց հավատացած էր, որ միևնույն է, չեմ դիմանա ու կհեռանամ: Իզուր քեզ կործանում ես, ա՛յ տղա, բայց օգուտն ի՞նչ: Գցեցիր աշխատանքի գինը, երկու բանվորի զրկեցիր աշխատանքից, ահա թե ինչ:

Գնամ հաշիվներս փակե՞մ: Ո՛չ, ես ամերիկացի եմ, հպարտ մարդ: Կաշխատեմ մինչև օրվա վերջը և դիրեկտորին կապացուցեմ, որ ես ուժեղ ու դիմացկուն եմ: Աշխատանքից հետո կազատվեմ և թող իմանա, թե ի՜նչ լավ աշխատողի իր ձեռքից բաց թողեց:

Հիմարի նման այդպես էլ արեցի. աշխատեցի եզի պես, մինչև որ ժամը մոտ վեցին, երեկոյան հերթափոխի համար, ածուխ կուտակեցի: Հենց դրանով էլ վերջացավ իմ էլեկտրատեխնիկի արհեստ սովորելը, որի համար խղճուկ երեսուն դոլարով աշխատանքի անցա: Տանը փռվեցի քնելու և արթնացա միայն հաջորդ օրը:

Իմ բախտից էր, որ երկար ժամանակով չաշխատեցի ու հալից չընկա: Ասենք, կաշվե ապարանջանները մի ամբողջ տարի ձեռքիցս չհանեցի: Իմ աշխատանքային եռանդը փոխվեց ֆիզիկական գործի նկատմամբ ունեցած լրիվ զզվանքով: Ես պարզապես աշխատել չէի ուզում: Մինչև անգամ զզվում էի դրա մասին մտածելուց: Թքա՛ծ, թե չեմ կարողանում որևէ մի տեղ երկար մնալ: Գրողի ծոցը ամեն տեսակ արհեստն ու սովորելը: Թափառական կյանքը դրանից ուրախ է: Եվ ահա, նորից արկածներ փնտրելով, ես ուղղություն վերցրեցի դեպի արևելք, ճամփորդելով ապրանքատար վագոններով:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՄԵԿԵՐՈՐԴ

Սակայն հենց որ վերադարձա արկածներ որոնելուն, Գարեհատիկ Ձոնը անմիջապես ընկերացավ ինձ: Ես թափառում էի օտար քաղաքներում. էլ ինչպե՞ս, եթե ոչ մի բաժակ գարեջրով կամ վիսկիով, կարելի էր ծանոթանալ մարդկանց հետ և տպավորություններ քաղել: Այդ հանդիպումը երբեմն լինում էր գինետանը, խմած տեղացիների հետ, երբեմն էլ՝ բարեհամբույր, արդեն կատարները տաք երկաթուղայինների հետ, որոնք իրենց գրպաններում հոգեպահուստ տափաշիշ ունեին, երբեմն խմում էինք հարբած «ալկերի» հետ, ինչ-որ կասկածելի մի պանդոկում: Խմում էինք մինչև անգամ այն նահանգներում, ուր սպիրտային խմիչքները պաշտոնապես արգելված էին, օրինակ, Այովայում: Հիշում եմ, 1894 թվականին ես թափառում էի Դե-Մոյնիի գլխավոր փողոցում, և բոլորովին անծանոթ մարդիկ ինձ հրավիրում էին ընդհատակյա խմիչքատեղերը՝ վարսավիրանոցները, փականագործական արհեստանոցները, կահույքի խանութները: Ամենուր մենք լիուլի վարձահատույց էինք լինում Բաքոսին: Որ կողմը ուզում ես շրջվիր, նա ամեն տեղ էր: Այն օրհնված ժամանակներում մինչև անգամ թափառաշրջիկները կարող էին իրենց թույլ տալ բավական հաճախ խմել: Նույնիսկ Բուֆալոյի բանտում կարողացանք մի հոյակապ կերուխում սարքել, իսկ ազատվելուց հետո խմելու համար փողոցներում անցորդներից փող էինք մուրում:

Հարբեցողությունն ինձ չէր գայթակղում, բայց այնտեղ, ուր խմում էին մյուսները, ես էլ ետ չէի մնում: Միշտ ընկերանում էի աշխույժ, հետաքրքիր մարդկանց, բայց հենց դրանք էլ բոլորից շատ էին խմում: Դրա փոխարեն նրանք իսկական ընկերներ էին, մեծ մասամբ տաքարյուն, յուրօրինակ անձնավորություններ: Թերևս հենց իրենց տաքարյունության համար նրանք խուսափում էին առօրեականից ու սովորականից, Գարեհատիկի ընկերության մեջ փնտրելով իրենց սփոփանքը: Այսպես թե այնպես, այդ մարդիկ, որոնք բարեկամություն էին անում Գարեհատիկի հետ, ինձ մյուսներից շատ էին գրավում:

Այդ թափառումները Միացյալ Նահանգներում իմ մեջ փոխեցին մի շարք նախկին պատկերացումներ: Ես, թափառում էի, և գտնվելով բեմի հետևում, ավելի շուտ, բեմի ներքևում, ամերիկյան հասարակության կյանքում ոչ մի դեր չէի խաղում: Բայց ներքևից ավելի լավ էր երևում, թե ինչպես է գործում այն մեխանիզմը, որը շարժման մեջ էր դնում հասարակական մեքենայի անիվը: Ի միջի այլոց, ես իմացա, որ ֆիզիկական աշխատանքը բոլորովին էլ չի օգտվում այն պատվից, որի մասին բարբառում են ուսուցիչները, քարոզիչները և քաղաքագետները: Առանց արհեստի՝ մարդիկ խղճուկ, անպաշտպան մի հոտ են: Մինչև անգամ արհեստ ունեցողները պետք է արհմիության անդամ լինեն, որպեսզի կարողանան մի կտոր հաց աշխատելու իրենց իրավունքը պաշտպանել: Արհմիություններն ամեն միջոցներով պայքարում են ձեռնարկատիրական միությունների դեմ՝ աշխատավարձը բարձրացնելու և բանվորական օրը կրճատելու համար: Երբ սպառնալիքները չեն ներգործում, նրանք դիմում են գնդակների օգնությանը: Նույն ձևերից են օգտվում նաև հակառակորդները: Ես չեմ տեսել, որ բանվորը

հարգանք վայելի: Երբ ծերանում է կամ որևէ դժբախտ դեպք է պատահում, նրան պարզապես աղբանոց են նետում անպետք մեքենայի պես: Ես շատերին գիտեմ, որոնք կյանքում երբեք չեն տեսել, թե ինչ բան է հարգանքը:

Այսպես ուրեմն, իմ նոր պատկերացումները հանգեցնում էին այն համոզմանը, որ ֆիզիկական աշխատանքը հարգանք չի վայելում և չարժե նրա վրա հույս դնել: Ինձ ոչ արհեստ է պետք, ո՛չ էլ դիրեկտորի աղջիկը: Եվ հեռու հանցագործությունից. դրանից բարիք սպասել չի կարելի: Հանցագործին էլ այնպիսի դժբախտ վերջ է սպասում, ինչպես բանվորին: Այժմ արժեք ունի ոչ թե ֆիզիկական ուժը, այլ ուղեղը: Իմ մկանները ստրուկների շուկայում այլևս չեմ վաճառի, որոշեցի ես: Ուղեղս պիտի վաճառեմ, միայն ուղեղս, և վե՛րջ:

Ես Կալիֆորնիա վերադարձա՝ ուսում ստանալու հաստատ որոշմամբ: Ժամանակին ես վերջացրել էի տարրական դպրոցը և հիմա գնացի միջնակարգում սովորելու: Ապրելու համար դռնապան դարձա: Ինձ մի քիչ օգնում էր քույրս, բայց ինքս էլ ոչ մի աշխատանքից չէի խորշում. պատրաստ էի և՛ սիզամարգերի խոտը խուզել, և՛ գորգ թափ տալ, եթե ազատ ժամանակ լիներ: Ես հասկանում էի այն պարադոքսի խոր իմաստը, որ միայն աշխատանքը կարող է փրկել աշխատանքից, և դա էր իմ մեջ պահպանում համապատասխան ձգտումը:

Պատանեկան սերը, Հեյդին, Լուիս Շաթոկը, երեկոյան զբոսանքները, բոլորը մնացել էին անցյալում: Զվարճությունների համար ժամանակս չէր բավականացնում: Ես մտա Հենրի Քլեյի /Հենրի Քլեյ (1777—1852) — ամերիկացի քաղաքական գործիչ, նվաճողաբար տրամադրված ամերիկյան բուրժուազիայի ներկայացուցիչներից մեկը/ անվան բանավեճային ակումբը, հյուր եղա նրա մի քանի մասնակիցների տանը և ծանոթացա կրթված աղջիկների հետ, որոնք պճնազարդվում էին երկար զգեստներով: Հաճախեցի և ուրիշ փոքրիկ հավաքույթների, ուր բանավեճեր էին գնում բանաստեղծության, արվեստի և անգլերենի քերականության նրբությունների շուրջը: Ես մտա սոցիալիստական կուսակցության Օքլենդի բաժանմունքը. այստեղ մենք ուսանում էինք քաղտնտեսություն ու փիլիսոփայություն, քննում էինք քաղաքական հարցեր: Որոշ ժամանակ ես աշխատեցի գրադարանում և ահագին գրականություն կարդացի, որպեսզի արդարացնեմ մի կես դյուժին կազմակերպությունների անդամության իմ կոչումը:

Կես տարվա ընթացքում ես բերանս խմիչք չտարա, մինչև անգամ չհիշեցի դրա գոյությունը: Ո՛չ ժամանակ կար, ո՛չ էլ ցանկություն: Հրաժարվելով դռնապանի ցերեկային իմ պարտականություններից՝ աշակերտ դարձա, իսկ հազվադեպ ազատ րոպեներին ինձ շախմատին նվիրեցի: Իմ հոգու ամբողջ ավյունով ճանաչեցի նոր աշխարհը և հիմա ինձ որքա՜ն զզվելի էր թվում Գարեհատիկ Ջոնի հին աշխարհը:

Ի միջի այլոց, ես մի անգամ, այնուամենայնիվ, գինետուն մտա: «Վերջին հավանականություն» մտա, Ջոննի Հեյնհոլդի մոտ՝ փող պարտք վերցնելու: Ահա ձեզ Գարեհատիկ Ջոնի բնավորության գծերից մեկը: Գինետան տերերը բարի մարդկանց համբավ են վայելում: Որպես օրենք, նրանք ավելի առատաձեռն են, քան այսպես կոչված գործարար մարդիկ: Ինձ տասը դոլար էր պետք, բայց չգիտեի, թե ում դիմեմ: Եվ գնացի Ջոննի Հեյնհոլդի մոտ: Մի քանի տարի կլիներ, ինչ ոտք չէի դրել նրա գինետունը, այնպես որ նա ինձանից օգուտ չուներ և այս անգամ էլ ոչինչ չխմեցի: Սակայն նա մի տասանոց տվեց, չխոսելով ո՛չ գրավականի, ո՛չ է տոկոսների մասին:

Դրանից հետո ես ստիպված սկսեցի ավելի հաճախ դիմել Ջոննի Հեյնհոլդին՝ համանման խնդիրներով: Համալսարան ընդունվելիս նրանից քառասուն դոլար պարտք վերցրեցի, նույնպես առանց երաշխավորագրի ու տոկոսների, չնայած «Վերջին հավանականությունում» ես անգամ տասը սենթ չէի ծախսել: Բայց ուզում եմ հիշեցնել մի սովորական, այսպես ասած, չգրված օրենք. երբ մի քանի տարի հետո բախտը ժպտաց ինձ, ես հատկապես գնացի խմելու քաղաքի մյուս ծայրին գտնվող «Վերջին հավանականությունում». դա կարծես նրա տված փողերի տոկոսը լիներ: Նա երբեք այդ բանը ինձանից չէր խնդրել և մտքովն անգամ չէր անցկացրել: Իսկ ես վարվեցի լավ սերտած համապատասխան օրենքներով, որը թելադրում է Գարեհատիկը: Երբ մարդն ընկնում է դժբախտության մեջ և չգիտե գլուխը որ քարին զարկի, որովհետև առանց

գրավականի ու երաշխավորականի ոչ մի գազան-վաշխառու փող չի տա, միայն մեկ ելք է մնում. դիմել ծանոթ գինետան տիրոջը: Եվ քանի որ մարդուն հատուկ է երախտիքի զգացումը, հավատացած եղեք, երբ ձեռքը փող ընկնի, նա կխմի հենց այնտեղ, որտեղ դժվար րոպեին իրեն օգնել են:

Չեմ կարող չհիշել այն օրերը, երբ սկսեցի իմ գրական գործունեությունը և ստիպված էի պահել մեր մեծ ընտանիքը. կնոջս ու երեխաներիս, մորս, ազգականուհուս, չհաշված կարիքի մեջ ընկած իմ դայակին՝ Ջեննիին ու նրա ծերուկին, մի շատ համեստ հոնորարով, որը աղետալի կերպով անկանոն ստանում էի ամսագրերի հրատարակիչներից: Երկու տեղ կար, ուր ես կարող էի պարտք վերցնել՝ վարսավիրանոցը և գինետունը: Վարսավիրը ինձնից ամիսը հինգ տոկոս էր վերցնում, այն էլ՝ կանխիկ: Այլ խոսքով ասած, երբ ես նրանից հարյուր դոլարի պարտք էի վերցնում, ինձ տալիս էր հիններունիհինգ: Հինգ դոլարը պահում էր որպես առաջին ամսվա տոկոսներ: Երկրորդ ամսվա համար նրան վճարում էի դարձյալ հինգ դոլար և այսպես այնքան ժամանակ, մինչև որ վերջապես հաջողվում էր մի կանխամտածված հարվածով հրատարակիչներից պոկել իմ հասանելիք հոնորարը և վճարել այդ ստրկացուցիչ պարտքը:

Մյուսը, որ դժվար ժամանակ օգնում էր ինձ, հարևան գինետան տերն էր: Մի քանի տարի մենք իրար դեմքով գիտեինք, բայց ես ոչ մի անգամ նրա մոտ չէի խմել, մինչև անգամ պարտք վերցնելիս: Բայց էլի նա երբեք ինձ չէր մերժում, ինչքան էլ որ խնդրելիս լինեի: Ցավոք սրտի, մինչև կհարստանայի, նա մի ուրիշ քաղաք տեղափոխվեց: Մինչև հիմա էլ ափսոսում եմ, որ նա չկա: Համաձայն այն օրենքների, որ սովորել էի, ես պետք է մտնեի նրա մոտ և ժամանակ առ ժամանակ մի քանի դոլար խմեի՝ ի նշան անցյալի երախտապարտ հուշի:

Ես բոլորովին էլ չեմ մտածում փառաբանել գինետան տերերին. ավելի շուտ սա ներբող է միայն Գարեհատիկ Ջոնին: Ես միայն մի գիծ եմ ավելացնում այն բազմաթիվ գծերին, որոնց շնորհիվ մարդիկ ընտելանում են հարբեցողությանը և վերջ ի վերջո համոզվում, որ արդեն անկարող են ապրել առանց ալկոհոլի:

Բայց ես վերադառնում եմ իմ պատմությանը: Սառելով նախկին արկածախնդրություններից, գլխովին թաղվելով ուսման մեջ և դողալով ամեն րոպեի համար, ես պարզապես մոռացել էի, թե ինչ-որ տեղ գինետուն գոյություն ունի: Իմ շուրջը ոչ ոք հարբեցողությամբ չէր զբաղվում: Թե որ իմ նոր ընկերների մեջ խմել սիրող գտնվեր և ինձ կանչեր իր հետ, ես երևի չկարողանայի մերժել: Ազատ ժամանակ նստում էի շախմատի տախտակի դիմաց, զբոսանքի էի գնում համալսարանի կրթված աղջիկների հետ, կամ էլ հեծանվով քաղաքից դուրս էինք գալիս (եթե հեծանիվս այդ ժամանակ լոմբարդում չէր):

Ցանկանում եմ նորից ընդգծել գլխավորը. չնայած ես Գարեհատիկ Ջոնի մեծ ու դաժան դպրոցն էի անցել, այնուամենայնիվ, ոգելից խմիչքի ձգտում չունեի: Կապերս խզելով անցյալի հետ, ես վայելում էի հովվերգական տրամադրությամբ ապրող ուսանողների և ուսանողուհիների ընկերությունը: Ես մտել էի մտքի կախարդական ապարանքը և հոգով հարբած էի: (Ավա՜ղ, շատ շուտով հասկացա, որ այս դեպքում էլ խումարությունից փրկվել չեմ կարող):

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

Միջնակարգի դասընթացը ավարտելու համար երեք տարի էր հարկավոր: Այդքան երկար ժամանակի համար չէր բավականացնի ո՛չ իմ համբերությունը, ո՛չ էլ փողը: Այդ ընթացքով եթե շարունակվեր, չէի դիմանա, իսկ ես ցանկանում էի ընդունվել Կալիֆորնիայի համալսարանը: Ահա թե ինչու, առաջին տարին սովորելով, ես սկսեցի ավելի կարճ ճանապարհներ փնտրել. փող պարտք վերցրեցի և ընդունվեցի նախապատրաստական կուրսի ավագ բաժանմունքը, ուր պատրաստում էին բարձրագույն ուսումնական հաստատության ընդունելության

քննություններին: Ինձ երաշխիք էին տալիս, որ չորս ամիս հետո համալսարան կընդունվեմ և այդպիսով երկու տարի կշահեմ:

Եվ ո՞նց էի անգիր անում: Չէ՞ որ անհրաժեշտ էր երկու տարվա նյութը չորս ամսում յուրացնել: Ես այնպես էի անգիր արել քառակուսի հավասարումները և քիմիական բանաձևերը, որ հինգ շաբաթ հետո դրանք արդեն գլուխս չէին մտնում: Եվ հանկարծ ինձ իր մոտ է կանչում դասընթացի դիրեկտորը: Շատ է ափսոսում, ասաց նա, բայց ստիպված է վերադարձնել փողերս և խնդրում է թողնել իր ուսումնական հաստատությունը: Ո՛չ, բանը առաջադիմության մեջ չէ: Որպես ունկնդիր, ես լավ համարում ունեմ, և հավատացած է, թե դասընթացները վերջացնելուց հետո, եթե համալսարան ընդունվեի, այնտեղ էլ իրենց ամոթով չէի թողնի: Բայց, ցավոք սրտի, սկիզբ են առել անախորժ ասեկոսեներ: Ինչպե՞ս թե... չո՛րս ամսում անցնել երկու տարվա դասընթացը: Դա կարող է անախորժության պատճառ դառնալ և համալսարանում էլ արդեն ավելի խիստ են վերաբերվում նախապատրաստական դասընթացներին: Նա չի կարող հարվածի տակ դնել իր վարկը, խնդրում է բարի լինել և հեռանալ դասընթացներից:

Ես ենթարկվեցի: Պարտքս վերադարձրի և ատամներս սեղմած անցա ինքնուրույն պարապելուն: Մինչև համալսարանի ընդունելության քննությունները մնացել էր երեք ամիս: Ես այդ երեք ամսվա ընթացքում, իմ սենյակի պատերի մեջ, պետք է հաղթահարեի երկու դասարանի ամբողջ դասընթացի դժվարությունները՝ առանց լաբորատորիայի և ուսուցիչների, ու կրկնեի ընթացիկ տարվա անցածը:

Երեք ամիս շարունակ, օրական տասներկու ժամ անգիր էի անում և միայն մի քանի անգամ ինձ կարճ ընդմիջումներ թույլ տվեցի: Ես բոլորովին հալից ընկա. մարմինս տնքում էր, գլուխս կտոր-կտոր էր լինում, բայց շարունակում էի անգիր անել: Սկսեցին աչքերս ցավել, կոպերս խաղացին, քիչ էլ՝ և ստիպված կլինեի պարապմունքներս թողնել: Վերջում էլ, ինձ թվում էր, թե մի քիչ խելքս թռցրել եմ. ես կարծեցի, թե որոշել եմ շրջանակի քառակուսին, բայց իմ մեջ վճռականություն գտա բանաձևի լուծումը մի կողմ դնել: Քննություններից հետո. ա՛յ, այն ժամանակ ինձ ցույց կտամ:

Քննությունների ժամանակ ես մի քանի օր չհանգստացա և համարյա թե աչք չփակեցի. միայն անգիր էի անում ու կրկնում: Բայց հենց որ վերջին գրավոր քննությունը տվեցի, իմ հոգնածությունն արդեն հասել էր իր գագաթնակետին: Այլևս չէի կարողանում գրքերին նայել: Չէի կարողանում որևէ բանի մասին մտածել. ամեն մի մտածող մարդ ինձ վրա սարսափ էր ազդում:

Այս դրության մեջ միայն մեկ փրկություն կար. հին օրերը հիշել: Ես էլ չսպասեցի քննությունների արդյունքները իմանալուն: Ծանոթից խնդրելով նրա յախտան՝ ես նավախուց տեղափոխեցի անկողինս ու մի քիչ ուտելիք, բարձրացրի առագաստը և վաղ առավոտյան, տեղատվությունը վերջանալուն պես, դուրս եկա Օքլենդի ծովածոցից: Տեղատվությունը յախտան իր գիրկն առավ, և համընթաց քամին քշեց Հյուսիսային ուղղությամբ, այնտեղ, ուր մշուշի մեջ փռված էր Սան-Պաբլո ծովածոցը: Քարկինեզյան նեղուցի վրա, Սելբի պղնձաձուլական գործարանի մոտ, տարածվել էր մուժը: Նավացռուկի հետևում մնացին ափի հին նշանները. դրանցից սովորեցի օգտվել Նելսոնի շխունայով լողալու ժամանակ, որը շրջում էր բոլոր առագաստները պարզած:

Առջևում երևաց Բենիշին: Ես անցա Թիրենյան նավաշինարանը, շրջանցեցի Սոլանո նավամատույցը և կիպ մոտեցա ավազներին հանգչող ձկնորսական շալանդաներին. մի ժամանակ ես ապրում էի այստեղ և հարբեցողությամբ զբաղվում:

Այդ պահին ինձ ինչ-որ բան պատահեց, բայց պատահածի միտքը հասկացա միայն շատ տարիներ հետո: Ես ոչ մի մտադրություն էլ չունեի ափ իջնել Բենիշիում: Գնում էի համընթաց քամու տակ, որը սուլում էր ականջներիս մեջ և ուռցնում առագաստները. դրանից լավ եղանակ ոչ մի նավաստի երազել անգամ չէր կարող: Առջևում երևացին Բուլլիեդ և Արմիփոյնթս հրվանդանները. նշանակում է շուտով կերևա Սյուիսանի ծովածոցը, որը, երևի, նույնպես մշուշով ծածկված կլինի: Բայց հենց որ տեսա Բենիշիի շալանդաները, առանց մտածելու որոշում ընդունեցի. քամու տակ

թեքվեցի, քաշեցի շկոտները և դեպի ափ ուղղվեցի: Այդ պահին իմ հոգնած, տանջահար ուղեղը թելադրեց ինձ, թե ինչ եմ ուզում: Խմե՛լ: Հարբե՛լ:

Այո՛, ես ճիշտ հասկացա այդ տիրական ցանկությունը: Իմ հոգնած ուղեղը մոռացում էր պահանջում և մոռանալու մի այլ միջոց չգիտեի: Ահա թե ի՞նչ: Կյանքումս առաջին անգամ գիտակցաբար, մտադրված խմել ցանկացա: Դա Գարեհատիկի իշխանության մի նոր, դեռ ինձ անծանոթ արտահայտություն էր. ոչ թե մարմինս, այլ ուղեղս էր այս անգամ ոգելից խմիչք պահանջում: Իմ հոգնա՛ծ, տանջվա՛ծ, քայքայվա՛ծ ուղեղ:

Այստեղ ես ուզում եմ խոսել ամենագլխավորի մասին: Ինչքան էլ հոգնած լինեի, մտքովս անգամ չէր անցնի խմելը, եթե առաջ հարբեցողությամբ զբաղված չլինեի: Հաղթահարելով ոգելից խմիչքի նկատմամբ իմ ունեցած օրգանական զզվանքը՝ ես սովորեցի խմել, որովհետև չէի ուզում վատ ընկերոջ համբավ ձեռք բերել, և առանց Գարեհատիկ Ջոնի յոլա գնալ չես կարող, եթե ձգտում ես հետաքրքիր, արկածներով հարուստ կյանքի: Եվ ահա ես այնպիսի վիճակի էի հասել, որ իմ ուղեղը ոչ թե պարզապես խմել էր ուզում, այլ մեռածի նման հարբել: Եթե այդքան տարի անընդհատ չխմեի, ես հիմա վիսկին չէի հիշի: Կշարունակեի իմ ճանապարհը Բուլլհեդի մոտով մինչև փրփրադեզ Սյուիսանի ծովածոցը և քամու սուլոցի տակ, որն ուռցնում էր իմ առագաստը ու մինչև ոսկորներս թափանցում, կմոռանայի հոգնությունս և թարմացած գլխով կվերադառնայի:

Ես մակույկը կառանեցի ու շտապեցի այնտեղ, ուր նավակայանի մոտ օրորվում էին ձկնորսական շալանդաները: Չարլի լե Գրանտը վզովս ընկավ: Նրա կինը՝ Լիզին, ինձ սեղմեց իր հսկայական կրծքին: Ինձ շրջապատեցին Բիլլ Մերֆին, Ջո Լլոյդը և ձկնորսական պարեկության իմ մյուս ընկերները: Բոլորը հերթով ինձ գրկեցին: Չարլին վերցրեց բիդոնը, կտրեց անցավ երկաթուղային թումբը և վազեց Յորգենսոնի պանդոկը: Դա նշանակում էր, որ գարեջուր ենք խմելու: Բայց ես թունդ բան էի ուզում և հետևից գոռացի, որ մի շիշ էլ վիսկի բերի:

Այդ շիշը շատ ճամփորդեց երկաթուղային թմբի վրայով՝ գինետուն և ետ: Ուրիշ ձկնորսներ էլ եկան, հին ծանոթներ՝ հույներ, ռուսներ, ֆրանսիացիներ: Յուրաքանչյուրը հերթով հյուրասիրեց, հետո բոլորը սկսվեց սկզբից: Մարդիկ գալիս էին ու գնում, իսկ ես մնում էի իմ տեղում և բոլորի հետ խմում: Խմում էի անհոգ ագահությամբ, վիսկին այրում էր ներսս, իսկ ես երանության մեջ էի, զգալով, որ քանի գնում, այնքան գլուխս թմրում է:

Եկավ Ջուկը, որը Նելսոնի հետ էր աշխատում դեռ ինձնից առաջ: Նա առաջվա նման գեղեցիկ էր, բայց միայն թե ավելի ցոփ մարդ էր դարձել և խմելուց բոլորովին խելքը թռցրել էր: Նա քիչ առաջ կռվել էր իր գործընկերոջ՝ «Վիթ» շլյուպի տիրոջ հետ, և երկուսն էլ գործի էին դրել բռունցքներն ու դանակները: Հիմա էլ նա, պատմելով այդ տուրուդմփոցի մասին, աշխատում էր պահել իր մարտական ոգին: Մենք խմեցինք իրար հետ և հիշեցինք Նելսոնին, ուժեղ Նելսոնին, որը հավիտյան քնով քնած է այս քաղաքում. երկուսիս աչքերում էլ արցունքներ երևացին, հիշելով հանգուցյալի միայն լավ արարքները, և այդ առթիվ էլ մի քանի անգամ դատարկեցինք բաժակները:

Ինձ խնդրեցին գիշերել իրենց մոտ, սակայն բաց դռնակից տեսա, թե ինչպես էին մոլեգնել ալիքները, և լսեցի, թե ինչպես է ոռնում քամին: Եվ մինչ ես աշխատում էի մոռանալ երեք ամիս անդադար բերանացի արած իմ դասերը, Չարլի լե Գրանտը իմ իրերը բերեց մեծ շալանդան, այն շալանդան, որով սաղմոն էին որսում: Նա այստեղ բերեց մի պարկ քարածուխ, ձկնորսական թավան, սրճամանը և տապակը, մի աման սուրճ, միս և քիչ առաջ բռնած ծովային պերկեսը:

Իմ ընկերները ստիպված էին ճանապարհելիս բռնել թևերիցս՝ նավամատույցի երերուն կամրջակով շալանդա նստելու համար: Նրանք շպրինտով այնքան բարձրացրին առագաստի վերին ծայրը, որ դա տախտակի պես ձգվեց: Մերոնցից մեկը կասկած արտահայտեց, որ շպրինտը կարող է պոկվել, բայց ես պնդեցի իմը, և Չարլին պաշտպանեց ինձ: Նա երբեք չէր կասկածում իմ ձեռնհասությանը և գիտեր՝ քանի աչքերս բաց են, կարող եմ նավակը վարել: Ֆալինը ինձ գցեցին:

Ես ձեռքս տարա ռումպելին, իջեցրի շկոտը և, չնայած աչքիս առաջ ամեն ինչ օրորվում էր, որպես հրաժեշտ թափահարեցի ձեռքս ու հեռացա ափից:

Ուժեղ քամին, որ փոխել էր հոսանքը, հզոր ալիքներ էր բարձրացնում: Սյուիսանի ծովածոցը փրփուրից սպիտակել էր: Բայց ձկնորսական շալանդան ամուր էր, և ես գիտեի, թե ինչպես պետք է վարվել: Ես քշում էի դեպի ալիքների կատարը, կտրում ալիքները և բարձր գոռալով, գրողի ծոցն էի ուղարկում բոլոր գրքերն ու դպրոցները: Ծառս եղող ալիքները մտրակում էին ինձ մի ֆուտ բարձրությամբ, բայց ես միայն ծիծաղում էի և ամբողջ ձայնով երգում, երբ ջուրը շաչում էր ոտքերիս տակ: Ծովն ու քամին ոչինչ բան էին: Ես ինձ աշխարհի տիրակալն էի համարում, որը թամբել է կատաղի տարերքին. իսկ Գարեհատիկ Ջոնը ինձանից մի քայլ անգամ չէր հեռանում: Մաթեմատիկական ու փիլիսոփայական բանաձևերի և մեծ հռետորների ասույթների հետ միասին ես հիշում էի այն տարիների հին երգերը, երբ աշխատում էի պահածոյի գործարանում ու ոստրեահեն էի. «Սև Լյուն», «Ամպն է չվում», «Մի՛ նեղացրու իմ աղջկան», «Բոստոնի գողը», «Այստե՛ղ եկեք, թափառաշրջիկ խաղամոլներ», «Եթե ես թռչնակ լինեի» և «Շենանդոա»:

Այսպես մի քանի ժամ անցավ: Երբ արշալույսի պայծառ շողերը բոցավառեցին երկինքը, ես արդեն այնտեղ էի հասել, ուր Սաքրամենտոյի պղտոր ջրերը խառնվում են Սան-Հոակինի պղտոր ջրերին: Կտրելով հոսանքը՝ ես անցա Բլեք-Դայմոնդ փակ նավահանգստի հայելանման ջրերով, Սան-Հոակինի գետաբերանով և գնացի դեպի Անտիոք, ուր մի քիչ գինովությունս անցավ և, գայլի պես սոված, սկսեցի դրեյֆել կարտոֆիլ բարձած բարկասի մոտ, որի նավասարքը ինձ ծանոթ թվաց: Նավի վրա իսկապես իմ հին ծանոթներն էին: Նրանք ձիթապտղի յուղով տապակեցին ծովային իմ պերկեսը և հրավիրեցին իրենց հետ սեղան նստել: Մենք կերանք ռագու, որի մեջ շատ սխտոր էր գցած, և իտալական հաց՝ վարդագույն կեղևով, առանց կարագի, և վրայից էլ խմեցինք կարմիր թունդ գինի:

Իմ շալանդան լիքը լցվել էր ջրով, բայց փոքրիկ նավասենյակում վերմակն ու անկողինը չոր էին, և մենք պառկած ծխում էինք, հիշելով անցած օրերը, ականջ էինք դնում, թե ինչպես է քամին ոռնում պարանների մեջ և ուժեղ ձգված ֆալերով կայմին:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ

Մի շաբաթ հետո թարմացած տուն վերադարձա և պատրաստ էի համալսարանի պարապմունքներն սկսելու: Այդ շաբաթվա ընթացքում ես չխմեցի: Աշխատելով հեռու մնալ խմելուց՝ խուսափում էի հին ընկերներիս հանդիպելուց, քանի որ ուր նրանք էին լինում, անպայման հայտնվում էր Գարեհատիկ Ջոնը: Ես լավ հանգստացել էի և խմել էի ցանկացել միայն առաջին օրը, իսկ հետո այլևս դրան չէի ձգտում: Բայց մի կարծեք, թե ինձ անհանգստացնում էր խիղճը: Ես չէի ամաչում և չէի ափսոսում, որ մասնակցեցի Բենիշիի կերուխումին. պարզապես դա դուրս գցեցի իմ հիշողությունից և հաճույքով դասագրքերը նորից ձեռքս առա: Շատ ժամանակ անցավ, մինչև ես նորից հիշեցի այդ դեպքը և ըստ արժանվույն գնահատեցի: Այդ ժամանակ, և ոչ միայն այդ ժամանակ, ինձ թվաց, թե այդ բոլորը կատակ էր միայն: Բայց ավելի հասուն տարիքում, մտավոր ամենամեծ լարման և հոգեկան անհավասարակշռության պահերին, ես հիշում էի, թե ոգելից խմիչքը այնպիսի ուժ ունի, որն օգնում է մոռանալ, ու իմ ամբողջ էությամբ կարոտում էի դրան:

Բայց միաժամանակ Բենիշիի դեպքը ինձ չէր խանգարում միանգամայն վայելուչ կյանք վարել: Նախ՝ ես գինուն չէի կարոտում, երկրորդ՝ իմ ընկերները ուսանողներ էին, որոնք չխմող մարդիկ են: Բավական էր, որ վերադառնայի արկածներ որոնելուն, կամա թե ակամա ստիպված կլինեի խմել: Հենց այդտեղ էլ թաքնված է գլխավոր վտանգը. արկածների բոլոր ճանապարհներն էլ ընտրում է Գարեհատիկ Ջոնը:

Ես վերջացրի առաջին կիսամյակը և 1897 թվականի հունվարին փոխադրվեցի երկրորդը: Բայց մեր ընտանիքը մեծ նեղության մեջ էր և ինձ սկսեց թվալ, որ բավական շատ ժամանակ եմ կորցնում սովորելու վրա: Ես որոշեցի յոլա գնալ առանց բարձրագույն կրթության: Ոչի՛նչ, այնքան էլ մեծ կորուստ չէ: Երկու տարի սովորեցի, բազմաթիվ գրքեր կարդացի և դա բոլորից շատ էի գնահատում: Ասենք, ուրիշ օգուտ էլ կար. ես սկսեցի ավելի լավ խոսել ու գրել: Ճիշտ է, առաջվա պես շարունակում էի «ինչը» հարցնելու փոխարեն «ինչի» ասել, բայց դրա փոխարեն այն օրենքը, համաձայն որի անգլերենում ժխտական դերանունը չի կարելի օգտագործել բայի ժխտական ձևի հետ, շատ լավ յուրացրեցի: Գրելիս արդեն այդ սխալը չէի անում և եթե երբեմն բանավոր խոսքում պատահում էր, դա էլ հուզված ժամանակ էր լինում:

Ես որոշեցի ստեղծագործական աշխատանքով զբաղվելը ականջի հետև չգցել: Ինձ չորս բան էր գրավում. երաժշտություն, բանաստեղծություն, փիլիսոփայական, տնտեսագիտական և քաղաքական հարցերին նվիրված հոդվածներ և, վերջապես (չնայած մյուսներից քիչ), գեղարվեստական արձակը: Ի միջի այլոց, երաժշտությունը ես անմիջապես էլ բացառեցի որպես անհեռանկար մի գործ: Քաշվելով իմ սենյակը՝ ես սկսեցի միանգամից ամեն ինչ գրել. բանաստեղծություններ, հոդվածներ, պատմվածքներ և, աստվա՜ծ իմ, ի՜նչ աներևակայելի եռանդով: Ստեղծագործական այդպիսի տենդը կարող էր վերջանալ միայն ծանր հոգեկան հիվանդությամբ: Իմ կատաղի աշխատանքի պատճառով կարող էի ուղեղի խանգարում ստանալ և գժանոց ընկնել: Ես թխում էի ճոռոմ ակնարկներ, սոցիալական և գիտական թեմաներով պատմվածքներ, հումորիստական բանաստեղծություններ և նման բաներ, սկսած տրիոլետներից ու սոնետներից, վերջացրած սպիտակ տողերով ողբերգություններով և սփենսերյան /Սփենսեր, Էդմոնդ (1552—1599) — անգլիացի նշանավոր բանաստեղծ, ասպետական վեպերի ազդեցությամբ գրված «Դիցուհիների թագուհին» պոեմի հեղինակը/ ոգով գրված ծանրակշիռ էպիքական պոեմներով: Օրեր էին լինում, որ գրասեղանի մոտ տասնհինգ ժամ էի նստում, մոռանալով անգամ ուտելը կամ էլ այդպիսի ձանձրալի գործի համար չէի ուզում ընդհատել իմ ներշնչանքը:

Հետո սկսվում էր մեքենագրելու տանջանքը: Իմ քրոջ ամուսինը գրամեքենա ուներ, որից նա օգտվում էր ցերեկը: Ինձ թույլատրեցին մեքենայից օգտվել գիշերը: Դա մի զարմանալի գրամեքենա էր: Ես հիմա էլ պատրաստ եմ լաց լինելու, հիշելով նրա դեմ մղած իմ մենամարտերը: Դա, թերևս, ամենաառաջին գրամեքենաներից էր. դրանից ավելի հին կառուցվածքի ես չեմ հանդիպել: Նրա շրիֆտը կազմված էր միայն գլխատառերից: Այդ մեքենայի մեջ սատանան ինքն էր նստած: Չէր ենթարկվում հայտնի ֆիզիկական օրենքներից ոչ մեկին և ժխտում էր այն հինավուրց ճշմարտությունը, թե համանման առարկաները, որոնք օգտագործվում են համանման պայմաններում, միևնույն արդյունքն են տալիս: Երդվում եմ, այդ մեքենային չէր կարելի ստիպել երկու անգամ իրար հետևից միատեսակ աշխատել: Նա համառորեն ապացուցում էր, որ միայն տարբեր պայմաններն են բերում համանման արդյունքներ:

Նրա պատճառով մեջքս ո՜նց էր ցավում: Մինչ այդ մեքենային ծանոթանալս ես բոլորովին էլ քնքուշ մարդ չէի և կարող էի տանել ուզածդ ամենաուժեղ ֆիզիկական լարումը, բայց ահա սա ինձ համոզեց, որ բոլորովին էլ Հերկուլես չեմ: Նրա դեմ մղած ամեն մի նոր գոտեմարտից հետո ես ուսերիս մեջ այնպիսի ցավ էի զգում, որ սարսափով մտածեցի, թե հոդացավ ունեմ: Դրա չխկչխկոցը աներևակայելի մի բան էր. հեռվից թվում էր, թե որոտն է թնդում կամ էլ կացնով կահույք են ջարդուփշուր անում, որովհետև ստեղները աշխատում էին միայն այն ժամանակ, երբ ամբողջ ուժով էի հարվածում: Իմ հիվանդ մատների հոդերը ուռեցին և ձեռքերս մինչև արմունկները սկսեցին ցավել, իսկ մատներիս ծայրերին փուչիկներ գոյացան, որոնք պայթում էին ու նորից ուռչում: Եթե դա իմ սեփական մեքենան լիներ, ես վրան մուրճով կաշխատեի:

Բայց չէ՞ որ ստիպված էի ոչ թե պարզապես կռիվ տալ մեքենայի հետ, այլ մեքենագրել ձեռագիրը: Հազար բառ մեքենագրելը սխրագործություն էր, որն ուղեկցվում էր հազարավոր անեծքներով: Բայց ես օրվա ընթացքում հազար բառից էլ շատ էի գրում: Ես աշխատում էի շուտ մեքենագրել իմ

ստեղծագործությունները և ուղարկել խմբագրությունները, հաստատ հավատացած, որ այնտեղ անհամբեր սպասում են այդ ձեռագրերին:

Ա՛յ թե հոգնում էի, հա՛... Բայց ինչքան էլ հոգնած լինեի, թե մտավոր, թե ֆիզիկապես,— խմելու ցանկություն երբեք չզգացի: Ես լցված էի վեհ զգացումներով և թմրադեղի կարիք չէի զգում: Գիշերվա ամբողջ արթուն ժամանակը, չհաշված, իհարկե, անհիծյալ մեքենայի դեմ մղած պայքարը, ես նվիրում էի ոգեշունչ աշխատանքին: Եվ, բացի դրանից, իմ մեջ այնպիսի պատրանքներ կային, որոնք գինեմոլությանը անհամատեղելի էին. ասենք, օրինակ, կարծում էի, որ գոյություն ունի իսկական սեր, և դրան հավատում են բոլոր տղամարդիկ ու կանայք, որ հայրերը չեն ուրանում իրենց զավակներին, որ աշխարհի վրա արդարություն կա, որ մարդկանց անհրաժեշտ է արվեստը և բազմաթիվ այլ միամիտ պատկերացումներ, որոնք օգնում են մեզ ապրելու:

Ավա՜ղ, պարզվեց, որ խմբագրություններն այնքան էլ չեն փափագում լսել երիտասարդ հեղինակի ձայնը: Իմ աշխատությունները զարմանահրաշ ճամփորդություններ կատարեցին Խաղաղ օվկիանոսից մինչև Ատլանտյանը և այդտեղից էլ վերադարձան ինձ մոտ: Հրատարակիչներին գուցե զարմացրեց իմ ձեռագրերի խելագար տեսքը և դրա համար էլ ոչ մի տող չցանկացան տպագրել: Բայց, աստվա՜ծ իմ, նրանց նույն հաջողությամբ կարող էր վախեցնել ոչ միայն ձևավորումը, այլև զառանցական տեքստը: Ես կես գնով հնավաճառներին ծախեցի իմ դասագրքերը, որոնք ժամանակին ճարել էի մեծագույն դժվարությամբ: Քիչ-քիչ փող պարտք վերցրի ումից որ կարողացա, բայց դարձյալ շարունակեցի նստած մնալ ծերունի հորս վզին, որը չնայած իր թույլ առողջությանը, շարունակում էր աշխատել:

Այս բոլորը երկար չտևեց, միայն մի քանի շաբաթ: Հետո ես ստիպված եղա անձնատուր լինել և աշխատանքի անցնել: Սակայն այդ ժամանակ էլ չփորձեցի ամեն ինչ մոռացության մատնել գինու մեջ: Գործերի այս ընթացքը ինձ չէր դառնացնում: Ի՜նչ արած, նշանակում է, դրական կարիերայի սկիզբը մի քիչ հետաձգվում է, այսքան մի բան: Գուցե, ինձ իսկապես խանգարում է իմ պատրաստված չլինե՞լը: Ինչքան շատ էի կարդում, այնքան պարզ էր դառնում, որ ես նոր եմ միայն մոտենում գիտության աղբյուրին: Դեռ սավառնում եմ ամպերի մեջ: Ամբողջ օրը, և գիշերվա մի մասը, երբ մարդիկ քնած են, ես անց էի կացնում ընթերցանությամբ:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ

Ես աշխատանք գտա քաղաքից դուրս, ոչ մեծ, հիանալի սարքավորված լվացքատանը, որը կից էր Բելմոնթի ակադեմիային: Ամբողջ աշխատանքը, սկսած տեսակավորելուց ու լվանալուց, մինչև սպիտակ վերնաշապիկները, օձիքները, թեզանիքները, մինչև անգամ պրոֆեսորների կանանց շքեղ սպիտակեղենն արդուկում էին երկու հոգի. ես, մեկ էլ մի երիտասարդ: Մենք աշխատում էինք այնպես, ասես հետևներիցս ընկած լինեին, հատկապես ամռանը, երբ աշակերտները սկսում էին քաթանե տաբատներ հագնել: Տաբատ արդուկելը սարսափելի գլխացավանք բան է, իսկ դրանց թիվ ու համար չկար: Մեկ ամսից ավելի արևադարձային շոգեր էին, մենք կաշվից դուրս էինք գալիս, բայց էլի բոլորը չէինք հասցնում վերջացնել: Մինչև անգամ գիշերը, երբ բոլոր աշակերտները խաղաղ քնած էին, ես ու ընկերս էլեկտրական լույսի տակ փռում և արդուկում էինք սպիտակեղենը:

Բանվորական օրը տառապալից երկար էր, աշխատանքը շատ դժվար, չնայած մենք շատ բան էինք կատարելագործել և մեր ամեն մի շարժումը հաշվված էր: Ինձ ամիսը երեսուն դոլար էին վճարում, վրան էլ՝ ուտելիքը. դա ավելի շատ էր, քան էլեկտրակայանում և պահածոյի գործարանում, որովհետև ուտելիքից ես քսան դոլար էի տնտեսում: Դիրեկցիայի համար այդպիսի առատաձեռնությունը ոչինչ էլ չարժեր, քանի որ մենք սնվում էինք խոհանոցում: Մեծանալով, ես ավելի ճարպիկ դարձա, գուցե և կրթությունն էր հաշվի առնվում, հենց դրա համար էլ, երևի, քսան դոլար ավելի տվեցին: Այդպիսի թափով որ գնամ, կատակում էի ինքս ինձ, կյանքի վերջում

կհասնեմ գիշերային պահակի պաշտոնին՝ ամիսը վաթսուն դոլարով կամ, մեկ էլ տեսար, մինչև ոստիկանի աստիճանի, այստեղ արդեն մի հարյուր դոլար կլինի և դեռ ինչ-որ կողմնակի եկամուտներ:

Ամբողջ շաբաթ ուժներս չխնայելով մենք աշխատում էինք: Դրա համար էլ շաբաթ օրը, երեկոյան, բոլորովին ուժից ընկնում էինք: Մի ժամանակ պահածոյի գործարանում ես դժգոհում էի, թե ինձ ստիպում էին աշխատել ձիու նման: Հիմա այդ համեմատությունը իսկապես տեղին էր: Այո, հենց ձիու նման էի աշխատում: Ի միջի այլոց, իմ մտավոր կյանքը հիմա շատ բանով ձիուց չէր տարբերվում: Գրքերը դադարել էին ինձ համար գոյություն ունենալուց: Չնայած ինձ հետ լվացքատուն էի բերել գրքերով լի մի սնդուկ, բայց կարդալ չէի կարողանում: Գիրքը հազիվ բացած՝ քունս տանում էր, իսկ եթե մի քանի էջ էլ կարդում էի, ապա, միևնույն է, ոչինչ չէի հիշում: Ես արդեն չէի փորձում զբաղվել այնպիսի լուրջ գիտություններով, ինչպիսիք, ասենք, քաղաքատնտեսությունը, կենսաբանությունը կամ իրավունքն էին, այլ անցել էի ավելի հեշտ մի առարկայի՝ պատմությանը: Բայց, միևնույն է, քունս տանում էր: Գեղարվեստական գրքեր էի վերցնում՝ նույն հետևանքը: Ի վերջո, երբ սկսեցի քնել մինչև անգամ հետաքրքիր վեպեր կարդալիս, ընթերցանությունը բոլորովին թողեցի: Լվացքատանը աշխատելու ժամանակ ես համարյա ոչ մի գիրք չկարդացի:

Շաբաթ օրը, մինչև երկուշաբթի ազատություն ստանալով, ես միայն քնելու ցանկություն ունեի, մեկ էլ խմելու: Կյանքումս երկրորդ անգամ պարզորոշ լսեցի Գարեհատիկ Ձոնի կանչը: Առաջին անգամ ես հնազանդվեցի այդ ձայնին մտավոր հոգնածության պատճառով, բայց չէ՞ որ հիմա այդպիսի հոգնածություն չկար: Ընդհակառակը, գլուխս թույլ էր, դատարկ, ուղեղս՝ թմրած: Բայց ցավը հենց դրանում էր: Գործուն ու հետաքրքրասեր իմ ուղեղը, որը գրքերի բացած հիասքանչ աշխարհից կենդանություն էր առնում, հիմա տառապում էր անգործությունից ու լճացումից:

Ես, որ արդեն տեսել էի Գարեհատիկ Ձոնի բարեկամությունը, քաջ գիտեի, թե նա ինչ է խոստանում. հարբած զառանցանք, երևակայական հզորություն, մոռացում... Թող այդպե՞ս լինի: Միայն թե չմտածեմ մեքենաների մասին, որոնց մեջ մոլեգնում է ջրի շիթը, պտտվող շոգեգլդոնների և կենտրոնախույս ուժով մղելու մասին, օսլայած վերնաշապիկների և անվերջանալի քաթանե տաբատների մասին, որոնցից սուլոցով գոլորշի է դուրս գալիս, երբ վրայով ետ ու առաջ է գնում իմ տաք արդուկը: Ահա թե ովքեր են ձգտում Գարեհատիկին՝ թույլերը, ձախողակները, իրենց հույսերը կորցրած և ուժերը վատնած մարդիկ: Գարեհատիկի հետ ընկերանալիս նրանց համար ամեն ինչ հեշտանում է: Բայց նա հավիտենական խաբեբա է: Նա կեղծ ուժ և կեղծ ոգևորություն է տալիս, պճնազարդում է այն, ինչը իրականում շատ ու շատ զզվելի է:

Բայց պետք է հիշել, որ Գարեհատիկ Ձոն երկերեսանի է: Նա գրավում է ոչ միայն թույլերին ու հավատը կորցրածներին, այլև առողջությամբ փայլող դյուցազներին, աննկուն կենսասերներին և նրանց, ում համար ատելի է անգործությունը: Նա կարող է բռնել ուզածդ մարդկանց, ինչպես էլ սա իրեն զգալու լինի: Նա կարող է ուզածդ մարդուն գցել իր ցանցի մեջ, զրկելով կամքից և դիմադրելու հնարավորությունից: Նա մարդկանց հին ջահի փոխարեն տալիս է նորը և պատրանքների հրավառություն՝ ձանձրալի իրականության փոխարեն, բայց ի վերջո կոպիտ կերպով խաբում է բոլորին, ովքեր նրա հետ գործ են բռնում:

Սակայն այդ ժամանակ ես ինչո՞ւ չէի խմում: Մի պարզ պատճառով, մինչև ամենամոտ գարեջրատունը մեկուկես մղոն կլիներ: Երևի, ես, այնուամենայնիվ, այնքան, տիրաբար չէի զգում այդ ցանկությունը: Այլապես չէի ծուլանա նույնիսկ տասն անգամ ավելի մեծ տարածություն կտրել: Բայց մի ուրիշ բան էլ ասեմ. գարեջրատունը եթե հենց անկյունում լիներ, ես անպայման կխմեի: Եվ այսպես, կամա թե ակամա, ես թավալ էի գալիս ստվերում, կարդալով կիրակնօրյա թերթերը: Բայց չափազանց հոգնած էի այդ հիմարությունները կարդալու համար: Հումորիստական հավելվածը էլի ոչինչ, գոնե մի քիչ ծիծաղելու բան կար: Նայելով նկարները, շուտով քունս տանում էր:

Չնայած լվացքատանը աշխատելու ընթացքում Գարեհատիկ Ջոնն ինձ չհաղթեց, բայց որոշ հաջողություն ունեցավ: Նրա կանչը հասավ իմ ականջներին: Ես տանջող մի ցանկություն զգացի և ծարավի էի հանգստացնող միջոցի: Նա ինձ հաշտեցրեց այն մտքին, թե ապագայում առանց իրեն յոլա գնալ չեմ կարող:

Բայց ուզում եմ բացատրել, որ այդ ցանկությունը հասունացել էր միայն իմ ուղեղում: Մարմինս ոգելից խմիչք չէր պահանջում: Չէ՞ որ էլեկտրակայանում աշխատելու ժամանակ ոչ մի անգամ խմել չցանկացա, չնայած այնտեղ շատ էի հոգնում: Բայց ահա մտավոր աշխատանքից հոգնելով, ես համալսարանի քննություններից անմիջապես հետո ոնց որ պետքն է խմեցի: Աշխատելով լվացքատանը՝ ես հոգնում էի ֆիզիկապես, բայց ոչ այնպես, ինչպես քարածուխ տեղափոխելու ժամանակ: Էլեկտրակայանում աշխատելիս ես ուրիշ մարդ էի. իմ ուղեղը դեռ քնած էր: Բայց հետո հասցրեցի լինել մտքի ապարանքում: Երբ կաթսաների համար քարածուխ էի տեղափոխում, ուղեղս քնած էր, բայց երբ լվացքատանը գործի անցա, նա ծարավի էր աշխատանքի ու ճանաչման, իսկ ես զոռով մեռցնում էի:

Բայց և այնպես, չնայած լվացքատանը չէի ենթարկվում ոգելից խմիչքի հրապույրին, ինչպես այն ժամանակ Բենիշիում, սակայն ցանկության սերմերը հասունանում էին իմ ուղեղում:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ

Լվացքատնից հետո քույրս և ամուսինը իրենց ծախսով ինձ Քլոնդայկ ուղարկեցին: 1897 թվականի աշնան սկիզբն էր: Ոսկու տենդը այդտեղ դեռ նոր էր սկսվել: Ես քսանմեկ տարեկան էի և աչքի էի ընկնում հիասքանչ առողջությամբ: Հիշում եմ, Դայա-Բիչից սկսած, Չիլկութի լեռնանցքով մինչև Լինդերման լիճը ընկած քսանութմղոնանոց անցման ժամանակ, բեռները շալակելիս, ես ոչ միայն քայլում էի հնդկացիներին հավասար, այլև շատերից առաջ անցա:

Վերջին անցումը՝ կանգառի տեղից մինչև լիճը, երեք մղոն կլիներ: Ես մի օր չորս անգամ լիճը գնացի ու վերադարձա, ամեն գնալիս հարյուր հիսուն ֆունտ բեռ շալակիս: Մի խոսքով, ոտքով ամեն օր դժվարանցանելի արահետով քսանչորս մղոն ճանապարհ էի կտրում, որից տասներկուսը՝ հարյուր հիսուն ֆունտ բեռով:

Գրողի՛ ծոցը թող գնա գրականությունը: Ես նորից արկածներ որոնող դարձա, բայց այս անգամ երազում էի հարստանալ: Էլ ո՛ւր, եթե ոչ այստեղ, պետք է հանդիպեի Գարեհատիկ Ջոնին: Ես նորից հանդիպեցի համարձակ մարդկանց, թափառաշրջիկների, արկածախնդիրների, որոնք հեշտությամբ էին տանում սովը, բայց առանց վիսկիի չէին կարող յոլա գնալ: Վիսկին ճամփորդում էր նրանց հետ միասին, այն դեպքում, երբ այլուրը թաղում էին մի թաքուն տեղ՝ մինչև վերադարձը:

Իմ բախտից, չորս ընկերներիցս երեքը չէին խմում: Ես էլ չէի խմում և մեղանչում էի միայն հազվադեպ, երբ հարբեցող ընկերների էի հանդիպում: Իմ երթային դեղատանը մի քվարտ վիսկի ունեի, բայց վեց ամիս դրան ձեռք չտվեցի: Միայն այն ժամանակ, երբ մենք մի ետ ընկած իջևանատեղ հասանք, շիշը բացեցի բժշկի համար, որն ինչ-որ հիվանդի պիտի վիրահատեր: Ցավերը մեղմացնող ոչ մի ուրիշ միջոց չկար: Բժիշկը և հիվանդը միասին դատարկեցին իմ շիշը, որից հետո սկսվեց վիրահատությունը:

Մի տարի հետո, հիվանդանալով լնդախտով, ես Կալիֆորնիա վերադարձա և իմացա, որ հայրս մեռել է, և այժմ ընտանիքի մեծը ու միակ կերակրողը ե՛ս եմ: Եթե ասեմ, որ Բերինգի ծովից մինչև Բրիտանական Կոլումբիա ես նավի հնոցապան էի, իսկ այդտեղից էլ մինչև Սան-Ֆրանցիսկո հասա նավամբարում, պարզ կդառնա, որ լնդախտից բացի, Քլոնդայկից ոչինչ չբերեցի:

Ծանր օրեր էին: Մինչև անգամ սևագործ բանվորի գործ չկար: Ես ուրախ կլինեի, եթե այդ աշխատանքն էլ գտնեի, որովհետև առաջվա նման ոչ մի մասնագիտություն չունեի: Գրական

գործունեության մասին այլևս չէի մտածում: Դրա հետ հաշիվներս փակել էի: Ես պետք է երեքիս համար ուտելիք ճարեի, ամեն հնարավոր բան անեի, որ անօթևան չմնայինք: Պետք էր ձմեռային հագուստ գնել, քանի որ հագինս ամառային շորեր էին: Այսպես ուրեմն, պետք է անմիջապես աշխատանք գտնել: Ապագաս հետո կորոշեմ. հիմա ավելի անհետաձգելի գործեր կան:

Երբ երկիրը ծանր օրեր է ապրում, ամենից առաջ դժվարության մեջ են ընկնում ոչ որակյալ բանվորները: Ես փորձ չունեի, եթե չհաշվեի լվացքատանը և նավերում կատարած աշխատանքը: Որպես տան գլխավոր, ես հիմա չէի համարձակվի ծով գնալ, իսկ լվացքատանը աշխատել չէի կարող: Հայտարարություն տվեցի երեք թերթերում: Եղա իմ բոլոր փոքրաթիվ ծանոթների մոտ, խնդրելով օգնել աշխատանքի հարցում, բայց այդ բանն անել նրանք կամ չէին ցանկանում, կամ էլ չէին կարող:

Դրությունը հուսահատական դարձավ: Ես գրավ դրեցի ժամացույցս, հեծանիվս և անջրանցիկ անձրևանոցս՝ հորս հպարտության առարկան, որն ինձ էր կտակել: Այդ անձրևանոցը միակ ժառնագությունն էր իմ ամբողջ կյանքում: Հայրս անձրևանոցին տասնհինգ դոլար էր տվել, իսկ վաշխառուն երկու դոլարով էր վերցնում: Հա՛, մոռացա մի բան պատմել. մի անգամ ինձ մոտ եկավ նավահանգստային իմ վաղեմի ծանոթներից մեկը և լրագրում փաթաթված մի ֆրակ բերեց: Նա չկարողացավ հասկանալի ձևով բացատրել, թե այդ կոստյումը ինչպես է ընկել իր ձեռքը, և ես էլ չպահանջեցի մանրամասն պատմել: Որոշեցի այդ կոստյումը վերցնել: Բայց ո՞չ հագնելու համար, աստված ոչ անի: Ես դրա փոխարեն մի կույտ անպետք հնոտի տվեցի, որը գրավ չէին վերցնում: Նա այդ հնոտիքը քիչ-քիչ վաճառեց և դեռ մի բան էլ աշխատեց դրա մեջ: Իսկ ֆրակը ես հինգ դոլարով գրավ դրեցի. ո՞վ գիտե, դա մինչև հիմա էլ կախված է մնացել վաշխառուի տանը: Ես չէի մտածում ֆրակը ետ գնել:

Առաջվա նման աշխատանք չկար: Բայց չէ՞ որ ես աշխատանքային շուկայում օգտավետ ապրանք էի: Քսաներկու տարեկան էի, կշիռս հարյուր վաթսունհինգ ֆունտ էր և ամեն ֆունտը պիտանի էր աշխատանքի: Լնդախտս համարյա թե անցել էր. ես բուժվեցի հում կարտոֆիլ ուտելով: Եղա բոլոր տեղերում, ուր բանվորներ էին պահանջվում, փորձեցի մինչև անգամ բնորդ լինել, բայց արվեստանոցներն առանց ինձ էլ լիքը լցված էին գեղեցիկ կազմվածք ունեցող երիտասարդներով: Ես հայտարարություններ էի տալիս, իմ ծառայություններն առաջարկում զառամյալ հաշմանդամներին խնամելու: Քիչ մնաց զբաղվեի կարի մեքենաների վաճառքով, առանց աշխատավարձի, կոմիսիոն սկզբունքով, բայց իմանալով, որ ծանր օրերին աղքատները կարի մեքենաներ չեն առնում, հրաժարվեցի գործակալի այդ դերից:

Իհարկե, այս թեթևամիտ զբաղմունքներից բացի, ես պատրաստ էի սևագործ բանվորություն անել կամ դառնալ նավահանգստային բեռնակիր, որտեղ ուզում է լիներ: Մոտենում էր ձմեռը, և քաղաքային գործազուրկների բանակին միացան նաև գյուղի բատրակները: Բայց արի ու տես, հակառակի նման, արհմիության անդամ չէի. դրա համար ժամանակ չունեի, երբ զբոսնում էի աշխարհով մեկ կամ էլ գրոհում գիտության բարձունքները:

Ես ոչնչից չէի խորշում, աշխատում էի և՛ օրավարձով, և՛ ժամավարձով: Խուզում էի սիզամարգերի խոտը, կտրատում կանաչ թփերի բնական ցանկապատը, գորգեր էի թափ տալիս: Գնացի փոստատար դառնալու համար քննություն տվեցի և բոլորից հաջող: Բայց, ցավոք, ազատ տեղեր չկային, և ինձ հերթի դրեցին: Սպասելով, մինչև հերթս հասնի, ես կոպեկներ էի աշխատում, ուր որ պատահեր: Սկսեցի թերթի համար հոդված գրել այն մասին, թե ինչպես եմ ճամփորդել Յուբոնով՝ տասնինը օրում 1900 մղոն ճանապարհ կտրելով: Ես հույս ունեի դրա համար տասը դոլար ստանալ, չնայած կյանքումս թերթի համար չէի գրել և չգիտեի, որտեղի՞ց էր այդ համոզմունքը, թե ինձ կվճարեն:

Ավա՜ղ: Առաջին սանֆրանցիսկյան թերթը, ուր ես փոստով ուղարկեցի իմ ակնարկը, մինչև անգամ չպատասխանեց, բայց նյութն էլ չվերադարձրեց: Ակնարկը ինչքան այնտեղ մնաց, այնքան հաստատ համոզվեցի, որ ընդունված է:

Եվ տարօրինա՜կ բան: Ոմանք բախտավոր են ծնվում, իսկ ոմանց էլ բախտը անսպասելի նվերներ է բերում: Բայց իմ ճակատագիրը ուրիշ էր. ինձ դեպի բախտավորությունն էր մղում դառը կարիքը: Ես վաղուց արդեն հրաժարվել էի գրող դառնալու մտքից: Իմ ակնարկը գրեցի միայն մի նպատակով. տասը դոլար շահել, ուրիշ ոչինչ չէի ցանկանում: Տասը դոլարը կօգնի յոլա գնալ, մինչև որ մշտական աշխատանք ստանամ: Ո՜ւհ, եթե փոստում մի տեղ ազատվեր, ա՛յ թե բախտավորություն կլինե՜ր:

Բայց փոստում տեղեր չէին ազատվում և մշտական աշխատանքի ոչ մի հույս չկար. ես շարունակում էի զբաղվել, ինչ որ ձեռքս ընկնում էր, իսկ անգործ օրերին սկսեցի «Յուս քոմփենյըն» ամսագրի համար մոտ հարյուրէջանոց մի վիպակ գրել: Մի շաբաթում վերջացրեցի և մեքենագրեցի: Երևի հենց այդ շտապողականությունն էր պատճառը, որ վիպակս չընդունեցին:

Մինչ իմ ձեռագիրը կգնար ու ետ կգար, ես սկսեցի պատմվածքներ գրել: Դրանցից մեկը ես հինգ դոլարով վաճառեցի «Օվերլենդ մանսլի» ամսագրին: Մի ուրիշ պատմվածքի համար «Բլեք քեթ» ամսագրից քառասուն դոլար ստացա: «Օվերլենդ մանսլին» առաջարկեց ցանկացած պատմվածքի համար՝ յոթ դոլար հիսուն սենթ. տպագրության վարձը:

Ես ետ գնեցի հեծանիվս, ժամացույցս, հորս անձրևանոցը և վարձով մի գրամեքենա վերցրեցի: Վճարեցի խանութի պարտքերը, որոնք ինձ ապառիկ մթերքներ էին տալիս: Փորթուգալացի մի նպարավաճառ երբեք չորս դոլարից ավելի չէր տալիս, իսկ մյուսը, որի ազգանունը Հոսքինս էր՝ հինգ դոլարից ավելի:

Հենց այդ ժամանակ էլ ինձ փոստային վարչություն կանչեցին: Ես շատ դժվար դրության մեջ ընկա: Վաթսունհինգ դոլարի մշտական աշխատավարձը մեծ հրապուրանք էր: Ես չգիտեի, թե ինչ որոշեմ: Երբեք չեմ կարող ներել Օքլենդի փոստային գրասենյակի պետի արարքը: Ես գնացի նրա մոտ, հույս ունենալով, որ կխոսեմ, ինչպես մարդը մարդու հետ: Նրան ազնվորեն բացատրեցի ամեն ինչ. թվում է, թե ես գտել եմ իմ կոչումը, սկսել եմ լավ, բայց վստահություն, այնուամենայնիվ, չեմ զգում: Նա չի՞ կարող արդյոք վերցնել ցուցակի հաջորդ թեկնածուին, իսկ իմ անունը գրել հերթի նրա տեղում:

Պետը կոպիտ ընդհատեց ինձ.

— Ուրեմն, դուք չե՞ք ուզում զբաղեցնել այդ տեղը:

— Ո՜չ, ինչ եք ասում,— առարկեցի ես,— միայն խնդրում եմ թույլ տաք մի քիչ էլ սպասել:

— Կամ հենց հիմա աշխատանքի անցեք, կամ էլ դիմում գրեք, որ հրաժարվում եք,— պատասխանեց նա սառը:

Իմ բախտից, այդ մարդու կոպտությունն ինձ վերջապես զայրացրեց:

— Լա՜վ, հրաժարվում եմ,— ասացի ես:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ

Այդպես ես այրեցի իմ նավերը և սկսեցի զբաղվել գրական գործունեությամբ: Ցավոք, ես միշտ էլ ծայրահեղությունների հակում ունեմ: Սեղանի մոտ նստում էի առավոտից մինչև ուշ գիշեր. գրում էի ու մեքենագրում, սերտում էի քերականություն, վերլուծում էի տարբեր հեղինակների ստեղծագործություններն ու ոճերը, կարդում էի նշանավոր գրողների կյանքի մասին, աշխատելով հասկանալ նրանց հաջողության գաղտնիքը: Հինգ ժամվա քունը ինձ բավական էր, մնացած տասնինը ժամը ես համարյա թե առանց շունչ քաշելու աշխատում էի: Իմ սենյակի լույսը մինչև գիշերվա ժամը երկուսը-երեքը չէր հանգչում. նկատելով այս, մեր առաքինի հարևանուհիներից մեկը սկսեց Շեռլոկ Հոլմսի /Շեռլոկ Հոլմս — անգլիացի նշանավոր գրող Ա. Կոնան-Դոյլի (1859—1930) պատմվածքների հռչակավոր հերոսը/ ոգով ինչ-որ ենթադրություններ անել. ես, իբր,

թղթախաղով եմ զբաղվում և այդ պատճառով էլ ցերեկը երբեք փողոց դուրս չեմ գալիս, իսկ լամպը լուսամուտին դնում է մայրս, որպեսզի իր փուչ զավակը գիշերով տան ճամփան գտնի:

Սկսնակ գրողի համար անփողությունից վատ անեծք չկա. հոնորար չեն ուղարկում, իսկ այն բոլորը, ինչ կարելի է գրավ դնել, արդեն դրված է: Ես համարյա թե ամբողջ ձմեռը անցկացրի մի թեթև կոստյումով, բայց զրկանքների ամենատանջալից շրջանը ինձ սպասում էր հաջորդ ամառ: Արձակուրդների ժամանակ էր, խմբագրությունների աշխատողները մեկնում էին հանգստի, և ոչ ոք ձեռագրով չէր զբաղվում:

Ես տանջվում էի այն բանից, որ ոչ ոք չկար հետը խորհրդակցեի: Ո՛չ մի գրողի, մինչև անգամ սկսնակ, ո՛չ մի լրագրողի ծանոթ չէի: Այնինչ զգում էի, որ գրական հաջողության կարելի է հասնել միայն մի պայմանով, որ մոռանայի այն բոլորը, ինչ սովորեցրել էին միջնակարգում ու համալսարանում: Այն ժամանակ սա ինձ շփոթեցնում էր, իսկ հիմա հասկանալի էր դարձել. պրոֆեսորները և ուսուցիչները չէին կարող մեզ գրել սովորեցնել այնպես, որ կարողանայինք գրավել նոր դարի շեմին կանգնած ընթերցողներին: Նրանք գիտեին միայն իրենց կլասիկան՝ «Ձյան մեջ թափառողները», «Սարտոր Ռեզարթուս» /«Սարտոր Ռեզարթուս» — անգլիացի գրող, նշանավոր ոճաբան Թ. Կառլեյլի (1795—1881) գիրքը/, որը, սակայն, ամերիկյան հրատարակիչների համար 1899 թվականին չծախվող ապրանք էր: Հրատարակիչները ժամանակակից թեմաներով ստեղծագործություններ էին փնտրում և պատրաստ էին դրանց համար հեղինակներին այնքա՜ն առատ վարձատրել, որ եթե համալսարանի պրոֆեսորները գրել կարողանային ինչպես պետքն էր, նրանք կթողնեին իրենց ամբիոնները:

Ես մի կերպ յոլա էի գնում, կոտրելով խանութպանի ու մսագործի համառությունը, որպեսզի մի քիչ էլ սպասեն, նորից գրավ դրեցի ժամացույցս, հեծանիվս և հորս անձրևանոցը: Սակայն աշխատում էի, ինչքան ուժս ներում էր, համարյա թե քնելու ժամանակ չթողնելով: Քննադատներն ինձ մեղադրում էին, որ իմ գրական հերոսը՝ Մարտին Իդենը, շատ շուտ կրթված մարդ դարձավ: Նախկին ծովայինը, որը միայն տարրական կրթություն ուներ, երեք տարում հայտնի գրող դարձավ: Քննադատներն ասում են, որ կյանքում այդպես չի լինում: Բայց Մարտին Իդենը ես եմ: Այդ երեք տարիներից հետո (որոնցից երկուսի ընթացքում ես սովորում էի միջնակարգ դպրոցում ու համալսարանում, իսկ երրորդում ինձ նվիրեցի գրական աշխատանքին), լարված ու անդադար աշխատելով, իմ գործերն սկսեցին տպագրվել այնպիսի ամսագրում, ինչպիսին էր «Ատլանտիկ մանսլին», կատարում էի իմ առաջին գրքի սրբագրությունը, որը տպագրության էր պատրաստում Հաֆթոն ու Միֆֆլին հրատարակչությունը, սոցիոլոգիայի հարցերին նվիրված իմ հոդվածներով հետաքրքրեցի «Կոսմոպոլիտեն» և «Մաք-Քլյուրս» պարբերականներին, հրաժարվեցի նյույորքյան հրատարակչություններից մեկի խմբագիր դառնալու հեռախոսով արված առաջարկությունից և մտածում էի ամուսնանալու մասին:

Այս բոլորը մեծ լարում էր պահանջում: Հատկապես ծանր էր երրորդ տարին, երբ ես գրելու արվեստն էի սովորում: Այդ ընթացքում ուղեղս լարում էի մինչև վերջ, համարյա միշտ անքուն էի մնում, չէի խմում և դրա ցանկությունը չէի զգում: Ոգելից խմիչքը ինձ համար գոյություն չուներ: Երբեմն գլուխս վատ էր աշխատում, բայց երբեք մտքովս չանցավ, որ վիսկին կարող է թեթևացնել: Աստվա՜ծ իմ: Հրատարակչությունից եկած նամակը, որը հայտնում էր, թե իմ աշխատանքը ընդունված է, ամենաիսկական թեթևությունն էր ինձ համար: Բարակ ծրարը, որ ստացել էի առավոտվա փոստով, ավելի առողջություն պարգևեց, քան կտար կես դյուժին քոկթեյլը: Եվ եթե մեջը չեք լիներ՝ կարգին մի գումարով, ապա ամենամեծ կերուխումից էլ ուժեղ կազդեր:

Եվ, ընդհանրապես, իմ կյանքի այդ շրջանում ես դեռ չգիտեի, թե քոկթեյլը ի՜նչ բան է: Հիշում եմ, երբ լույս տեսավ առաջին գիրքս, Ալյասկայի մի խումբ ծանոթներ իմ պատվին Սան-Ֆրանցիսկոյի Բոհեմյան ակումբում հանդիպում կազմակերպեցին: Մենք նստած էինք, սուզված փառահեղ կաշեպատ թիկնաթոռների մեջ, և խմիչքներ էինք պատվիրում: Ես պատկերացում անգամ չունեի, թե լիկյորների ու վիսկիների այդքան տարբեր տեսակներ կան: Ես երբեք լիկյոր չէի խմել և ինձ

համար նորություն էր, որ լիկյորին սոդայաջուր են ավելացնում և խմում են սառույցը մեջը գցած բարձր բաժակներով: Ես չգիտեի, որ «Շոթլանդական» անունը վիսկիին է վերաբերում: Ինձ ծանոթ էին միայն աղքատների խմիչքները, որոնք օգտագործում էին սահմանի երկայնքով և նավահանգստի գինետներում. զզվելի գարեջուր և ավելի զզվելի վիսկի, որոնք անուն էլ չունեին: Ես շփոթվել էի, չգիտեի, թե ինչ պատվիրեմ, և սպասավորը քիչ մնաց ուշաթափվեր, երբ ես ի վերջո կարմիր գինի պատվիրեցի և այն էլ ճաշից հետո:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՅՈԹԵՐՈՐԴ

Ինչքան ճանաչված գրող էի դառնում, այնքան բարձրանում էր իմ նյութական բարեկեցությունը և լայնանում էր մտահորիզոնս: Ինձ ստիպում էի ամեն օր, ներառյալ կիրակին ու տոն օրերը, գրել ու մեքենագրել հազար բառ, առաջվա նման լարված աշխատում էի, գուցե, թերևս, առաջվանից մի փոքր քիչ: Դրա փոխարեն ինձ թույլ էի տալիս հինգ ժամ ու կես քնել. այնուամենայնիվ կես ժամ ավելացրի: Փողի նեղություն չէի քաշում և կարող էի ավելի շատ հանգստանալ: Ես հաճախ էի հեծանիվ քշում, լավ էր, որ դա հիմա միշտ տանն էր, բռնցքամարտով ու սուսերամարտով էի զբաղվում, քայլում էի ձեռքերիս վրա, բարձրության և երկարության թռիչքներ էի կատարում, հրացան էի կրակում, սկավառակ նետում ու լող էի տալիս: Ես նկատեցի, որ հոգնած մարմնին ավելի շատ քուն է հարկավոր, քան հոգնած գլխին: Պատահում էր, որ ուժեղ ֆիզիկական լարումից ես վեց ժամ, երբեմն էլ յոթ ժամ էի քնում: Բայց այդպիսի ճոխություն ինձ հաճախ չէի կարող թույլ տալ: Ինչքա՜ն բան դեռ պիտի իմանայի, ինչքա՜ն բան սովորեի: Արթնանալով յոթ ժամվա քնից հետո, ինձ ոճրագործ էի համարում և օրհնում էի նրան, ով հնարել էր արթնացուցիչը:

Առաջվա նման խմելու ցանկություն չէի զգում: Ամբողջ ժամանակ բարձր տրամադրության մեջ էի, լցված էի պայծառ հավատով: Ես սոցիալիստ եմ, ուզում եմ փրկել մարդկությանը, և ոչ մի վիսկի չէր կարող իմ մեջ հոգեկան այնպիսի մի վայելք առաջացնել, որպիսին ծնում էին սոցիալիստական գաղափարները: Գրական հաջողությունները իմ ձայնին ավելի մեծ հնչեղություն էին տալիս. գուցե ինձ այդպես էր թվում: Համենայն դեպս, գրողի իմ համբավը ավելի շատ ունկնդիրներ էր հավաքում, քան հռետորական իմ հռչակը: Ինձ իրար հետևից տարբեր ընկերություններ ու ակումբներ էին հրավիրում ելույթ ունենալու և շարադրելու իմ գաղափարները: Ես պայքարում էի արդար գործի համար, միաժամանակ պարապում էի ինքնակրթությամբ ու գրելով, և ամբողջովին տարված էի դրանով:

Առաջ շատ քիչ ընկերներ ունեի: Հիմա սկսեցի հասարակության մեջ ավելի շատ լինել: Ամեն կողմից հրավիրում էին, հատկապես կանչում էին ճաշի, և ես շատ ծանոթներ ձեռք բերեցի ու մտերմացա շատ ունևոր մարդկանց հետ: Նրանք համարյա թե բոլորն էլ խմում էին: Խմում էին իրենց տանը և ինձ էլ հյուրասիրում: Նրանց ոչ ոք ոգելից խմիչքների սիրահար չէր համարում. խմում էին չափավոր, և ես հետևում էի նրանց օրինակին, ի նշան իմ համակրանքի և շնորհակալության, այդ հյուրընկալության համար: Բայց խմելն ինձ դուր չէր գալիս, ես կարող էի առանց դրա էլ յոլա գնալ, իսկ եթե հարցնեին, հիշո՞ւմ եմ արդյոք իմ քոկթեյլի կամ սոդայով վիսկիի առաջին բաժակը, ես բաց ճակատով կարող էի պատասխանել՝ ոչ:

Հիմա ես ունեի իմ տունը: Երբ հյուր ես գնում, պետք է քեզ մոտ էլ հրավիրես: Տեսնում եք, չէ՞, թե իմ կենսամակարդակը ինչպե՞ս է փոխվել: Հյուրասիրության ժամանակ ինձ գինի են խմեցնում, ուրեմն, ես էլ պարտքի տակ չպիտի մնամ: Դրա համար էլ գարեջրի, վիսկիի ու սեղանի գինու պաշար տեսա: Այդ ժամանակից սկսած ոչ ոք չի կարող ինձ հանկարծակի բռնացնել:

Բայց այդ ընթացքում էլ ես ոգելից խմիչքի չէի ձգտում: Երբ խմում էին բոլորը, ես էլ էի խմում: Ինձ համար միևնույն էր, թե ինչ խմիչք կլիներ: Ես կուրորեն հետևում էի մյուսներին: Եթե բոլորը վիսկի էին խմում, ես էլ էի խմում, եթե բոլորը գարեջուր կամ սարսապարել էին խմում, ապա այդտեղ էլ ետ չէի մնում: Բայց մենակ երբեք խմիչքի ձեռք չէի տալիս: Իմ առանձնասենյակում միշտ դրված էր

վիսկիի շիշը, բայց ամիսներ շարունակ, նույնիսկ տարիներ, իմ մտքով անգամ չէր անցնում մենակ խմել:

Հրավերքների գնալիս, ես սեղանին նկատում էի հեզահամբույր փայլող քոկթեյլի շիշը և չեմ կարող ասել, թե բավականություն չէի զգում դրանից: Սակայն ես առանց դրա էլ հիանալի յոլա էի գնում, իմանալով, որ անհրաժեշտ ներքին ոգևորության աղբյուրը հենց իմ մեջ է, դրա համար էլ տանը ճաշից առաջ քոկթեյլը անհրաժեշտ բան չէի համարում:

Դրա հետ միասին հիշում եմ և այն, որ մեր տուն էր հաճախում շատ հետաքրքիր, ինձանից տարիքով, վիսկիի սիրահար մի մարդ: Միասին նստած իմ առանձնասենյակում, մենք գցում էինք բաժակ բաժակի հետևից, մինչև որ իմ բարեկամի տրամադրությունը բարձրանում էր, և ես էլ զգում էի, որ չափից շատ եմ խմել: Դուք, գուցե, կհարցնեք, թե ինչո՞ւ էի այդպես անում: Չգիտե՛մ: Երևի հին սովորությամբ, այն օրերի գիշերների պես, երբ ինձ՝ դեռահաս պատանուս, ամոթ էր դատարկ բաժակով նստել հասած տղամարդկանց շրջապատում:

Իսկ ավելի ճիշտ և այն պատճառով, որ ես դադարել էի Գարեհատիկ Ջոնից վախենալուց, մտածելով, որ նա իմ ծառան է և ոչ թե հակառակը: Բայց հենց դրա մեջ էլ թաքնված էր գլխավոր վտանգը: Ինքս ինձ հավատացնում էի, որ դրության տերն եմ. չէ՞ որ նրան կարողանում էի «ոչ» ասել, երբ սովորում էի ու աշխատում: Ուզում էի՝ խմում էի, չէի ուզում՝ չէի խմում. իսկ իմ գլխավոր փաստարկը այն էր, որ ոգելից խմիչքը բոլորովին էլ ինձ չի գրավում: Այդ օրերին ես խմում էի հենց այն նույն պատճառով, որն ինձ ստիպում էր խմել Սքոթի ու հարպունահարի, իսկ ավելի ուշ՝ ոստրեահենների հետ. ես գիտեի, որ տղամարդկանց մեջ այդպես է ընդունված, և ուզում էի նրանց աչքին տղամարդ երևալ: Իմ նոր ծանոթները, որոնք նույնպես արկածներ էին որոնում, միայն թե բանական տիպի, դարձյալ խմում էին: Շա՛տ լավ: Էլ ինչո՞ւ նրանց հետ չխմեմ: Գարեհատիկ Ջոնը ինձ համար սարսափելի չէ:

Այդպիսի պատկերացում ունեի տարիներ շարունակ: Երբեմն ես լավ խմում էի, բայց դրանք բացառիկ դեպքեր էին, որոնք խանգարում էին իմ աշխատանքը, իսկ իմ աշխատանքի նկատմամբ շատ նախանձախնդիր էի: Հիշում եմ, նյութեր էի հավաքում լոնդոնյան չքավորների կյանքից գիրք գրելու համար և բնակություն էի հաստատել Լոնդոնի արևելյան կողմում ու հանդիպելով «հատակի» մարդկանց, նրանց հետ մի քանի անգամ խմեցի: Հետո դրա համար պատրաստ էի ինքս ինձ սպանել: Սակայն այստեղ էլ զիջեցի Գարեհատիկ Ջոնին այն պատճառով, որովհետև նորից էի բռնել արկածների ճանապարհը, ուր առանց նրա մի քայլ անել չես կարող:

Պատահում էր, հույս դնելով իմ փորձին ու այդ մեղավորի՝ Գարեհատիկի հետ ունեցած մոտիկ ծանոթությանը, մրցում էի մյուս տղամարդկանց հետ, թե ո՛վ ամենից շատ կխմի: Անցյալում այդ բանը պատահում էր արկածի ճանապարհներին, աշխարհի տարբեր ծայրերում:

Այն ժամանակ ինձ թվում էր, թե խաղաթղթի վրա է դրվում իմ պատիվը: Տարօրինակ պատիվ, որը մարդուն ստիպում է խմել: Բայց այս անհեթեթ պատկերացումը տեսություն չէր, դա մարմնավորում էր գործողության մեջ:

Մի անգամ, օրինակ, մի խումբ երիտասարդ, կրակոտ հեղափոխականներ ինձ որպես պատվավոր հյուրի հրավիրեցին «մի բաժակ գարեջուր» խմելու: Նման կերուխումի ես երբեք չէի մասնակցել: Ընդունելով հրավերը՝ ես չգիտեի, թե այդ հանդիպման նպատակը ի՞նչ է: Կսկսվեն կրակոտ, հուզված վեճեր, մտածում էի ես, մեկնումեկը, երևի, մի քիչ ավելի կխմի, բայց ինչ ինձ է վերաբերում, ապա սրբությամբ չափը կպահպանեմ: Պարզվեց, որ այդպիսի կերուխումները կազմակերպվում են ձանձրույթը ցրելու համար. այդ սիրելի երիտասարդները միջոց էին փնտրում պատվավոր հյուրերի հաշվին զվարճանալու: Ես հետո իմացա, որ ինձնից առաջ «մի բաժակ գարեջուր» խմելու էր հրավիրվել մի ջահել, տաղանդավոր արմատական, մի մարդ, որը խմելու սովոր չէր, և հրավիրողները նրան այնպես էին հարբեցրել, որ, ինչպես ասում են, իշուն քեռի էր կանչում:

Հայտնվելով նրանց խմբում և հասկանալով հրավերքի նպատակը՝ իմ մեջ տղամարդկային հիմար հպարտության մի զգացում արթնացավ: Ես սրանց ցույց կտամ, այս ծծկերներին: Թող տեսնեն, թե մեզնից ո՛վ է պնդակազմ, ո՛վ է ուժեղ ու դիմացկուն, ո՛վ կլայեկած ստամոքս ունի ու համառ գլուխ: Տեսնենք, թե ո՛վ կհասնի անասունի դրության և ում իսկի վեջն էլ չի լինի: Սրանց տեսե՛ք, այս լակոտները ուզում են հարբեցնել **ինձ**:

Կերուխումը դիմացկունության մրցության նման մի բան էր: Բայց մի՞թե իսկական տղամարդը կարող է հաղթանակի դափնեպսակը առանց պայքարի զիջել: Բը՛ռ, ի՛նչ զզվելի գարեջուր է: Ես արդեն սովորել էի ավելի թանկ տեսակների: Բայց չէ՞ որ մի ժամանակ այսպիսի գարեջուր էի խմում և հաղթում ուժեղներին: Իսկ այս ջահել-ջուհուլին անպայման գրպանս կխոթեմ: Այսպես, ուրեմն, մրցությունը սկսվեց: Դրան մասնակցում էին միայն ուժեղագույնները: Բայց նրանք էլ բաժակները կիսատ էին խմում. միայն պատվավոր հյուրը պիտի մինչև վերջ խմեր:

Իմ գիշերային հսկումները, գրքերը, որոնք կարդացել էի, իմաստությունը, որ յուրացրել էի, բոլորը մի ակնթարթում մոռացվեցին և խեղդվեցին առհավության հրեշավոր ուժով. իմ մեջ կարծես թե արթնացել էր ագահ կապիկը, գլուխ էր բարձրացրել գիշատիչ վագրը, և նրանք թելադրում էին ստոր, անասնական միայն մեկ ցանկություն. ցուցամոլություն անել մյուս անասունների մոտ:

Երբ կերուխումը վերջացավ, ես ամուր քայլերով փողոց ելա, մի բան, որ չէր կարելի ասել իմ սիրալիր հյուրընկալների մասին: Լավ եմ հիշում նրանցից մեկին. նա կանգնել էր անկյունում և վիրավորված լալիս էր, թե ես ինչու հարբած չեմ: Նա պատկերացնել անգամ չէր կարող, թե ինչ ճիգերի գնով, որոնք ծնունդ էին անցած տարիների վարժությունների, ես պահպանում էի իմ գիտակցությունը, ղեկավարում էի մկաններս, զսպում սրտախառնուքը, խոսում կարգին և ստիպում էի, որ իմ ուղեղը բանական ու հետևողական կերպով մտածի: Բայց և այնպես, ես թաքուն հրճվում էի: Նրա՜նք ընկան հիմար դրության մեջ, ոչ թե ես: Ախր ինչպե՞ս չհպարտանամ: Գրողը տանի, ես հիմա էլ հպարտ եմ: Ահա թե մարդը ի՛նչ անհեթեթ էակ է:

Բայց հենց հաջորդ օրը գրեցի սահմանված հազար բառը: Ինձ հիվանդ, թունավորված էի զգում: Դա անտանելի օր էր: Ճաշից հետո միտինգում ելույթ պիտի ունենայի: Ելույթ ունեցա և, կարծեմ, շատ զզվելի խոսեցի: Երեկվա մի քանի բաժակակիցներ նստած էին առաջին կարգերում և ուշադիր հետևում էին ինձ, աշխատելով, երևի, անցած կերուխումի ազդեցությունը նկատել: Չգիտեմ, թե ինչ նկատեցին, բայց ես իսկապես նրանց դեմքերին տեսա որոշ բան և ինքս ինձ սփոփեցի. նրանք հիմա ինձանից լավ չեն զգում:

Ինքս ինձ երդվեցի, որ այլևս չեմ խմի: Եվ իսկապես, այդ օրվանից ոչ ոք «մի բաժակ գարեջրի» ինձ չէր կարող հրավիրել: Ես այլևս խմելու ոչ մի մրցության չմասնակցեցի: Իհարկե, հետո էլ պատահում էր, որ խմում էի, բայց զգույշ էի և խոհեմաբար հրաժարվում էի որևէ մեկի հետ մրցելուց: Այսպես փորձված հարբեցողը ավելի մեծ փորձ է ձեռք բերում:

Օրինակ կբերեմ, որը հաստատում է, թե այդ ժամանակ ես խմում էի հանուն ընկերների: «Տիտանիկով» /«Տիտանիկ» — օվկիանոսային մարդատար շոգենավ, որը 1912 թվականին կործանվեց Ատլանտյան օվկիանոսում, մի խոշոր այսբերգի ընդհարվելու պատճառով/ դեպի Եվրոպա էի լողում: Հենց ճանապարհորդության սկզբից էլ մտերմացա անգլիացի հեռագրիչի և մի ջահել իսպանացու հետ, որը մի տրանսպորտային ֆիրմայի կրտսեր գործընկերն էր: Նրանք միայն «ձիու վիզ» էին խմում. այդպես էր կոչվում անալկոհոլ զովացուցիչ ըմպելիքը, որի մեջ նարնջի մի կտոր էին գցում կամ խնձորի կեղև: Եվ ճանապարհորդության ամբողջ ընթացքում ես էլ միայն «ձիու վիզ» էի խմում: Եթե իմ նոր ընկերները նախընտրեին վիսկին, պետք է ենթադրել, որ ես էլ նրանց հետ վիսկի կխմեի: Բայց չկարծեք, թե ես թուլակամ մարդ եմ: Ո՛չ, պարզապես ինձ համար միևնույն էր: Բարոյական ոչ մի արգելք չէի զգում: Ջահել էի, ուժեղ ու անվախ, և ոգելից խմիչքը իմ կյանքում բնավ ոչ մի դեր չէր խաղում:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ

Բայց ես դեռ պատրաստ չէի Գարեհատիկ Ձոնին իմ բարեկամը անվանելու: Ինչքան տարիքս առնում էի, այնքան մեծանում էին իմ հաջողությունները և շատ փող էի աշխատում: Ինչքան հեշտությամբ էի կարողանում ճանապարհորդության ելնել, այնքան համառորեն իմ կյանքին էր խառնվում Գարեհատիկ Ձոնը: Բայց էլի մեր ծանոթությունը, եթե կարելի է այսպես արտահայտվել, բարև-բարլուսի մնաց: Ես խմում էի միայն ընկերական շրջապատում, բայց երբ մենակ էի լինում, բերանս անգամ չէի առնում: Երբեմն ես թեթև հարբում էի, բայց դա ինձ համար հատուցումն էր հասարակության լավ ընդունելության փոխարեն:

Ես Գարեհատիկ Ձոնին ընկեր դառնալուց այնքան էի հեռու, որ մինչև անգամ հուսահատության պահերին մտքովս անգամ չէր անցնում նրա օգնությանը դիմել: Այդ ժամանակ ինձ հետ անախորժություններ պատահեցին՝ կենցաղային ու սիրային, որոնց մասին այստեղ խոսելը հարմար չէ: Բացի դրանից, ես գաղափարական բնույթի ողբերգություն էի ապրում, որը հետագայում գլխավոր դերը խաղաց:

Ինձ հետ շատ սովորական մի բան պատահեց: Ես տարվել էի պոզիտիվ փիլիսոփայությամբ և բավական ժամանակ պոզիտիվիստ էի: Երիտասարդական ավյունը ինձ ստիպեց կրկնել ջահելների հավիտենական սխալը. առանց մտածելու ընկել էի ճշմարտություն գտնելու հետևից: Ես ճշմարտության վրայից պոկեցի քողը և ետ ընկրկեցի՝ վախեցած նրա սարսափելի դեմքից: Այդպես կորցրեցի ամեն ինչի նկատմամբ ունեցած իմ հիասքանչ հավատը: Իմ մեջ մնաց հավատը մարդկության նկատմամբ միայն, իսկ նա քնած էր խորունկ քնով:

Հոռետեսության երկարատև նոպաները քաջ հայտնի են շատ մարդկանց և չարժե դրա մասին երկար-բարակ խոսել: Բավական է ասել, որ ես էլ շատ տառապեցի: Մտածեցի ինքնասպանության մասին՝ հունական փիլիսոփայի սառնարյունությամբ, և ափսոսացի, որ չեմ կարողանում հեռանալ կյանքից. իմ ձեռքին էր նայում մի ամբո՛ղջ ընտանիք: Բայց զուտ բարոյական հարց է: Ինձ փրկեց կենդանի մնացած մեն-մենակ մի բան՝ **ժողովրդի** նկատմամբ եղած հույսը:

Այն, ինչի համար ես պայքարում էի, հանուն որի անքուն գիշերներ էի անցկացնում, խաբեց ինձ: Հաջողությունը ես արհամարհում էի: Փառքը ինձ համար հանգած մոխիր էր: Այն մարդիկ, որոնք հասարակության ավելի բարձր դասին էին պատկանում, քան նավահանգստային հարբեցողները և նավաստիները, պարզվեց, որ մտավոր տեսակետից շատ աղքատ են: Կանանց սերը նույնպես ոչինչ չարժեր: Մնում էր փողը. բայց չէ՞ որ քնելու համար մի անկողին է պետք, իսկ հարյուրավոր բիֆշտեքսներ միանգամից չես կարող ուտել, չնայած որ փող շատ ունես: Արվեստը և մշակույթը կենսաբանության անսասան փաստերի լույսի տակ ինձ ծիծաղելի էին թվում, իսկ նրանք, ովքեր ներկայացնում էին այդ՝ ավելի ծիծաղելի:

Այս բոլորից կարելի է եզրակացնել, թե իմ հիվանդությունը որքա՞ն հեռուն էր գնացել: Բնավորությամբ ես մարտիկ եմ: Բայց պարզվեց, որ նպատակը չարժե պայքարին: Մնում էր **ժողովուրդը**: Մեկը կա, որի համար կարելի է պայքարել. դա **ժողովուրդն** է:

Բայց մինչև անգամ հուսահատության ամենադժվարին պահերին էլ, թափառելով խավարում և ջղաձգորեն շոշափելով կյանքի հետ կապող վերջին թելը, ես խուլ էի մնում Գարեհատիկի հրավերին: Իմ գլխով երբեք չի անցել այն միտքը, թե ոգելից խմիչքը դեղ է: Կեղծ խոստումներով նա չի կարող ստիպել ինձ, որ ապրեմ: Մի գնդակ ճակատիս, ահա միակ ելքը, ասում էի ինքս ինձ, հուպ տուր ձգանը և կթաղվես փրկարար հավիտենական խավարում: Տանը միշտ էլ շատ վիսկի կար, որը հյուրերի համար էր: Ինքս դրան ձեռք չէի տալիս: Ես սկսեցի վախենալ իմ ատրճանակից: Դա համընկավ այն շրջանին, երբ ձեռք բերեցի իմ պայծառ ու մաքուր իդեալը՝ **ժողովուրդը**, և իմ ցանկություններն ու կամքը, դրան ենթարկեցի: Առաջ ես այնպես էի մահվան ծարավի, որ կարող էի կյանքիս վերջ տալ քնի մեջ անգամ. այժմ, վախենալով դրանից, ատրճանակս տվեցի

ընկերներիս և խնդրեցի թաքցնել, որպեսզի ես, իմ անգիտակից ձգտման պահին, չկարողանամ գտնել:

Բայց **ժողովուրդը** փրկեց ինձ: **ժողովուրդն** ինձ շղթայեց կյանքին: Դեռևս բան կա, որի համար արժե պայքարել. ահա իմ նպատակը: Գրողի ծոցը թող գնան բոլոր նախազգուշական միջոցները: Ծիծաղելով այն բանի վրա, թե խմբագիրներն ու հրատարակիչները ի՞նչ են կանխագուշակում, որն իմ ամենօրյա հարյուրավոր բիֆշտեքսների աղբյուրն էր, հանդուգն կերպով, ինքս էլ չնկատելով այդ, վիրավորելով ուրիշ կերպ մտածող մարդկանց զգացումները, ես կռվի նետվեցի սոցիալիզմի համար: Ավելի չափավոր արմատականները հայտարարում էին, որ իմ հանդուգն, խելագար ոգևորությամբ, իմ վտանգավոր հեղափոխականությամբ ես հինգ տարով ուշացրեցի սոցիալիստական շարժումը Միացյալ Նահանգներում: Հիմա, երբ այնքա՞ն ժամանակ է անցել, ի միջի այլոց կբացահայտեմ իմ խոր համոզմունքը, որ ես, ընդհակառակը, սոցիալիզմի զարգացումը ամենաքիչը հինգ րոպեով արագացրի:

Ժողովո՛ւրդը, և ո՛չ թե Գարեհատիկ Ձոնը փրկեց ինձ ծանր հիվանդությունից: Ապաքինման ժամանակ ինձ իր սերը պարգևեց կինը, ցրելով իմ հոռետեսությունը, որից, ի միջի այլոց, որոշ ժամանակ հետո նորից հեռացրեց Գարեհատիկ Ձոնը: Բայց այժմ ես ճշմարտություն էի փնտրում ոչ պակաս կրքոտությամբ: Ինձ համար սարսափելի էր պոկել նրանից վերջին քողը, մինչև անգամ այն ժամանակ, երբ ես դա հավաքել էի իմ ձեռքում: Ես այլևս չէի ձգտում տեսնել մերկ ճշմարտությունը, ընդհակառակը, իմ մեջ խեղդում էի նրան նորից տեսնելու ցանկությունը: Իսկ այն, ինչ տեսա մի անգամ, աշխատում էի, ինչ ուզում է լինի, դուրս նետել իմ հիշողությունից:

Եվ շատ երջանիկ էի: Ամեն ինչ լավ էր գնում, գոհանում էի մանրուքներով, իսկ կարևորը՝ աշխատում էի լուրջ չընդունել: Առաջվա նման կարդում էի, բայց ոչ նախկին հափշտակությամբ: Ես հիմա էլ շարունակում եմ կարդալ, բայց այլևս չի վերադառնա պատանեկան այն խանդավառ զգացումը, որով բացում էի գիրքը, հույս ունենալով, որ դա ինձ կպատմի կյանքի գաղտնիքների և աստղերի խորհուրդի մասին:

Այս գլխում ուզում էի պատմել, թե այն ծանր հիվանդությունը, որը ժամանակ առ ժամանակ կարող է հայտնվել յուրաքանչյուրիս մոտ, ես կարողացա հաղթահարել առանց Գարեհատիկի օգնության: Սերը, սոցիալիզմը, ժողովուրդը՝ մարդկային բանականության այս առողջ ազդակները ինձ բուժեցին ու փրկեցին: Թերևս, աշխարհում չկա մեկը, որն ինձանից շատ խորշի ոգելից խմիչքից: Ինչևիցե... Բայց դրա մասին հաջորդ գլուխներում: Այնտեղ պարզ կդառնա, թե ի՞նչ վճարեցի հավիտյան մատչելի Գարեհատիկ Ձոնի հետ ունեցած քսանհինգամյա հարաբերության համար:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ

Ապաքինվելով ծանր հիվանդությունից՝ ես խմում էի միայն այն ժամանակ, երբ ընկերների հետ էի լինում: Խմում էի, եթե խմում էին մյուսները, և ես նրանցից ետ չէի մնում: Բայց աննկատելիորեն իմ մեջ սկսեց աճել ոգելից խմիչքի պահանջը: Ֆիզիկակա՞ն պահանջը: Ո՛չ: Ես զբաղվում էի բռնցքամարտով, լող էի տալիս, նավակ էի վարում, ձի քշում, բնության գրկում առողջ կյանք էի ապրում: Բժշկական հանձնախումբը, որին ներկայացա կյանքս ապահովագրելու համար, իմ ֆիզիկական դրությանը ամենաբարձր գնահատականը տվեց: Այժմ, քննելով անցյալը, ես կարծում եմ, որ ոգելից խմիչքների գրգռիչ ազդեցությունը անհրաժեշտ էր իմ նյարդերին և ուղեղին: Կփորձեմ բացատրել:

Բանը մոտավորապես այսպես էր. կենսաբանորեն, ստամոքսի առումով, վիսկին ինձ համար, ինչպես միշտ, զզվելի էր: Ես վիսկիի մեջ համ չէի գտնում, ինչպես գարեջրի մեջ, որից թունավորվեցի հինգ տարեկան հասակում: Գինու մեջ էլ համ չէի գտնում, որից հիվանդացա, երբ յոթ տարեկան էի: Աշխատելիս կամ մենակ կարդալիս, խմելու ցանկություն չէի զգում: Բայց ինձ

ինչ-որ բան էր պատահել. չգիտեմ տարիքի՞ս, թե՞ կենսական իմաստության հետևանքն էր. գուցե և՛ այս, և՛ այն: Գուցե ծերունական թուլություն էր եկել վրաս, բայց ես դադարել էի մարդկային հասարակության մեջ հաճույք և հուզում զգալուց: Աշխարհիկ զվարճալիքները, որոնցով առաջ տարվում էի, հանկարծ կորցրեցին իրենց հմայքը, ձանձրացրին կանանց գռեհիկ ղունղունոցը և բթամիտ անգետների՝ տղամարդկանց, փքուն ու գոռոզ ճառերը: Տե՛ղն է, չպետք է այդքան շատ բան իմանայի: Գուցե քիչ իմանալո՞ւց է: Ասենք, դա կարևոր չէ. ինչ էլ որ լիներ, ես թանկ վճարեցի: Փաստերը իրենք էին խոսում իրենց մասին. մարդկանց հետ շփվելը ավելի քիչ էր ուրախացնում և ջերմացնում իմ սիրտը:

Գուցե առաջ ես սավառնում էի երկնքում, գուցե ինչ-որ բան չէի նկատել: Բայց սա ո՛չ հիստերիկա էր, ո՛չ էլ նյարդային գերհոգնածության հետևանք: Զարկերակս կանոնավոր էր, սիրտս հիանալի դրության մեջ էր, թոքերս՝ նույնպես: Ապահովագրական ընկերության բժիշկները հիացան: Ես ամեն օր գրում էի իմ հազար բառը: Ճշտապահ էի իմ գործերում: Ուրախությամբ էի սպորտով զբաղվում: Քնում էի մանկան նման: Բայց և այնպես...

Բավական էր հայտնվեի մարդկանց մեջ, որ անմիջապես ինձ պատում էր սոսկալի ձանձրույթը, և ես զգում էի, որ արցունքները սկսում են խեղդել: Ինձ չէին զվարճացնում հիմար կատակները, որոնց վրա ծիծաղում էին մյուսները, սևթևեթող հիմարների ճառերը չէին գրավում: Ես դադարել էի կանանցով հետաքրքրվելուց, որոնց արտաքին քնքշության ու անմեղության տակ թաքնված էր պարզ ու հասարակ մի ցանկություն: Կենսաբանական նպատակներին հասնելու համար նրանք իրենց նախամոր՝ էգ կապիկի նման ոչ մի բանի առջև կանգ չէին առնում. կարևոր չէ, թե նրա սերունդները արդեն շրջում են ոչ թե սեփական բրդով ծածկված, այլ փաթաթվում են ուրիշ կենդանիների մորթիների մեջ:

Ես հոռետես չէի, ազնիվ խոսք, չէ՛: Ինձ համար պարզապես ամեն ինչ ձանձրալի էր: Չափազանց հաճախ էի տեսնում միևնույն բանը և չափազանց հաճախ լսում նույն երգերն ու կատակները: Ես այնքան լավ գիտեի «մուսաների շքերթի» այդ աստառը, գիտեի, թե ինչպես է գործի դրվում անդրկուլիսյան այդ մեխանիզմը, որ ոչ մի հոյակապ խաղ, զնգուն երգ ու վարակիչ ծիծաղ չէին կարող իմ ականջներում խլացնել կուլիսի հետևից լսվող հոգնեցուցիչ ճռնչոցը:

Կարիք չկա նայել կուլիսների հետևը, դուք այնտեղ կարող եք պատահաբար տեսնել, թե ինչպես ձեր կողմից աստվածացված տենորը ծեծում է իր կնոջը: Ես նայեցի և դրա համար հատուցեցի: Այդպես վարվեցի գուցե իմ հիմարությա՞ն հետևանքով: Պատճառը այստեղ դեր չի խաղում: Կարևորը հանգամանքներն են, իսկ դրանք այնպիսին էին, որ մարդկանց հետ շփումը ինձ համար քանի գնում, այնքան անդուր ու տանջալից էր դառնում: Դրա հետ միասին երբեմն, խոստովանում եմ, շատ հազվագյուտ դեպքերում, ինձ հիանալի մարդիկ էին պատահում (կամ էլ գուցե ինձ նման միամիտներ), և մենք իրար հետ երազանքի հիանալի ժամեր էինք անցկացնում հիմարների այս դրախտում: Այդպիսի հիասքանչ, գուցե, միամիտ մարդ էր իմ կինը: Նրա հետ երբեք չէի ձանձրանում. նա ինձ համար զարմանքի ու հիացմունքի անսպառ աղբյուր էր: Բայց ես չէի կարող միշտ միայն նրա հետ լինել: Եվ անարդար ու ոչ բանական կլիներ պահանջել, որ նա էլ ամբողջ ժամանակը միմիայն ինձ հետ անցկացներ: Բացի դրանից, ես արդեն մի քանի գրքեր էի լույս ընծայել, որոնք հաջողություն ունեին, իսկ հասարակությունը պահանջում էր, որ գրողն իր ժամանակի որոշ մասը հատկացնի իրեն: Եվ, ընդհանրապես, բոլոր նորմալ մարդիկ, հենց իրենց օգտի և գործի համար, պետք է շփվեն մարդկանց հետ:

Հենց այստեղ է, որ մենք հասանք գործի բուն էությանը: Ինչպես մասնակցել հասարակական կյանքին, եթե հետաքրքրությունը այդ խաղի նկատմամբ կորել է: Օգնությա՞ն կանչել Գարեհատիկ Ջոնին: Քսանհինգ տարի, եթե ոչ ավելի, նա համբերատար սպասում էր, թե երբ պիտի իրեն կանչեմ: Նրա նախկին բազմաթիվ հնարանքները իրենց նպատակին չհասան. ինձ փրկեց իմ երկաթե առողջությունը և իմ բախտավոր աստղը: Բայց նա դեռ շատ բաներ էր թաքցրել: Ես նկատեցի, որ մի քանի քոկթեյլը ինձ ավելի զիջող էր դարձնում հիմարների գռեհկության ու խոսքերի նկատմամբ: Երկու-երեք քոկթեյլը, երբեմն նույնիսկ մեկը, ճաշից առաջ,

օգնում էին ամբողջ սրտով ծիծաղել այն բանի վրա, որը վաղուց արդեն ծիծաղելի չէր: Ինչպես մտրակը, խթանները ձիու համար, իմ հոգնած ուղեղին ու ձանձրացած հոգուն քոկթեյլ էր անհրաժեշտ: Խմիչքը սիրտս բաց էր անում, և ես դառնում էի ուրախ, սկսում էի երգել, ծիծաղել, շատախոսել գեղեցիկ կանանց հետ և կրկնել մաշված ճշմարտությունները՝ ի հաճույս ինքնապաստան միջակությունների, որոնք ոչինչ ուրիշ բան չէին հասկանում:

Առանց քոկթեյլի օգնության ես անհետաքրքիր զրուցակից էի, բայց խմելով, անմիջապես փոխվում էի: Արհեստական կերպով ինձ մտրակելով, թմրեցնելով ուղեղս, ես դառնում էի հասարակության ոգին: Ամեն ինչ սկսվում էր այնպես աննկատելի, որ ես, Գարեհատիկ Ձոնի հին ծանոթս, գլխի չէի ընկնում, թե այդ բանը ո՞ւր է տանում: Սկզբում ես գինի ու երաժշտություն էի ուզում, բայց շատ շուտով՝ կատաղի երաժշտություն ու շա՜տ գինի:

Հենց այդ ժամանակ էլ նկատեցի, որ անհամբեր սպասում էի մինչճաշյա քոկթեյլին: Ես խմել էի ուզում և այդ բանը հասկանում էի: Որպես զինվորական թղթակից Հեռավոր Արևելք ընկնելով, ես սկսեցի մի տուն հաճախել. ո՛չ միայն ճաշի բոլոր հրավերներն էի ընդունում, այլև սովորություն դարձրի կանոնավոր կերպով այդտեղ գնալ և ցերեկվա ժամերին: Տանտիրուհին հիասքանչ մի կին էր, բայց ես նրա համար չէի գնում: Պատճառն այլ էր. այդ կինը, ինչպես ոչ ոք այդ հսկայական քաղաքում, կարողանում էր քոկթեյլ պատրաստել, իսկ ազնվությունը պահանջում է ասել, որ ալկոհոլային խառնուրդների պատրաստման արվեստը օտարերկրացիների մեջ այստեղ շատ բարձր էր: Ո՛չ ակումբում, ո՛չ հյուրանոցներում, ո՛չ էլ մասնավոր տներում այդպիսի խմիչքներ չէին տալիս: Քոկթեյլն այս տանը աչքի էր ընկնում առանձնահատուկ նուրբ համով: Դրանք գլուխգործոցներ էին: Նրանցից նույնիսկ չէր զգացվում ինձ համար ատելի սպիրտի հոտը, բայց դրա փոխարեն չտեսնված պտտում էր գլուխս: Սակայն ես խմում էի հանուն լավ տրամադրության: Թողնելով այդ քաղաքը՝ ես մի քանի ամիս ուղեկցում էի ճապոնական բանակի արշավին, հարյուրավոր կիլոմետրեր անցնելով բրնձի դաշտերով ու լեռնանցքներով, մինչև որ Մանջուրիա մտանք: Այդ ընթացքում ես չէի խմում: Իմ ուղեբեռի մեջ միշտ էլ կարելի էր մի քանի շիշ վիսկի գտնել, բայց ինձ համար ոչ մի շիշ չբացեցի, մինչև անգամ չհիշեցի դրանք: Հասկանալի է, եթե ճամբար էր ընկնում որևէ սպիտակ մարդ, բացում էի շիշը, և մենք, տղամարդկային սովորությամբ, միասին խմում էինք: Չէ՞ որ եթե ե՛ս նրա մոտ ընկնեի, նա էլ նույն բանը կաներ. ինձ կհյուրասիրեր իր ունեցածով: Ես վիսկին ինձ հետ քարշ էի տալիս հյուրերի համար և այդ պատճառով էլ ծախսերը գրում էի այն թերթի հաշվին, որի ներկայացուցիչն էի:

Հիմա, նայելով ետ, ես կարող եմ հետևել ալկոհոլի նկատմամբ եղած ձգտումի աստիճանական զարգացմանը: Նշանները արդեն այն ժամանակ էին երևում, աննշան միջադեպեր, որոնք ինձ լուրջ չէին թվում:

Մի այսպիսի օրինակ կբերեմ. վաղուց արդեն սովորություն էի դարձրել ամեն ձմեռ, վեց կամ յոթ շաբաթ, անցկացնել Սան-Ֆրանցիսկոյի ծոցում նավարկելով: Իմ արագաշարժ «Ծովափրփուր» յախտայում հարմար մի նավախցիկ կար, վառարանով: Մի կորեացի պատանի ինձ համար ուտելիք էր պատրաստում, և ես սովորաբար հրավիրում էի իմ ընկերներից որևէ մեկին, որպեսզի ինձ հետ բաժանի նավարկության բոլոր հաճույքները: Գրամեքենան անփոփոխ ճամփորդում էր ինձ հետ, պարտադիր հազար բառը գրում էի ամեն օր: Այդ անգամ, որի մասին հիմա պիտի պատմեմ ինձ հետ վերցրեցի Քլաուդսլիին ու Թոդդին: Թոդդին իմ յախտայում առաջին անգամ էր լինում: Քլաուդսլին առաջ էլ էր ինձ հետ ճամփորդել, և ես գիտեի նրա ճաշակը: Նա գարեջուր էր սիրում, այնպես որ սովորաբար ես գարեջրի պատրաստություն էի տեսնում, և մենք խմում էինք միասին:

Բայց այս անգամ ուրիշ բան ստացվեց: Իմ երկրորդ ընկերոջը իզուր չէր, որ Թոդդի էին ասում. նա կարողանում էր հիանալի փունջ կամ թոդդի պատրաստել: Իմանալով այդ՝ ես մի քանի գալոն վիսկի բերեցի: Ավա՜ղ, այդ վիսկին քիչ էր: Ստիպված էինք բազմիցս լրացնել պաշարները, քանի որ ես ու Քլաուդսլին կպանք այդ այրող թոդդիից, որը դիվային համ ուներ ու հիանալի բարձրացնում էր տրամադրությունը:

Ես սիրեցի այդ խմիչքը և արդեն սկսել էի անհամբեր սպասել, թե երբ պիտի ընկերս իր սովորական արարողությունը սկսի: Մենք խմում էինք ճիշտ նույն ժամին. մի-մի բաժակ նախաճաշից, ճաշից ու ընթրիքից առաջ, իսկ վերջին բաժակը՝ քնելուց առաջ:

Մենք այնպես չէինք խմում, որ հարբենք, բայց օրը չորս անգամ մեր տրամադրությունը բարձրանում էր: Երբ Թոդդիին անսպասելի գործով Սան-Ֆրանցիսկո կանչեցին, ես ու Քլաուդսլին ստիպեցինք կորեացի սպասավորին՝ պատրաստել մեր սիրելի խմիչքը այն եղանակով, որը մեզ կտակել էր մեր հեռացած ընկերը:

Բայց այս բանը շարունակվեց այնքան, ինչքան ես յախտայի վրա էի: Տանը, նախաճաշից և քնելուց առաջ, չէի խմում: Այդ ժամանակվանից սկսած ես ընդհանրապես այրող թոդդի այլևս չէի խմում, իսկ չէ՞ որ տարիներ են անցել: Բայց և այնպես դա ինձ շատ էր դուր գալիս. դրանից հետո մարդ այնպե՛ս լավ և ուրախ էր զգում: Իրեն հատուկ խարդավանքով՝ կամաց-կամաց և աննկատ, թոդդին համախոհներ էր հավաքում Գարեհատիկ Ջոնի ճամբարի համար: Առայժմ ես միայն մի թեթև մարմաջ էի զգում, որին վիճակված էր դառնալ ահեղ, անհագուրդ մի կիրք: Իսկ ես, որ այսքան տարի կողք կողքի ապրել էի Գարեհատիկի հետ և ծիծաղել էի ինձ գրավելու նրա իզուր փորձերի վրա, այդ բանը չգիտեի ու չէի էլ կասկածում:

ԳԼՈՒԽ ԵՐԵՍՈՒՆԵՐՈՐԴ

Ծանր հիվանդությունից ինձ օգնեց փրկվել փոքրիկ մի բան՝ գրքերի ու կարևոր խնդիրների հետ չկապված զանազան զբաղմունքներով բավարարվելու իմ նոր ունակությունը: Ես լողավազանում բռնոցի էի խաղում, օդապարուկներ էի բաց թողնում, ձի էի քշում, զանազան դժվար հանելուկներ էի լուծում: Ինձ այլևս քաղաքային կյանքը դուր չէր գալիս: Լուսնի Հովտում գտնվող իմ ֆերման իսկական դրախտ էր թվում: Այլևս քաղաք չէի ուզում վերադառնալ: Ինձ քաղաքում գրավում էին միայն երաժշտությունը, թատրոնը և թուրքական բաղնիքը:

Ես լավ էի ապրում: Շատ էի աշխատում, բայց և շատ էլ զվարճանում էի ու ինձ բախտավոր էի զգում: Մեծ մասամբ վեպեր էի կարդում և շատ քիչ՝ լուրջ գրքեր: Ընդհանրապես առաջվանից ավելի քիչ էի աշխատում: Ինձ դարձյալ հետաքրքրում էին ամեն բնույթի հիմնական հարցերը, բայց դա, այսպես ասած, խոհեմ հետաքրքրություն էր: Ես արդեն մի անգամ տուժեցի, երբ փորձ արեցի պոկել քողը՝ մերկ ճշմարտությունը տեսնելու համար: Կյանքի հետ ունեցած իմ նոր հարաբերությունների մեջ մի փոքր կեղծիք կար, մի փոքր երկերեսանություն, բայց դա ապրել ցանկացող մարդու խորամանկություն էր: Ես գիտակցաբար աչքերս փակում էի այն բանի վրա, որը կենսաբանական օրենքների կոպիտ արտահայտություն էի համարում: Վերջ ի վերջո, ես աշխատում էի հաղթահարել հիմար սովորույթը, փոխել մտքի սխալ ուղին: Կրկնում եմ, ես բախտավոր էի: Մտքումս ծանրութեթև անելով իմ անցյալը և անաչառ վերլուծելով, հասկացա, որ դա, անտարակույս, իմ կյանքի ամենաբախտավոր ժամանակաշրջանն էր:

Բայց մոտենում էր հատուցման ժամը՝ անհասկանալի, անմիտ: Ինձանից պահանջվում էր հատուցում քսան տարի Գարեհատիկ Ջոնի հետ տափկնոցի խաղալուս համար: Հաճախ մեզ մոտ, ֆերմա էին գալիս իմ ընկերները և մի քանի օրով հյուր էին մնում: Նրանցից ոմանք ոգելից խմիչք չէին խմում: Բայց նրանք, ովքեր խմում էին, մի քանի օր դժվարությամբ էին դիմանում առանց խմիչքի: Ես չէի կարող խախտել հյուրասիրության օրենքները և զրկել նրանց իրենց սովորական հաճույքից: Եվ ես գինու նկուղ պատրաստեցի՝ հատկապես հյուրերիս համար:

Ինձ քոկթեյլները այնքան էլ չէին հետաքրքրում, որ ցանկանայի իմանալ այդ խառնուրդների պատրաստման եղանակը: Դրա համար էլ պայմանավորվեցի Օքլենդի գարեջրատան տիրոջ հետ, որ ինձ համար մեծ քանակությամբ քոկթեյլներ կպատրաստի և ֆերմա կուղարկի: Երբ հյուր չէր լինում, ես չէի խմում: Բայց հետո սկսեցի նկատել, որ վերջացնելով առավոտվա աշխատանքը, ուրախանում էի, որ տանը հյուր կա, քանզի առիթ էր ընկերներով քոկթեյլ խմելու:

Սակայն ես հարբեցողությունից այնքան հեռու էի, որ մինչև անգամ մի բաժակ քոկթեյլը բարձրացնում էր իմ տրամադրությունը: Մի բաժակը բավական էր, որ հաճելի մտքեր ու ծիծաղ արթնացներ, կանխավ ըմբոշխնելով ուտելու հիասքանչ պահը: Մյուս կողմից, իմ ստամոքսն այնպես համառ էր դիմադրում ոգելից խմիչքին, որ քոկթեյլի ազդեցությունը միշտ էլ թեթև ու կարճ ժամանակով էր լինում: Մի անգամ, իմ հյուրերից մեկը, ոչ դես, ոչ դեն, երկրորդ բաժակը խնդրեց: Ես էլ ստիպված կրկնեցի: Երկրորդ բաժակը առաջինից ավելի տաքացրեց ինձ, ծիծաղս ավելի բարձր ու սրտանց դարձավ: Այդպիսի տպավորությունները չեն մոռացվում: Երբեմն ինձ թվում էր, որ ես իսկականից սկսեցի խմել այն պատճառով, որ շատ երջանիկ էի:

Հիշում եմ, ես ու Չարմիանը ձիով զբոսանքի գնացինք լեռները: Ծառաները ամբողջ օրը ազատ էին արձակված, և մենք ինքներս պետք է տաքացնեինք ընթրիքը, երբ երեկոյան տուն վերադարձանք: Մենք հաճույքով գործի անցանք խոհանոցում: Ես երանության գագաթնակետին էի: Գրքերը և բարձրագույն ճշմարտությունները կարծես դադարեցին գոյություն ունենալուց: Իմ մարմինը շնչում էր առողջությամբ և դուրեկան հոգնություն էի զգում երկար ճամփորդելուց հետո: Հիասքանչ օր էր: Երեկոն նույնպես: Ինձ հետ էր իմ սիրած կինը, ամենալավ բարեկամս, և մենք իրար հետ ուրախ առանձնության մեջ քեֆ էինք անում: Ոչ մի անախորժ բան: Բոլոր պարտքերը մուծված էին, և ես չգիտեի, թե ինչ անեմ մնացած փողը: Ապագան ավելի ու ավելի լայն էր փռվում իմ առաջ: Ի՞նչ համեղ է տապակվող մսի հոտը: Մենք բարձրաձայն, ուրախ ծիծաղում էինք: Ես շատ սոված էի, համեղ ընթրիքի համար ուղղակի բերնիս ջուրը գնում էր:

Ես այնքան լավ էի զգում, որ հոգուս խորքում հանկարծ ցանկություն առաջացավ ավելի ուժեղացնել այդ զգացումը: Այնքան երջանիկ էի, որ ցանկանում էի ավելի երջանիկ լինել: Եվ ես գիտեի, թե դրան ինչպես պետք է հասնել: Ինձ այդ բանը սովորեցրել էին Գարեհատիկի հետ ունեցած հազարավոր հանդիպումները: Մի քանի անգամ դուրս եկա խոհանոցից, և ամեն անգամ շշի քոկթեյլը մի բաժակով պակասում էր: Դա հիասքանչ արդյունք տվեց. ես գինովցած չէի, հարբած չէի, բայց տրամադրությունս ավելի էր բարձրացել, ավելի ուրախ էի: Առաջ իմ կյանքը ինչքան հիասքանչ էր, հիմա ավելի հիասքանչ էր թվում: Դա կյանքիս ամենապայծառ պահերից մեկն էր: Բայց տարիներ անց, ինչպես շուտով ինքներդ կտեսնեք, ես ստիպված էի հատուցել դրա համար: Այսպիսի պահերը անկրկնելի են, չնայած մարդը ոչ խելացի մի հեքիաթ է հնարել, իբր թե համանման պատճառները միշտ էլ համանման հետևանքներ են ծնում: Դա բոլորովին էլ այդպես չէ: Մի՞թե հաշիշի հազարերորդ ծխամորճը նույն հաճույքն է պատճառում, ինչ որ առաջինը: Մի՞թե մի տարի հարբեցողությամբ զբաղվելուց հետո մեկ քոկթեյլը այնպես է տաքացնում, ինչպես մի քանիսը:

Մի անգամ, վերջացնելով առավոտյան աշխատանքը, ես մենակ, ճաշից առաջ, քոկթեյլ խմեցի: Այդ օրվանից սկսեցի միշտ ճաշից առաջ մի-մի բաժակ խմել, մինչև անգամ, երբ տանը հյուր չէր լինում: Հենց այստեղ էլ նա՝ Գարեհատիկ Ձոնը ճանկեց ինձ: Ես սկսեցի կանոնավոր խմել, իսկ որ գլխավորն է՝ մենա՛կ: Արդեն խմում էի ոչ թե ախորժակս բացելու, այլ այն ներգործության համար, որը ինձ վրա թողնում էր ոգելից խմիչքը:

Հիմա, ամեն օր ճաշից առաջ խմել էի ուզում: Եվ երբեք էլ մտքովս չէր անցնում, թե ավելի լավ է հրաժարվեմ դրանից: Չէ՞ որ խմում էի իմ հաշվին: Այնքան փող ունեի, որ մի հազար շիշ կարող էի առնել: Միայն թե ցանկություն լիներ: Եվ ի՞նչ բան է մեկ քոկթեյլը այնպիսի մարդու համար, որը տարիներ շարունակ միշտ էլ ավելի թունդ խմիչքներ է փորձել:

Ֆերմայում ես օրվա հետևյալ բաժանումն ունեի. առավոտվա ժամը չորսից կամ հինգից անկողնում աշխատում էի սրբագրության վրա, ութ անց կեսից նստում էի գրասեղանի մոտ և մինչև ինը աչքի էի անցկացնում փոստը, իսկ իննին անպայման սկսում էի գրել: Տասնմեկի մոտերքը, երբեմն քիչ շուտ, երբեմն քիչ ուշ, իմ հազար բառը արդեն պատրաստ էր: Մի կես ժամ էլ կորցնում էի սեղանս կարգի բերելու վրա, և դրանով իմ աշխատանքային օրը վերջանում էր: Տասնմեկ անց կեսին պառկում էի ցանցաճոճի մեջ, ծառերի տակ, և նամակներ ու թերթեր էի կարդում: Տասներկուսն անց կեսին ճաշում էի, ճաշից հետո լողանում էի կամ էլ ձի էի քշում:

Մի անգամ քոկթեյլ խմեցի շատ անպատեհ ժամանակ՝ տասնմեկ անց կեսին, ցանցաճոճում պառկելուց առաջ: Ես սկսեցի այդ ժամերին էլ խմել, դրա հետ միասին, իհարկե, չհրաժարվեցի սովորական մինչճաշյա քոկթեյլից: Շատ չանցած ես նկատեցի, որ նստած գրասեղանի մոտ, աշխատանքի ամենաթունդ պահին, անհամբեր սպասում եմ այն քոկթեյլին, որը կարելի էր խմել տասնմեկն անց կեսին:

Հենց այդ ժամանակ էլ ինձ համար պարզ դարձավ, որ ոգելից խմիչք եմ ուզում: Դեհ, ի՜նչ մեծ չարիք է որ: Ես Գարեհատիկ Ջոնից չե՛մ վախենում: Նրան վաղուց եմ սովոր: Ես խմում եմ խելքով և զգուշությամբ: Եվ երբեք չափից ավելի չեմ խմի: Ինձ հայտնի է, թե ինչքա՜ն վտանգավոր է ոգելից խմիչքը և ինչի է հասցնում: Հիշում եմ, թե Գարեհատիկ Ջոնը ինչպես էր փորձում ինձ կործանել: Բայց այդ բոլորը շատ վաղուց էր: Խմել գիտակցությունը կորցնելու աստիճա՞ն: Մինչև անզգայության հասնե՞լը: Ո՛չ: Ես ուզում եմ, որ ջերմանամ և ուրախ լինեմ, որ ծիծաղելու ցանկություն ունենամ, որ լավ աշխատեմ: Ճիշտն ասած, ահա հենց դրա համար էլ խմում եմ: Կարծում էի, թե իշխանություն ունեմ և՛ ինձ վրա, և՛ Գարեհատիկի:

ԳԼՈՒԽ ԵՐԵՍՈՒՆՄԵԿԵՐՈՐԴ

Ավա՜ղ: Միևնույն գրգռիչ միջոցը արագ դադարում է առաջվա ներգործությունն ունենալուց: Կամաց-կամաց ես սկսեցի նկատել, որ քոկթեյլը արդեն առաջվա ներգործությունը չունի: Առաջին բաժակից հետո ես ոչ մի ազդեցություն չէի նկատում. ո՛չ ջերմություն, ո՛չ էլ ուրախ տրամադրություն: Առաջվա արդյունքին հասնելու համար պահանջվում էր արդեն երկու-երեք բաժակ: Ես էլ հենց դրան էի ձգտում: Տասնմեկն անց կեսին նամակները ձեռքիս դեպի ցանցաճոճը գնալիս՝ խմում էի առաջին բաժակը, իսկ մի ժամ հետո, ճաշից առաջ, խմում էի երկրորդը: Հետո սկսեցի ցանցաճոճից մի տասը րոպե շուտ վեր կենալ, որպեսզի մինչև ճաշը երկու բաժակ էլ գցեմ: Եվ այսպես, դա սովորություն դարձավ. երեք քոկթեյլ աշխատանքի և ճաշի միջև ընկած ժամանակամիջոցում: Ամեն օր և այն էլ մեն-մենակ խմելու այս սովորության մեջ ոչ մի կործանարար բան չկար:

Ես հաճույքով խմում էի հյուրերի հետ, բայց երբ մարդ չէր լինում, մենակ էի խմում: Հետո կատարեցի հաջորդ քայլը: Եթե հյուրը չափավոր մարդ էր, ես երկու բաժակ էի խմում, մինչ նա մի բաժակ էր խմում. առաջինը՝ նրա հետ միասին, երկրորդը՝ նրանից ծածուկ: Երկրորդ բաժակը ես **թաքուն** էի խմում, և այն էլ մեն-մենակ, նույնիսկ եթե իմ հյուրն էր լինում բարեկամս, ընկերս, որի հետ կարելի էր միասին խմել: Բայց Գարեհատիկ Ջոնը այդտեղ էլ անմիջապես արդարացում էր գտնում. լավ չէ հյուրընկալության անվան տակ հարբեցնել հյուրերին: Կսկսես համոզել, նա էլ կխմի, ի՞նչ կա որ: Այլևս ի՜նչ է մնում, եթե ոչ երկրորդ բաժակը ծածուկ խմել. մեղավոր չեմ, որ լավ զգալու համար ինձ երկու անգամ ավելի շատ է պետք:

Խնդրում եմ, սրանից հետևություն չանեք, թե ես հիմար կամ թուլակամ փալասի մեկն եմ: Համընդհանուր հասկացությամբ ես կյանքում առաջ եմ գնացել և եթե անհամեստություն չէ, առաջ եմ գնացել անսովոր ձևով, իսկ դրա համար խելքի ու կամքի մեծ ուժ էր հարկավոր: Իմ օրգանիզմը երկաթից էր. նա այնպիսի բաներ էր տարել, որոնցից թույլերը ճանճերի նման սատկում են: Սակայն, ինչ պատմում եմ, ճի՜շտ է, և պատահել է ինձ ու իմ գովված օրգանիզմին: Սա թեորիա չէ, ոչ էլ վերացական սխեմա, այլ ինքը՝ կյանքը, որը միայն ընդգծում է Գարեհատիկի իշխանությունը: Բարբարոսության այդ ծնունդը ալեհեր ու վայրի հին ժամանակներից ամուր բռնել է մարդկության կոկորդից, և նրանից հրեշավոր հարկ է գանձում, խժռելով երիտասարդությունը, քայքայելով ուժերը, սպանելով ավյունը, կործանելով մարդկային ցեղի լավագույն ծաղիկները: Եվ մենք բոլորս միասին չենք կարող նրան ոչնչացնել:

Այսպես, վերադառնում եմ իմ խոստովանությանը: Կեսօրից հետո ես երկար լող էի տալիս ջրավազանում, հետո ձիով մի հիասքանչ զբոսանք էի կատարում լեռներում կամ Լուսնի Հովտում և տուն էի վերադառնում այնպիսի հրաշալի տրամադրությամբ, որ ցանկանում էի ավելի լրիվ

զգալ իմ բախտավորությունը: Ես գիտեի, թե դրա համար ի՞նչ է պետք. ընթրիքից առաջ՝ քոկթեյլ: Բայց ոչ թե մեկ բաժակ, այլ ամենաքիչը՝ երկու-երեք: Ասենք, ինչո՞ւ ոչ: Չէ՞ որ միայն այդպես ես զգում, թե ապրում ես, իսկ ես դեռ փոքր տարիքիցս կյանքի ջե՛րմ երկրպագուն եմ: Շուտով իրիկնային այս կոնծաբանությունը սովորություն դարձավ:

Հիմա ես մշտապես խմելու պատճառ էի փնտրում: Իսկ պատճառ կարող էր ծառայել ի՞նչ ուզում ես. լավ ընկերների շրջապատը, թեթև հուզումը, որը հետևանք էր մառան կառուցող ճարտարապետի կամ գողաբարո քարտաշի հետ եղած խոսակցության, սիրելի նժույգի կորուստը, որի փորը պատռվել էր փշալարին քսվելով, առավոտյան փոստով խմբագրություններից ստացված ուրախ լուրերը... Արտը խախուտ, մահանան կարկուտ. առիթ միշտ էլ կար: Խմելու տիրական ցանկությունը որոշում էր ամեն ինչ: Այսպես ուրեմն, երկու տասնյակ տարի Գարեհատիկ Ջոնի հետ տափկնոցի խաղալուց հետո, երբ ես փախչում էի նրանից կամ եթե խմում էի՝ խմում էի չցանկանալով, հիմա ակամա տարվեցի նրանով: Իմ այդ թուլությունը ծնունդ էր հենց իմ սեփական ուժի. եթե սովորական մարդուն բավական էր մեկ բաժակը, ապա ինձ, որպեսզի զգամ այն, ինչին ձգտում էի, պետք էր երկու, երեք, չորս անգամ ավելի շատ:

Ես միայն մի կանոնի էի հետևում. ոգելից խմիչքի ձեռք չէի տալիս, մինչև իմ հազար բառը չէի գրում: Քոկթեյլը կարծես թե առանձնացնում էր օրվա աշխատանքային մասը՝ առաջիկա հանգստից: Այդ ժամանակ էլ աշխատանքը մի կողմ էր վանվում իմ գիտակցությունից: Ոչինչ այլևս ինձ չէր անհանգստացնում մինչև առավոտ, երբ ուղիղ ժամը իններին ես նստում էի գրասեղանի մոտ և սկսում էի աշխատել: Լրիվ անջատվելու այս նոր կարողությունը ես շատ էի գնահատում: Այն պատը, որ իմ առջև բարձրացնում էր ոգելից խմիչքը, ինձ հնարավորություն էր տալիս պահպանել ստեղծագործական ավյունը: Գարեհատիկ Ջոնը այնքան էլ սարսափելի չէ, որքան պատկերացնում են: Նա շատ օգտակար ծառայություններ է մատուցում և սա էլ դրանցից մեկն է:

Ես շարունակում էի գործեր ստեղծել, որոնք լի էին մաքրությամբ, անկեղծությամբ: Այնտեղ մազաչափ անգամ հոռետեսություն չկար: Հիվանդությունը ինձ ցույց տվեց կյանքի ճանապարհը: Ես հասկացա, որ առանց երազանքի յոլա գնալ չի լինի և սկսեցի գովերգել երազանքը: Հիմա էլ այդպես եմ գրում. մաքուր, առույգ, լավատեսական գործեր, որոնք կյանքի սեր են ներշնչում: Եվ քննադատները չեն հոգնում ապացուցելուց, թե ես լի եմ դյուցազնական կենսահաստատ ուժով և ինքս էլ գտնվում եմ երազանքի գերության մեջ, որը դրված է իմ ստեղծագործության հիմքում:

Ես նյութիցս շեղվեցի, բայց ցանկանում եմ մի անգամ էլ հարցնել ինձ, ինչի մասին արդեն հազար անգամ հարցրած կլինեմ: Ինչո՞ւ եմ խմում: Հանուն ինչի՞: Ես երջանիկ եմ: Գուցե չափից դո՞ւրս երջանիկ: Ես առողջ եմ: Գուցե չափից դո՞ւրս առողջ: Իսկապես, ես այդքան ավելորդ ավյո՞ւն ունեմ: Դժվա՛ր է ասել: Չգիտե՛մ: Ես կարող եմ մի ենթադրություն անել, որ ինձ ամենաճշմարիտն է թվում. մեղավոր է իմ երկարատև ընկերությունը Գարեհատիկ Ջոնի հետ: Շատ մարզվելուց հետո ձախլիկը կարող է օգտագործել և աջ ձեռքը: Գուցե ինձ էլ հենց այդպե՞ս է պատահել: Գուցե ես հարբեցող դարձա երկարատև փորձերից հետո՞:

Բայց չէ՞ որ ես շա՛տ երջանիկ էի: Առողջացել էի և սերն ինձ այցելության էր եկել: Ես շատ փող էի վաստակում, բայց դրա համար քիչ ճիգեր էի թափում: Ավյունը ինձանից աղբյուրի նման էր հորդում: Ես քնում էի մանկան նման: Շարունակում էի գրքեր գրել, որոնք հաջողություն ունեին և քաղաքական վեճերում հակառակորդներիս համոզում էի փաստերով, որոնք օր-ավուր իմ մեջ ավելի ու ավելի էին հաստատում ճշմարիտ լինելու վստահությունս: Տխրությունը, թախիծը, հուսահատությունը ոչ մի վայրկյան չէին մռայլում իմ կյանքը: Ես ամբողջ ժամանակ բախտավոր էի: Կյանքը զրնգում էր երջանիկ հիմնի նման: Ափսոսում էի նույնիսկ ժամանակը քնի վրա ծախսել, քանի որ այդ ընթացքում ինձ զրկում էի այն հաճույքից, որը զգում էի արթուն վիճակում: Բայց և այնպես, խմում էի: Գարեհատիկ Ջոնը արդեն չարախնդորեն ձեռքերն էր շփում:

Որքան շատ էի խմում, այնքան շատ խմիչք էր ինձ անհրաժեշտ լինում նպատակիս հասնելու համար: Լուսնի Հովտից քաղաք գալով և ճաշելով ռեստորանում, ես քոկթեյլ էի պատվիրում, բայց

դա ինձ վրա ոչ մի ազդեցություն չէր թողնում: Չէր հարբեցնում: Արդեն ռեստորան գնալու ճանապարհին ես խմելու պատճառ էի փնտրում: Երբեմն դա երկու-երեք քոկթեյլ էր, իսկ երբ ընկերների էի հանդիպում, ապա՝ չո՛րս, հի՛նգ, վե՛ց. արդեն չէի էլ հաշվում: Մի անգամ ես ինչ-որ տեղ էի շտապում և չհասցրի հանգիստ մի քանի բաժակ խմել: Իմ գլխում մի փայլուն միտք ծագեց. կրկնակի քոկթեյլ պատվիրել: Այդ օրվանից սկսած, եթե ես շտապում էի, ապա կրկնակի քոկթեյլ էի պատվիրում: Դա խնայում էր ժամանակը:

Առատ և կանոնավոր խմելու պատճառով ես ամբողջ ժամանակ հարբած էի: Իմ ուղեղը այնպես էր սովորել արհեստական խթանման, որ առանց դրա թույլ ու տկար էր դառնում: Մարդկանց հանդիպելիս, հասարակության մեջ լինելիս, ոգելից խմիչքի ավելի ու ավելի մեծ պահանջ էի զգում: Ես կարող էի միանալ որևէ խմբի և նրանց հետ ոտք մեկնել միայն այն ժամանակ, երբ գլուխս մշուշված էր, որից մարդ ջերմանում է և ուրախ զգում, երևան է գալիս հետաքրքրություն ու տաքարյունություն, ամբողջ աշխարհը կարծես թե մշուշվում է գույնզգույն շղարշով:

Մի ուրիշ հետևանք էլ էր ունենում: Պարզվեց, որ Գարեհատիկ Ձոնը իր ցանցը ավելի ու ավելի է սեղմում: Նա սպառնում էր հին հիվանդությամբ, ստիպելով նորից ընկնել ճշմարտության հետևից, պոկել քողը և նայել նրա դեմքին: Ես նորից էի սկսում մտածել կյանքի իմաստի մասին: Բայց այս անգամ ամեն ինչ աստիճանաբար եղավ:

Երբեմն, մի պահ ես սարսափ էի զգում: Խմիչքը ինձ ո՞ւր է տանում: Բայց Գարեհատիկ Ձոնը վարպետ էր այդ հարցից խուսափելու համար: Նա ասում էր. «Գնա՛նք խմելու և ամեն ինչ կբացատրեմ»: Նա կարողանում էր համոզել, կարողանում էր որևէ դեպքի համար օրինակ ընտրել և դրանից հետո չէր հոգնում հիշեցնելով:

Մի անգամ ինձ դժբախտ դեպք պատահեց. բարդ վիրահատում պիտի կատարեին: Մի օր, առավոտյան, վիրահատումից մի շաբաթ հետո, թույլ, տանջահար, ես պառկած էի հիվանդանոցի մահճակալին: Իմ դեմքի արևայրուքը, հիվանդության ժամանակ աճած բեղ-մորուքիս հետ, փոխվել էր անառողջ դեղնության: Բժիշկը կանգնած էր իմ մահճակալի մոտ և արդեն ցանկանում էր գնալ: Նա դժգոհ նայեց բերնիս սիգարեթին:

— Դա հարկավոր է թողնել,— ասաց նա խրատական ձայնով:— Ձեզ կկործանի: Նայեցեք ինձ:

Ես նայեցի: Նա մոտավորապես իմ հասակին կլիներ, առողջ, լայնաթիկունք, աշխույժ աչքերով ու առողջ վարդագույնը այտերին: Առնական, ամուր, մարդկային ցեղի մի հիասքանչ օրինակ:

— Առաջ ես էլ էի ծխում,— շարունակեց նա,— սիգար: Բայց մինչև անգամ դրանցից հրաժարվեցի: Եվ ահա հետևանքը, տեսնո՞ւմ եք:

Նա խոսում էր համոզիչ, և դրա համար լրիվ իրավունք ուներ: Բայց մեկ ամիս հետո նա մեռավ: Եվ մեռավ դժբախտ պատահարից: Նրան կործանեցին ինչ-որ զարմանահրաշ ցուպիկներ, որոնք երկար, գիտական անուն ունեին: Նա անտանելի տառապանքներ կրեց և մի քանի օր շարունակ այդ առողջ ու գեղեցիկ մարդու ճիչը լսվում էր ամբողջ թաղով մեկ: Ճչալով էլ նա մեռավ:

— Տեսնո՞ւմ ես,— ասաց Գարեհատիկ Ձոնը,— նա հետևում էր իրեն: Մինչև անգամ սիգար ծխելն էր թողել: Եվ ահա վերջը: Այնքան էլ դուրեկան չէ, հը՞: Իսկ այդպիսի վարակ որտեղ էլ ասես որ չի կարելի ճանկել: Նրանից չես կարող պաշտպանվել: Քո առողջ բժիշկը ինչքան կարող էր զգուշացավ, բայց էլի ճանկեց: Երբ օդում վարակ կա, դու չգիտես, թե ում իր զոհը կդարձնի: Գուցե քե՛զ: Մի մտածիր, է՛, այդ բժիշկը ինչքան լավ բան կորցրեց: Այսպես ուրեմն, մի՞թե ուզում ես մերժել այն, ինչ ես եմ առաջարկում: Հանկարծ քեզ էլ այդպիսի բախտ վիճակվի: Կյանքում արդարություն չկա, պարզապես վիճակախաղ է: Իսկ ես կյանքը գեղեցկացնում եմ կեղծ ժպիտով ու ծիծաղում իրականության վրա: Դո՛ւ էլ ծիծաղիր: Քեզ էլ այդպիսի վերջ է սպասում, ծիծաղի՛ր, քանի կարող ես: Աշխարհը բավականին խղճուկ բան է: Ես կբարեփոխեմ: Կյանքը զզվելի կատակ է, եթե քո բժշկի հետ այդպիսի բան կատարվեց: Փրկությունը միայն մի բանի մեջ է. խմի՛ր ու մոռացիր ամեն ինչ:

Եվ հասկանալի է, մի բաժակ էլ խմեցի, քանի որ սովորություն էր դարձել: Ես խմում էի ամեն անգամ, երբ Գարեհատիկ Ձոնը հիշեցնում էր բժշկի հետ պատահածը: Բայց խմում էի խելացի, զգույշ: Միշտ էլ աշխատում էի ընտրել ամենաբարձր որակի խմիչքը, խուսափում էի այն զզվելի վիսկիից, որը գետին էր գլորում: Ի միջի այլոց պետք է ասել, որ երբ մարդ խելացի է խմում, չկորցնելով բանականությունը, նշանակում է, որ նա շատ հեռուն է գնացել և գործերը վատ են:

Ես շարունակում էի հավատարիմ մնալ իմ կանոններին. առավոտյան մինչև չէի վերջացնում իմ հազար բառը, չէի խմում: Ի միջի այլոց, ես երբեմն մի օրով կտրվում էի իմ աշխատանքից: Այդպիսի դեպքերում չէի վախենում առաջին բաժակը առավոտ վաղ խմելուց. չէ՞ որ իմ կանոնները չէի խախտում: Իսկ չգայթակղված մարդիկ դեռ հարցնում են, թե ինչպե՞ս կարելի է խմելը սովորություն դարձնել:

ԳԼՈՒԽ ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

Երբ իմ «Սնարքը» Սան-Ֆրանցիսկոյի ծովածոցից հեռավոր նավարկության դուրս եկավ, նրա վրա ոգելից խմիչք չկար (ճիշտ է, մի վեց ամիս անց մենք պատահաբար նկատեցինք, որ այդպես չէ): Որպեսզի Գարեհատիկ Ձոնի սանձերը քաշեի, ես նավի վրա «չոր» օրենք էի հաստատել: Այս բանից երևում է, ես, այնուամենայնիվ, անսում էի բանականության ձայնին, որը իմ ականջին զգուշություն էր շշնջում:

Հասկանալի է, որ խորամանկում էի ինքս ինձ հետ, և քծնում էի Գարեհատիկին: Ես օգնության էի կանչում գիտությանը, ինքս ինձ ասում, որ կխմեմ միայն նավահանգստում: Նավարկության ժամանակ իմ օրգանիզմը կազատվի ալկոհոլից և դրա շնորհիվ էլ խմիչքը ինձ մեծ հաճույք կպատճառի: Վիսկին ավելի ուժեղ կազդի, կգրգռի և ավելի համեղ կթվա:

Սան-Ֆրանցիսկոյից մինչև Հոնոլուլու մենք լողացինք քսանյոթ օրում: Արդեն երկրորդ օրը Գարեհատիկին մտքիցս հանել էի: Սրանով ուզում եմ մի անգամ էլ ընդգծել, որ իմ էությամբ ես ալկոհոլիկ չեմ: Երբեմն, նավարկության ժամանակ, կանխավ ըմբոշխնելով ճաշն ու ընթրիքը Հավայան կղզիներում (ինձ արդեն վիճակվել էր մի քանի անգամ այդտեղ լինել), ես, հասկանալի է, մտածում էի և խմիչքների մասին, որոնք նախորդելու էին ուտելիքին: Ես խմիչքին չէի կարոտում, այլ պարզապես մտածում էի դրա մասին, որպես ուրախ ու շատ դուրեկան ժամանցի մի անբաժանելի մասնիկի:

Այսպիսով, նորից էի ինձ հավատացնում, որ ինքս եմ իշխում Գարեհատիկ Ձոնին: Ուզենամ՝ խմում եմ, չեմ ուզում՝ չեմ խմում: Ամեն ինչ կախված է իմ սեփական ցանկությունից: Մոտ հինգ ամիս մենք թափառում էինք Հավայան կղզիներում: Ցամաքում ես խմում էի, մինչև անգամ ավելի շատ, քան Կալիֆորնիայից մեկնելուց առաջ: Հավայացիներն ավելի շատ են ոգելից խմիչքներ օգտագործում, քան բարեխառն գոտու (ավելի ճիշտ՝ հասարակածից հեռու ընկած գոտու) բնակիչները: Բայց չէ՞ որ Հավայան կղզիները դեռ մերձարևադարձային են: Ինչքան շատ էինք խորանում արևադարձային գոտին, այնքան մարդիկ շատ էին խմում, ես նույնպես:

Հավայան կղզիներից մեկնեցինք Մարքիզյան կղզիներ: Վեց օր շարունակ նավում էինք և ամբողջ ժամանակ ոչ միայն երկիր չտեսանք, այլև որևէ առագաստ կամ շոգենավի ծուխ: Մեր խոհարարը մի անգամ, կամբուզը կարգի բերելիս, գանձ գտավ: Մթերապաշարի գզրոցում մի տասը-տասներկու շիշ անժելիկա ու մուսկաթ կար: Սրանք այստեղ էին ընկել, երևի, մեր ֆերմայից, տնային մուրաբաների ու թթվի հետ: Վեց ամիս մնալով կամբուզում՝ թանձր, քաղցր գինին ավելի էր լավացել:

Ես մի քիչ խմեցի: Հիասքա՜նչ էր: Այդ օրվանից սկսած, որոշելով նավի տեղը և ուղղությունը, ես մի կես բաժակ գինի էի խմում: Ազդեցությունը շշմեցուցիչ էր. ես ավելի բարի էի դառնում, ծովը՝ ավելի հիասքանչ: Ամեն առավոտ, նավասենյակում մեքենագրելով իմ հազար բառը, անհամբեր սպասում էի խմելու նվիրական պահերին:

Ցավոք, խմիչքը ստիպված էի բաժանել մյուսների հետ, իսկ մեր նավարկության ժամկետը դեռ պարզ չէր: Ափսոս, որ տասներկու շիշ էր: Երբ բոլորը խմեցինք վերջացրինք, ես մինչև անգամ ափսոսացի, որ հյուրասիրել եմ իմ ուղեկիցներին: Ինձ տանջում էր ծարավը: Շո՞ւտ կհասնենք արդյոք Մարքիզյան կղզիներ:

Երբ մենք խարիսխ գցեցինք, ես արդեն ինձ կորցրել էի: Կղզում հանդիպեցինք մի քանի սպիտակների, շատ տեղացիների, որոնք արտաքինից բավական վատառողջ էին թվում, և հիասքանչ բնության: Ռոմը ծով էր, աբսենթը՝ ինչքան սիրտդ ուզի, բայց ո՛չ վիսկի կար, ո՛չ էլ ջին: Ես ռոմի համը տեսա: Կրակի խմիչք էր: Ի՞նչ արած: Աբսենթ կխմեմ: Ցավոք սրտի, ստիպված էի շատ խմել. այլ կերպ ինձ վրա չէր ազդում:

Մարքիզյան կղզիներից մենք հետներս այնքան աբսենթ վերցրինք, որ մինչև Թահիթի բավականացրեց. իսկ այնտեղ արդեն շոթլանդական ու ամերիկյան վիսկիի մի պատկառելի պաշար տեսանք: Բայց, թերևս, ոչ ճիշտ եզրակացության կհանգեք: Ես հարբեցող չէի, ինչպես ընդունված է ասել. չէի օրորվում, բանականությունս չէի կորցնում: Փորձված, սովոր, բնավորությամբ առողջ մարդը թույլ չի տա իրեն այդքան ընկնել: Նա խմում է միայն առողջանալու, լավ տրամադրության համար և միայն այդքան: Նա համառորեն զգուշանում է սրտախառնուքից ու գլխացավից, վախենում է անօգնական դառնալուց և իր արժանապատվությունը շրջապատողների աչքում գցելուց:

Մարդը, որ սովոր է իրեն հասցնել թեթև գինովության, նրա մոտ ամեն ինչ խաղաղ, դուրեկան ու քաղաքավարի է ստացվում: Նա ամբողջ տարին խմում է և ոչ մի վատ հետևանք չի ունենում: Միացյալ Նահանգներում հազարավոր մարդիկ խմում են ակումբներում, հյուրանոցներում, իրենց տանը, սակայն երբեք հարբած չեն լինում և միշտ էլ տրամադրությունները բարձր է: Եթե այդ բանը նրանց ասելու լինենք, կտրականապես կբողոքեն: Նրանք կարծում են, ինչպես մի ժամանակ ես էի կարծում, որ իրենք են ղեկավարում Գարեհատիկ Ջոնին, ոչ թե հակառակը:

Նավարկելու ժամանակ ինձ զսպում էի, դրա փոխարեն ափ իջնելիս, վարձահատույց էի լինում: Բայց արևադարձում ես ոգելից խմիչքի ուժեղ պահանջ զգացի: Այն բանը, որ սպիտակները այնտեղ շատ են խմում, դա հայտնի է բոլորին: Արևադարձը սպիտակների համար չէ: Սպիտակ մաշկը նրանց չի պաշտպանում կուրացուցիչ արևից: Արևի ուլտրամանուշակագույն և աչքի համար անտեսանելի մյուս ճառագայթները այրում ու քայքայում են նրանց մաշկը: Այդպես ռենտգենյան ճառագայթները այրեցին, ու քայքայեցին առաջին փորձարկողների մաշկը, որոնք չէին կասկածում վտանգի մասին:

Սպիտակ մարդկանց բնավորությունը արևադարձներում միանգամից փոխվում է: Նրանք դառնում են չոր, անխիղճ, հրեշավոր չարագործություններ են անում, մի բան, որ երբեք չէին անի սովորական, բարեխառն կլիմայում: Նրանք դառնում են նյարդային, զայրացկոտ, անբարոյական և խմում են, խմո՛ւմ առանց չափ ու սահմանի: Հարբեցողությունը կործանման ձևերից մեկն է, որին ենթարկվում են հրաշեկ արևի ազդեցության տակ շատ երկար մնացած սպիտակները: Ոգելից խմիչքի ցանկությունը ուժեղանում է անկախ իրենց կամքից: Սպիտակները երկար չպետք է արևադարձներում ապրեն: Նրանք այնտեղ դատապարտված են, և հարբեցողությունը միայն արագացնում է նրանց կործանումը: Բայց ոչ ոք դրա մասին չի մտածում: Բոլորն էլ խմում են:

Ես նույնպես հիվանդացա արևից, չնայած արևադարձում համեմատաբար քիչ եղա: Ինչքան կարող էի, խմում էի և, ի դեպ, ուզում եմ անմիջապես ավելացնել, որ հիվանդացա ու դադարեցրի «Մնարքով» ճամփորդելը ո՛չ այդ պատճառով: Ես ուժեղ էի ցուլի նման և ամիսներ շարունակ պայքարում էի հիվանդության դեմ, որը քայքայում էր իմ մաշկը և նյարդային հյուսվածքները: Լողալով արևադարձային արևի տակ Նոր Հեբրիդյան և Սոլոմոնյան կղզիների երկարությամբ, խուսանավելով Լայնա կորալյան խութերի միջև, ես աշխատում էի հինգ մարդու փոխարեն, չնայած դողէրոցքին և աստվածաշնչի արծաթավուն բորոտության նման մի հիվանդության: Նավը վարել խութերի, ծանծաղուտների ու նեղուցների միջով, կորալյան ծովերի անծանոթ ափերի երկայնքով, ինքնին ծանր գործ է: Նավի վրա ինձնից բացի ուրիշ շտուրման չկար: Իմ

նավախմբում ոչ մեկը չկար, որի հետ կարողանայի խորհրդակցել և ստուգել իմ դիտարկումները, երբ հայտնվում էինք խութերի ու ծանծաղուտների անթափանց մշուշում, որը քարտեզի վրա չէր նշանակված: Ես անփոփոխ հերթապահում էի: Մարդ չկար, որին կարողանայի վստահել նավը: Երբեմն ստիպված էի լինում ամբողջ օրը և գիշերը ոտքի վրա մնալ, իսկ հետո շատ քիչ էի հանգստանում: Ես և՛ նավապետ էի, և՛ բոցման: Իմ երրորդ պարտականությունը հիվանդներին բուժելն էր և պետք է խոստովանել, որ «Սնարքի» վրա այս գործն էլ հեշտ չէր: Նավում բոլորն էլ հիվանդ էին դողէրոցքով, իսկական արևադարձային դողէրոցքով, որը մարդուն կարող էր երեք ամսում սպանել: Իմ ամբողջ անձնակազմը տառապում էր մաշկային խոցերից ու քոսից: Ճապոնացի խոհարարը այդ բոլորից խելքը թռցրեց: Պոլինեզացի մի նավաստի քիչ մնաց մեռներ սև դողէրոցքից: Այո՛, մինչև կոկորդս թաղվել էի աշխատանքի մեջ. ես դեղորայք էի տալիս, կապում էի վերքերը, ատամներ էի քաշում և փրկում էի այնպիսի չնչին դժբախտություններից, ինչպիսին ուտելիքից թունավորվելն է:

Իմ չորրորդ պարտականությունը օրական հազար բառ գրելն էր: Եվ դա անում էի կանոնավոր կերպով, բացառված այն օրերը, երբ դողէրոցքի նոպան ինձ հալից գցում էր կամ էլ կատաղի ալիքները գրոհում էին «Սնարքի» վրա: Ես հինգերորդ պարտականություն էլ ունեի. որպես ճանապարհորդ և գրող, որը ջանում է ամեն ինչ տեսնել ու հիշել, պետք է կանոնավոր կերպով օրագիր պահեի: Վեցերորդը, և վերջինը այն էր, որ ես, որպես յախտայի տեր, կատարում էի, այսպես ասած, պաշտոնական արարողություններ, երբ մենք մի հեռավոր ու անծանոթ վայր էինք հասնում, ուր նավի հայտնվելը մեծ իրադարձություն էր: Ես ստիպված էի հյուրեր ընդունել նավի վրա, այցելել պլանտատորներին, առևտրականներին, նահանգապետերին, զինվորական նավերի նավապետերին, տեղացի փոչոտ առաջնորդներին և պրեմիեր-մինիստրներին, որոնց երբեմն վիճակվում էր կոնքերը հազիվ ծածկող չթե լաթի բախտավոր տերը լինել:

Հասկանալի է, որ խմում էի: Խմում էի հյուրեր ընդունելիս, խմում էի, երբ ինձ էին ընդունում: Խմում էի մենակ: Աշխատելով հինգ մարդու փոխարեն՝ ես կարծում էի, որ իրավունք ունեմ խմելու: Ոգելից խմիչքը պետք է այն մարդուն, որն ուժերից վեր աշխատանք է անում: Ես նկատել էի, թե դա ինչպես է ազդում իմ նավախմբի վրա: Ծովային քառասուն սաժեն խորությունից վեր քաշելով խարիսխը՝ մարդիկ արդեն կես ժամվա մեջ ուժասպառ էին լինում և դողում էին ամբողջ մարմնով, աշխատելով շունչները ետ բերել: Բայց մի լիքը բաժակ ռոմը անմիջապես վերականգնում էր նրանց աշխատունակությունը: Ուրախ կռնչալով, արմունկներով սրբելով բերանները, նրանք նորից գործի էին կպչում: Ես համոզվում էի ռոմի հրաշագործ ներգործությանը և ուրիշ դեպքերում, օրինակ, դողէրոցքի նոպաների ժամանակ, երբ ստիպված էի լինում մինչև պարանոցս ջրի մեջ թաղված աշխատել, յախտան կողքի վրա թեքելու համար, որպեսզի վնասվածքը վերացնեմ:

Բազմադեմ Ջոնի բնավորության գծերից մեկն էլ կա. արտաքինից կարծես քեզ փրկում է և փոխադարձ ոչինչ չի պահանջում: Օգնում է վերականգնել սպառված ուժերը, ոտքի է կանգնեցնում, և դու նորից կարող ես աշխատել: Որոշ ժամանակ զգում ես թարմ ուժերի հորդումը: Հիշում եմ, ես մի անգամ վարձվեցի օքլենդյան նավը՝ ածուխ բարձելու: Դժոխային աշխատանք էր, և ութ օր շարունակ մեզ՝ բեռնակիրներիս, պահում էին նրանով, որ վիսկի էին տալիս: Մենք աշխատում էինք կիսահարբած վիճակում: Առանց վիսկիի մենք այդ գործի հախից չէինք գա:

Այն ուժը, որ տալիս է Գարեհատիկ Ջոնը, հնարովի չէ, այլ իրական: Դա քամվում է ուժի սովորական աղբյուրներից, բայց ի վերջո դրա փոխարեն պիտի հատուցվի և այն էլ ոչ թե մի կերպ, այլ տոկոսներով: Սակայն մի՞թե աշխատանքից հոգնած մարդը այդքան առաջ կնայի: Նա այդ հրաշագործ փոխակերպումը ընդունում է որպես շատ սովորական մի բան: Ե՛վ հոգնած վաճառականը, և մտավոր աշխատողը, և՛ ուժասպառ եղած սևագործ բանվորը հավատալով Գարեհատիկի խաբեությանը, կանգնում են այն ուղու վրա, որը դեպի մահ է տանում:

ԳԼՈՒԽ ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ

Հասանք Ավստրալիա, ու ես պառկեցի հիվանդանոցում, որպեսզի բուժվեմ, ապա շարունակեմ ճանապարհորդությունը: Մի քանի օր հիվանդանոցում մնալով, ես ոչ մի անգամ չհիշեցի խմիչքի մասին. գիտեի, որ դա ինձանից չի փախչի: Բայց հիվանդանոցից դուրս գրվելով, ես համոզվեցի, որ վտանգավոր հիվանդությունս չեն բուժել: Արծաթավուն բորը այնպես էլ մնաց: Խորհրդավոր արևային հիվանդությունը, որն ավստրալիական բժիշկները չկարողացան բուժել, առաջվա նման քայքայում էր մաշկս: Առաջվա նման թափ էր տալիս դողէրոցքը. սարսափելի նոպաներն ինձ ցած էին գլորում ամենաանսպասելի պահերին: Դրա պատճառով ստիպված եղա հրաժարվել Ավստրալիայի քաղաքներում դասախոսություններ կարդալուց, որի համար ես համաձայնություն էի տվել:

Այսպես ուրեմն, ես հրաժարվեցի «Սնարքով» լողալուց և որոշեցի մեկնել ավելի զով կլիմա ունեցող մի վայր: Դուրս գալով հիվանդանոցից՝ հենց նույն օրը խմեցի, կարծես ոչինչ էլ չէր պատահել: Ճաշից առաջ քոկթեյլ էի խմում, իսկ ճաշի ժամանակ՝ գարեջուր: Սոդայաջրով վիսկի էի խմում, եթե դա նախընտրում էին իմ սեղանակիցները: Ինձ Գարեհատիկի լիիրավ տերն էի զգում. ցանկանամ՝ կխմեմ, չեմ ցանկանա՝ չեմ խմի, և հպարտ մտածում էի, թե հենց այդպես կլինի իմ ամբողջ կյանքում: Որոշ ժամանակ հետո ես գնացի Թասմանիայի ծայր հարավը, 43º հարավային լայնությունը. այնտեղ ավելի զով էր: Ոգելից խմիչքներ այնտեղ չկային, բայց դա ինձ համար նշանակություն չուներ: Ես չէի խմում և դրա համար չէի վշտանում: Վայելելով զով եղանակը՝ ես ձի էի քշում և ամեն օր գրում էի իմ հազար բառը, չհաշված այն դեպքերը, երբ ինձ առավոտվանից ճանկում էր դողէրոցքի նոպան:

Թող ոչ ոք չմտածի, որ իմ հիվանդության պատճառը ոգելից խմիչքի չարաշահումն է: Բայց չէ՞ որ իմ ծառան՝ ճապոնացի Նակատան (նա հիմա էլ է ինձ մոտ ապրում), հիվանդացավ արևադարձային տենդով: Չարմիանը նույնպես, ի դեպ, նա հիվանդացավ նաև արևադարձային նյարդագարությամբ, որից ազատվեց միայն բարեխառն կլիմայում մի քանի տարի բուժվելուց հետո: Սակայն ո՛չ նա, ո՛չ էլ Նակատան ոգելից խմիչք բերանները չէին առնում:

Վերադառնալով Հոբարթ-Թաուն, ուր կարելի էր վիսկի ճարել, ես նորից իմ հին գործին անցա: Ավստրալիայում կրկնվեց նույն պատմությունը: Բայց ահա, շոգենավով վերադառնալիս, որի նավապետը խմիչք չէր օգտագործում, ես ճանապարհի քառասուներեք օրվա ընթացքում բերանս վիսկի չառա: Էկվադորում, հենց ուղղակի հասարակածային արևի տակ, ուր մարդիկ մեռնում էին դեղին տենդից, ծաղկից ու ժանտախտից, ես անմիջապես սկսեցի խմել և խմում էի, ինչ ձեռքս ընկնում էր, միայն թե հարբեի: Ես տեղական ոչ մի հիվանդություն չստացա: Չարմիանը և Նակատան նույնպես, չնայած նրանք ոչինչ չէին խմում:

Սիրահարված արևադարձներին, չնայած այն բոլոր դժբախտություններին, որ նա բերեց մեր գլխին, ես ճանապարհին կանգ էի առնում տարբեր տեղերում և շատ ուշ հասա հարազատ Կալիֆորնիա, որը հիասքանչ, բարեխառն կլիմա ունի: Բայց որտեղ էլ օրը բացվեր, նավարկելիս թե ցամաքում, ես կատարում էի իմ ամենօրյա առաջադրանքը՝ հազար բառ: Դողէրոցքը արդեն հազվադեպ էր հիշեցնում իր մասին, մաշկիս խոցերն սպիացել էին, և ես խմում էի այնքան, որքան կարող է խմել առողջ, ուժեղ տղամարդը:

ԳԼՈՒԽ ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ

Վերադառնալով Լուսնի Հովտի իմ ֆերման՝ ես շարունակեցի ամեն օր խմել: Ըստ իմ հաստատած կանոնի, ոգելից խմիչքը բացառվում էր միայն առավոտյան. առաջին բաժակը խմում էի միայն իմ հազար բառը գրելուց հետո: Դրանից հետո մինչև ճաշ արդեն չէի հաշվում իմ խմած բաժակները և ամբողջ ժամանակ գինով էի լինում: Ընթրիքից առաջ էի խմում: Ինձ հարբած ոչ ոք չի տեսել շատ

պարզ մի պատճառով. ես չէի հարբում: Բայց օրը երկու անգամ քեֆս տեղն էր լինում: Եթե մի ուրիշը, անսովոր մի մարդ, ամեն օր այդքան խմեր, վաղուց արդեն ոտքերը ձգած կլիներ:

Հի՜ն պատմություն: Ինչքան շատ էի խմում, այնքան շատ էր պետք՝ ցանկալի ազդեցությանը հասնելու համար: Շուտով արդեն քոկթեյլը չէր բավարարում: Ես ժամանակ չունեի քարշ գալ դրա հետ և ստամոքսս էլ այդքան չէր տեղավորում: Վիսկին ավելի ուժեղ էր ազդում: Դա ավելի քիչ էր պետք, իսկ արդյունքը շոշափելի էր: Հիմա մինչճաշյա իմ բաժինը ցորենի կամ կորեկի վիսկին էր, հին գինիների խառնուրդը, իսկ օրվա վերջում՝ սոդայաջրով վիսկին:

Առաջ ես միշտ էլ շատ լավ էի քնում, իսկ հիմա իմ քունը փչացել էր: Պատահում էր, երբ գիշերվա կեսին արթնանում էի, սկսում էի կարդալ և նորից էի քնում: Հիմա արդեն դա էլ չէր օգնում: Ես կարդում էի երկու ժամ, նույնիսկ՝ երեք, բայց քունը մոտ չէր գալիս: Քունս բերում էր միայն վիսկին, այն էլ երեք բաժակից ոչ պակաս խմելու դեպքում:

Դրանից հետո մինչև լույսը բացվելը այնքան քիչ ժամանակ էր մնում, որ ոգելից խմիչքը չէր հասցնում մարսվել օրգանիզմում, և ես վեր էի կենում բերանումս չոր դառնություն զգալով, գլխացավով և ստամոքսի կծկումներով. մի խոսքով շատ վատ էի զգում: Խումարություն, ինչպես բոլոր թունդ հարբեցողների մոտ: Առողջանալու համար անհրաժեշտ էր մի որևէ բան խմել: Եվ Գարեհատիկ Ձոնը, որ արդեն կարողացել էր շահել իմ վստահությունը, չէր դանդաղում: Ուրեմն, ախորժակ բացելու համար նախաճաշից առաջ խմում էի: Այդ ընթացքում ես մի սովորություն էլ ձեռք բերեցի. անկողնուս մոտ կժով ջուր էի դնում: Խմում էի գիշերը, որպեսզի մեղմացնեմ բերանիս այրոցը և չորությունը:

Իմ օրգանիզմը գտնվում էր ոգելից խմիչքի անընդմեջ ազդեցության տակ: Ես ընդմիջում չէի տալիս: Մի որևէ խուլ վայր մեկնելիս, չիմանալով այնտեղ վիսկի կարո՞ղ եմ ձեռք բերել, ես հետս մի քվարտ, իսկ երբեմն էլ մի քանի քվարտ խմիչք էի վերցնում: Առաջ երբ ուրիշներն էին այդպես անում, զարմանում էի: Իմ բոլոր խելացի սովորությունները գրողի ծոցն էի ուղարկում, երբ հայտնվում էի տղամարդկանց շրջանում: Ես բոլորի հետ խմում էի նույնը և նույն քանակությամբ, ինչ նրանք էին խմում:

Իմ մեջ այրվում էր անհագուրդ կրակը: Բոցը հրահրվում էր ներսից և ավելի ու ավելի պայծառ էր վառվում: Օրվա ընթացքում մի պահ չէր լինում, որ խմել չուզեի: Ես սկսեցի կտրվել աշխատանքից և հինգ հարյուր բառ չգրած, խմում էի: Իսկ շատ շուտով, մինչև չխմեի, աշխատանքս չէի սկսում:

Ես շատ լավ էի հասկանում, թե դա ինչով կվերջանա, և սովորություն դարձրի, մինչև չէի վերջացնում գրելը, չէի խմում: Բայց այստեղ էլ առաջացավ անսպասելի, սատանայական մի բարդություն: Առանց ոգելից խմիչքի աշխատանքն առաջ չէր գնում: Չխմած չէի կարողանում գրել: Ես սկսեցի պայքարել դրա դեմ: Ահա քեզ մի տանջող ծարավ, որն առաջ չէի զգացել: Նստում էի գրասեղանի մոտ, ձեռքս էի առնում գրիչը, թուղթը դնում առջևս, բայց բառերը չէին գալիս: Ուղեղումս միայն մի միտք էր պտտվում. իմ դիմացը, պահարանում դրված է Գարեհատիկ Ձոնը: Հուսահատված, ես վիսկի էի լցնում և միայն այդ ժամանակ էին ուղեղիս անվակները սկսում աշխատել ու մեքենագրում էի իմ հազար բառը:

Օքլենդի իմ տանը վերջացրի խմիչքի բոլոր պաշարները և որոշեցի այլևս չլրացնել: Դա էլ չօգնեց, քանի որ, ցավոք սրտի, պահարանի ներքևի դարակում մի արկղ էլ գարեջուր էր մնացել: Իզուր էի փորձում աշխատել, համոզելով ինձ, որ գարեջուրը ուժեղ ներգործող միջոցների համեմատությամբ խղճուկ բան է, որ դա չեմ սիրում: Բայց այդ արկղը ինձ չէր թողնում աշխատել: Եվ միայն մի կես քվարտ խմելուց հետո էին հայտնվում անհրաժեշտ բառերը: Բայց ստիպված էի բազմիցս կրկնել այդ գործողությունը, մինչև որ հազար բառը գրվում էր թղթին: Ամենից վատն այն էր, որ գարեջրից ստամոքսումս այրուցք էի զգում. բայց, չնայած դրան, արկղի հետ շատ արագ հաշիվս մաքրեցի:

Հիմա արդեն դարակները դատարկ էին: Ես պաշարը չէի լրացնում: Հերոսական ճիգեր գործադրելով՝ ի վերջո հասա իմ նախկին սովորությանը՝ օրական հազար բառ, առանց ոգելից խմիչքի օգնության: Բայց, մինչ ես գրում էի, ծարավը քանի գնում, այնքան ուժեղանում էր: Հազիվ վերջակետ դրած, դուրս էի թռչում տնից ու քաղաք էի վազում՝ խմելու: Աստվա՜ծ իմ: Եթե Գարեհատիկ Ձոնը ինձ, որ բնավորությամբ խորթ էի իրեն, կարողացավ այդպե՜ս մշակել, ապա ինչպե՜ս կարող է տառապել իսկական գինեմոլը, որն աշխատում է խեղդել ոգելից խմիչքի իր օրգանական պահանջը, և իր հարազատները չեն հասկանում ու չեն ցավակցում նրան. միայն արհամարհում են ու ծաղրում:

ԳԼՈՒԽ ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ

Բայց հատուցումից չես կարող փախչել: Գարեհատիկ Ձոնը սկսեց ինձնից հին հաշիվները գանձել. ոչ այնքան մարմնական, որքան հոգեկան: Վերադարձավ առաջվա ծանր հիվանդությունը՝ մաքուր հոգեբանական մի ցավ: Վաղուց արդեն մոռացված տեսիլները նորից գլուխ բարձրացրին: Բայց հիմա ուրիշ էին և ավելի սարսափելի: Առաջ դրանք մտքի արգասիք էին, և ես կարողանում էի հաղթել բանական, առողջ տրամաբանությամբ: Իսկ հիմա դրանց հարություն էր տվել Գարեհատիկ Ձոնի Ճերմակ Տրամաբանությունը, որն արդեն թույլ չէր տա թաղելու իր տեսիլները: Հիվանդանալով հոռետեսությամբ՝ գինեմոլը պիտի ավելի շատ խմի. Գարեհատիկ Ձոնը ուրիշ դեղ, չնայած իր խոստումին, չի կարող տալ:

Ինչպե՞ս նկարագրել Ճերմակ Տրամաբանությունը նրանց, ովքեր դրա հետ ծանոթ չեն: Թերևս, ամենից առաջ պետք է ասել, որ դա հազիվ թե հնարավոր է իրագործել: Օրինակի համար վերցնենք Հաշիշի Երկիրը, մեծ ու հինավուրց մի երկիր: Անցյալում ես այստեղ երկու անմոռաց ճանապարհորդություններ եմ կատարել: Հիշողությանս մեջ մնացել են իմ թափառումների բոլոր մանրամասները: Սակայն անօգուտ կլինեն իմ բոլոր փորձերը նկարագրելու ուխտագնացությունը, թեկուզ ամենաչնչին դեպքերը՝ այն մարդկանց, որոնք այդ տեղերում չեն եղել:

Դիմելով ամենաչափազանցված, վառ համեմատությունների, իմ ունկնդիրներին ասում եմ. անլուր տանջանքների ամբողջական դարերը, անդնդի սարսափները կարելի է զգալ դաշնամուրով նվագող ջիգի երկու ձայնանիշների միջև: Ես մի ամբողջ ժամ չարչարվում եմ, ցանկանալով նկարագրել այս Երկրի կյանքի միայն մեկ գիծը, բայց վերջ ի վերջո տեսնում եմ, որ ինձ չեն հասկանում: Եվ եթե ես անընդունակ եմ ունկնդիրներին հաղորդել նույնիսկ իմ տեսած զարմանահրաշ ու սարսափելի դեպքերի մի տպավորությունն անգամ, ապա, իհարկե, նրանք ամենափոքր պատկերացումն իսկ չեն կարող ստանալ Հաշիշի Երկրի մասին՝ ամբողջովին վերցրած:

Դրա փոխարեն, բավական է խոսեմ այդ ֆանտաստիկ երկրներում եղած մարդու հետ, մենք անմիջապես հասկանում ենք իրար: Մի արտահայտություն, մի բառ անմիջապես նրա ուղեղում ծնում է այն կերպարները, որոնց մասին մի քանի ժամ շարունակ ինձ չէր հաջողվում պատկերացում տալ այն մարդկանց, որոնք այդտեղ չեն եղել: Բանն այդպես է և Գարեհատիկ Ձոնի թագավորությունում, ուր իշխում է Ճերմակ Տրամաբանությունը: Նա, ով ոչ մի անգամ այնտեղ ոտք չի դրել, ճամփորդի պատմությունները անհասկանալի ու ֆանտաստիկ կթվան: Ինձ մնում է միայն մի բան, խնդրել, որ հավատան իմ խոսքերին:

Ոգելից խմիչքը մարդուն ճակատագրական նախազգացում է ներշնչում և այս հարցում չխմած մարդը զիջում է հարբածին: Ճշմարտությունները կյանքում տարբեր են լինում. մի մասն ավելի արդարամիտ է, իսկ մի քանիսը բոլորովին կեղծ, բայց հենց մնացած բոլորից դրանք են օգտակար, որովհետև ամեն մի կենդանի բան ապրել է ուզում: Եվ դու, իմ չգայթակղված ընթերցող, անմիջապես կհասկանաս, թե ինչպիսի սրբապիղծ ու խելագար է Գարեհատիկի թագավորությունը, որի մասին ես փորձեցի պատմել նրա կողմնակիցների լեզվով: Գիտեմ, որ այդ

լեզուն քեզ համար խորթ է, քանի որ քեզ նման բոլոր չխմողները վճռականորեն խուսափում են այն ճանապարհներից, որոնք դեպի մահն են տանում, ընդունելով միայն կյանքի ուղին: Կյանքում շատ տարբեր ճանապարհներ կան և տարբեր ճշմարտություններ: Բայց համբերող եղիր: Գուցե իմ խոսքը քեզ ծանրալեզու կթվա, բայց կարող է պատահել, որ դու այդտեղ որսաս անծանոթ երկրների գծագրությունը, մոտավորապես հասկանաս գոնե ուրիշ կերտվածքի մարդկանց:

Այո՛, ոգելից խմիչքը ճիշտ է խոսում, բայց այդ ճշմարտությունը հեռու է սովորական կարգից: Նորմալ է այն, ինչը նպաստում է առողջությանը, հետևաբար, կյանքին: Նորմալ ճշմարտությունը ցածր տեսակի ճշմարտություն է: Նայեք քաշող ձիուն: Ինչքան էլ տխուր լինի նրա գոյությունը, խեղճը առաջին օրվանից մինչև վերջինը, չգիտես ինչո՛ւ, հավատում է, որ աշխարհում ամեն ինչ հիասքանչ է, որ լուծը օգտակար է: Բնազդական վախը նրան թելադրում է, որ մահվանից սարսափելի բան չկա, որ կյանքը բարիք է, որ ժամանակի ընթացքում, երբ ուժերը կնվազեն, նրան չեն ստիպի աշխատել, չեն մտրակի ու խթանի, որ ծերությունը բոլորն էլ հարգում են ու գնահատում: Իսկ իրականում ջրկիրը լծում է ոսկրոտ, պառավ յաբուին ու ստիպում քարշ տալ ուժից վեր ծանր տակառը, և խեղճ տառապյալը հլու-հնազանդ ծառայում է մինչև վերջին շունչը: Իսկ հետո՞: Հետո նրան տանում են սպանդանոց և նիհար մարմինը, թույլ ոսկորները, հյութերը, նյարդերն ու մասնիկները դարձնում կաշի, թռչնակեր, սոսինձ ու պարարտանյութ: Քանի դեռ կյանքը կայծկլտում է, անբախտ յաբուն պետք է ընդունի ստորին կարգի ճշմարտությունը՝ կյանքի ճշմարտությունը, քանի որ առանց նրա ամեն մի գոյություն անհնար կլիներ:

Այս ձին, ինչպես իր քույրերը և բոլոր մյուս կենդանիները, ներառյալ նաև մարդը, կուրացած է ու հիմարացած: Ապրե՛լ, ինչ գնով ուզում է լինի: Կյանքը հիանալի է, չնայած նրա տված բոլոր տանջանքներին, չնայած այն բանին, որ առջևում անխուսափելի վախճանն է: Այդ տիպի ճշմարտություն անհրաժեշտ չէ բնությանը, ո՛չ. դա պետք է միայն կենդանի էակներին, որոնց վիճակված է կարճ ժամանակով ապրել երկրի վրա և ոչնչանալ: Ինչքան էլ սխալ է ստորին ճշմարտությունը, նրա էությունը բանական է ու առողջ. եթե ուզում ես ապրել, ապա պահիր հավատդ կյանքի նկատմամբ:

Բոլոր կենդանիներից միայն մարդուն է շնորհված մտածելու կարողությունը: Սարսափելի՜ ունակություն: Մտքի ուժով մարդը խորանում է իրերի էության մեջ, դեմ-դիմաց տեսնում է տիեզերքը, որը բոլորովին անտարբեր է մարդու և նրա երազանքների նկատմամբ: Նրան այդ բանը մատչելի է և միաժամանակ վտանգավոր: Որպեսզի ագահորեն, լիուլի և հույզով ապրես, պետք է կույր լինես ու հավատաս միայն զգացումներին: Ինչ լավ է, նա՛ էլ ճշմարիտ է: Միայն այդպիսի ճշմարտություն է պետք. չնայած դա ստորին տեսակի է, բայց մարդ միայն դրանով պիտի առաջնորդվի, մերժելով մնացած բոլորը: Նա պետք է հալած յուղի տեղ ընդունի մտքի և զգացմունքի խաբեությունը, պետք է հավատա կրքի կեղծ տեսիլներին:

Սովորաբար մարդն այդպես էլ վարվում է: Վտանգավոր է կյանքի մութ կողմերը, նրա դատարկությունն ու անպտղությունը տեսնելը, վտանգավոր է սեփական վավաշոտությունից ու ագահությունից վախենալը: Շատերին է հաջողվել մի պահ նայել ուրիշ կարգի ճշմարտությանը, բարձրագույն ճշմարտությանը, և նրանք սարսափած նահանջել են: Շատ շատերը տառապել են այդ ծանր հիվանդությամբ, դիմացել են և պատմել մյուսներին, իսկ իրենք անմիջապես հավիտյան մոռացել են: Եվ նրանք ապրում են: Նրանք հասկացել են ճշմարտությունը, քանի որ հենց իրենց մեջ է ամփոփված կյանքը: Նրանք ճի՛շտ են:

Իսկ ինչպե՞ս է ներգործում Գարեհատիկ Ձոնը: Գարեհատիկը դժբախտություն է բերում նրանց, որոնք օժտված են երևակայությամբ, որոնք կրքոտ ու ջերմ սիրում են կյանքը: Գարեհատիկը նրանց Ճերմակ Տրամաբանություն է ուղարկում, բարձրագույն ճշմարտության հրեշտակին, կյանքի թշնամուն, դաժան ու սառն, ինչպես միջաստղային տարածությունները, ինչպես դիակը, ինչպես անժխտելի ապացույցների և անմոռանալի փաստերի սառույցը: Գարեհատիկ Ձոնը չի ցանկանում, որ երազողը՝ երազի, ապրողը՝ ապրի: Նա սպանում է կենդանիներին և վերածում կեցության ինչ-որ պարադոքսի, մինչև որ նրա զոհը չսկսի ոռնալ, ինչպես «Սարսափելի գիշերվա

քաղաք» երգում է ասվում. «Մեր կյանքը խաբեություն է, մեր մահը՝ մութ անդունդ»: Եվ նա, որին Գարեհատիկը իր զոհն է դարձրել, ոտք է դնում մահվան ճանապարհը:

ԳԼՈՒԽ ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ

Բայց վերադառնանք իմ կյանքի պատմությանը և այն բանին, թե անցյալում ինձ վրա ինչ ազդեցություն ունեցավ Գարեհատիկի Ճերմակ Տրամաբանությունը: Լուսնի Հովտի հիասքանչ ֆերմայում, թունավորված երկարատև հարբեցողությունից, ես տառապում եմ համաշխարհային վշտով՝ մահկանացուների դժբախտ ժառանգությամբ: Իզուր եմ աշխատում հասկանալ իմ տրտմության պատճառը: Ես քնում եմ տաք անկողնում: Իմ գլխավերևում ամուր առաստաղ կա: Տանը լիակատար առատություն ու ճոխություն է: Ուտելիք, ո՛րն ասես, ի՛նչ սիրտդ ուզի: Ֆիզիկապես բոլորովին առողջ եմ: Մեքենան, այսպես ասած, հիանալի է աշխատում: Ո՛չ ուղեղս, ո՛չ էլ մկաններս աշխատանքից չեն հոգնում: Ես հողեր ունեմ, փող նույնպես, հասել եմ գրական հաջողության, օգտվում եմ ազդեցությունից և զգում եմ, որ իմ լուման եմ մուծում մերձավորներիս ծառայելու գործում: Կողքիս իմ ընկերուհին է, որին սիրում եմ: Ես երեխաներ ունեմ, իմ միս ու արյունից: Ազնվորեն եմ կատարում իմ քաղաքացիական պարտքը: Ես տուն եմ կառուցել և այն էլ ոչ թե մեկ, այլ մի քանիսը, վարել եմ տասնյակ հարյուրավոր ակր հող: Իսկ մի՞թե ես չեմ, որ հարյուր հազար ծառ եմ տնկել: Իմ տան ցանկացած լուսամուտից երևում են այդ ծառերի վայելչագեղ բներն ու կատարները, որոնք ձգվում են վեր, դեպի արեգակը:

Իմ կյանքը, անպայման, բախտավոր է դասավորվել: Հազիվ թե միլիոնների մեջ հարյուրին գտնես, որոնց բախտը այնպես բաներ, ինչպես իմն է: Բայց և այնպես, չնայած բոլոր հաջողություններին, ես տխրում եմ: Տխրում եմ, որ Գարեհատիկը ինձ հետ է. ես մեղավոր չեմ, որ ծնվել եմ այնպիսի ժամանակ, որը մեր սերունդները, բանականության դարաշրջանի մարդիկ, բարբարոսության խավար դարեր կանվանեն: Գարեհատիկ Ձոնը կպավ իմ պոչից, երբ ես ջահել ու հիմար էի: Նա մատչելի էր, ինձ գրավում էր յուրաքանչյուր անկյունում, ամեն մի խաչմերուկում: Կեղծ քաղաքակրթությունը, որի մեջ ապրում էի ես, թույլատրում ու օրինական էր դարձնում այդ ըմպելիքի առևտուրը, որը թունավորում է մարդկանց հոգին: Կյանքը այնպես է դասավորված, որ ինձ և իմ նման միլիոնավորների գրավում է, քաշում, հաճախ անկախ իրենց կամքից քշում դեպի գինետուն:

Ահա Գարեհատիկ Ձոնի բերած տխրության միլիոնավոր նոպաներից թեկուզ մեկը: Ես շրջում եմ իմ հիասքանչ տիրապետության մեջ: Հեծնում եմ իմ հոյակապ ձին: Օդը գինու նման արբեցնում է: Ձառիթափ բլուրների վրա խաղողի այգիները վառվում են աշնան գույներով: Սոնոմա լեռան վրա կուտակվում է ծովի մուժը: Խաղաղ երկնքում մարմրում է երեկոյան արևը: Ես ամեն ինչ ունեմ ինձ երջանիկ համարելու: Ես ապրում եմ: Լի եմ անուրջներով ու գաղտնիքներով: Ամբողջովին ներծծված եմ արևով, օդով ու լույսով: Ամեն ինչ իմ մեջ կենդանի է ու առողջ: Շարժվում եմ, ղեկավարում եմ այն էակին, որին հեծել եմ: Հպարտ եմ նրանով, որ ապրում եմ, նրանով, որ ճանաչել եմ կիրքն ու ներշնչանքը: Ես հազարավոր ուրիշ պատճառներ ունեմ հպարտանալու: Բանականության թագավորության տիրակալն եմ և իմ ձիու սմբակների տակ տրորում եմ ամեն չնչին բան...

Բայց և այնպես, նայելով հիասքանչ գեղեցկությանը, որը փռված է իմ հայացքի հանդեպ, ես դառնություն եմ զգում: Այո՛, խղճուկ ես դու, մա՛րդ, այս բնության մեջ, որը գոյություն ուներ քեզնից առաջ և գոյություն կունենա, երբ այլևս չես լինի: Ինչքա՜ն մարդիկ են ճաշակել դառնությունը, քափ-քրտինք մտած աշխատել այստեղ, մինչև որ այս համառ հողը պտղաբեր է դարձել: Իսկ հիմա այդ հողը ինձ է անցել: Եվ մի՞թե հավիտենականը կարող է մահկանացուի սեփականությունը դառնալ: Այդ մարդիկ մեռել են: Կմեռնեմ և ես: Նրանք աշխատել են, կոճղեր են արմատախիլ արել, ինձ նման նայել են մի այսպիսի իրիկնամուտի, աշնանային նույն գույներին, որոնք ոսկեզօծել են խաղողի ողկույզները, նույն ծվեն-ծվեն մշուշին, որը դուրս է սողում լեռան հետևից: Եվ ես գիտեմ, որ իմ վերջն էլ է շուտով գալու:

Վե՞րջը: Նա արդեն սկսվել է: Իմ բերանում է ատամնաբույժի հնարամիտ հարմարանքը, որը փոխարինում է մի քանի ատամներիս: Բռունցքներս էլ այն չեն, ինչպիսին էին ջահել ժամանակ: Նախկին տուրուդմփոցներն ու կռիվները ուժից զրկել են դրանց: Աջ ձեռքս վնասեցի, երբ թմփացրի ինչ-որ տղայի գլխին, որի անունը հիմա չեմ էլ հիշում: Զախը վիրավորեցի մի ուրիշ կատաղի կռվի ժամանակ: Ոչ ոք հիմա չի հավատա, որ ես սպորտսմենի նիհար փոր եմ ունեցել: Ոտքերս էլ առաջվանը չեն. ես չէի խնայում դրանց, երբ կատաղի աշխատում էի և գիշերները խելագար գինարբուք էի սարքում. հիմա այդ բոլորի հետևանքները ի հայտ են գալիս արյան լճացումով ու մկանների կծկումներով: Այլևս երբեք չեմ կարող ճոպանից կառչած օրորվել գլխապտույտ բարձրության վրա, զարհուրելի խավարում, փոթորկի ոռնոցի մեջ: Այլևս երբեք Արկտիկայի անծայրածիր ձյունե անապատում չեմ քշելու շնասահնակը:

Ես գիտեմ, որ իմ քայքայվող մարմնի մեջ, որը սկսել է մեռնել հենց իմ ծննդյան առաջին օրից, կմախք կա, որ դեմք կոչվող մսե ծածկույթի տակ Կճատի ոսկրոտ նախատիպն է: Բայց ես չեմ վախենում: Վախենալ, նշանակում է առողջ լինել: Մահվան սարսափը ուժեղացնում է ապրելու ցանկությունը: Իսկ ես հիվանդ եմ: Ճերմակ Տրամաբանությունն ինձ զրկել է այդ վախից: Հենց դրա մեջ է Գարեհատիկի անեծքը, որ հանդգնորեն նայում ես մահվան դեմքին և արհամարհում կյանքի պատրանքները:

Ես շուրջս եմ նայում և ամենուր տեսնում եմ նույն անխիղճ քայքայումը, բնական ընտրության արդյունքը: Ճերմակ Տրամաբանությունը ինձ նորից է ստիպում բացել մի կողմ նետված գրքերը, և բառ բառի, հատված հատվածի հետևից բծախնդրորեն պսակազերծ անել կյանքի պոեզիան ու գեղեցկությունը: Ամեն ինչ ունայն է ու անցողիկ: Շուրջս ամեն ինչ աղմկում է ու դժժում, բայց ես գիտեմ, որ իրար են անցել խղճուկ մժղուկները, որոնք ամբողջ ուժով աշխատում են իրենց բզզոցը լսելի դարձնել:

Ես տուն եմ վերադառնում: Մթնշաղն իջնում է: Գիշերային գիշատիչները որսի են դուրս գալիս, և կրկնվում է կյանքի սարսափելի ողբերգությունը. ուժեղը հոշոտում է թույլին: Այստեղ բարոյախոսություն չկա: Այդ բանը գոյություն ունի միայն մարդու մոտ, նա է հնարել վարքի մի ամբողջ օրենսգիրք, կյանքի կանոնները, այսինքն՝ ստորագույն ճշմարտությունը պահպանելու համար: Սրա մեջ ինձ համար ոչ մի նոր բան չկա. ես դեռ իմ տանջալից հիվանդության ժամանակ ճանաչեցի այդ բարձր ճշմարտությունը, բայց ինձ ստիպում էի մոռանալ: Դրանք այնքան լուրջ էին, որ ես հրաժարվեցի լրջորեն ընդունել, նրա հետ խաղացի վախվխելով ու զգուշությամբ, կարծես կատաղի շներ լինեին, որոնց վտանգավոր է բարկացնել: Ես միայն շոշափում էի դրանք և բավական խելոք էի ու խորամանկ, որպեսզի չարթնացնեմ: Սակայն Ճերմակ Տրամաբանությունը դրանց համարձակորեն է արթնացնում. նա կատաղած է, և սարսափելի չեն երկրային մղձավանջները:

«Թող բոլոր ուղղությունների փիլիսոփաներն էլ ինձ մեղադրեն,— շշնջում է նա տուն գնալու ճանապարհին,— չեմ վախենում: Ես ճշմարտությունն եմ: Այդ գիտես: Դու ինձ չես կարող հաղթել: Ասում են, որ ես մահվան գործակցողն եմ: Ենթադրենք, թե այդպես է: Կյանքը խաբում է, որ մարդիկ ապրել ցանկանան: Կյանքը անընդմեջ խաբեություն է, խելագար պար է երերուն ստվերների թագավորությունում, ուր բարձրանալով և իջնելով լող են տալիս հանդերձյալ աշխարհի տեսիլները, որոնք շղթայված են լուսինների օղակներով: Տեսիլնե՞ր: Ստվերնե՞ր: Կյանքը ստվերների աշխարհ է, ստվերները փոխվում են, լուծվում են մշուշում, մեկը հետևում է մյուսին. ահա նրանք այստեղ են, ահա անհետացան, առկայծում են, գունատվում, հանգչում և նորից են հայտնվում, փոխելով իրենց տեսքը: Դու ինքդ էլ այդպիսի մի ուրվական ես, անցյալի անհաշիվ ուրվականների հետնորդը: Քո բոլոր գիտելիքները պատրանք են բոլոր ցանկությունները՝ նույնպես: Անթիվ-անհամար անանուն ուրվականներ սերնդից սերունդ փոխանցել են այն ցանկությունները, որոնք հանգրվանում են քո մեջ, իսկ քեզանից էլ կանցնեն անհամար ուրվականների ապագա սերունդներին: Կյանքը արագահոս է, կյանքը տեսիլք է միայն: Դու էլ ոչ այլ ինչ ես, եթե ոչ տեսիլք: Անցյալի ուրվականները, որոնք ապրում են քո մեջ, օգնում են կամաց-կամաց ձևափոխվելու և ամեոբայից դառնալու այն, ինչ կաս: Դու քո կյանքը սկսել ես

թոթովանքով, թոթովանքով էլ կանհետանաս, լուծվելով այն ուրվականների մեջ, որոնք եկել են փոխարինելու քեզ»:

Ի՞նչ առարկել: Երեկոյան մշուշով պատված՝ ես շարունակում եմ ճանապարհս և արհամարհանքով մտածում եմ այն կյանքի մասին, որին Կոնտը /Կոնտ, Օգյուստ (1798—1857) — փիլիսոփա, այսպես կոչված պոզիտիվիզմի, XIX դարում տարածված իդեալական փիլիսոփայական սիստեմի հիմնադիրը/ Մեծ Ֆետիշ է անվանել: Հիշում եմ մի ուրիշ մեծ հոռետեսի ասույթները. «Ամեն ինչ անցողիկ է: Հող էիր, հող կդառնաս և կուրախանաս հանգստով»:

Բայց ահա մի մարդ, որին հանգիստը քաղցրություն չի պատճառում. մշուշում գծագրվում է մի կերպարանք և գալիս է դեպի ինձ: Նա իմ ֆերմայի ծերուկ բանվորներից է, ծնունդով իտալացի: Նա ստորաքարշորեն իմ առջև հանում է գլխարկը, քանզի նրա համար իսկական աստված ու թագավոր եմ: Ես նրան հաց ու անկյուն եմ տալիս, և ինձանից է կախված նրա կյանքը: Նա եզի նման օրուգիշեր աշխատում է, բայց իմ ախոռի ձիերից էլ, որոնք միշտ թարմ ծղոտ ունեն, վատ է ապրում: Աշխատանքը նրան խեղանդամ է դարձրել: Նա քայլում է ոտքերը հազիվ քարշ տալով, մեջքը ծռվել է, ձեռքի հոդերն ուռել են, մատները սարսափելի ծռմռվել: Այնքան էլ գեղեցիկ ուրվական չէ: Եվ ուղեղն էլ մարմնի նման խեղանդամ է:

«Իր հիմարությամբ նա չի կասկածում անգամ, որ ինքը ուրվական է,— ծաղրում է Ճերմակ Տրամաբանությունը:— Նա միայն զգացումներին է հավատում, ստրուկն է այն խաբեության, որը կյանք է կոչվում: Նրա գլուխը լիքն է սևեռուն գաղափարներով: Հավատում է հանդերձյալ կյանքին: Նա շատ է լսել տերտերների զառանցանքները, որոնք դրախտային երջանկություն էին խոստանում, անիրական, ինչպես օճառի պղպջակ: Նա ուզում է իրեն տեսնել անմարմին հոգի դարձած, որը սավառնում է միջաստղային տարածության մեջ: Նա հաստատ հավատացած է, որ տիեզերքը իր համար է ստեղծված, որին վիճակված է անմահ մնալ ստվերների գերզգայական աշխարհում, որը ստեղծված է իր և նմանների խաբեությամբ ու պատրանքներով:

Բայց դո՛ւ, կարդացած ու լուսավորված մարդ, դո՛ւ, որին վստահել եմ իմ սարսափելի գաղտնիքները, դու հո գիտես, թե սա, այս քո երկրային եղբայրը իսկապես ինչպիսին է, սա, բնության այս չար կատակը, քիմիական ձեռնածությունը, շորեր հագած այս գազանը, որը կարողացել է իշխել մնացած կենդանական աշխարհին այն բախտավոր պատահականությամբ, որ նրա հետևի թաթերը ավելի դիմացկուն են դուրս եկել: Նա ոչ միայն քո եղբայրն է, այլև՝ գորիլլայի ու շիմպանզեի: Զայրույթի պահին նա իր կուրծքն է ծեծում, դողում ու մռնչում անզուսպ կատաղությամբ: Նրան ղեկավարում են կենդանական հրեշավոր հակումները, և նա ամբողջովին բաղկացած է չգիտակցված հինավուրց բնազդների բեկորներից»:

«Բայց նա հավատում է անմահությանը,— փորձում եմ թույլ-թույլ առարկել ես:— Չէ՞ որ դա հոյակապ բան է. այդպիսի մի հիմար, բայց տե՛ս, սանձել է ժամանակը և իրեն հավիտենական է կարծում»:

«Բա՛,— ընդհատում է ինձ Ճերմակ Տրամաբանությունը:— Չե՞ս ցանկանում, արդյոք, փակել գրքերը և տեղներդ փոխել ստամոքսի տռփանքի ստրուկի հետ»:

Ես իմն եմ պնդում. «Բայց չէ՞ որ հիմարները բախտավոր են»:

«Ուրեմն, քո բախտավորության իդեալը նույնն է, ինչ որ մեդուզայինը, որը մշուշի մեջ ջրի երես է դուրս գալիս անշարժ ու տաք ծովում»:

Այո՛, եթե Գարեհատիկ Զոնը քեզ իր զոհն է դարձրել, ապա վիճելով նրան չես հաղթի:

«Մի քայլ, և դու կլինես բուդդայականների օրհնյալ Նիրվանայում,— եզրակացնում է Ճերմակ Տրամաբանությունը:— Եվ ահա դու տանն ես: Բավական է, մի՛ հուսահատվիր: Խմի՛ր: Ես և դու լուսավորված մարդիկ ենք և գիտենք, որ ամեն ինչ ունայնություն ունայնությանց է»:

Իմ առանձնասենյակում, որը զարդարված է գրապահարաններով, մարդկային մտքի այս դամբարանում, ես ինձ համար վիսկի եմ լցնում, հետո նորից ու նորից, և ահա գիտակցությանս անհատակ խորքերից դուրս են պրծնում «իմ կողմից արթնացված շները»: Հո՜պ, և նրանք թռչում անցնում են օրենքի և նախապաշարումների արգելքները, ճանապարհ բացում կրոնի և սնոտիապաշտության բավիղներում:

«Խմի՛ր,— համոզում է Ճերմակ Տրամաբանությունը:— Հին հույները կարծում էին, որ գինին հնարել են աստվածները, որպեսզի մահկանացուները դրա մեջ ինքնամոռացում գտնեն: Հիշիր, թե Հայնեն ինչ է ասել»:

Այո՛, ես հիշում եմ այդ տաքարյուն հրեայի խոսքերը. «Ամեն ինչ չքվում է վերջին շնչի հետ. և՛ ուրախությունը, և՛ վիշտը, և՛ սերը, և՛ մակարոնն ու թատրոնը, և կանաչ սոճիներն ու մորեգույն սառնաշաքարը, մարդկային հարաբերությունների իշխանությունը, բամբասանքները, շան հաչոցը, և՛ շամպայն գինին»:

«Քո պայծառ լույսը հիվանդություն է,— ասում եմ Ճերմակ Տրամաբանությանը,— դու դարձյալ խաբում ես»:

«Որովհետև դաժան ճշմարտություն եմ ասում»,— ինձ կասեցնում է նա:

«Ավա՜ղ, այդպես է, աշխարհում ամեն ինչ շուռ է տրված խառնված է իրար»,— տխուր համաձայնում եմ ես:

«Լիու Լինը քեզանից իմաստուն էր,— ձեռք է առնում Ճերմակ Տրամաբանությունը:— Հիշո՞ւմ ես նրան»:

Ես գլխով եմ անում. այո՛, Լիու Լինին հիշում եմ, այդ նշանավոր հարբեցողին, այն բանաստեղծներից մեկին, որոնք ապրել են Չինաստանում շատ դարեր առաջ և իրենց անվանել են «Բամբուկի անտառի յոթ իմաստուններ»:

«Այդ նա է ասել,— շշնջում է Ճերմակ Տրամաբանությունը,— թե հարբածի համար կենաց տագնապները նույնն են, ինչ որ ջրիմուռները գետում: Այնպես որ, էլի՛ խմիր ու հավատա. այս բոլորը պատրանք է ու խաբեություն, ջրիմուռների պես մի բան»:

Մինչ ես մի նոր բաժակ վիսկի էի խմում, հիշեցի մի ուրիշ չին փիլիսոփայի, Չան Ցզիին, որը Քրիստոսի ծննդից դեռ չորս հարյուր տարի առաջ մարտահրավեր է նետել այս քնած աշխարհին. «Ինչպե՞ս իմանամ, մեռածները չե՞ն ափսոսում արդյոք, որ երբևէ կառչել են կյանքից: Նրան, ով երազում կերուխում է տեսնում, առավոտյան վիշտ ու արցունքներ են սպասում. նրան, ով վիշտ ու արցունք է տեսնում, ապասում է ուրախությունը: Երազում նրանք չգիտեն, թե քնած են: Ոմանք փորձում են հասկանալ իրենց երազի իմաստը և միայն արթնանալուց հետո են իմանում, թե բոլորն անուրջ է եղել միայն: Հիմարին թվում է, թե ինքը քնած չէ, և նա սփոփում է իրեն այն պատիր մտքով, որ իբր գիտե, ով է ինքը՝ թագավո՞ր, թե՞ աղքատ գյուղացի: Ե՛վ դու ես երազ, և՛ Կոնֆուցիոսը /Կոնֆուցիոս — չին փիլիսոփա, որն ապրել է VI—V դարերում մ.թ.ա./, և՛ ես, որ ասում եմ, թե դուք երազներ եք, և ես էլ եմ երազ:

Մի անգամ երազումս տեսա, որ թիթեռնիկ եմ և ճախրում եմ օդում: Մոռացա, թե իսկապես ով եմ ես: Հանկարծ արթնացա և դարձա այն, ինչ էի: Բայց այնպես էլ չիմացա, թե ես այն ժամանակ մա՞րդ էի, երբ երազ տեսա, որ թիթեռնիկ եմ դարձել, թե՞ թիթեռնիկ էի, որը երազում տեսնում է, թե ինքը մարդ է»:

ԳԼՈՒԽ ԵՐԵՍՈՒՆՅՈԹԵՐՈՐԴ

«Բավական է,— ասաց Ճերմակ Տրամաբանությունը,— մոռացիր ասիացի երազողներին, որոնք ապրել են հին-հին դարերում: Լցրու բաժակդ և արի բացենք մագաղաթե փաթեթները ու

տեսնենք, թե ովքեր էին ոչ հեռավոր անցյալի այդ երազողները, որոնք անրջում էին իրենց հայրենիքի տաք բլուրների վրա»:

Ես սկսում եմ կարդալ Տոկայի իմ խաղողի այգու նախկին տերերի ցուցակը: Այս տխուր թերթիկը սկսվում է Մանուիլ Միքելտորենոյից, որը մի ժամանակ «Մեքսիկայի նահանգապետն էր, գլխավոր հրամանատարը, երկու Կալիֆորնիաների դեպարտամենտների գործակալը». տասը լյո հողամաս, որ խլել էր հնդկացիներից, պարգևել է դոն Մարիանո Գվադալուսե Վալլեհոյին՝ որպես պարգևատրություն հայրենիքին ծառայելու և այն բանի համար, որ սա տասը տարի իր հաշվին զինվորներ է պահել:

Մաշված փաստաթղթերի փաթեթը,— մարդկային ագահության այս վկան,— նման է ահեղ ճակատամարտի տարեգրության: Այստեղ կային երաշխավորագրեր ու գրավաթղթեր, փոխանցման ու նվիրատրման պաշտոնագրեր, դատական որոշումներ և վճիռներ՝ գրավականները ետ գնելու իրավունքը կորցնելու մասին, արգելաթուղթ ու գնման կայքագիր, հարկեր չվճարելու համար ձերբակալման արտոնագիր, խնամակալության հայց, ունեցվածքի բաժանման հրամանագրեր... Ամառային ջերմ արևից տաքացած այս հողամասը արտաքինից ոչ մի նմանություն չունի համառ ու անհնազանդ այն հրեշին, որը հաղթել է բոլորին, ովքեր կռվել են իր հետ, կտոր-կտոր արել և սուզվել հավիտենականության մեջ:

Ո՞վ է եղել ուիլյամցի այս Ջեմս Քինգը: Լուսնի Հովտի նույնիսկ ամենահին բնակիչը նրա մասին ոչինչ չի կարող պատմել: Բայց չէ՞ որ ընդամենը վաթսուն տարի առաջ նա դոն Մարիանո Վալլեհոյին է տվել տասնութ հազար դոլար, որպես գրավական այն հողերի, որոնց մեջ էր մտնում Տոկայի իմ խաղողի այգին: Որտեղի՞ց հայտնվեց և ո՞ւր անհետացավ Պիտեր օ'Քոննորը, այն բանից հետո, երբ ստորագրեց անտառածածկ հողամաս ձեռք բերելու փաստաթուղթը, հողամաս, որը հետագայում նույնպես խաղողի այգի է դարձել: Հետո հայտնվել է Լուիս Կսոմորտանյին (համա թե ազգանուն է, հա՜): Այս ազգանունը, ի դեպ, մի քանի էջ է գրավում այս բազմաչարչար հողամասի տարեգրության մեջ...

Հետո՝ գաղութաբնակներ, ամերիկյան ցեղեր: Նրանք սողում են ամերիկյան անջուր Մեծ անապատով, ջորիներ նստած կտրում անցնում են պարանոցը, առագաստանավերով հասնում են Հորն հրվանդանը, որպեսզի այնտեղ թողնեն հիմա արդեն մոռացված իրենց անունները, ուր իրենցից առաջ Լեթայի ջրերն էին սուզվել թափառաշրջիկ հնդկացիների տասը հազար սերունդներ: Ինձ ի՜նչ են ասում այնպիսի ազգանուններ. ինչպիսիք են՝ Հալլեկ, Հեյսթինգս, Սվեթ, Թեյթ, Դենմեն, Թրեյսի, Գրիմվուրդ, Կարլթոն, Թեմփլ: Այսօր նրանց էլ չես գտնի Լուսնի Հովտում:

Մի անուն սրընթաց փոխարինում է մյուսին, բայց համառ հողը մնում է, և նորանոր մարդիկ են նրա վրա չանգռոտում իրենց անունները: Ահա և այնպիսիները, որոնց ես աղոտ հիշում եմ, չնայած անձնապես ծանոթ չէի. Քոուլեր և Ֆրոլինգ, որոնք մի մեծ գինեգործարան են կառուցել բլրի գագաթին: Ավա՜ղ: Խաղողագործներին տեղը հարմար չի եկել, չեն ցանկացել խաղողը այդ զառիթափով վեր բարձրացնել: Քոուլերն ու Ֆրոլինգը սնանկացել են, կորցրել հողամասը, իսկ 1906 թվականի երկրաշարժը լրացրել է նրանց դժբախտությունը, քարուքանդ անելով գործարանը: Հիմա նրա ավերակներում ես եմ ապրում:

Լա Մոթ: Սա խոպանը մշակեց, խաղողի այգի գցեց և պտղատու ծառեր տնկեց, արհեստական ջրամբարներում ձկներ աճեցրեց, այդ ժամանակվա համար մի հոյակապ առանձնատուն կառուցեց, բայց հողը հաղթեց, և նա էլ չքացավ: Հիմա այդ պտղատու ծառերի ու խաղողի այգիների, հոյակապ առանձնատան և ձկան համար պատրաստված ավազանների տեղը ես եմ որոշել թողնել իմ հետքը՝ հարյուր հազար հատ էվկալիպտի ծառեր տնկելով:

Քուպերից Գրինլոուից Հիլլ-Ռենչ հողամասում երկու գերեզման է մնացել. «Փոքրիկ Լիլի» և «Փոքրիկ Դեվիդ», պստիկ մի քառակուսի, որը շրջապատված է կոպիտ տախտակներից պատրաստված ցանկապատով: Քուպերը և Գրինլոուն իրենց ժամանակ ոչնչացրեցին կուսական

անտառը և չորս ակր տարածությամբ մի դաշտ բացեցին: Հիմա այդ դաշտերում կանադական սիսեռ է ցանված, իսկ գարնանը վարելու եմ խոտհարքի համար:

Հասկա. կիսով չափ մոռացված առասպելական մի անձնավորություն, որի փառքը թնդում էր սրանից երեսուն տարի առաջ: Նա մաքրեց բլրից այն կողմ ընկած վեց ակր հողամասը, որը ծածկված էր թփուտներով, և փոքրիկ հովիտը հիմա նրա անունն էր կրում: Նա մշակեց հողը, քարե ցանկապատով մի տուն կառուցեց, խնձորենիներ տնկեց: Բայց հիմա նույնիսկ այն տեղը, ուր նրա տունն էր, չես գտնի, իսկ ցանկապատի գիծը հազիվհազ է երևում: Նախկին տիրոջ պայքարը շարունակեցի ես, սկսեցի անգորական այծեր պահել, որպեսզի նրանք կրծոտեին այն անիծյալ թփուտները, որոնք խեղդում էին Հասկայի խնձորենիները: Եվ ահա ես էլ եմ փորփրում այդ հողը, գրելով իմ անունը նրա տարեգրության մեջ, բայց ես էլ կանհետանամ, և իմ անունը կրող թուղթը կփտի:

«Ցնորքներ ու տեսիլներ»,— քմծիծաղ է տալիս Ճերմակ Տրամաբանությունը:

«Բայց չէ՞ որ նրանց պայքարը իզուր չի կորել»,— առարկում եմ ես:

«Դա հենված է պատրանքների վրա, ուրեմն սուտ է եղել»:

Ես իմն եմ պնդում:

«Սուտ՝ հանուն կյանքի»:

«Ասա, խնդրեմ, ի՞նչ տարբերություն,— ընդհատում է ինձ Ճերմակ Տրամաբանությունը:— Դե՛հ, բավական է, լցրու բաժակդ, արի տեսնենք, թե խաբեության առաքյալները, որ դարսված են քո գրադարակներում, ի՞նչ են ասում: Թերթենք Ուիլյամ Ջեյմսին /Ուիլյամ Ջեյմս (1842—1910) — ամերիկացի հոգեբան, «Էվոլյուցիայի փիլիսոփայությունը» (1879) և «Հոգեբանության սկզբունքները» (1890) գրքերի հեղինակը/»:

«Ի՞նչ կա որ, առողջ հոգեբանությամբ մարդ է,— ասում եմ ես:— Փիլիսոփայական քարը նա չգտավ, սակայն նրա ստեղծագործություններում շատ առողջ ու լավատեսական բաներ կան»:

«Ռացիոնալիզմ, որը հասցված է դյուրազգացության,— քմծիծաղ է տալիս Ճերմակ Տրամաբանությունը:— Վերջ ի վերջո նա էլ սկսեց անմահություն քարոզել: Սկսեց փաստերը խցկել կրոնի շրջանակների մեջ և իր հասուն միտքը օգտագործեց բանականությունը ծաղրելու համար: Ջեյմսը բանականության բարձունքից քարոզում էր հրաժարվել մտածողությունից և վերադառնալ դեպի կույր հավատը: Ամեն ինչ դեպի լավն է գնում այս ամենալավ աշխարհում: Մետաֆիզիկների հին ձեռնածուական խաղեր. խեղդել բանականությունը, որպեսզի արթուն, դաժան դատողությամբ թելադրվող հոռետեսությունից փրկվեն:

Քո մարմինը՝ այդ դո՞ւ ես: Թե ինչ-որ օտար բան, որին տիրապետում ես դու: Ի՞նչ բան է քո մարմինը: Մի մեքենա, որը ազդեցությունները զգացումների է վերածում: Ազդեցությունները և զգացումները հիշվում են միշտ: Դրանից բյուրեղվում է փորձը: Ուրեմն, ինքդ հենց փորձ ես քո գիտակցության մեջ: Հիմա՛, ա՛յս պահին, դու հենց քո մտքերն ես: Քո եսը միաժամանակ և՛ սուբյեկտ է, և՛ օբյեկտ: Նա հաստատում է իրը, միաժամանակ ինքն էլ իր է: Մտածողը միտքն է, իմացողը՝ իմացությունը, տիրապետողը այն է, ինչին տիրում ես:

Ի վերջո, պետք է իմանաս, որ մարդու մեջ միաձուլված են գիտակցության բազմաթիվ փոփոխական դրություններ, գիտակցության մի ամբողջ հեղեղ. ամեն միտքը մի նոր ես է, անդադար փոփոխություն, բայց որը երբեք չի ավարտում: Դա տեսիլների փայլատակում է, և բոլոր միլիոնավոր տեսիլները երբեք իրական չեն դառնում, այլ մնում են որպես լուսատտիկներ, տեսիլներ՝ աշխարհում: Բայց մարդը չի ուզում հաշտվել դրա հետ: Նա հրաժարվում է ընդունել, որ ինքը պիտի անհետանա: Նա չի կարող անհետանալ: Եթե պետք է մեռնել, ուրեմն կվերակենդանանա կրկին...

Այս անհրաժեշտ սուտը, որը մարդիկ քրթմնջում են, որպես անեծք Գիշերվա ուժերի դեմ, նորություն չէ: Հեքիմներն ու կախարդները մետաֆիզիկների նախահայրերն էին: Մարդիկ միշտ էլ սարսափել են Մահից և որպեսզի նրանց հոգիները նվաճեն, մետաֆիզիկները պատրաստ էին ստելու: Նրանց չափազանց դաժան էր թվում Ժողովրդի խիստ օրենքները, ըստ որի մարդու և կենդանու բախտը նույնն է. ինչպես նրանք, սրանք էլ են մեռնում: Իրենց հավատալիքները դարձնելով ծրագրեր, իսկ կրոնը և փիլիսոփայությունը՝ նպատակներին հասնելու միջոց, մետաֆիզիկները աշխատում են հաղթել Մահվանը:

Հույսի տեսիլները լցնում են քո գրադարակները. թափառական կրակներ, խորհրդապաշտական մշուշ, հոգեբանական կիսատոն, հոգեկան գինարբուք, հառաչանք գերեզմանների միջև, անհեթեթ գնոստիցիզմ, քողարկված մտքեր, խճճված սուբյեկտիվիզմ, զգույշ շոշափում, հսկայական չափերի զգայախաբություն. ահա թե իրենցից ինչ են ներկայացնում քո գրքերը: Նայիր դրանց, մռայլ խելագարների և կրքոտ ընդվզողների այս տխուր ստեղծագործություններին, քո բոլոր շոպենհաուերներին, ստրինդբերգներին, տոլստոյներին և նիցշեներին/ Շոպենհաուեր, Արթուր (1788—1860) — գերմանացի ռեակցիոն փիլիսոփա: Ժխտում էր գիտական ընկալումը և պայմանականության հասկացությունը:

Ստրինդբերգ, Ավգուստ (1849—1912) — շվեդացի գրող: Կապիտալիզմի սուր քննադատությունը զուգակցում էր մարտական եսապաշտության քարոզին: Նրա ստեղծագործության ռեալիստական նկրտումները պայքարում էին դեկադենտական ուժեղ ազդեցության դեմ:

Տոլստոյ, Լև Նիկոլաևիչ — նրա գաղափարները XX դարի սկզբին տարածում էին գտել ԱՄՆ-ի մտավորականության լայն շրջաններում՝ շնորհիվ գրող Դ. Հոուլսի ծավալած գործունեության, որը բարձր էր գնահատում Տոլստոյին:

Նիցշե, Ֆրիդրիխ (1844–1900) — գերմանացի գրող ու փիլիսոփա, ծայրաստիճան հետադիմական «գերմարդու» ուսմունքի հիմնադիրը, որը նրա կարծիքով պետք է իշխի մյուս մարդկանց: XX դարի սկզբին Նիցշեի ընդունում էին որպես «ուժեղ անհատի» անիշխանական ազատության քարոզիչ/:

Դե՛հ, բավական է: Բաժակը դատարկ է: Լցրու և մոռացիր ամեն ինչ»:

Ես ենթարկվում եմ, քանի որ գլուխս շատ ուժեղ պտույտ է գալիս: Ես խմում եմ իմ գրադարակներին դարսված տխուր մտածողների կենացը և հիշում եմ Ռիչարդ Հոուվիի /Ռիչարդ Հոուվի (1864—1900) — ամերիկացի բանաստեղծ և գրաքննադատ/ բանաստեղծությունը.

Ապրի՛ր: Սեր և Կյանք, հանց լույս ու խավար,

Մեր կամքով երբեք մեզ մոտ չեն գալիս,

Վերցրու բոլորը, ինչ կյանքն է տալիս,

Քանի չես դարձել որդերին ավար:

«Թույլ տուր, ես վերջացնեմ քո փոխարեն»,— խնդրում է Ճերմակ Տրամաբանությունը:

«Պետք չէ,— գինովցած գլխով բացականչում եմ ես:— Քեզ լավ եմ ճանաչում ու չեմ վախենում: Գեդոնիզմի /Գեդոնիզմ — փիլիսոփայություն, որը գոյության հիմքը հաճույքն է համարում/ դիմակի տակ դու էլի առաջվանն ես: Դու մահն ես, դու տանում ես դեպի հավիտենական գիշերվա խավարը: Գեդոնիզմը անմտություն է: Դա նույնպես սուտ է, լավագույն դեպքում փոքրոգիների խորամանկ փոխզիջում է»:

«Թույլ տուր գոնե վերջացնեմ բանաստեղծությունը»,— ընդհատում է Ճերմակ Բանականությունը:

Եթե հոգնել ես կյանքդ քարշ տալուց,

Ազատ կարող ես վերջ դնել նրան,

Եվ չես արթնանա դու քո դագաղում:

Բայց ես գրգռիչ ծիծաղում եմ, զի հիմա, այս րոպեիս, գիտեմ, որ Ճերմակ Տրամաբանությունը, որն ականջիս տակ շշնջում էր մահվան մասին, մեծագույն խաբեբան է: Նա ինքը իր դեմքից պոկեց դիմակը, իր դեմ ուղղեց երևութական բարեսրտությունը, և իմ մեջ հանկարծ կենդանություն առան երիտասարդական մոռացված ձգտումները, թվաց, թե դեռ ուշ չէ օգտվելու այն հնարավորություններից, որոնք գիրքն ու կյանքը այնքան համառորեն ժխտում են:

Ես հասցնում եմ մի բաժակ էլ գցել այն պահին, երբ հնչում է ճաշի զանգը: Ծիծաղելով Ճերմակ Տրամաբանության վրա, ճաշասենյակ եմ գնում, հյուրերի հետ սեղան նստում և շինծու լրջությամբ սկսում եմ խոսել նոր ամսագրերի և կյանքում տեղի ունեցող դատարկ բաների մասին, պարադոքսների ու կծու խոսքերի հեղեղ եմ տեղում: Իսկ երբ սա էլ է ձանձրացնում, սկսում եմ գրգռել զրուցակիցներիս, ծիծաղել վախկոտ բուրժուաների ֆետիշների վրա, էպիգրամներ եմ հնարում, չխնայելով մանր կուռքերին, ծաղրելով նրանց իմաստունների հիմարությունը:

Պետք է ծաղրածու լինել: Ծաղրածո՛ւ, ուրիշ ոչինչ: Եթե ուզում ես փիլիսոփա լինել, նմանվիր Արիստոֆանեսին /Արիստոֆանես (մոտ 446—385 մ. թ. ա.) — հույն մեծ դրամատուրգ, բազմաթիվ կատակերգությունների հեղինակ/: Ի միջի այլոց, սեղանի մոտ նստածներից ոչ մեկի մտքով իսկ չի անցնում, որ ես հարբած եմ. նրանց համար պարզապես լավ տրամադրության մեջ եմ: Ճաշը վերջացավ, բայց շարունակում եմ հիմարություններ դուրս տալ, խաղեր եմ կազմակերպում, և բոլորը երեխաների նման ուրախանում են:

Գիշեր է. հյուրերը հրաժեշտ են տալիս և ցրվում են իրենց սենյակները, իսկ ես առանձնասենյակիս միջով, ուր դասավորված են գրքերս, գնում եմ դեպի պատշգամբ, որտեղ սովորաբար քնում եմ, և նորից մենակ եմ մնում Ճերմակ Տրամաբանության հետ, որն ինձնից չի հեռանում, քանի ես ուժ չունեմ վեճի մեջ հաղթել նրան:

Ես լսում եմ, թե ինչպես է լալիս ջահելությունը, և սուզվում եմ գինովցած քնի մեջ, վերհիշելով Հարրի Քեմփիի բանաստեղծությունը.

Ջահելությունն է գիշերով ասում.

«Չվել են նախկին բերկրանք և հուզում,

Ու հանգիստ չկա իմ ճանապարհին...

Այգը այսպես է օր դառնում կրկին,

Եվ օրը, մարդկանց պարգևող անուրջ,

Հանգիստ չի գտնում մինչև աղջամուղջ

Իմ կյանքը վարդի կյանքին է նման,

Իմ ծիածանն էլ երկնում աննման,

Երկար չի խաղում իր լույսով անտի...

Ես ջահել եմ դեռ, բայց մեռնեմ պիտի:

ԳԼՈՒԽ ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ

Ես պատմեցի, թե հոգեկան աղջամուղջում ինչպես էի պայքարում Ճերմակ Տրամաբանության դեմ: Աշխատում էի, ինչքան կարող եմ, ընթերցողի առջև գոնե մի պահ բացել մարդկային

գիտակցության գաղտնարանները, որոնց մշուշել էր Գարեհատիկ Ջոնը: Բայց ընթերցողը թող հիշի, որ այն, ինչ նա իմացավ այս քառորդ ժամվա ընթացքում, ներշնչված էր Գարեհատիկի քմահաճույքով, որը մի ցերեկվա ու գիշերվա ընթացքում հազար անգամ փոփոխում է մարդու տրամադրությունը:

Ոգելից խմիչքի մասին եղած իմ հուշերը մոտենում են իրենց ավարտին: Խմելու սովոր մարդու պես կարող եմ ասել, թե ես մինչև հիմա ապրում եմ աշխարհում միայն շնորհիվ այն բանի, որ առողջ թոքեր ունեմ, ուժեղ ուսեր ու ամուր օրգանիզմ: Կասկածում եմ, թե հազիվ կգտնվեն պատանիներ, որոնք տասնհինգ-տասնյոթ տարեկան հասակում կարողանային դիմանալ այնպիսի ֆիզիկական լարվածության, ինչպիսին ես կրեցի այդ տարիքում, և մատների վրա կարող ես հաշվել այն տղամարդկանց, որոնք կրելով նման փորձություններ, կարողանային դրա մասին գիրք գրել: Ինձ փրկեցին ոչ թե անձնական առաքինությունները, այլ այն, որ բնավորությամբ գինեմոլ չէի և ամբողջ ուժով պայքարում էի Գարեհատիկի դեմ: Եվ չնայած ինքս դիմացա, բայց շատերն աչքիս առջև կործանվեցին նրա տխուր բավիղներում:

Միայն իմ բախտից էր, հաջողությունից, թե պատահականությունից,— անվանեք, ինչպես ցանկանում եք,— ես անցա Գարեհատիկի բոցերի միջով: Նրան չհաջողվեց ոտքի տակ տրորել իմ կյանքը, կործանել իմ ապագան, սպանել կյանքի սերը: Նա իր կրակով բորբոքեց այդ սերը և դա կարողացավ հրաշքով պահպանվել, նման այն բանին, ինչպես մարտադաշտում կենդանի է մնում զինվորը, չնայած բոլոր ընկերները զոհվում են:

Եվ նրա նման, ով ազատվում է արյունալից կռվից և բացականչում. «Վե՛րջ պատերազմին», ես էլ եմ գոռում. «Կորչի՛ ոգելից խմիչքը: Ջահել կյանքերը մի՛ կործանեք այդ թույնով»: Պատերազմը դադարեցնելու միակ միջոցը չկռվելն է: Հարբեցողությունը դադարեցնելու միակ միջոցը՝ ոգելից խմիչքներ չվաճառելը: Չինաստանը ընդհանրապես դադարեցրեց օպիում ծխելը, արգելեց ցանելը և երկիր ներմուծելը: Բոլոր փիլիսոփաները, կրոնավորները և բժիշկները կարող էին հազարավոր տարիներ շարունակ կրկնել օպիումի վնասի մասին, բայց այնքան ժամանակ, որքան այդ թույնը մատչելի էր, մարդիկ շարունակում էին ծխել: Այսպես է մարդկային բնավորությունը:

Մենք կարողանում ենք երեխաներին պաշտպանել մկնդեղից ու ստրիխինինից, տիֆի ու թոքախտի մանրէներից: Նույնպիսի միջոցներ ձեռք առեք Գարեհատիկի նկատմամբ: Արգելեցե՛ք այդ: Արտոնագրեր ու թույլտվություններ մի տվեք գինիների համար, թող Գարեհատիկը ամեն քայլափոխին չդարանակալի երիտասարդությանը: Ես գինեմոլների մասին և նրանց համար չեմ գրում, այլ երիտասարդության, որոնք հետաքրքիր կյանք և ուրախ ընկերություն են փնտրում, նրանց համար, ում այլասերում է մեր բարբարոս քաղաքակրթությունը, որը նրանց խմեցնում է ամեն մի անկյունում: Ես գրում եմ այս գիրքը առողջ ու նորմալ երիտասարդության ներկայի ու ապագայի համար:

Ահա թե ինչու այդպիսի բարձր տրամադրությամբ ես Լուսնի Հովիտ իջա և ձայնս տվեցի կանանց ընտրական իրավունքի օգտին: Ես գիտեի, որ նրանք՝ կանայք ու մայրերը, կստիպեն կյանքից դուրս նետել Գարեհատիկ Ջոնին, անցյալի այդ բարբարոս մնացորդին: Եթե ձեզ մոտ տպավորություն է ստացվում, որ ես զայրացած եմ Գարեհատիկի դեմ, դուք ճշմարտությունից այնքան էլ հեռու չեք լինի. հիշեք, թե նրա երեսից ինչե՛ր եմ քաշել: Ես անկեղծորեն ցանկանում եմ նրանից պաշտպանել ի՛մ և ձե՛ր երեխաներին:

Կանայք ազգի իսկական պահապաններն են: Տղամարդիկ կերուխում են սիրում, արկածներ են փնտրում, խաղամոլներ են: Եթե կանայք չլինեին, տղամարդիկ վերջ ի վերջո կկործանվեին: Մարդու առաջին քիմիական փորձը սպիրտ քաշելն է եղել, և շատ դարերի ընթացքում այդ փորձը շարունակվում է: Օր չի լինում, որ կանայք դրա դեմ չբողոքեն, բայց նրանք իրավազուրկ էին և վճռական խոսք չէին կարող ասել: Հենց որ կանայք ձայնի իրավունք ստանան, առաջին հերթին կպահանջեն փակել գինետները: Իրենք՝ տղամարդիկ, այդ բանը հազար տարի հետո էլ չեն անի: Նույնքան անհեթեթ կլիներ սպասել, որ մորֆինիստները արգելեն մորֆինի վաճառքը:

Կանայք գիտեն, որ տղամարդկանց հարբեցողության փոխարեն իրենք վճարում են արցունքներով ու արյուն-քրտինքով: Պաշտպանելով ազգության առողջությունը, նրանք իրենց ձայնը կտան հօգուտ այն օրենքի, որը կապահովի ապագա սերնդի կյանքը:

Եվ այստեղ ոչ մի սարսափելի բան էլ չկա: Դրանից կտուժեն միայն մեկ սերնդի անբուժելի գինեմոլները: Ես պատկանում եմ դրանց թվին, բայց, այնուամենայնիվ, հանդիսավոր հավատացնում եմ, հենվելով Գարեհատիկի հետ ունեցած իմ երկարամյա ծանոթությանը, որ այնքան էլ չեմ դառնանա, եթե խմելը թողնեմ. միայն թե մյուսները դադարեն խմելուց և ոչ մի տեղ հնարավոր չլինի ոգելից խմիչք ճարել: Դրա փոխարեն երիտասարդության գերակշռող մասը հեռու կմնա գինեմոլությունից և ոգելից խմիչքներ չգտնելով, բոլորովին էլ կորստի զգացում չի ունենա: Երիտասարդները պատմական գրքերից կիմանան, որ մի ժամանակ, անցյալում, մարդիկ գինետուն էին գնում, և դա նրանց այնպիսի վայրենի սովորություն կթվա, ինչպես ցլամարտը և վհուկներին խարույկների վրա այրելը:

ԳԼՈՒԽ ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ

Իհարկե, ինքնակենսագրական վիպակը չի կարելի վերջացած համարել, եթե հերոսի պատմությունը մինչև վերջ չի հասցվել: Ավա՜ղ: Իմ խոստովանությունը ուղղված գինեմոլի խոստովանություն չէ: Ի դեպ, ես գինեմոլ չեմ, ուրեմն, ուղղվելու բան չունեմ:

Մի քանի ամիս առաջ ինձ բախտ վիճակվեց առագաստանավով Հորն հրվանդանի շուրջը նավարկել: Ես ջրի վրա եղա հարյուր քառասունութ օր: Ոգելից խմիչք հետս չէի վերցրել, և չնայած նավապետը կարող էր ամեն օր հյուրասիրել ինձ, ես ոչ մի անգամ չօգտվեցի նրա հյուրընկալությունից: Նավի վրա ոչ ոք չէր խմում, հարմար առիթ չկար, իսկ ալկոհոլի օրգանական պահանջ չէի զգում:

Եվ այստեղ ինքս ինձ մի պարզ ու հասարակ հարց տվեցի. **եթե դա այնքան հեշտ է, ինչո՞ւ նույն բանին չհետևել նայ ցամաքի վրա**: Ես այդ բանը բազմակողմանի ծանրութեթև արեցի, ժամանակ բավական շատ կար՝ հարյուր քառասունութ օր, ընդ որում, ոգելից խմիչքի գայթակղությունը լիովին վերացված էր: Իմ նախնական փորձի հիման վրա ես մի քանի եզրակացությունների հանգեցի:

Ամենից առաջ ես հավատացած էի, որ հազար, մինչև անգամ տասը հազար մարդու մեջ մի իսկական գինեմոլ չի գտնվի: Ես կարծում եմ, որ ոգելից խմիչք օգտագործելը սովորություն է: Դա առաջանում է գիտակցության մեջ: Նման չէ ծխախոտով, կոկայինով, մորֆինով և ուրիշ նարկոտիկներով տարվելուն: Ալկոհոլի պահանջը ծնվում է բացառապես ուղեղում և առաջանում մարդկանց հետ շփվելուց: Միլիոնավոր խմողներից ոչ մեկը չի սկսել մենակ: Բոլորն սկսում են ընկերական շրջանից: Ալկոհոլը մարդկանց իրար է կապում հազարավոր թելերով, ինչպես ցույց տվեցի գրքիս սկզբում: Մարդկանց հետ շփվելը այն հիմքն է, որի վրա մեծ մասամբ բարձրանում է խմելու սովորությունը: Ինքը՝ ոգելից խմիչքը, մեծ նշանակություն չունի, գլխավորը միջավայրն է, որտեղ խմում են: Մեր օրերում շատ քչերն են ոգելից խմիչքի անդիմադրելի ցանկություն զգում, եթե դրան չի նախորդում խմողների հետ ունեցած երկարատև շփումը: Հնարավոր է, որ բացառություններ լինում են, բայց ես դրանց չեմ հանդիպել:

Առագաստանավով հինգ ամիս շարունակ ճամփորդելիս նկատեցի, որ իմ օրգանիզմում ոգելից խմիչքի պահանջը բացակայում է: Սակայն ես մի ուրիշ հետաքրքիր երևույթ նկատեցի. իմ խմելու ցանկությունը թելադրվում է միայն բանականության կողմից և արմատացած է բացառապես մարդկանց հետ շփվելու մեջ: Երբ ես հիշում էի խմիչքը, անմիջապես հիշում էի իմ ընկերներին և ընդհակառակը: Ընկերները և ոգելից խմիչքը սիամյան երկվորյակներ են: Նրանք միաձուլված են իրար:

Գիրքը ձեռքիս տախտակամածին հանգստանալիս կամ էլ մարդկանց հետ զրուցելիս, ես նկատեցի, որ երկրագնդի որ վայրի անունն էլ տային, ուղեղիս մեջ մի ակնթարթում ծնունդ էր առնում զուգորդությունը՝ խմիչք և ընկերներ: Փոթորկալից գիշերներ և ուրախ օրեր, հուզիչ իրադրություններ, սանձարձակների խումբ. այս բոլորը միանգամից միտս էին գալիս: Ահա՛, գրքի էջին ես տեսնում եմ «Վենետիկ» բառը և անմիջապես հիշում եմ սրճատան սեղանները՝ մայթերին: «Ճակատամարտ Սանտյագոյի մոտ» /«Ճակատամարտ Սանտյագոյի մոտ» — ճակատամարտը ֆրանսիական Սանտյագո ամրոցի մոտ, որը վճռեց ամերիկացիների հաղթանակը իսպանացիների դեմ, 1898 թվականի իսպանո-ամերիկյան պատերազմում/,— ասում է ինչ-որ մեկը, և ես արձագանքում եմ. «Այո՛, ես եղել եմ ճակատամարտի տեղում»: Բայց աչքերիս առջև հառնում էր ոչ թե Քեթլ-Հիլլը, ոչ թե Խաղաղության ծառը, այլ միայն Սանտյագո հրապարակի «Վեներա» սրճատունը, ուր ձմռան մի իրիկուն ես խմում էի ու զրուցում մի անծանոթի հետ, որը մեռնում էր թոքախտից:

Կամ էլ ահա կարդում եմ. «Լոնդոնի արևելյան շրջան», և իմ աչքերի առջև կանգնում է պայծառ լուսավորված պանդոկը: «Երկու գավաթ գարեջուր», «Երեք վիսկի»: Լատինական թաղամասը: Ես ուսանողական գինետանն եմ, տեսնում եմ ուրախ դեմքեր, լսում եմ ծիծաղի ձայներ: Մենք սառը աբսենտ ենք խմում, տաքարյուն ֆրանսիացիներն աղմկում են, վիճում աստծու, արվեստի ու դեմոկրատիայի մասին... Այստեղ ամեն հարց շատ հեշտ է լուծվում:

Լա-Պլատայի մոտերքում ընկնելով «Պամպերո» /Պամպերո — տեղացիներն այսպես են անվանում այն ուժեղ, ցուրտ քամին, որը փչում է Ռիո դե Լա-Պլատայի գետաբերանում, հարավամերիկյան տափաստաններից՝ պամպասներից/ սառը քամու հոսանքի մեջ, մենք, անհանգստացած վթարից, որոշում ենք Բուենոս-Այրես՝ ամերիկյան այդ Փարիզը մտնել: Եվ նույն ակնթարթում էլ այլևս ոչինչ չեմ տեսնում, բացի լույսերով ողողված սրճատնից. ես պարզորեն լսում եմ բաժակների ուրախ զնգոցը, երգեր, ծիծաղ ու ձայների աղմուկ: Խաղաղ օվկիանոսում, փրկվելու համար հյուսիսարևելյան մրրիկներից, մենք մեռնող նավապետից խնդրում ենք Հոնոլուլու մտնել և մինչ նրան տաք-տաք համոզում էի, իմ աչքերի առջև մի տեսիլ է երևում. Վայկիկի զով դարավանդները՝ օվկիանոսի ափին, ուր մեզ քոկթեյլ են մատուցում: Ուղեկիցներից մեկը հիշում է, թե Սան-Ֆրանցիսկոյում վայրի բադերը ինչպես են տապակում, և ես անմիջապես տեսնում եմ ռեստորանի սրահը, ուր փայլփլում են կրակները, չխկչխկում դանակները, ընկերներիս հետ եմ, և մեր ձեռքերում ոսկե եզրերով բարձր գավաթներ են՝ ռեյնվեյնով լցված:

Այսպես ուրեմն, ես անդադար մտածում եմ այդ հարցի շուրջը: Եթե ինձ վիճակվի այցելելու այս բոլոր հիասքանչ վայրերը, ապա միայն սրա համար կգնայի:

Բարձրացնե՞նք գավաթները:

Ի՞նչ մոգական բառեր: Դրանից լավը, թերևս, չես գտնի մեր լեզվում: Խմելու սովորությունը արմատացել էր գիտակցությանս մեջ և մնացել իմ ամբողջ կյանքում: Ես սիրում եմ սրամիտ զրույցը, սրտանց ծիծաղը, տղամարդկանց բամբ ձայները, սիրում եմ, երբ ընկերներս, բարձրացնելով բաժակները, մի կողմ են վանում միօրինակությունն ու ձանձրույթը:

Այսպես ուրեմն, որոշեցի՝ ոչ: Այնուամենայնիվ, ժամանակ առ ժամանակ պիտի խմեմ: Չնայած բոլոր գրքերին, չնայած բոլոր փիլիսոփայական մտքերին, որոնք իմ մեջ առանձնահատուկ արձագանք էին գտել, ես որոշեցի հանգիստ շարունակել այն, ինչին սովորել էի: Իհարկե, առաջվանից ավելի չափավոր և զգույշ կխմեմ: Արդեն ինձ թույլ չեմ տա քայլող ջահի վերածվելու և Ճերմակ Տրամաբանությանը օգնության չեմ կանչի: Ես հասկացա, որ նրան կանչել չի կարելի:

Ճերմակ Տրամաբանությունը հանգիստ ննջում է իմ հիվանդության կողքին: Նրանք այլևս ինձ չեն անհանգստացնի: Այնուամենայնիվ, վերջում կասեմ, որ նախնիներս իզուր մինչև իմ աշխարհ գալը չեն ոչնչացրել Գարեհատիկին: Շա՜տ ափսոս, որ նա փթթել է այնտեղ, ուր անց եմ կացրել իմ մանկությունն ու երիտասարդությունը, թե չէ ես չէի ծանոթանա և բարեկամանա նրա հետ: